# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՋԵԿՈՒՅՑՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ



Եվրոպայի խորհրդի ձեռնարկ
քաղաքացիական հասարակության
կազմակերպությունների համար

Ծրագրային համագործակցության կառուցակարգ
Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի
և Բելառուսի համար

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Եվրոպայի խորհրդի ձեռնարկ
քաղաքացիական հասարակության
կազմակերպությունների համար

Եվրոպայի խորհուրդ

*Սույն ձեռնարկում ներկայացված կարծիքները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:*

Բոլոր իրավունքները պահպանված են: Սույն հրատարակության ոչ մի հատված չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ տարածվել որևէ ձևով կամ միջոցով՝ էլեկտրոնային (լազերային կրիչներ, համացանց և այլն) կամ նյութական, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկատվության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով՝ առանց Եվրոպայի խորհրդի Հաղորդակցությունների տնօրինության կողմից նախապես տրված գրավոր համաձայնության (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Կազմի և ձեռնարկի ընդհանուր ձևավորումը՝ Փաստաթղթերի և հրապարակումների հրատարակման դեպարտամենտ (ՓՀՀԴ),

Եվրոպայի խորհուրդ.

Ժուվ, Փարիզ

Եվրոպայի խորհրդի հրատարակչություն
F-67075 Strasbourg Cedex

http://book.coe.int

ISBN 978-92-871-8224-1

© Եվրոպայի խորհուրդ, օգոստոս 2016թ.

# Բովանդակություն


| | | |
|---|---|---|
| ՆԱԽԱԲԱՆ | | 6 |
| ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ | | 8 |
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | | 10 |
| Գլուխ 1. | ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ | 17 |
| | 1.1. Դիտորդական աշխատանքը՝ որպես ընտրական շրջափուլի մաս | 17 |
| | 1.2. Զեկույցներ պատրաստելու սկզբունքները | 21 |
| | 1.3. Զեկույցների տեսակները | 25 |
| Գլուխ 2. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ՝ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ | | 29 |
| | 2.1. Տեղական դիտորդական առաքելության գործունեության շրջանակը | 29 |
| | 2.2. Տեղական դիտորդական առաքելության նպատակները | 26 |
| | 2.3. Իրատեսական և համապարփակ աշխատանքային պլան՝ հիմնված կազմակերպության կարողությունների վրա | 28 |
| | 2.4. Զեկույցներ պատրաստելու վերաբերյալ վերապատրաստման դասընթացի պլան | 31 |
| | 2.5. Հանրային հաղորդակցման պլան | 33 |
| Գլուխ 3. ՆԵՐՔԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ | | 39 |
| | 3.1. Ներքին զեկույցների պատրաստման պլան | 39 |
| | 3.2. Գործառույթների որոշում | 43 |
| | 3.3. Զեկույցների ձևաչափերը | 47 |
| | 3.4. Վերապատրաստման վերաբերյալ օգտակար խորհուրդներ | 55 |
| | 3.5. Հնարավոր մարտահրավերներ և խոչընդոտներ | 57 |
| Գլուխ 4. ԱՐՏԱՔԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ | | 65 |
| | 4.1. Հիմնական թիմի վերապատրաստումը | 65 |
| | 4.2. Արտաքին զեկույցների կառուցվածքը | 67 |
| | 4.3. Զեկույցների պատրաստման վերաբերյալ օգտակար խորհուրդներ | 84 |
| | 4.4. Զեկույցների թեմաներ և ստուգաթերթիկներ | 91 |
| | 4.5. Զեկույցն արտաքին շահագրգիռ կողմերի շրջանում տարածելը | 116 |
| | 4.6. Հնարավոր մարտահրավերներ և խոչընդոտներ | 120 |
| | 4.7. Ջատագովում. առաջարկություններին հաջորդող գործողություններ | 124 |
| ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ | | 129 |
| | Հավելված 1. Հապավումներ և կրճատումներ | 129 |
| | Հավելված 2. Սահմանումներ | 131 |
| | Հավելված 3. Զեկույցների ձևեր (օրինակներ) | 133 |
| | Հավելված 4. Գրականության ցանկ | 149 |

# Նախաբան

Ազատ ընտրությունների իրավունքը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով: Այն քաղաքական իշխանության չարաշահման դեմ ժողովրդավարական բոլոր երաշխիքներից ամենահիմնարարն է: Քվեատուփի առջև իր անհատականությունն ու ընտրությունը խաղաղ արտահայտելու անձի կարողությունը առանցքային է ցանկացած հասարակության կայունության, ինչպես նաև Եվրոպայի ժողովրդավարական անվտանգության համար:

Ուստի, ընտրադիտորդների առջև դրված առաջադրանքների իրականացումը չափազանց կարևոր է: Ընտրությունները պետք է կազմակերպվեն պատշաճ ներգրավմամբ և ազնվությամբ, իսկ դիտորդները պետք է իրենց պարտականությունները կատարեն անկողմնակալ և թափանցիկ եղանակով: Նրանց ներկայությունը և պրոֆեսիոնալիզմը օգնում են ապահովել ընտրողների, ինչպես նաև միջազգային հանրության վստահությունը: Ուստի, Եվրոպայի խորհուրդը և մեր գործընկեր կազմակերպությունները ձգտում են օժանդակել դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին՝ իրենց աշխատանքը կատարելու ամենաբարձր չափանիշներին համապատասխան:

Սույն ձեռնարկում ներկայացված են ընտրական օժանդակության մեթոդներ, որոնք մեր կազմակերպության կողմից մշակվել են երկար տարիների ընթացքում: Ձեռնարկի նպատակն է օգնել դիտորդներին բարձրացնել իրենց աշխատանքների արդյունավետությունը և մշակել առավել որակյալ զեկույցներ: Մեզ համար մեկնարկային կետ է այն, որ անկյունից պասիվ դիտարկելու փոխարեն դիտորդներն այսօր ազգային ընտրական ընթացակարգերի մշակման գործում ակտիվ դերակատարում ունեն՝ խորհրդատվության և առաջարկությունների ներկայացման միջոցով: Ուստի, չափազանց կարևոր է, որ դիտորդական առաքելության զեկույցները և ազգային իշխանություններին տրամադրվող խորհրդատվությունը լինեն դյուրըմբռնելի, իսկ դրանց առանձին գործողությունների փոխակերպելը՝ գործնականում հնարավոր: Գոյություն ունեն նաև մի շարք կարևոր սկզբունքներ, որոնց, մեր կարծիքով, դիտորդները պետք է ընտրությունների ընթացքում հատուկ ուշադրություն դարձնեն: Այդպիսի սկզբունքների շարքին է դասվում կանանց, երիտասարդների, ազգային փոքրամասնությունների ու հաշմանդամ անձանց մասնակցության ապահովումը:

Համոզված եմ, որ ձեռնարկի նոր հրատարակությունը այսպիսի աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների համար կհանդիսանա օգտակար ու գործնականում կիրառելի ուղեցույց՝ արտացոլելով նրանց՝ այս բնագավառում ունեցած տասնամյակների փորձառությունը և օժանդակելով իրենց անգնահատելի աշխատանքում:

*Թորբյորն Յագլանդ*

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար

# Երախտիքի խոսք

*Շնորհակալության, գնահատման և երախտագիտության մեր խոսքերն ենք ուղղում հետևյալ անձանց և կազմակերպություններին՝*

«Ընտրությունների վերաբերյալ զեկույցներ պատրաստելը. Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար» հրատարակության վերանայման համար հրավիրված աշխատանքային խմբի փորձագետներին՝ Իվան Գոդարսկուն, Մարի-Կարին ֆոն Գումփենբերգին, Արդիտա Դրիզա Մաուրերին, Դիան Բունիանին, Ջորդի Բարաթին, Պետրա Բորնհոֆթին, Դանիելա Դիակոնուն, Նիկոլ Պանֆիլին, Քվենտին Ռիդին, Թամար Բարթայային, Ռոման Ուդոթին, Վլադիմիր Պրանին, Դմիտրի Նուրումովին՝ ներդրված ավանդի և գաղափարների համար,

Արևելյան գործընկերության երկրներում ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների Եվրոպայի խորհրդի ցանցին՝ Ուկրաինայի ընտրողների կոմիտեին, ՕՊՈՐԱ քաղաքացիական ցանցին (Ուկրաինա), Բելառուսի հելսինկյան կոմիտեին, «Վիասնա» մարդու իրավունքների կենտրոնին (Բելառուս), Ընտրությունների մոնիթորինգի և ժողովրդավարական ուսումնասիրությունների կենտրոնին (Ադրբեջան), Արդար ընտրությունների և ժողովրդավարության միջազգային կազմակերպությանը (Վրաստան), Պրոմո-ԼԵՔՍ կազմակերպությանը (Մոլդովա), «Թրանսփարենսի ինթերնեշընլ» հակակոռուպցիոն կենտրոնին (Հայաստան) և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին (Հայաստան)՝ դրսևորած պրոֆեսիոնալիզմի, նվիրվածության, ստեղծագործ մոտեցման և գործնական օրինակների համար,

«ՄԵՄՕ 98» հասարակական կազմակերպությանը (Սլովակիա)՝ արդյունավետ համագործակցության, ԶԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանման վերաբերյալ առանձին գլուխների համար առաջարկված գաղափարների և ներդրված ավանդի համար,

Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Ընտրությունների աջակցության և մարդահամարների բաժնի թիմին,

Եվրոպական հանձնաժողովին՝ 2015-2017թթ. «Ծրագրային համագործակցության կառուցակարգի» շրջանակներում տրամադրված ֆինանսական օժանդակության համար,

Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Զանգվածային լրատվամիջոցների և համացանցի կառավարման բաժնին, Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի օրենսդրական աշխատանքների վարչությանը, Վենետիկի հանձնաժողովի քարտուղարության Ընտրությունների և քաղաքական կուսակցությունների բաժնին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի քարտուղարության Ընտրությունների դիտարկման և միջխորհրդարանական համագործակցության բաժնին, Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության Քաղաքացիական հասարակության բաժնին՝ ներդրված ավանդի համար:

# Ներածություն

## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ընտրությունները ժողովրդավարական կառավարման նախապայմանն են, քանի որ դրանց միջոցով է, որ երկրի քաղաքացիները ազատ և օրենքի հիման վրա ընտրում են այն մարդկանց, որոնք օրինականորեն կառավարում են իրենց անունից և ելնելով իրենց շահերից: Ժողովրդավարական ընտրությունների անցկացումը, որոնց ժամանակ հաշվի են առնվում մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները և որոնք հիմնվում են իրավունքի գերակայության վրա, ի վերջո, նպաստում է այնպիսի ընթացակարգերի և ինստիտուտների ձևավորմանը, որոնք հիմք են լավ կառավարում հաստատելու համար: Ահա այս պատճառով է, որ ընտրություններն ու ընտրական գործընթացները արժանանում են Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ԵԽ անդամ պետություններում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ուշադրությանը:

Թեև միջազգային և տեղական դիտորդների միջև գոյություն ունի որոշակի տարբերակում, սակայն երկուսն էլ պետք է վայելեն հավասար ազատություններ ու իրավունքներ և հետամուտ լինեն ընդհանուր սկզբունքների պահպանմանը: Եվրոպայի խորհրդում համապետական և տեղական ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն իրականացնում են, համապատասխանաբար, Խորհրդարանական վերհաժողովը և Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը (հաճախ՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի հետ համատեղ): Ընտրությունների տեղական դիտորդական առաքելության մասին խոսելիս այս արտահայտությունը կարող է ներառել թե՛ կուսակցությունների կողմից հանդես եկող և թե՛ ոչ կուսակցական դիտորդներին: Սույն ձեռնարկը նպատակ է հետապնդում օժանդակել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ ընտրությունների ժամանակ իրականացնելու պրոֆեսիոնալ դիտորդական առաքելություն՝ իրենց դիտարկումները զեկույցներում ներկայացնելու միջոցով:

Չնայած Եվրոպայի խորհուրդը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) խնդիրը սկսել է ուսումնասիրել 1986 թվականին, երբ այն առաջին անգամ ընդունեց «Միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների իրավաբանական կարգավիճակի ճանաչման մասին» եվրոպական կոնվենցիան, սակայն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հզորացմանն ուղղված իր աշխատանքներն այն փաստացիորեն սկսեց Հարավարևելյան և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայից նոր անդամների միացմանը զուգընթաց: ՔՀԿ-ների իրավաբանական կարգավիճակի շուրջ աշխատանքներին զուգահեռ՝ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը մշակել է Ընտրադիտորդների՝ միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի մասին ուղենիշներ (ընդունվել է 2009 թվականի դեկտեմբերի 10-ին):[1]

Ուղենիշների նպատակն է խթանել «ընտրությունների դիտորդի», այդ թվում՝ «ընտրությունների տեղական դիտորդի» միջազգայնորեն ճանաչված կարգավիճակը: Փաստաթղթում նշվում է, որ թե՛ միջազգային և թե՛ տեղական դիտորդները պետք է օգտվեն միևնույն ազատություններից, պետք է ունենան ընդհանուր սկզբունքներ և իրավունքներ, ինչպես նաև պարտականություններ: Այն շեշտում է, որ միջազգային դիտորդական առաքելությունները, ի թիվս այլոց, պետք է ունենան պարտականություն

---

[1] Հասանելի է՝ www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2009)059-e.

գնահատելու և զեկուցելու այն մասին, թե արդյոք ազգային ընտրությունների դիտորդական կազմակերպություններն ունակ են իրականացնելու իրենց աշխատանքները՝ անհարկի միջամտությունից կամ սահմանափակումներից զերծ լինելու պայմաններում: Փաստաթղթում բերված են նաև միջազգային չափանիշներ այն դեպքերի համար, երբ ազգային կազմակերպություններն իրենց դիտորդական առաքելությունն իրականացնելու ընթացքում ենթարկվում են սահմանափակումների կամ հանդիպում են խոչընդոտների: Բացի դա, ուղենիշներում շեշտվում է, որ ներպետական օրենսդրության, ինչպես նաև միջազգային չափանիշների և բարեխիղճ գործելակերպի վրա հիմնված գնահատումը ընտրական գործընթացի իրականացումը գնահատելիս պետք է հանդիսանա առանցքային չափանիշ: Դրանցում շեշտադրվում է, որ քանի որ ընտրությունները գործընթաց են և ոչ՝ մեկօրյա միջոցառում, ուստի դիտորդական առաքելության գնահատման շրջանակում ներառվում են երեք փուլեր՝ նախընտրական փուլ, ընտրական փուլ և հետընտրական փուլ: Նախընտրական դիտորդական աշխատանքներն սկսվում են օրենսդրության գնահատմամբ, իսկ հարկ եղած դեպքում այն ներառում է օրենսդրության վերանայման գործընթացը. դրա մաս է կազմում նաև ընտրողների և կուսակցությունների գրանցումը: Հետընտրական փուլը ներառում է ընդհուպ մինչև դիմում-բողոքների և հայցադիմումների բողոքարկման գործընթացները, ինչպես նաև՝ ընտրված պաշտոնյաների կողմից իրենց պաշտոնների ստանձնումը: Ուղենիշները լրացնում են Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության սկզբունքների հռչակագրին (ընդունվել է 2005 թվականի հոկտեմբերի 27-ին Միավորված ազգերի կազմակերպության կողմից), որը միջազգային դիտորդների մասին է:

## ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐԱԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Ժամանակի ընթացքում տեղական դիտորդների դերը գնալով աճել է և այլևս չի սահմանափակվում ընտրության օրվա աշխատանքներով. այն աստիճանաբար ընդլայնվել է ՝ ընդգրկելով նախընտրական և, հատկապես, հետընտրական փուլերը: Ուստի, ընտրությունների տեղական դիտորդական աշխատանքներն այժմ դարձել են շատ ավելի բարդ, բայց կարևոր՝ ընտրական գործընթացի լեգիտիմության առումով, քանի որ դրանք անմիջականորեն նպաստում են մարդու իրավունքների խթանմանը և պաշտպանությանը:

Ընտրատեղամասերում դիտորդների ներկայությունը մնում է դիտորդական աշխատանքների առանցքակետը: Միևնույն ժամանակ, ընտրությունների ժամանակ օգտագործվող դիտորդական տեխնիկաները կատարելագործվել են: Նկատելի փոփոխություններ են տեղի ունեցել ընտրադիտորդների տեղակայման, նրանց կողմից տվյալների հավաքման, զեկույցների պատրաստման և այլ առումներով: Այս փոփոխություններն արտացոլում են քաղաքական մշակույթի կարևորության առավել բարձր արժևորումը և ընտրական գործընթացի որակը առավել համակարգված գնահատելու անհրաժեշտության ավելի խորը ընկալումը: Միջազգային չափանիշներին և լավագույն ընտրական գործելակերպերին շարունակական անդրադարձը և դրանց մեկնաբանումը հեշտացրել են ընտրական գործընթացի գնահատումը՝ որպես ամբողջություն, և դրա տարբեր բաղադրիչների ընկալումը դիտորդների համար:

Արդյունքում, տեղական դիտորդները ներկայումս կարող են օգտվել շատ ավելի ընդգրկուն գործիքներից, քան նախկինում, ինչը հզորացրել է նրանց կարողությունները: Քանի որ ընտրությունների դիտորդական աշխատանքներն ավելի համակարգված են դարձել, դիտորդներն, իրենց հերթին, դարձել են ավելի հմուտ ընտրական գործընթացում տարբեր շահագրգիռ կողմերի կողմից իրականացվող ամենախորամանկ

ընտրակեղծիքների և ընտրակեղծարար վարքագծի փորձերը հայտնաբերելուն և կանխարգելելուն ուղղված տարաբնույթ ռազմավարություններ մշակելու և դրանք կիրառելու հարցում: Տեղական դիտորդները դարձել են ընտրական գործընթացի անփոխարինելի պաշտպանները:

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐԱԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԱՃՈՂ ԴԵՐԸ

Տեղական դիտորդական խմբերի պրոֆեսիոնալիզմի աճին համընթաց՝ միջազգային հանրությունն սկսել է ավելի ու ավելի շատ հիմնվել նրանց փորձառության վրա: Մասնավորապես, տեղական դիտորդներն ավելի ծանոթ են տեղի իրավիճակին. նրանք օժանդակում են միջազգային դիտորդներին՝ ընտրական գործընթացի հենց սկզբից տրամադրելով դրա վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (նույնիսկ նախքան միջազգային դիտորդների ժամանումը): Ավելին, տեղական դիտորդները ոչ միայն դիտորդական աշխատանքներ իրականացնելու, այլև ընտրական գործընթացում ակտիվ մասնակցելու առաքելություն ունեն. նրանք գլխավորապես հետամուտ են լինում ընտրախախտումների և թերացումների քննությանը ընթացք տալուն և օժանդակում ընտրական գործընթացի բարելավմանն ուղղված քայլերի իրականացմանը:

Ավելի բարձր պրոֆեսիոնալիզմ ունեցող տեղական դիտորդների առկայության պայմաններում քաղաքացիներն ավելի ու ավելի ընդարձակ մասնակցություն են ունենում ընտրական գործընթացում, քանի որ նրանք ընտրություններին մասնակցում են ոչ միայն որպես ընտրողներ և թեկնածուներ, այլև որպես դիտորդներ: Դրանով նրանք նպաստում են ընտրական գործընթացի թափանցիկությանն ու արժանահավատությանը, ուստի, խթանում են արդար և ազնիվ ընտրությունների նկատմամբ հանրային վստահությունը:

## ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑՈՂ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Կախված երկրից՝ տեղական դիտորդական առաքելությունների իրավունքները միշտ չէ, որ պահպանվում են, իսկ նրանց դիտորդական աշխատանքները հաճախ ենթարկվում են սահմանափակումների: Օրինակ՝ 2003 թվականին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն Ադրբեջանի նախագահական ընտրությունների վերաբերյալ իր վերջնական զեկույցում նշել էր, որ օրենքով արգելված է «այն տեղական կազմակերպություններին, որոնց բյուջեի 30%-ից ավելին գոյանում է օտարերկրյա պետությունից ստացվող ֆինանսավորման միջոցով, ընտրությունների ժամանակ իրականացնել դիտորդական աշխատանքներ»: Այս օրենսդրությունն ունեցավ ընտրությունների թափանցիկությունը, ինչպես նաև հանրային մասնակցությունը և վստահությունը նվազեցնող ազդեցություն: Այն սահմանափակեց ՀԿ-ների՝ ընտրական հարցերի հետ կապված քարոզչական և լոբիստական հնարավորությունները»:[2] Մեկ այլ օրինակ է Ուկրաինայի 2010 թվականի նախագահական ընտրությունը, որի ժամանակ իշխանությունները արգելեցին ոչ կուսակցական տեղական դիտորդների մասնակցությունը: 2014 թվականին երկրում իրավական վիճակը փոխվեց, և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հնարավորություն ստացան կատարելու դիտորդական աշխատանքներ:

Այնուամենայնիվ, որոշ երկրներում տեղական դիտորդները դեռևս բախվում են այնպիսի սահմանափակումների, որոնք ընտրական ողջ գործընթացի ընթացքում

---

[2] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Վերջնական զեկույց, Ադրբեջանի Հանրապետություն, 2003 թվականի հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրություններ, հասանելի է՝ www.osce.org/odihr/elections/azerbaijan/13467?download=true

խոչընդոտում են նրանց համապարփակ իրավունքների իրացմանը: Գիտակցելով, որ այս գործընթացը հաճախ երկար ճանապարհ է անցնում՝ սույն ձեռնարկը նպատակ է հետապնդում խրախուսել բոլոր տեղական դիտորդական խմբերին՝ հետամուտ լինելու իրենց ժողովրդավարական նպատակներին, որպեսզի հանրային գործերի վարմանը մասնակցելու միջազգայնորեն ճանաչված իրենց իրավունքը լիարժեքորեն իրացվի ընտրական ողջ շրջափուլի ընթացքում՝ ի նպաստ յուրաքանչյուր երկրի բարօրության:

Իհարկե, մինչ որոշ երկրներում տեղական դիտորդական առաքելությունները փորձում են օրենսդրությամբ ամրագրել իրենց հիմնարար իրավունքները, այլ՝ առավել փորձառու և պրոֆեսիոնալ խմբեր ձգտում են ձեռք բերել լրացուցիչ գործիքներ, որոնք կօգնեն մեծացնելու իրենց կողմից գործադրվող դիտորդական ջանքերի և ստացվելիք արդյունքների ազդեցությունը: Միևնույն ժամանակ, չափազանց կարևոր է, որ տեղական դիտորդները ծանոթ լինեն միջազգային չափանիշներին, համապատասխան ներպետական օրենսդրությանը և իրենց պարտականություններին: Ամենակարևոր խնդիրները որոշելու հարցում տեղական դիտորդներին օժանդակելը նույնպես Եվրոպայի խորհրդի գործառույթներից է:

Եվրոպայի խորհրդի կողմից Արևելյան գործընկերության երկրներում նախընտրական օժանդակության ծրագրերի ընթացքում անցկացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ տեղական դիտորդական խմբերի պրոֆեսիոնալիզմը և անկախությունը հնարավոր է ավելի ամրապնդել, եթե նրանց տրամադրվի լրացուցիչ օժանդակություն հետևյալ ոլորտներում՝

- դիտորդական աշխատանքների առավել համապարփակ և համակարգային մոտեցման մշակում, որը կարող է կիրառվել առավել կառուցվածքային և բովանդակային զեկույցների պատրաստման, այդ թվում՝ առաջարկությունների ներկայացման և հետևողական քայլերի ձեռնարկման հարցում,
- միջազգային ընտրական չափանիշների և բարեխիղճ գործելակերպի առավելագույն ինտեգրում իրենց դիտորդական մեթոդաբանության շրջանակում,
- անկողմնակալության և դիտորդական աշխատանքների ժամանակ ընտրություններին չմիջամտելու պարտավորությունների խիստ պահպանում, այդ թվում՝ փաստերի և արժանահավատ ապացույցների վրա հիմնված զեկույցների և վարքագծի կանոնների պահպանում:

Առանձնացնելով վերոնշյալ կարիքները՝ Եվրոպայի խորհրդի գնահատման շրջանակում տեղական դիտորդները նշել են, որ իրենց չեզոքությունը և օբյեկտիվությունը հաճախ վիճարկվում են հատկապես խիստ մրցակցային ընտրությունների ժամանակ: Տեղում աշխատանքներ իրականացնող տեղական դիտորդներին հաճախ սպառնում են, վախեցնում և/կամ ընտրակաշառք առաջարկում, իսկ նրանցից ոմանք նույնիսկ հետապնդվում են: Նրանց խանգարում են իրականացնել իրենց դիտորդական աշխատանքը, դուրս են հանում ընտրատեղամասերից, ֆիզիկական սպառնալիքների են ենթարկում և/կամ նրանց ընկերներին ու ընտանիքի անդամներին խիստ նախազգուշացնում են, որ իրենց դեմ հետագայում կձեռնարկվեն գործողություններ:

## ՁԵՌՆԱՐԿԻ ՄԱՍԻՆ

Տեղական դիտորդների առջև ծառացող խնդիրները Եվրոպայի խորհրդի ուշադրության կենտրոնում են՝ վերջինիս կողմից ընտրական ոլորտի համար տրամադրվող տեխնիկական օժանդակության նպատակով: Սույն ձեռնարկը Եվրոպայի խորհրդի կողմից տեղական դիտորդների կարիքների գնահատման արձագանքն է՝ առաջարկություններ պարունակող դիտորդական զեկույցներ գրելու իրավունքի հատուկ շեշտադրմամբ: Այն կնպաստի տեղական դիտորդների կարողությունների զարգացմանը և նրանց պրոֆեսիոնալիզմի խթանմանը:

Ձեռնարկը մշակված է տեղական դիտորդների համար՝ հատուկ շեշտադրելով Հիմնական թիմի անդամների կողմից զեկույցների պատրաստումը: Միևնույն ժամանակ, ձեռնարկը ներառում է երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների կողմից զեկույցների պատրաստման հարցերը: Այն հիմնականում անդրադառնում է ընտրությունների վերջնական զեկույցներին, ինչպես նաև՝ նախնական արդյունքների վերաբերյալ զեկույցներին/հայտարարություններին, միևնույն ժամանակ անդրադարձ է կատարվում նաև միջանկյալ զեկույցներին: Ձեռնարկը ներառում է առաջարկներ արտահերթ զեկույցների, մամուլի հաղորդագրությունների մասին, ինչպես նաև՝ օգտակար խորհուրդներ, թե ինչպես հետևել առաջարկությունների իրականացմանը:

Ձեռնարկում ներկայացված է դիտորդական աշխատանքների պլանավորման գործընթացը՝ զեկույցներ պատրաստելու տեսանկյունից, դիտորդական առաքելության շրջանակը, կազմակերպությունների՝ զեկույցներ պատրաստելու կարողության գնահատումը, դիտորդական առաքելության առանցքային սկզբունքները և դիտորդական առաքելության հիմնական հարցերը, թե ինչպես գնահատել սեփական կազմակերպության՝ զեկույցներ պատրաստելու կարողությունները, հիմնական դիտորդական սկզբունքները և թե ինչպես անցկացնել զեկույցներ պատրաստելու վերաբերյալ վերապատրաստում:

Այնուհետև, ձեռնարկում զետեղված է ներքին զեկույցների պատրաստմանը վերաբերող բաժին, որն անդրադառնում է զեկույցների մշակման պլանին, զեկույցներ պատրաստելու հարցում աշխատակազմի պարտականություններին, նրանց վերապատրաստմանը և ներքին զեկույցների ձևերին:

Ձեռնարկը հաջորդիվ անդրադառնում է արտաքին զեկույցների պատրաստմանը. այս բաժինը սկսում է Հիմնական թիմի անդամների վերապատրաստման հարցերով և զեկույցների պատրաստման վերաբերյալ օգտակար խորհուրդներով, որին հաջորդում է վերջնական զեկույցների կառուցվածքի և բովանդակության նկարագրությունը:

Ձեռնարկի կարևոր բաժիններից մեկը նվիրված է զեկույցների թեմաներից յուրաքանչյուրի շուրջ կազմվող ստուգաթերթիկներին՝ քաղաքական համատեքստ, իրավական դաշտ, ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու մարմին, ընտրացուցակներ և ընտրողների գրանցում, թեկնածուների գրանցում, ընտրողների կրթություն, ընտրական քարոզարշավ, ԶԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանում, ընտրության օր, ձայների հաշվարկ և արդյունքների հրապարակում, բողոք-դիմումներ և հայցադիմումներ, հետընտրական զարգացումներ:

Ձեռնարկը եզրափակվում է զեկույցի՝ հանրության շրջանում տարածման և դրանում ներկայացված առաջարկությունների քարոզչության վերաբերյալ օգտակար խորհուրդներով:

Սույն ձեռնարկի միջոցով Եվրոպայի խորհուրդը հույս ունի նպաստել տեղական դիտորդական առաքելությունների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, ինչն առանցքային դեր ունի ընտրական գործընթացի բարեվարքությունը խթանելու և

պաշտպանելու հարցում՝ եվրոպական ընտրական ժառանգության սկզբունքներին համահունչ: Քանի որ ընտրությունը մեկօրյա միջոցառում չէ, առավել ևս կարևոր է, որ տեղական դիտորդական խմբերը հանձն առնեն նախընտրական և հետընտրական զարգացումների՝ որպես ընտրական շրջափուլի անբաժանելի մասերի դիտարկումը: Եվրոպայի խորհուրդը շարունակելու է օժանդակել այս ոլորտի հետագա զարգացումներին:



Գլուխ 1

# Ընտրական շրջափուլը և զեկույցներ պատրաստելը

## 1.1. ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԻ ՄԱՍ

Ընտրությունները տեղի են ունենում պարբերաբար կրկնվող ընտրական շրջափուլի ընթացքում: Ընդհանուր առմամբ՝ ընտրական շրջափուլ է համարվում ընտրության անցկացման պահից մինչև հաջորդ ընտրության անցկացման ժամանակահատվածը: Այս պնդման հիմքում ընկած է այն գաղափարը, որ ընտրությունը մեկուսացված իրադարձություն չէ, այլ գործընթաց, որն սկսվում է ընտրության օրվանից առաջ և շարունակվում դրանից շատ ավելի հետո: Միևնույն ժամանակ սովորաբար մեկից ավելի ընտրական շրջափուլեր են ընթանում: Օրինակ՝ չորս տարին մեկ անգամ ժամկետով ընթացող խորհրդարանական ընտրությունների ընտրական շրջափուլը տարբեր է հինգ տարին մեկ անգամ ընթացող նախագահական ընտրությունների շրջափուլից:

Կարող են կիրառվել նաև այլ եզրույթներ, որոնք, սակայն, հաճախ ավելի նեղ իմաստ ունեն: Դրանցից մեկն է «ընտրաշրջանը»: Այն սովորաբար վերաբերում է այն ժամանակահատվածին, որն սկսվում է ընտրությունների մեկնարկի ամսաթվի պաշտոնապես հրապարակմամբ մինչև այն օրը, երբ ընտրությունների վերջնական արդյունքները հաստատվում են լիազոր մարմինների կողմից: Դիտորդները պետք է նման բազմաբնույթ տերմինաբանության նկատմամբ դրսևորեն զգայունություն: Եվ ինչն ավելի կարևոր է՝ նրանք պետք է հստակ պատկերացում ունենան համապատասխան ընտրական շրջափուլում տեղի ունեցող իրադարձությունների մասին, որոնք այն ընտրությունների տարբեր ասպեկտների համար էական նշանակություն ունեն, որոնց ժամանակ վերջիններս պատրաստվում են իրականացնել դիտորդական առաքելություն:

Այն, թե ընտրական շրջափուլի որ հատվածն է կարևոր դիտորդների համար, կախված է այն բանից, թե ինչ դիտորդական առաքելություն են վերջիններս պատրաստվում իրականացնել: Օրինակ՝ քվեարկության նախապատրաստումը և անցկացումը դիտարկելու նպատակով ուշադրությունը կարելի է սևեռել ընտրությունների օրվա, ընտրողների գրանցման ժամանակահատվածի, ընտրական հանձնաժողովների ստեղծման ժամանակահատվածի և նույնիսկ առանձին քաղաքական փոփոխությունների վրա, ինչպիսիք են օրինակ՝ ընտրատարածքների փոփոխությունները կամ ընտրական օրենսգրքում կատարվող փոփոխությունները: Քարոզարշավների ֆինանսավորումը մոնիթորինգի ենթարկելուն վերաբերող մեկ այլ օրինակում հատուկ ուշադրություն է հարկավոր դարձնել պաշտոնական ընտրական քարոզարշավի ժամանակահատվածում և դրանից դուրս եկամուտների և ծախսերի կապին:

**Ընտրական շրջափուլի մոտեցումը**

Ընտրական շրջափուլը պլանավորման և վերապատրաստման տեսողական գործիք է, որը մշակվել է Ժողովրդավարության և ընտրությունների աջակցության միջազգային ինստիտուտի (IDEA/ԺԸԱՄԻ) կողմից:[3] Այն ցույց է տալիս ընտրական գործընթացի և երկու ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածի տարբեր փուլերը: Այն ներառում է գործողություններ, որոնք պետք է այդ փուլերի ընթացքում ձեռնարկվեն տարբեր մարդկանց և կազմակերպությունների կողմից: Ընտրական շրջափուլի գործիքը մշակվել է

[3] Հասանելի է՝ http://ecycle.idea.int/:

ընտրությունների՝ որպես մեկանգամյա միջոցառում ընկալումը փոխելու նպատակով՝ փոխարենը  այն դիտարկելով որպես համալիր գործընթացների շարք: Ընտրական շրջափուլը նախատեսված է որպես ուղեցույց կիրառելու համար, այլ ոչ թե որպես ընտրությունների ցիկլային բնույթի անփոփոխ մոդել: Իրականում, յուրաքանչյուր երկրի ընտրական գործընթացները պարտադիր չէ, որ ճշգրտորեն համընկնեն ընտրական շրջափուլի մոդելի հետ, քանի որ այդ գործընթացներից շատերը շատ ավելի բարդ են, քան մոդելը:

**Գծապատկեր 1. Ընտրական շրջափուլը**




Աղբյուր՝ www.idea.int/elections/eea

| POST-ELECTION PERIOD | ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ |
|---|---|
| Audits & Evaluations<br>Voter List<br>Update | Ստուգումներ և<br>գնահատումներ<br>Ընտրացուցակ<br>Թարմացում |
| Institutional Strenghtening &<br>Professional Development<br>Legal Reform<br>Archiving & Research<br><br>Post Election | Ինստիտուցիոնալ<br>հզորացում և<br>մասնագիտական<br>զարգացում<br>Իրավական<br>բարեփոխում<br>Արխիվացում և<br>հետազոտություն<br><br>Հետընտրական շրջան |
| Constitution<br>Legistation<br>Electoral System & Boundaries<br><br>Electoral Bodies<br>Codes of Conduct | Սահմանադրություն<br>Օրենսդրություն<br>Ընտրական համակարգ<br>և ընտրատարածքներ<br>Ընտրական մարմիններ<br>Վարքագծի կանոններ |

| | |
|---|---|
| Legal Framework | Իրավական դաշտ |
| Budgeting, Funding & Financing<br>Election Calendar<br>Recruitment & Procurement<br>Logistics & Security<br>Planning & Implementation | Բյուջետավորում, ֆինանսական միջոցների հայթհայթում և ֆինանսավորում<br>Ընտրությունների օրացույց<br>Համալրում և գնումներ<br>Նյութատեխնիկական ապահովում և անվտանգություն<br>Պլանավորում և իրականացում |
| Training and Education<br>Operational Training for Election Officials<br>Civic Education<br>Voter Information | Վերապատրաստում և կրթություն<br>Ընտրությունների համար պատասխանատու պաշտոնյաների գործառնական վերապատրաստում<br>Քաղաքացիական կրթություն<br>Ընտրողների համար տեղեկություններ |
| PRE=ELECTION PERIOD | ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ |
| Voter Registration<br>Voters Registration<br>Observers Accreditation<br>Domestic Observers<br>Parties & Candidates | Ընտրողների գրանցում<br>Ընտրողների գրանցում<br>Դիտորդների հավատարմագրում<br>Տեղական դիտորդներ<br>Կուսակցություններ և թեկնածուներ |
| Electoral Campaign | Ընտրական քարոզարշավ |
| Campaign Coordination<br>Breaches & Penalties<br>Party Financing<br>Media Access<br>Code of Conduct | Քարոզարշավի համակարգում<br>Խախտումներ և տուգանքներ<br>Կուսակցությունների ֆինանսավորում<br>Լրատվամիջոցների հասանելիություն<br>Վարքագծի կանոններ |
| Vote Counting<br>Voting | Ձայների հաշվարկ<br>Քվեարկություն |

| | |
|---|---|
| Special & External Voting<br><br>Voting Operations and Election Day | Հատուկ և արտաքին քվեարկություն<br><br>Քվեարկության գործողություններ և ընտրությունների օր |
| ELECTION PERIOD | ԸՆՏՐԱՇՐՋԱՆ |
| Official Results<br>Complaints and Appeals<br>Tabulation of Results<br>Verification of Results | Պաշտոնական արդյունքներ<br>Բողոք-դիմումներ և հայցադիմումներ<br>Արդյունքների հաշվարկ<br>Արդյունքների ստուգում |
| The Electoral Cycle | Ընտրական շրջափուլը |

**Դիտորդական աշխատանք՝ ընտրությունների օրվանից մինչև ընտրական շրջափուլը**

Ընտրական շրջափուլի գործիքի մշակումը, որի նպատակն է նպաստել ընտրական առավել ընդգրկուն գործընթացների շեշտադրմանը, որոշ առումներով դիտորդական ռազմավարությունների զարգացման արդյունք է: Մինչ այդ քաղաքացիական շատ կազմակերպություններ ուշադրությունը սևեռում էին քվեարկության և ձայների հաշվարկման գործընթացների վրա: Ներկայումս նրանք ընդլայնել են դիտորդական աշխատանքների իրենց շրջանակը՝ ներառելով օրենսդրության գնահատումը և ընտրական այլ առանցքային գործընթացները: Ի լրումն սրան, ընտրությունների նկատմամբ համալիր մոտեցում ցուցաբերելը նույնպես հանդիսանում է ընտրական բարեփոխումների արդյունավետ ջատագովման նախապայման, ինչը պետք է բնականորեն հաջորդի դիտորդական առաքելությանը:

**<u>Փորձագիտության ձևավորում</u>**

Ընտրական շրջափուլի մոդել կիրառելու համար կազմակերպությունները պետք է ձևավորեն անհրաժեշտ փորձագիտություն, որը հնարավորություն կտա գնահատել ընտրական գործընթացների առավել բարդ ասպեկտները: Պետք է ձևավորել փորձագետների թիմ, որոնցից յուրաքանչյուրը պետք է կենտրոնանա առանձին առանցքային գործընթացների վրա: Նման թիմային փորձագիտության ձևավորումը մեծապես կնպաստի զեկույցների որակի ապահովմանը, քանի որ դրանցում կներկայացվեն խորքային եզրակացություններ, վերլուծություն և առաջարկություններ, ինչպես նաև այն թույլ կտա բաշխել զեկույցների մշակման աշխատանքների ծավալը մասնագետների միջև:

**Դիտորդական աշխատանքների մեթոդաբանությունը և զեկույցների պատրաստման ռազմավարությունը**

Ինչպես ներկայացված է 3-րդ գլխում, ընտրական շրջափուլի մոտեցումը զգալի ազդեցություն կունենա զեկույցների պատրաստման ռազմավարության և զեկույցների բնույթի վրա: Եթե ընտրությունների օրվա մասին զեկույցների պատրաստումը հզոր փաստագրական բաղադրիչ ունի, ապա առանցքային գործընթացների մասին զեկուցումը ունի հզոր վերլուծական բաղադրիչ: Դա նշանակում է, որ ուշադրության՝ նախընտրական դիտորդական լայնածավալ աշխատանքների վրա կենտրոնացման պայմաններում զեկուցման համար պահանջվում է առավել խոր վերլուծական և գրավոր հմտություններ: Այնուամենայնիվ, այս մոտեցման օգուտները հատկապես տեսանելի են հետընտրական շրջանում, երբ կազմակերպություններն իրականացնում են բարեփոխումների քարոզչական աշխատանքներ: Խորը վերլուծությունը և առաջարկությունների հստակ ձևակերպումն ամուր հիմք կստեղծեն ընտրական բարեփոխումների նպատակների

ձեռքբերման համար:

Ընտրական առանցքային գործընթացների մասին զեկուցելու համար կազմակերպությունները պետք է մշակեն դիտորդական աշխատանքների երկարաժամկետ մեթոդաբանություն, որի շուրջ պետք է աշխատի բավարար թվով և կառուցվածքով աշխատակազմ:

Դիտորդական աշխատանքներ ծրագրելիս օգտակար է որպես օրինակ մշակել ընտրական շրջափուլի սեփական մոդելը: Նման անհատականացված ընտրական շրջափուլի մոդելը կդյուրացնի դիտորդական աշխատանքների երկարաժամկետ մեթոդաբանության մշակումը, այդ թվում՝ դիտորդական թիմի մեծության և կառուցվածքի, ինչպես նաև զեկույցների պատրաստման ռազմավարության առումով: Կախված դիտորդական առաքելության նպատակներից՝ կազմակերպությունը պետք է որոշի՝ արդյո՞ք կազմելու է մեկ զեկույց ամբողջ ընտրական շրջափուլի համար, թե պետք է զեկուցի հիմնական դեպքերից առաջ և հետո, ինչպիսին են օրինակ՝ ընտրությունների հայտարարումը, ընտրատեղամասերի սահմանազծման ավարտը կամ ընտրողների գրանցումը, թեկնածուների վերջնականացված ցուցակը, ընտրական քարոզարշավը, ընտրության օրը, արդյունքների հրապարակումը կամ ընտրություններին առնչվող բողոքարկումները:

## 1.2. ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գոյություն ունի վաղուց ձեռք բերված ոչ ֆորմալ համաձայնություն զեկույցների պատրաստմանն առնչվող սկզբունքների շուրջ, որոնց դիտորդական կազմակերպությունները պետք է հետևեն: Զեկույցները պետք է լինեն ճշգրիտ, օբյեկտիվ և անաչառ՝ առանց կուսակցական կողմնակալության: Դրանք պետք է լինեն նաև ժամանակին ներկայացված, թափանցիկ և վերլուծությամբ հագեցած: Զեկույցի որակը պայմանավորված է սույն ձեռնարկում ներկայացված մի շարք գործոններով, ինչպես օրինակ՝ լեզվի ճիշտ օգտագործումը, տեղեկատվության ներկայացման կառուցվածքը կամ գրելաոճը: Այս գործոնները կարող են տարբեր լինել՝ կախված առանձին զեկույց պատրաստողից: Այնուամենայնիվ, ինչպես ընդգծված է Ընտրությունների տեղական դիտորդների գլոբալ ցանցի (GNDEM) կողմից մշակված Քաղաքացիական կազմակերպությունների կողմից ընտրությունների ոչ կուսակցական դիտորդական առաքելության և մոնիթորինգի գլոբալ սկզբունքների հռչակագրում, դիտորդները պետք է մշտապես հիշեն, որ «ընտրությունների ոչ կուսակցական քաղաքացիական դիտորդներն ու մոնիթորինգ իրականացնողները կարող են համարվել հատուկ մասնագիտացում ունեցող մարդու իրավունքների պաշտպաններ՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների շեշտադրմամբ, որոնք կենտրոնական դեր են խաղում արդար ընտրությունների անցկացման հարցում»:

Ընտրությունների մասին զեկույցների պատրաստման առանցքային սկզբունքները ստանդարտացնելու նպատակով միջազգային պետական և հասարակական կազմակերպությունները զեկույցների պատրաստումը ներառել են Միջազգային դիտորդական առաքելության սկզբունքների և միջազգային դիտորդների վարքագծի կանոնների հռչակագրում (այսուհետ՝ Հռչակագիր)՝ որպես դրա առանցքային հայեցակետերից մեկը: Հռչակագիրը ներկայացվել է Միավորված ազգերի կազմակերպությունում 2005 թվականի հոկտեմբերի 27-ին և վավերացվել է բազմաթիվ կազմակերպությունների, այդ թվում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի և Վենետիկի հանձնաժողովի կողմից: Քաղաքացիական կազմակերպությունների միջազգային հանրությունը՝ GNDEM-ը, հետևեց օրինակին և մշակեց Գլոբալ սկզբունքների հռչակագիրը (վերոնշյալ), որը նույնպես ներառում է զեկույցներ պատրաստելու առանցքային սկզբունքներ: Վերջինս ներկայացվել է Միավորված ազգերի կազմակերպությունում 2012 թվականի ապրիլի 3-ին: Հռչակագրի

սկզբունքները անմիջականորեն բխում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (ՄԻՀՀ) համընդհանուր կերպով ընդունված 21-րդ հոդվածից և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 25-րդ հոդվածից: Այն վավերացվել է Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից (2012 թվականի հունիսի 15-16-ին)[4], ինչպես նաև հաստատվել Խորհրդարանական վեհաժողովի՝ ընտրությունների ժամանակ ժողովրդավարությունը խթանելու մասին 1987 (2012) բանաձևով՝ ընդունված 2012 թվականի հոկտեմբերի 3-ին:[5] Սույն գլխում ներկայացված զեկույցների պատրաստման սկզբունքները անմիջականորեն բխում են այդ Հռչակագրից:

**Զեկույցների պատրաստումը որպես իրավունք**

Ընտրական գործընթացների մասին զեկուցելու իրավունքը համարվում է հանրային գործերի վարմանը մասնակցելու իրավունքի անբաժան մասը, ինչպես այն սահմանված է ՄԻՀՀ-ում և ՔՔԻՄԴ-ում: Այս իրավունքի հռչակագրում բերված մեկնաբանության համաձայն՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են լեգիտիմորեն պահանջել ընտրություններին վերաբերող իրավական շրջանակների, ինստիտուտների, գործընթացների և քաղաքական միջավայրի հասանելիությունը, գնահատել դրանք և դրանց վերաբերյալ նշել զեկույցներում: Հռչակագրում նաև նշված է, որ քաղաքացիական կազմակերպությունները կարող են առաջարկություններ ներկայացնել և ջատագովել իրավական դաշտի բարելավում, ինչպես նաև օրենքների լիարժեք կիրարկում և ընտրություններում քաղաքացիների մասնակցության համար խոչընդոտների լիակատար վերացում:

**Մեթոդաբանությունը**

Զեկույցը պետք է ներառի դիտորդական առաքելության մեթոդաբանությունը: Բարեխիղճ գործելակերպ է համարվում ընտրական շրջափուլի բոլոր փուլերի վերաբերյալ դիտորդական աշխատանքներ իրականացնելը և դրանց մասին զեկուցելը, երբ դա հնարավոր է: Հռչակագրում ներկայացված է ընտրական գործընթացի գնահատման ենթակա բաղադրիչների ընդարձակ ցանկ: Այնուամենայնիվ, եթե անհրաժեշտ է հասցեագրել կոնկրետ խնդիր կամ մտահոգության ոլորտ, թույլատրելի է դիտորդական աշխատանքները սահմանափակել ընտրական գործընթացի որոշակի կողմերով: Այսպիսի դեպքերում զեկույցում պետք է ուղղակիորեն այդ մասին նշվի:

**Ժամանակացույցը**

Զեկույցների պատրաստման ժամանակացույցի առումով հռչակագրում նախատեսված են երկու առանցքային հարցեր: Առաջինը վերաբերում է այն բանին, որ տեղական դիտորդական առաքելություն իրականացնելիս քաղաքացիական կազմակերպությունները պատասխանատվություն են ստանձնում կանոնավոր կերպով հանդես գալ զեկույցներով, հայտարարություններով և հաղորդագրություններով: Ընտրությունների վերաբերյալ զեկույցներ ներկայացնելուց հրաժարվելը չի խրախուսվում:

Երկրորդ խնդիրը վերաբերում է տեղեկատվությանը տիրապետելու իրավունքին: Հռչագիրը հաստատում է, որ քաղաքացիական կազմակերպությունների կողմից մշակված տեղեկությունները, վերլուծությունները և եզրակացությունները պատկանում են վերջիններիս, և որ այդ կազմակերպություններն իրենք պետք է որոշեն (հաշվի առնելով նաև իրավական պահանջները), թե երբ և ինչպես են ներկայացվելու իրենց եզրակացություններն ու առաջարկությունները:

---

[4] Հասանելի է՝ www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(282012)29018-e:

[5] Հասանելի է www.assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=19121 &lang=en:

**Ընտրությունների արդյունքների վերաբերյալ զեկուցելը**

Ձայների զուգահեռ հաշվարկի և ձայների ստուգման այլ տեխնիկաների միջոցով արդյունքների կանխատեսումների, ինչպես նաև վիճակագրական վերլուծությունների ժամանակ պետք է լրջորեն մտածել զեկույցների ներկայացման ժամանակի մասին: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ներքին զեկույցների վստահելիության, բավարար տվյալների ստացման և վիճակագրական տվյալների ճշգրտության վրա: Վիճակագրության հիման վրա կազմված զեկույցները պետք է ներառեն տեղեկություններ մեթոդաբանության, ինչպես օրինակ՝ ընտրանքի և վիճակագրական հաշվարկների մասին:

**Պետական հաստատությունների հետ համագործակցությունը**

Քաղաքացիական կազմակերպությունները պետք է մշտապես գործեն ընտրական մարմինների և այլ պետական հաստատությունների հետ համագործակցության պայմաններում, որը պետք է հիմնվի բարի կամքի դրսևորման վրա: Ավելին, քաղաքացիական կազմակերպությունները պետք է ձգտեն նման համագործակցության: Նրանք պետք է փորձեն հանդիպել ընտրական մարմինների հետ, պահանջել տեղեկություններ կամ պարզաբանումներ օրենսդրության կիրառման, գործելակերպերի մասին, և, ի վերջո, պետք է համապատասխան պետական հաստատություններին փոխանցեն դիտորդական աշխատանքների ժամանակ հավաքված տեղեկությունները:

**Առաջարկություններ և ջատագովում**

Ընտրությունների դիտորդական առաքելության զեկույցները չպետք է սահմանափակվեն միայն փաստերի և վերլուծությունների ներկայացմամբ: Այն կազմակերպությունները, որոնք վավերացրել են Հռչակագիրը, իրականում հանձն են առել ներկայացնել առաջարկություններ, որոնք ուղղված են ընտրական գործընթացի ամրապնդմանը, իրականացնել ջատագովման աշխատանքներ՝ իրավական դաշտը, ինչպես նաև ընտրությունների համար պատասխանատու մարմնի կողմից ընտրությունների արդյունավետ իրականացումը բարելավելու ուղղությամբ:

**Ֆինանսական միջոցների տրամադրում**

Ֆինանսական միջոցների աղբյուրների վերաբերյալ զեկուցելը դիտորդական կազմակերպության պարտավորությունն է: Ընտրությունների տեղական դիտորդական աշխատանքի մեջ ներգրավված քաղաքացիական կազմակերպություններից ակնկալվում է նաև տեղեկություններ բացահայտել այն հարաբերությունների և պայմանների մասին, որոնք կարող են շահերի բախում առաջացնել կամ դիտորդական աշխատանքների անկախության համար հանդիսանալ խոչընդոտ:

**Անկողմնակալությունը**

Անկողմնակալությունը և անաչառությունը ցանկացած տեղական դիտորդական առաքելության առանցքային հատկանիշներից են: Լեզվի ճիշտ ընտրությունը և պատշաճ ձևակերպված վերլուծությունը պարտադիր նախապայման են կողմնակալության տպավորություն չստեղծելու համար: Անկողմնակալության և ճշգրտության առումներով զեկույցները պետք է համապատասխանեն էթիկայի ամենաբարձր չափանիշներին: Անկողմնակալ զեկույցների պատրաստման սկզբունքը կարևոր է ոչ միայն առանձին քաղաքական կուսակցությունների և կառավարման մարմինների դիրքորոշումները հաշվի առնելու տեսանկյունից, այլև հանրաքվեի միջոցով ընտրության դրված հարցերի դեպքում:

**Թափանցիկությունը**

Ընտրությունների դիտարկումը դիտանցման (մոնիթորինգի) ձև է և հատկապես զգայուն է մի շարք պատճառներով: Քաղաքացիական այն կազմակերպությունները, որոնք

իրականացնում են ընտրությունների մոնիթորինգ, հայտնվում են մի գործընթացի մեջ, որի ժամանակ վճռվում է քաղաքական իշխանության բաշխման հարցը: Նրանց եզրակացությունները, մասնավորապես, եթե դրանցում հայտնաբերվեն օրենքի խախտումներ կամ ընտրությունների իրականացման այլ թերացումներ, կարող են ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա: Այդ իսկ պատճառով, ընտրությունների ժամանակ մրցակցող քաղաքական ուժերը կարող են փորձել վարկաբեկել դիտորդական առաքելության եզրակացությունները: Նրանք կարող են դա անել` քննադատելով մոնիթորինգի մեթոդաբանությունը, իրական դիտորդական աշխատանքների ճշգրտությունը, կամ կարող են վարկաբեկել հենց կազմակերպությունը:

Նման հարձակումների ռիսկայնությունն ու դրանց նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու նպատակով կազմակերպությունները պետք է լինեն առավելագույնս թափանցիկ` մասնավորապես հետևյալ առումներով.

- դիտորդական աշխատանքների մեթոդաբանության հրապարակում. ի՞նչ է դիտարկվում, ինչպե՞ս է դիտարկվում, տեղեկությունների աղբյուրները, ընտրանքի մեթոդները, ինչպե՞ս են արդյունքները վերլուծվում և ներկայացվում, ի՞նչ ժամկետներում են զեկույցների եզրակացությունները հրապարակվում և այլն.
- մեթոդաբանության ներկայացում քաղաքական կուսակցություններին (կամ ընտրություններին մասնակցող այլ մրցակիցներին), ինչպես նաև մոնիթորինգի ոլորտներում վերահսկողության համար պատասխանատու հաստա-տություններին (օրինակ` ընտրական հանձնաժողով, հակակոռուպցիոն գործակալություն, բարձրագույն վերահսկիչ զրասենյակ)` խնդրելով վերջիններիս ներկայացնել դիտողություններ և առաջարկություններ. այն դեպքում, եթե այդ հաստատությունները մեթոդաբանության մասով ներկայացնում են առարկություններ, ապա տեղական դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունը պետք է հրապարակայնորեն հիմնավորի իր կողմից կիրառվող մեթոդաբանությունը կամ դրա մեջ կատարի փոփոխություններ այն դեպքում, եթե ներկայացվող առարկությունները հիմնավոր են.
- կազմակերպության գործունեության, այդ թվում` կառուցվածքի, նպատակի, կառավարման և ֆինանսավորման մասին ամբողջական տվյալների հրա-պարակման քաղաքականության որդեգրում:

Թափանցիկության վերաբերյալ այս կանոններն անհրաժեշտ է պահպանել արդյունքների ներկայացմանը վերաբերող այլ կանոնների հետ միասին: Դրանցից ամենակարևորն այն է, որ պետք է ներկայացնել միայն այնպիսի պնդումներ, որոնք անհերքելիորեն հիմնավորվում են բացահայտված փաստերով, իսկ հայտնաբերված փաստերը մեկնաբանելիս անհրաժեշտ է ցուցաբերել զգուշավորություն: Որպես օրինակ կարելի է նշել այն, որ երբ մոնիթորինգի են ենթարկվում քարոզչության ծախսերը, որի ժամանակ կիրառվում են քարոզչական ծառայությունների շուկայական գները հաշվարկելու մի շարք ձևեր, նման դեպքերում ուսումնասիրության արդյունքները պետք է ներկայացվեն գնային ամենացածր շեմի հաշվարկներով:

**Օրենսդրական դաշտը**

Դիտորդական աշխատանքների և վերլուծության առանցքային կողմերից է ներպետական իրավական դաշտը և տարբեր շահագրգիռ կողմերի կողմից օրենքների և կանոնակարգերի պահպանումը: Ի լրումն սրան, Հռչակագրին միացած կազմակերպությունները նաև հանձն են առնում իրականացնել ընտրական գործընթացի վերանայում` հաշվի առնելով երկրի միջազգային պարտավորությունները, հանձնառությունները և առկա բարեխիղճ գործելակերպը:

**Վերապատրաստումը**

Ընտրությունների մոնիթորինգ իրականացնող կազմակերպությունները պարտավոր են ապահովել, որ իրենց բոլոր աշխատակիցներն ու դիտորդները լիարժորեն տիրապետեն որևէ կուսակցության չհարող դիտորդական առաքելության չափանիշներին, դրանք պետք է վերջիններիս առաջարկեն ընտրությունների ազգային և միջազգային շրջանակների և դիտորդական աշխատանքների մեթոդաբանության ու զեկույցների պատրաստման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

## 1.3. ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Սույն ձեռնարկն անդրադառնում է երկու տեսակի զեկույցների՝ ներքին և արտաքին, պատրաստմանը: Ունենալով ընդհանուր նպատակ, այն է՝ դիտորդական առաքելության դիտարկումները և առաջարկությունները ներկայացնել ընտրությունների շահագրգիռ կողմերին՝ զեկույցների այս երկու տեսակներն ունեն միանգամայն տարբեր ռազմավարություն, ժամանակացույց, մեթոդաբանություն և լսարան: Ուստի, դրանք տարբերակելը կարևոր է:

**Ներքին զեկույցներ**

Ներքին զեկույցները թույլ են տալիս փոխանցել տեղեկությունները «ներքևից» դեպի քաղաքացիական հասարակության կազմակերպության կենտրոնական մարմինը, որտեղ այդ տեղեկությունները հավաքվում, ենթարկվում են հետագա վերլուծության և, ի վերջո, ներկայացվում են արտաքին (հրապարակային) զեկույցում:

Կազմակերպությունները կարող են հետևել ներքին զեկույցների պատրաստման տարբեր ռազմավարությունների, բայց զեկույցների պլանները մշակելիս նրանք կարող են հաշվի առնել ներքին զեկույցների հետևյալ տեսակները:

**Ելակետային գնահատման զեկույցներ**

Զեկույցի այս տեսակը կազմվում է դիտորդական առաքելության սկզբում: Դրա նպատակն է արձանագրել ընտրական դաշտի և միջավայրի իրավիճակը և վերլուծել դրա նշանակությունը հետագա ընտրական գործընթացի համար: Ելակետային զեկույցում ներառվում է իրավական դաշտի (այդ թվում՝ վարչական կանոնակարգերի) և ընտրական մարմինների կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն: Այս ներքին զեկույցը կարելի է հեշտությամբ կիրառել վերջնական արտաքին զեկույցում:

**Ներքին վերլուծական զեկույցներ**

Եթե կազմակերպական կառուցվածքը թույլ է տալիս, ապա ընտրական գործընթացի առանձին ասպեկտների դիտարկումն իրականացնող թիմի անդամներից կարող են պահանջվել զեկույցներ, որոնք շատ ավելին են, քան պարզապես փաստահավաք զեկույցները, և որտեղ ներկայացվում է գործընթացի վերլուծությունը: Ելակետային իրավիճակի գնահատման զեկույցների նման՝ սրանք օգտակար ներդրում են վերջնական արտաքին զեկույցի համար: Այդպիսի զեկույցների օրինակները կարող են լինել հետևյալի վերաբերյալ՝

- իրավական դաշտի և վարչական կանոնակարգերի ձևավորման,
- նախընտրական վեճերի գործով որոշումների կայացման գործընթացի, ինչպես օրինակ՝ մերժված թեկնածուների բողոքարկումները,
- ընտրությունների իրականացման՝ նյութատեխնիկական ապահովումը, քվեաթերթիկների պատրաստումը, ընտրական նյութերի գնումները,
- կանանց, ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ-ներ) և հաշմանդամների՝ ընտրական բոլոր գործընթացներին մասնակցելու հնարավորությունների,

- ► այլ պետական դերակատարների, օրինակ՝ ռազմական և անվտանգության ապարատի գործողությունները:

**Պարբերական դաշտային (ԵԺԴ) զեկույցներ**

Սրանք կանոնավոր՝ սովորաբար շաբաթական կտրվածքով թողարկվող զեկույցներ են, որտեղ ներկայացվում են փաստեր ընտրական բոլոր գործընթացների իրականացման վերաբերյալ: Դրանք ներկայացվում են երկարաժամկետ դիտորդների (ԵԺԴ-ներ) կողմից՝ ընտրական գործընթացի առանձնահատկություններին համապատասխան մշակված ձևանմուշի համաձայն: Սրանք փաստերի վրա հիմնված զեկույցներ են, որոնք ներկայացվում են հետագա վերլուծության նպատակով:

**Միջադեպերի մասին զեկույցներ**

Սրանք նախապես չծրագրված, կարճ և հրատապ զեկույցներ են, որոնք պատրաստվում են ԵԺԴ-ների կողմից ընտրական գործընթացը վտանգող որևէ կոնկրետ դեպքի առթիվ: Սովորաբար դրանք ընտրությունների գործընթացը խաթարող լուրջ միջադեպերի կամ բռնության դեպքերի մասին են:

**Ընտրությունների օրվա (ԿԺԴ) վերաբերյալ զեկույցներ**

Քվեարկության ընթացքում և քվեարկության ու ձայների հաշվարկի ավարտից հետո կարճաժամկետ դիտորդների կողմից ներկայացվող զեկույցներն են: Այս զեկույցները սովորաբար լրացվում են ձևանմուշների, օրինակ՝ ստուգաթերթիկների և զեկույցների ձևաթղթերի մեջ, որոնք մշակվում են նախքան ընտրությունների անցկացումը:

**Արտաքին զեկույցների պատրաստում**

Արտաքին զեկույցների պատրաստումը դիտորդական առաքելության առանցքային կողմն է: Դրանցում հրապարակայնորեն արձանագրվում է, թե ինչ է դիտարկվել, վերլուծվել և ինչ առաջարկություններ են ներկայացվել տվյալ ընտրության հետ կապված. հետագա աշխատանքների կազմակերպման ժամանակ այս զեկույցին հղում է կատարվում: Բոլոր արտաքին զեկույցների հրապարակային լինելը համընդհանուր սկզբունք է: Այնուամենայնիվ, կազմակերպությունները կարող են հետաձգել որոշ արտաքին զեկույցների հրապարակումը, մասնավորապես, երբ գործ ունենք այնպիսի միջադեպերի հետ, որոնց մասին ի սկզբանե ներկայացվում է ընտրական մարմիններին՝ վեր հանված խնդրին արագ լուծում գտնելու կամ դրա հետևանքները մեղմելու նպատակով: Գոյություն ունեն արտաքին զեկույցների տարբեր տեսակներ, որոնք տարբերվում են իրենց կառուցվածքով, վերլուծական մոտեցմամբ, առաջարկությունների մանրամասնության աստիճանով ու հանրությանը տեղեկացնելու միջոցներով:

**Միջադեպերի մասին արտաքին զեկույցներ**

Ինչպես միջադեպերի մասին ներքին զեկույցների դեպքում՝ այս զեկույցներում բարձրացվում են հրատապ և խիստ խնդրահարույց դեպքերին առնչվող խնդիրներ: Եթե իրավիճակը թույլ է տալիս, խորհուրդ է տրվում նախ դրանք ներկայացնել ընտրական մարմիններին, որպեսզի վերջիններս հնարավորություն ստանան շտկել խնդիրը: Հակառակ դեպքում կազմակերպությունները կարող են այս զեկույցները ներկայացնել հանրային հաղորդակցման տարբեր ուղիներով:

**Միջանկյալ զեկույցներ**

Սրանք պարբերական զեկույցներ են, որոնք սովորաբար հաջորդում են ընտրական գործընթացի առանցքային փուլերին, որոնցից են օրինակ՝ ընտրողների գրանցման գործընթացի ավարտը, թեկնածուների գրանցման ընթացակարգի ավարտը, ընտրական

քարոզարշավի սկիզբը/ավարտը և այլն: Դրանք նաև ներկայացվում են կանոնավոր պարբերականությամբ՝ նախքան ընտրությունների օրը: Այս զեկույցները վերլուծական են և կարող են ներառել շահագրգիռ կողմերին ուղղված առաջարկություններ, որոնք վերաբերում են ընտրական գործընթացի հաջորդ փուլերին:

**Հայտարարություններ**

Սրանք կարճ, թեմատիկ, հրապարակային հայտարարություններ են, որոնց նպատակն է որոշակի զարգացումների շուրջ հնարավորինս շատ հանրային ուշադրություն գրավել: Այս զեկույցներում հնարավոր է հանրությանը տեղեկացնել հրատապ իրադարձությունների մասին, ընտրական մարմիններին կամ շահագրգիռ կողմերին կոչ անել ձեռնարկել կոնկրետ քայլեր կամ աջակցություն ցուցաբերել որոշակի գործողությունների հարցում: Նման հայտարարությունների օրինակներ են քաղաքական կուսակցությունների՝ լռության օրը հարգելու կոչերը կամ ընտրատեղամասերում դիտարկումների մանրամասները հրապարակելու մասին ընտրական մարմիններին ուղղված կոչերը:

**Նախնական դիտարկումների վերաբերյալ հայտարարություններ և վերջնական զեկույցներ**

Սրանք մանրամասն զեկույցներ են, որոնք ներկայացվում են անմիջապես ընտրության օրվանից հետո կամ ընտրական ամբողջ գործընթացի ավարտին: Դրանք ներառում են դիտորդական աշխատանքների մեթոդաբանության նկարագրությունը, հիմնական դիտարկումները՝ վերլուծության և համապատասխան եզրահանգումների հետ միասին, ինչպես նաև առաջարկություններ ընտրական գործընթացի հետագա բարելավման վերաբերյալ:

**Գծապատկեր 2. Ներքին/արտաքին զեկույցների պատրաստման աղյուսակ**

| | |
|---|---|
| Ներքին զեկույցներ՝ | ԼՍԱՐԱՆԸ՝ աշխատակիցներ |
| | ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ՝ գաղտնի |
| | ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ փաստերի ներկայացում |
| | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ՝ գրեթե շարունակական |
| Արտաքին զեկույցներ՝ | ԼՍԱՐԱՆԸ՝ շահագրգիռ կողմեր |
| | ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ՝ հրապարակային |
| | ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ վերլուծություն |
| | ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ պարբերական կամ մեկանգամյա |

Աղբյուրը՝ www.isfed.ge



Գլուխ 2

# Դիտորդական աշխատանքների պլանավորումը՝ զեկույցներ պատրաստելու տեսանկյունից

Դիտորդական առաքելությունը ամենահզոր գործիքներից է, որը քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են օգտագործել ընտրական գործընթացի որակը բարելավելու նպատակով: Վերջին տարիներին ՔՀԿ-ների կողմից տեղական ընտրությունների դիտարկման պրոֆեսիոնալիզմը ավելի է աճել: Այս կազմակերպությունները հաճախ կարողանում են իրենց ուշադրության կենտրոնում պահել ողջ ընտրական շրջափուլը: Այն դեպքում, երբ տեղական դիտորդական աշխատանքները հիմնվում են լավ մշակված մեթոդաբանության վրա, իրականացվում են պրոֆեսիոնալ մակարդակով և բարեխղճորեն ու հանրային շահի նկատմամբ նվիրվածությամբ, ինչպես նաև իրականացվում են անկախ, անկողմնակալ կազմակերպության կողմից, որն իր գործողությունների համար ստանձնում է լիարժեք պատասխանատվություն, ապա դիտորդական առաքելությունը կարող է ընտրական գործընթացի բարելավման համար բերել շոշափելի օգուտներ և, ընդհանուր առմամբ, նպաստել ժողովրդավարության զարգացմանը:

Կարևոր է, որ տեղական դիտորդական առաքելություն իրականացնող յուրաքանչյուր ՔՀԿ ընտրության օրվանից շատ ավելի առաջ իրականացնի կարիքների գնահատում, որի նպատակը պետք է լինի դիտորդական աշխատանքների նպատակների, կառուցվածքի և ժամանակացույցի սահմանումը: Զեկույցների պատրաստման ժամանակ մեկ այլ նախապատրաստական բաղադրիչ է հանդիսանում կազմակերպության կարողությունների, այդ թվում՝ մարդկային և ֆինանսական ռեսուրսների, գնահատումը, որը պետք է արտացոլվի աշխատանքային պլանում: Նման պլանը իրենից ներկայացնում է հաջորդական միջոցառումների տրամաբանական և գործառնական մատրիցա, որը տեղական դիտորդական առաքելության կողմից սահմանված շրջանակներում և նպատակների հաշվի առնմամբ իրականացվելու դեպքում կապահովի անխափան աշխատանք և արտաքին ու ներքին զեկույցների ժամանակին ներկայացում: Աշխատանքային պլանը կարող է ներառել կամ լրացվել վերապատրաստման և հանրային հաղորդակցման պլաններով: Երկուսն էլ կարևոր են տեղական դիտորդական առաքելության հաջող նախապատրաստման համար:

## 2.1. ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Յուրաքանչյուր տեղական դիտորդական առաքելություն պետք է ունենա գործունեության հստակ սահմանված շրջանակ:

Ընտրությունների դիտարկման միջազգային առաքելությունները բազմաթիվ հարցերի անդրադառնալիս կիրառում են համընդհանուր մեթոդաբանություն՝ իրավական դաշտի վերլուծությունից, ընտրությունների նախապատրաստական աշխատանքներից մինչև ընտրությունների օրն իրականացվող քվեարկությունը և ընտրական վեճերի լուծումը: Այնուամենայնիվ, քանի որ նրանք կիրառում են միևնույն մեթոդաբանությունը, նման միջազգային դիտորդական առաքելությունները միշտ չէ, որ լավագույն կերպով են դիրքավորված՝ այս կամ այն երկրում առանձին հարցեր բարձրացնելու համար.

հնարավոր է, որ նրանք չունենան բավարար ժամանակ կամ փորձագիտական գիտելիքներ կամ կարող են ենթարկվել որոշակի սահմանափակումների:

Տեղական դիտորդական առաքելությունների գործունեության շրջանակը տարբեր է: Մեծ և փորձառու ՔՀԿ-ները կամ ՔՀԿ-ների կոալիցիաները, որոնք կարող են օգտվել բազմաթիվ դիտորդների ծառայություններից, կարող են հավակնել ամբողջ երկրի տարածքում կամ ընտրական ամբողջ շրջափուլի ընթացքում դիտորդական աշխատանքներ կատարելուն: Այնուամենայնիվ, ավելի հավանական է, որ շատ ՔՀԿ-ներ նախագծեն այնպիսի ծրագրեր, որոնց կենտրոնական թեման լինի ընտրությունների որևէ կոնկրետ ասպեկտ: Ուստի, հավանական է, որ նրանք սահմանափակեն իրենց դիտորդական աշխատանքների շրջանակը և կիրառեն կոնկրետ մեթոդաբանություն՝ իրենց նպատակներին հասնելու համար: Դիտորդական աշխատանքների առանցքային թեման որոշելու նպատակով կազմակերպությունը կարող է կարիքների գնահատման հիման վրա ընտրել որևէ որևէ կոնկրետ խնդիր, որի շուրջ դիտորդական աշխատանքներ պետք է իրականացվեն, ինչպես բերված է հետևյալ օրինակներում.

- Եթե նախորդ դիտորդական զեկույցները, մամուլի հաղորդագրությունները կամ փորձագիտական կարծիքները ցույց են տվել, որ քվեարկության գործընթացը ընտրությունների օրը ընթացել է առանց խախտումների, բայց կեղծվել են ընտրացուցակները, ապա նախընտրելի է տեղական դիտորդական առաքելությունների սահմանափակ ռեսուրսներն ուղղել ընտրողների գրանցման և ընտրացուցակներ կազմելու գործընթացների ուսումնասիրությանը:
- Եթե անցյալի փորձի, ընտրական պրակտիկայի (փոստային, վստահված անձի միջոցով կամ էլեկտրոնային քվեարկության բացակայություն) կամ որոշ տեսակի ընտրությունների միջոցով (տեղական, շրջանային ընտրություններ) պարզվում է, որ *փաստացիորեն* արտերկրում բնակվող, բայց ընտրելու իրավունք ունեցող ընտրողների հարցը մտահոգիչ է՝ կապված ընտրակեղծիքների հետ, ապա նման իրավիճակը կարող է պահանջել ավելի մեծ ուշադրություն դարձնել ընտրությունների օրը դրսևորվող վարքագծի, այդ թվում՝ այս հարցի առնչությամբ առանձին ընթացակարգերի դիտարկմանը:
- Եթե տեղական դիտորդական առաքելությունը նպատակ ունի պարզելու, թե արդյոք կուսակցությունները ընտրական քարոզարշավի ծախսերը ճիշտ են հրապարակում, ապա դիտորդները պետք է դիտանցեն ծախսերի որոշակի կատեգորիաներ: Կատեգորիաներն ընտրելու համար կազմակերպությունները պետք է սահմանեն տվյալ երկրում ընտրական քարոզարշավի հիմնական ձևերը, որոնք տարբեր քաղաքական համակարգերում կարող են միանգամայն տարբեր լինել:
- Եթե առկա են գործող քաղաքական ուժերի կողմից ընտրությունների նպատակով պետական (վարչական) ռեսուրսների չարաշահման հետ կապված լուրջ մտահոգություններ, ապա կարևոր է ընտրել, թե պետական որ ռեսուրսները պետք է ենթարկվեն մոնիթորինգի, օրինակ՝ լրատվական ռեսուրսները, պետական ծառայողները, տրանսպորտային միջոցները, գրասենյակային ենթակառուցվածքը և այլն:

Անհրաժեշտ է իրականացնել կարիքների գնահատում՝ հավաքելով տեղեկություններ գործող իրավական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի մասին, հավաքագրելով տվյալ ոլորտի վերաբերյալ պաշտոնական հաշվետվությունները կամ փաստաթղթերը (օրինակ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվետվությունները), խնդրո առարկա ոլորտի վերաբերյալ հրատարակությունները և ուսումնասիրությունները (օրինակ՝ գիտական աշխատությունները, ՔՀԿ-երի վերլուծությունները, նախկին դիտորդական առաքելությունների կողմից մշակված

զեկույցները), լրատվամիջոցներում հրապարակված տեղեկությունները և համապատասխան շահագրգիռ կողմերի հետ թեմատիկ հարցազրույցները (օրինակ՝ ընտրական գործընթացը կազմակերպող պաշտոնյաների, քաղաքական գործիչների, ակադեմիական ոլորտի փորձագետների, քաղաքացիական հասարակության ակտիվիստների, լրագրողների և այլնի հետ):

Կարիքների գնահատում նախապատրաստելիս ՔՀԿ-ն պետք է հաշվի առնի ընտրությունների տեսակը, քանի որ դա որոշիչ ազդեցություն կարող է ունենալ դիտորդական աշխատանքների մեթոդաբանության համար: Կարող են պահանջվել տարբեր մոտեցումներ՝ կախված այն բանից, թե ընտրությունները նախագահական են, խորհրդարանական, տեղական, թե համազգային հանրաքվե:

Կարիքների գնահատումը ավարտելուց հետո այն պետք է մատնացույց անի մտահոգության այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվեն դիտորդական աշխատանքները: Գնահատումը պետք է նաև կարևոր դեր խաղա տեղական դիտորդական առաքելության ծրագրի կոնկրետ նպատակների ձևավորման հարցում:

## 2.2. ՏԵՂԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Նախ և առաջ, դիտորդական առաքելությունը պետք է ունենա հստակ սահմանված նպատակներ: Այն կարող է դրականորեն ազդել դիտորդական առաքելության բոլոր բաղադրիչների իրականացման, այդ թվում՝ զեկույցների պատրաստումը կազմակերպելու, աշխատանքները բաշխելու, վերջնաժամկետներ սահմանելու և դրանք պահպանելու վրա: Դիտորդական աշխատանքները պլանավորելու հարցում նման ներքին ռազմավարական մոտեցում կիրառելու դեպքում միանգամայն հավանական է, որ աշխատանքները կիրականացվեն պրոֆեսիոնալ մակարդակով:

Կան մի քանի գործոններ, որոնք ազդում են դիտորդական առաքելության ծրագրի նպատակների ընտրության վրա: Դրանք վերաբերում են կազմակերպության ներքին հարցերին, ինչպես նաև արտաքին միջավայրին: Նպատակներ սահմանելիս կազմակերպությունները պետք է հաշվի առնեն, թե դրանք ինչպես են փոխկապակցված և/կամ համապատասխանում իրենց կազմակերպության ներքին ռազմավարական նպատակին: Նպատակների ընտրությունը կախված է նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայությունից: Դիտորդական աշխատանքներ իրականացնելու նախկին փորձը նույնպես կարևոր գործոն կարող է հանդիսանալ դիտորդական առաքելության ծրագրի մշակման այս կարևոր փուլում:

Արտաքին միջավայրի առումով՝ ՔՀԿ-ները պետք է հաշվի առնեն ընդհանուր քաղաքական և/կամ իրավական միջավայրը: Նման գնահատումը հաճախ թույլ է տալիս որոշել, թե որոնք են որոշակի դիտորդական առաքելության ծրագրի համար առավել համապատասխան և կարևոր նպատակները: Ի լրումն սրան, կարելի է ուսումնասիրել այլ կազմակերպությունների հետ կոալիցիա ստեղծելու հնարավորությունները: Այնուամենայնիվ, նման համագործակցության հավակնող կազմակերպությունը պետք է չմոռանա, որ համատեղ ծրագիրը հաճախ պահանջում է տեղական դիտորդական առաքելության ընդհանուր նպատակների ընդլայնում:

Ի վերջո, տեղական դիտորդական աշխատանքներում ներգրավված ՔՀԿ-ների նպատակների վրա կարող է ազդել միջազգային դիտորդական առաքելության հիմնական ուղղվածությունը:

Կախված այս և այլ գործոններից՝ ՔՀԿ-ները կարող են սահմանել տեղական դիտորդական առաքելության իրենց նպատակները՝ ընտրական գործընթացի արդարությունն ապահովելուց մինչև ընտրական բարեփոխումների խթանումը կամ որևէ

կոնկրետ խնդիր: Նրանք կարող են կենտրոնանալ մի շարք նպատակների վրա կամ իրենց դիտորդական առաքելությունը սահմանափակել մեկ կամ երկու նպատակով: Ստորև ներկայացված են հնարավոր նպատակների օրինակներ:

- *Ընտրական գործընթացի վերաբերյալ տեղեկացված, անկախ և անկողմնակալ տեսակետի տրամադրում*

  Դիտորդական առաքելություն իրականացնող քաղաքացիական կազմակերպությունը հանդես է գալիս անկախ, փաստերի վրա հիմնված հրապարակային զեկույցներով և հայտարարություններով, որոնք լայնորեն տարածվում են ընտրական հիմնական շահագրգիռ կողմերի շրջանում՝ ընտրական գործընթացի դրական արդյունքների և թերությունների վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու նպատակով:

- *Ընտրական գործընթացի թափանցիկության խթանում և արդարության ապահովում*

  Նպատակն է նպաստել ընտրական գործընթացի նկատմամբ վստահության աճին, ընտրությունների հաշվետվողականության բարձրացմանը, ինչպես նաև թեկնածուների կողմից արդյունքների ընդունմանը: Այնուամենայնիվ, այս նպատակն ընտրելիս պետք է զգույշ լինել որոշ իրավիճակներում, երբ արդար ընտրությունների հիմնարար պայմանները ապահովված չեն: Ցանկացած իրավիճակում զուտ դիտորդների ներկայությունը ընտրատեղամասերում չպետք է համարել ընտրական գործընթացը լեգիտիմացնող կամ գործընթացի հավաստիությունը մեծացնող գործոն:

- *Ընտրակեղծիքների կանխում և ընտրախախտումների ու ընտրական բռնությունների նվազեցում*

  Տեղական դիտորդական առաքելություն իրականացնող ՔՀԿ-ները ընտրատեղամասերում կամ այլ ընտրական միջավայրերում զուտ իրենց ներկայությամբ կարող են կանխել ընտրական իրավունքի և ընթացակարգերի հնարավոր իրավախախտներին: Այս տեսանկյունից նման դիտորդական աշխատանքները կարող են համարվել կանխարգելիչ միջոցառումներ, որոնց օգնությամբ կանխվում են ընտրությունների հնարավոր մանիպուլյացիաները:

- *Ընտրական գործընթացի թերությունների վերլուծություն և բարեփոխումների համար առաջարկությունների ներկայացում*

  Ընտրական գործընթացի անկողմնակալ դիտարկումը և կոնկրետ առաջարկությունների ներկայացումը կարող են բարելավել ներպետական ընտրական օրենքները և ընտրական պրակտիկան, ինչպես նաև կարող են հիմք ծառայել ընտրական համակարգի առավել խորը բարեփոխումների համար:

- *Համընդհանուր մարդու իրավունքների, մասնավորապես, քաղաքացիական և քաղաքական իրավունքների խթանում և պաշտպանություն*

  Ընտրությունների նպատակային դիտորդական աշխատանքները կարող են կանխարգելել մարդու ընտրական իրավունքների և ճանաչված միջազգային պարտավորությունների խախտումները (պետական գործերում մասնակցելու, քվեարկելու, ընտրվելու իրավունքը և հնարավորությունը, խտրականության արգելքի և քաղաքացիների համահավասարության, արտահայտման, ժողովների և միավորման ազատությունը, արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը և այլն):

- *Ներպետական օրենսդրությանն ու միջազգային չափանիշներին ընտրությունների համապատասխանության գնահատում*

Որպես կանոն՝ ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները գնահատում են ընտրությունների համապատասխանությունը ներպետական օրենսդրությանը և առավել ևս՝ միջազգային չափանիշներին՝ նպատակ հետապնդելով գնահատել ժողովրդավարության մակարդակը, օրենքի գերակայության և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանումը:

## 2.3. ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ՝ ՀԻՄՆՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Ընտրությունների դիտորդական առաքելությունը բարդ նախաձեռնություն է, որը պահանջում է նվիրվածություն գործին, մասնագիտական գիտելիքներ և լավ կազմակերպված մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն: Այս բաժնում համառոտ ներկայացվում են այն գործողությունները, որոնք անհրաժեշտ է իրականացնել, երբ տարվում են տեղական ընտրությունների դիտարկումը կազմակերպելու և իրականացնելու նախապատրաստական աշխատանքներ: Կազմակերպական հաճախ չափազանց սահմանափակ կարողություններից առավելագույն չափով օգտվելը հաճախ որոշիչ դեր ունի տեղական դիտորդական առաքելության հաջողության համար: Տեղական ընտրությունների մոնիթորինգի շրջանակին և նպատակներին համապատասխանող իրատեսական աշխատանքային պլանը, որը հիմնված է խնամքով ընտրված մարդկային ռեսուրսների վրա և ապահովված բավարար և պատշաճ ֆինանսական ռեսուրսներով, թույլ է տալիս իրականացնել սահուն, համակարգված և արդյունավետ տեղական դիտորդական աշխատանքներ, որոնց ընթացքում խստորեն պահպանվում են նաև ներքին և արտաքին զեկույցների վերջնաժամկետները:

**Աշխատանքային պլան**

Որպես առաջին քայլ՝ տեղական դիտորդական առաքելություն իրականացնող ՔՀԿ-ները պետք է կազմեն աշխատանքային պլան: Նման պլան կազմելիս պետք է մշակվեն գործողությունների ցանկ, իրականացման ժամանակացույց և նախատեսված չափելի արդյունքներ: Օգտակար է ստուգել աշխատանքային պլանի համապատասխանությունը նպատակներին և դիտորդական աշխատանքների շրջանակին, քանի որ այդպես հնարավոր կլինի բացառել այն գործողությունները, որոնք ուղղակիորեն չեն առնչվում նպատակների ձեռքբերմանը կամ դիտորդական առաքելության շրջանակից դուրս են: Լավագույն աշխատանքային պլանում պետք է երևա, որ գործողությունները և վերջնական արդյունքները միանգամայն համապատասխան են դիտորդական առաքելության նպատակներին: Այլ կերպ ասած՝ պլանը, իրականում, դիտորդական առաքելության նպատակների ձեռքբերման ռազմավարություն է և նկարագրում է այն միջոցները, որոնց օգնությամբ դրանք ձեռք են բերվում: Պլանը պետք է լինի կայուն, բայց միևնույն ժամանակ բավականին ճկուն՝ անսպասելի իրավիճակներին հարմարեցվելու համար, որոնք կարող են ի հայտ գալ աշխատանքների ընթացքում:

Ընդհանուր առմամբ, լավ գաղափար է պլանի հիմնական բաղադրիչները գրավոր ձևակերպելը, որպեսզի դիտորդական աշխատանքներում ներգրավված բոլոր անձինք տեղեկանան դրանց մասին: Ավելին, օգտակար է այն հրապարակել, քանի որ դա նպաստում է թափանցիկության սկզբունքին: Բարեխիղճ գործելակերպ է համարվում նաև դիտորդական աշխատանքների այլ փաստաթղթերի հրապարակումը, առնվազն՝ համառոտ տեսքով, այդ թվում՝ նպատակների, շրջանակի, ուղղորդող սկզբունքների (վարքագծի կանոնագիրքը) և դիտորդական աշխատանքներին վերաբերող այլ համապատասխան տեղեկությունների հրապարակումը:

Ընտրությունների մոնիթորինգը պահանջում է հստակ պլանավորում և կազմակերպում, որպեսզի հնարավոր լինի պահպանել բազմաթիվ վերջնաժամկետները: Այս առումով, խորհուրդ է տրվում ունենալ մանրամասն օրացույց, որտեղ նշված են ընտրական ամենակարևոր իրադարձությունների ամսաթվերը և ժամանակահատվածը: Օրացույցը ծառայում է որպես տեսողական օժանդակ միջոց, բայց հիմնականում օգնում է իմանալ, թե ինչ աշխատանքներ պետք է կատարվեն, ինչ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ են հասանելի և ինչպիսի նյութատեխնիկական պատրաստվածություն է անհրաժեշտ:

**Մարդկային ռեսուրսներ**

Խորհուրդ է տրվում մշակել աշխատակիցների համալրման քաղաքականություն, որտեղ մանրամասն կերպով կնախատեսվեն մարդկային ռեսուրսներին վերաբերող բոլոր խնդիրները և ընթացակարգերը: Այս քաղաքականության մեջ պետք է հստակորեն նախատեսել դիտորդական աշխատանքների ժամանակ մարդկային ռեսուրսների կարիքները և պետք է ներառել բոլոր պաշտոնները՝ աղյուսակի տեսքով: Կախված տեղական դիտորդական առաքելության գործունեության շրջանակից և նպատակներից՝ կարող են պահանջվել ստորև ներկայացված պաշտոնները և պայմանները.

- ► հիմնական թիմի (ՀԹ) անդամների թիվը և գործառույթները,
- ► երկարաժամկետ դիտորդների թիվը,
- ► կարճաժամկետ դիտորդների թիվը,
- ► ՀԹ-ի, ԵԺԴ-ների և ԿԺԴ-ների օգնականների թիվը,
- ► այլ աշխատակիցներ (հաշվապահներ, թարգմանիչներ, ՏՏ և տեխնիկական օժանդակության անձնակազմ, վարորդներ և այլն),
- ► վարձատրության պայմանները (աշխատավարձերի չափը, ներառյալ՝ կատարողականի հիման վրա տրվող պարգևավճարները):

Աշխատանքային պլանում պետք է սահմանվեն աշխատակիցների համալրման վերջնաժամկետները և դրանք պետք է տեղադրվեն օրացույցում: Նման պլանը նախօրոք կազմելը՝ տեղական դիտորդական առաքելության շրջանակին և նպատակին պատշաճ ուշադրություն դարձնելով, թույլ է տալիս աշխատանքի վերցնել, աշխատանքային պայմանագրերը պահպանել և դադարեցնել՝ ըստ դիտորդական առաքելության կարիքների, ինչն օգնում է մարդկային ռեսուրսներն ավելի լավ կառավարել:

Աշխատանքի վերցնելիս և տեղական դիտորդական առաքելության շրջանակում աշխատելիս կարևոր է ապահովել, որ դիտորդական աշխատանքներում ներգրավված ոչ մի աշխատակից կամ կամավոր շահերի բախում չունենա (օրինակ՝ լինի ընտրական հանձնաժողովի անդամ, զբաղեցնի քաղաքական կուսակցության գործադիր կամ ղեկավար պաշտոն կամ գրանցված լինի որպես թեկնածու): Աշխատակիցներին և դիտորդներին աշխատանքի վերցնելիս ՔՀԿ-ները պետք է փորձեն հնարավորինս ապահովել գենդերային, տարիքային, էթնիկ և լեզվական հավասարակշռությունը: Դիտորդներին կամավոր հիմունքով աշխատանքի վերցնելը կարող է զգալիորեն նվազեցնել աշխատակազմի ծախսերը, բայց այդ դեպքում մեծ նշանակություն պետք է տրվի միջազգային չափանիշների համապատասխան վերապատրաստման դասընթացների անցկացմանը: Բոլոր աշխատակիցները պետք է հանձն առնեն խթանել մարդու իրավունքները և պետք է հասկանան այն անձանց կարիքները, որոնք կարող են խտրականության զոհ դառնալ (օրինակ՝ կանայք, կրոնական և էթնիկ փոքրամասնությունները, հաշմանդամները):

**Ֆինանսական ռեսուրսներ**

Դիտորդական աշխատանքների պլանավորման հավասարապես կարևոր խնդիր է գործունեության ֆինանսական կողմը: Բյուջեն պետք է հստակ արտացոլի դիտորդական աշխատանքների ծավալները, ֆինանսավորման նպատակներով անհրաժեշտ է նաև հաշվի առնել հետևյալ կատեգորիաները.

- ► գրասենյակի վարձակալություն և կենցաղսպասարկման ծախսեր,
- ► գրասենյակային սարքավորումներ և դրանց շահագործում,
- ► գրասենյակային պիտույքներ,
- ► դիտորդների վարձատրությունը (ներառյալ հարկերն ու նպաստները),
- ► Հիմնական թիմի վարձատրությունը (ներառյալ հարկերն ու նպաստները),
- ► հաղորդակցություն և փոստային ծառայություններ,
- ► ճամփորդական ծախսեր (դիտորդական առաքելության աշխատակիցների և կամավորների վարձատրություն),
- ► պայմանագրային հիմքով մատուցվող ծառայություններ (հաշվապահներ, թարգմանիչներ, դասընթացավարներ, այլ խորհրդատուներ),
- ► Այլ ուղղակի ծախսեր (տպում/պատճենահանում, միջոցառումների անցկացման հետ կապված ծախսեր):

Բյուջեում պետք է հաշվի առնվեն բոլոր կարիքները և բավարար գումար պետք է նախատեսված լինի անկանխատեսելի ծախսերի համար: Ֆինանսավորող կազմակերպություններն ակնկալում են, որ բյուջեն խստորեն հիմնավորված լինի դիտորդական առաքելության հայտով: Ի լրումն, նրանք նաև պահանջում են ներկայացնել կանոնավոր ֆինանսական հաշվետվություններ (ամսական/եռամսյակային կամ այլ պարբերական հիմունքով): Ընդհանուր առմամբ՝ գոյություն ունեն ֆինանսավորման տարբեր աղբյուրներ, որոնք հասանելի են տեղական դիտորդական խմբերին: Դրանցից են՝

- ► մեծահարուստ անհատներից և ընկերություններից հատկացումներ,
- ► ընկերությունների և անհատների կողմից նյութական ռեսուրսների և ծառայությունների նվիրատվություններ (բնեղենով հատկացումներ),
- ► անդամավճարներ,
- ► կազմակերպության սեփական արտադրանքի, հրատարակությունների և տեսանելիությունն ապահովող ապրանքների (շապիկներ, մագնիսներ, կոճակներ, ազդագրեր և այլն) վաճառքից ստացվող եկամուտներ,
- ► միջազգային կամ տեղական դոնորների կողմից տրամադրվող դրամաշնորհներ, որոնք հետաքրքրված են ժողովրդավարական գործընթացների աջակցության հարցում:

Հնարավոր դոնորներից են միջկառավարական հաստատությունները, ինչպիսիք են՝ Եվրոպական հանձնաժողովը, ՔՀԿ-ի երկրում օտարերկրյա դեսպանատները, զարգացման և տեխնիկական համագործակցության գործակալությունները, միջազգային ՔՀԿ-ները և հիմնադրամները, ինչպես նաև համապատասխան տեղական գործընկերները կամ հաստատությունները (օրինակ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը): Դրամական միջոցների հայթայթումը դիտորդական առաքելության համար հաճախ կատարվում է ժամանակային սահմանափակ պայմաններում, ինչը կարող է հանգեցնել մի շարք խնդիրների, ներառյալ այնպիսի իրավիճակների, երբ դիտորդական

առաքելության իրական բյուջեում կարող է առաջանալ կանխիկ միջոցների պակաս կամ ֆինանսավորման կարիք:

Դիտորդական առաքելության վստահելիությունը կարող է խաթարվել, եթե ֆինանսական միջոցները ձեռք բերվեն կառավարությունից, քաղաքական կուսակցություններից կամ այլ շահագրգիռ կողմերից, որոնք անմիջականորեն ներգրավված են ընտրություններում: Այդ իսկ պատճառով, շատ ՔՀԿ-ներ խուսափում են իրենց գործունեության համար ֆինանսավորում ձեռք բերել որոշակի պոտենցիալ դոնորներից: Եթե նման ֆինանսավորում է ձեռք բերվում, ապա այն պետք է պատշաճ կերպով հիմնավորվի՝ խուսափելու համար կուսակցականացությանը հարելու կամ կողմնակալության մեղադրանքներից: Կուսակցությանը հարելու տպավորությունները սովորաբար սահմանափակվում կամ հաղթահարվում են աշխատանքային պլանի պատշաճ իրականացման միջոցով, որը հիմնվում է անկողմնակալության, օբյեկտիվության, պրոֆեսիոնալիզմի և թափանցիկության վրա:

## 2.4. ԶԵԿՈՒՅՑՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆ

Ձեռնարկում ներառված են վերապատրաստման խնդիրներին վերաբերող երեք բաժիններ, որոնց բոլորի կենտրոնական թեման Հիմնական թիմի վերապատրաստման կարիքներն են. սույն բաժինը, որի նպատակն է տրամադրել ընդհանուր նկարագրություն, ներքին զեկույցների պատրաստման բաժնի մի մասը (տես 3.4 բաժինը) և ևս մեկ բաժին՝ արտաքին զեկույցների պատրաստման վերաբերյալ (տես 4.1 բաժինը):

Առաջին բաժնում ներկայացվում են ընդհանուր առանձնահատկությունները, որոնք ՔՀԿ-ները պետք է հաշվի առնեն՝ վերապատրաստման պատշաճ ծրագիր մշակելու համար: Այստեղ բարձրացված են խնդիրներ, որոնք վերաբերում են զեկույցների պատրաստման շուրջ ընդհանուր վերապատրաստման պլանի մշակմանը՝ կիրառելով ռազմավարական մի մոտեցում, որն ուղղված է միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակների ձեռքբերմանը: Այն կարող է նաև հանդիսանալ հենք, որի շրջանակում հետագայում կարող են կայացվել վերապատրաստմանը վերաբերող որոշումներ՝ կարճաժամկետ տեսանկյունից: Օրինակ՝ ճիշտ մեթոդի ընտրությունը էական է ցանկացած վերապատրաստման դասընթացի արդյունքների հաջողության համար, բայց նման որոշումը պետք է ձևակերպվի և հիմնավորվի առավել լայն ռազմավարության շրջանակում: Մյուս երկու բաժինները վերաբերում են կոնկրետ վերապատրաստման կարիքներին, մոտեցումներին և մեթոդներին:

**Նախնական գնահատում**

Եթե տեղական դիտորդական կազմակերպությունը անցյալում իրականացրել է դիտորդական առաքելությանը վերաբերող վերապատրաստում, ապա այս փորձառությունը պետք է կրկին գնահատվի՝ պարզելու համար, թե այն ինչպես է նպաստել նախկին տեղական դիտորդական առաքելության հաջողությանը կամ ձախողմանը: Նման հետահայաց վերլուծությունը պետք է լինի հնարավորինս ընդգրկուն: Այն պետք է ներառի տարբեր ժամանակահատվածներ (օրինակ՝ ընտրական և ոչ ընտրական փուլեր) և պետք է ուշադրությունը սևեռի ձեռք բերված ընդհանուր ուժեղ կողմերի և կրկնվող թերությունների հայտնաբերման հարցերի վրա:

Չնայած նոր գործոնների (օրինակ՝ նոր նպատակներ, շրջանակ կամ աշխատակազմ) հնարավոր առկայությանը, որոնք ամենայն հավանականությամբ կարող են պահանջել վերապատրաստման նոր աշխատանքներ, այնուամենայնիվ, ցանկացած դիտորդական առաքելության ժամանակ պետք է հաշվի առնել այն, ինչ արվել է

անցյալում: Սխալները կրկնելը շատ տարածված է, բայց քաղած դասերի հիման վրա սխալների կրկնությունից խուսափելը նույնպես հնարավոր է:

**Ռազմավարական տեսլականի ճանապարհային քարտեզ**

Նման նախնական գնահատման արդյունքների հիման վրա հարկավոր է կազմել նոր ծրագրերի հստակ ճանապարհային քարտեզ: Անկախ երկրների միջև գոյություն ունեցող տարբերություններից՝ տարածված սխալ է հանդիսանում այնպիսի որոշումների ընդունումը, որոնց ժամանակ հաշվի են առնվում միայն առաջիկա մարտահրավերները: Ընտրական օրացույցը կարող է ՔՀԿ-ների համար չափազանց սեղմ ժամկետներ նախատեսել և պահանջել նրանցից կարճ ժամկետներում կազմակերպել վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման ընդհանուր որակը բարելավելու միակ եղանակը այս դեպքում ռազմավարական պլանն է (կարճաժամկետ և/կամ երկարաժամկետ ճանապարհային քարտեզը): Այլապես, վերապատրաստման միջոցառումները երբեք ռազմավարական ուղղվածություն չեն ունենա. դրանք պարզապես կլինեն կարճաժամկետ կարիքներին արձագանքելու միջոցներ կամ ընդամենը իմպրովիզացիաներ:

Ճանապարհային քարտեզը պետք է ներառի տարբեր բաղադրիչներ: Հաշվի առնելով դրանց կարևորությունը՝ ստորև բերված կետերը ներկայացնում են դրանցից մի քանիսը:

**Ընտրական շահագրգիռ կողմերի որոշում**

Ռազմավարական ցանկացած պլան մշակելիս ընտրական շահագրգիռ կողմերի որոշումը մշտապես կարևոր բաղադրիչ է: Ընտրություններին վերաբերող վերապատրաստման ժամանակ ներգրավվում են մի շարք անձինք, որոնք տարբեր գործառույթներ են իրականացնում: Չնայած նրանցից յուրաքանչյուրն ունի իր պարտավորությունների շրջանակը, այնուամենայնիվ, նրանց գործառույթները ստեղծում են փոխկապակցություններ, որոնք պետք է պատշաճ գնահատվեն՝ վերապատրաստման ռազմավարական պլան կազմելու համար: Գործող անձանց քարտեզ կազմելը կհստակեցնի նրանց գործառույթները ընտրական ամբողջ շրջափուլի ընթացքում, և, հաշվի առնելով այս պատկերը, հնարավոր կլինի սահմանել, թե վերապատրաստման ինչ մեթոդաբանության կարիք կա յուրաքանչյուր դեպքում և ով է ամենապատրաստվածը՝ այն իրականացնելու համար: Չափազանց կարևոր է, որ դասընթացավարների վերապատրաստումը պատշաճ մշակվի և իրականացվի, որովհետև այն հանդիսանում է կասկադային վերապատրաստման որակն ապահովելու համար առանցքային մեթոդ (սովորաբար կատարվում է ժամանակային սահմանափակումների պայմաններում և նպատակ է հետապնդում ընդգրկել տեղական դիտորդական առաքելության բոլոր աշխատակիցներին և դիտորդներին), ուստի և բոլոր մասնակիցների համար ներդաշնակ վերապատրաստման ռազմավարություն:

**Ցուցանիշներ/որակ և ազդեցության գնահատում/հաշվետվողականություն**

Վերապատրաստման միջոցառումների նպատակը տեղական դիտորդական առաքելության անձնակազմին և դիտորդներին որոշակի տեղեկություններ կամ հմտություններ փոխանցելն է՝ այն ակնկալիքով, որ դա ինքնին կհանգեցնի դրական արդյունքների: Չնայած նման մոտեցումը կարող է հիմնավորված լինել մի շարք ծայրահեղ իրավիճակներում, այնուամենայնիվ, սովորաբար դրանից պետք է խուսափել: Կազմակերպության թույլ կողմերի մասին հիշելը օգտակար ելակետ է վերապատրաստման միջոցառումներ մշակելիս և իրականացնելիս:

Բարեխիղճ գործելակերպ է համարվում նպատակների և որակի կայուն ցուցանիշների սահմանումը՝ որպես կազմակերպության վերապատրաստման ռազմավարական պլանի մաս: Ցուցանիշները կիրառելու դեպքում ժամանակի ընթացքում կարելի է ստանալ տվյալներ, որոնք ուղղորդում են վերապատրաստման պլանի իրական

արդյունավետությունը, ուստի, կատարելագործման հնարավորությունները որոշելն ավելի դյուրին է դառնում: Ավելին, հաշվետվողականությունն ուղղակիորեն կապված է այս ցուցանիշների հետ: Հաջող նախաձեռնությունները, ինչպես նաև բացասական փորձառությունը առանձնացվում են՝ աշխատակիցների կատարողականի վերաբերյալ ղեկավարության որոշումները դարձնելով փաստերով ավելի հիմնավորված:

**Ծանոթացում կազմակերպչական կառուցվածքին**

Հավասարակշռված և նախաձեռնող ինստիտուցիոնալ կառուցվածքը նույնպես հաջողված վերապատրաստման ծրագրի նախապայման է: Գոյություն չունի կատարյալ մոդել, քանի որ յուրաքանչյուր երկիր և յուրաքանչյուր քաղաքացիական հասարակության կազմակերպություն ունի իր առանձնահատուկ բնութագիրը: Ընդհանուր առմամբ՝ վերապատրաստման միջոցառումների ժամանակ կազմակերպության կառուցվածքի և գործունեության ներկայացումը կարող է հիմնական հարցերի շուրջ անցկացվող վերապատրաստման ժամանակ օգտակար լրացում հանդիսանալ: Վերապատրաստման այս բաղադրիչը կարող է ներառել քննարկումներ հետևյալ հարցերի շուրջ՝ ՔՀԿ-ների իրավական կարգավիճակը, ներքին կառուցվածքը, արտաքին դոնորների դերակատարումը, ինչը կարող է ազդել կազմակերպության անկախության վրա, ֆորմալ/ոչ ֆորմալ կապերը ազգային և միջազգային ՔՀԿ-ների հետ և այլն:

**Ինչպես իրականացնել. մարդկային և նյութական ռեսուրսներ/ՏՀՏ միջոցներ/վերապատրաստման նյութեր**

Բարեխիղճ մտադրությունների հիմքում կարող են լինել ոչ իրատեսական ենթադրություններ: Հետևաբար, վերապատրաստման միջոցառումների ժամանակ կարող են պատշաճ իրականացման համար գործնական բարդ խոչընդոտներ հանդիպել: Սովորական ֆինանսական խոչընդոտներից բացի, կարող է շատ ավելի դժվար լինել մարդկային գործոնների խնդիրը: ՔՀԿ-ի հիմնական աշխատակիցների կազմում կարող են բացակայել բավարար թվով որակավորված դասընթացավարներ կամ փորձառու աշխատակիցներ՝ նոր կադրերին և դիտորդներին վերապատրաստելու համար: Կազմակերպությունը կարող է նաև զբաղված լինել այլ գործառնական խնդիրներով, ինչը կարող է սահմանափակել դրա ներդրումը վերապատրաստման միջոցառումների նախապատրաստման և դրանց իրականացման գործում: Տարբերակներից մեկը նման միջոցառումների իրականացումը պայմանագրային հիմունքով այլ կազմակերպություններին վստահելն է: Հնարավոր է նաև նման վերապատրաստում անցկացնելու համար աշխատանքի վերցնել ժամանակավոր աշխատակիցների: Այս տարբերակով հնարավոր է հիմնվել դասընթացավարների վերապատրաստման ծրագրերի վրա, որոնք հնարավորություն են տալիս դիտորդական աշխատանքների շղթային համընթաց իրականացնել վերապատրաստման միջոցառումների արագ կասկադային ծրագրեր:

Վերապատրաստման նյութերը՝ թղթային և ՏՀՏ տարբերակով, վերապատրաստման արդյունքների հաջողությունն ապահովելու համար կարևոր գործիքներ են, և դրանք չի կարելի նախապատրաստել սուղ ժամկետներում: Ընդհանուր ռազմավարության շրջանակում պետք է սահմանել, թե ինչ նյութեր են անհրաժեշտ, ինչ միջոցներ պետք է կիրառվեն և որ փուլերում: Դրանք պետք է նախօրոք նախապատրաստվեն և հարմարեցվեն փոփոխվող կարիքներին և պահանջներին:

**Բարեխիղճ գործելակերպ. ցանցերի ստեղծում**

Չնայած տեղական դիտորդական առաքելության նկատմամբ մոտեցումները տարբեր են, սակայն վերապատրաստման ընդհանուր հարթակում կարող են կիրառվել որոշ ընդհանուր մարտահրավերներ, իրավիճակներ և մեթոդներ: Միջազգային ընտրական հանրությունը կազմված է տարբեր դերակատարներից, որոնք կարող են

չափազանց օգտակար լինել տեղական դիտորդական առաքելություն իրականացնող ՔՀԿ-ի համար: Միջազգային հանրության հետ կանոնավոր շփումները բարեխիղճ գործելակերպերի արագ որդեգրումը կդարձնեն հնարավոր, ինչպես նաև տեղական դիտորդական կազմակերպությունների հետ միասին տարբեր ցանցեր ստեղծելու միջոցով հնարավոր կլինի միավորել ուժերը՝ մշակելով և իրականացնելով ընդհանուր վերապատրաստման ռազմավարություն:

## 2.5. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՊԼԱՆ

Ինչպես քննարկվել է վերևում, տեղական դիտորդական առաքելությունները պետք է առաջնորդվեն պլանավորմամբ և հստակ նպատակների սահմանմամբ: Արտաքին լսարանին տարածվող բոլոր տեղեկությունները պետք է արտացոլեն տեղական դիտորդական առաքելության նպատակները:

Հստակ նպատակներ ձևակերպելիս սահմանվում են նաև արտաքին հաղորդակցության նպատակները, ինչն, իր հերթին, պայմանավորում է կազմակերպության կողմից զեկույցների տարածման եղանակը: Տեղական դիտորդական առաքելության հանրային հաղորդակցության ընդգրկուն պլանի շրջանակում ՔՀԿ-ները պետք է որոշեն, թե ինչպես պետք է զեկույցների միջոցով տարածվեն տեղեկությունները և ինչպես կիրառել այս զեկույցների բովանդակությունը ապահովելու համար դրանցում տեղ գտած դիտարկումների և առաջարկությունների ազդեցությունը հետընտրական շրջանի վրա:

**Հանրային հաղորդակցման նպատակները և թիրախները**

Յուրաքանչյուր տեղական դիտորդական առաքելություն պետք է նշանակի մեկ անձ (խոսնակ) կամ անձանց խումբ, որը պատասխանատու է հանրությանը տեղեկություններ հաղորդելու աշխատանքների համար, սա սովորաբար կոչվում է մամուլի գրասենյակ: Նշանակված անձը կամ խումբը պատասխանատու է հանրության հաղորդակցման կարիքներն ու առաջնահերթությունները սահմանելու համար և պետք է մշակի ռազմավարություն՝ այդ խնդիրները լուծելու համար:

Կազմակերպությունը կարող է որոշել զբաղվել միայն տեղեկությունների տարածմամբ կամ կարող է ավելի ակտիվ դերակատարում ունենալ ընտրական գործընթացի վերաբերյալ բանավեճ ձևավորելու ուղղությամբ, օրինակ՝ խրախուսելով քաղաքացիների առավել ակտիվ մասնակցությունը ընտրություններին կամ բարձրացնելով հանրության վստահությունը ընտրությունների նկատմամբ: Կարող են մշակվել ավելի կոնկրետ նպատակներ՝ որպես առավել ընդգրկուն նպատակներին հասնելու քայլեր: Դրանք ազդեցություն կունենան զեկույցների պատրաստման և դրանց ժամանակացույցի վրա՝ ըստ ներքին զեկույցների կազմման պլանի:

Տեղական դիտորդական առաքելության իրականացման ժամանակ որպես լսարան սովորաբար ընտրվում են հետևյալ խմբերը՝ ընտրական մրցակիցներ (քաղաքական կուսակցություններ և թեկնածուներ), ընտրությունների համար պատասխանատու մարմիններ, քաղաքացիական հասարակության այլ խմբեր, տեղական և միջազգային լրատվամիջոցներ, դիվանագիտական հանրություն և ընտրական գործընթացներում ներգրավված այլ միջազգային կազմակերպություններ, ընտրողներ և պետական պաշտոնյաներ:

Արդյունքների մասին զեկուցելիս օգտակար է կիրառել տարբեր ուղերձներ: Տարբեր ուղերձների կիրառման ազդեցությունը ավելի մեծ կլինի, եթե ուղերձը համապատասխանեցվի կոնկրետ լսարանի կարիքներին: Հաղորդակցության խումբը պետք է նախօրոք ուսումնասիրի յուրաքանչյուր խմբի՝ ընտրական տեղեկություններ ստանալու առաջնայնությունները, թե որքան ժամանակ են նրանք պատրաստ հատկացնել ընտրական խնդիրների քննարկմանը և ընտրի նրանց առավել

համապատասխան տեղեկությունները:

Հանրությանը ծանուցելու համար ընտրված մեթոդները տարբեր են՝ ըստ մատուցվող ուղերձի և նպատակային լսարանի: Կոնկրետ իրավիճակներով պայմանավորված՝ կազմակերպությունը կարող է որոշել կիրառել տեղեկությունների տարածման տպագիր, տեսալսողական կամ առցանց ուղիներ, ավանդական կամ նոր լրատվամիջոցներ: Այս որոշումները պայմանավորված են բազմաթիվ գործոններով, որոնք վերաբերում են ժամկետներին և առկա բյուջետային ռեսուրսներին, ինչպես նաև առկա աշխատակազմին և փորձագիտությանը:

**Լսարանի տեսակները**

Հաղորդակցության այլ մոտեցում կարող է կիրառվել, երբ դիտորդական աշխատանքների արդյունքներն ու առաջարկությունները քննարկվում են ընտրությունների համար պատասխանատու մարմինների հետ՝ ի տարբերություն քաղաքացիական հասարակության ներսում բարեփոխումների մասին տարվող քննարկումների: Կազմակերպությունը պետք է տարբեր լսարաններին տեղեկացնի տեղական դիտորդական առաքելության գործողությունների ընթացքի մասին և պատրաստ լինի պարբերաբար կազմակերպել ճեպազրույցներ, տարածել տպագիր նյութեր կամ սոցիալական ցանցերում հրապարակել թարմացված լուրեր:

Ընտրությունների համար պատասխանատու մարմինների հետ հարաբերությունները շատ կարևոր են դիտորդական առաքելության բոլոր փուլերում և բաղադրիչներում: Տեղեկություններ հավաքելու համար անհրաժեշտ է մշտապես ներգրավվել համագործակցային երկխոսության մեջ, որը կարող է կարևոր նշանակություն ունենալ բարեփոխումների օրակարգում դրված հարցերի հետագա խթանման համար: Հաջողության հասած շատ կազմակերպություններ ընտրությունների համար պատասխանատու մարմինների հետ պահպանում են կառուցողական հաղորդակցության ուղիներ, թարմ տեղեկություններ են հաղորդում իրենց աշխատանքների մասին կամ, օրինակ, համագործակցային մեխանիզմներ են ձևավորում ընտրողների կրթության ծրագրերի համար:

Քաղաքական կուսակցությունները կամ խորհրդարանում նրանց ներկայացուցիչները զեկույցների համար տեղեկատվության կարևոր աղբյուր են: Խորհրդարանականների հետ արդյունավետ հաղորդակցությունը կարող է ապահովել նաև բարեփոխումների խթանման գործընթացում հետագա համագործակցությունը: Օգտակար է ընտրական գործընթացին վերաբերող հարցերը քննարկել քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, ընտրաշրջանում պատրաստել հատկապես նրանց ուղղված  պրեզենտացիաներ կամ միջոցառումներ, խնդրել, որ վերջիններս իրենց մասնակցությունն ունենան կամ աջակցեն զեկույցներում բարձրացված խնդիրներին՝ առանց հեռանալու անկողմնակալության պահպանման և հակաօրինական գործողությունները հսկողի դերից:

Դիվանագիտական հանրության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները հետաքրքրված են տեղական դիտորդական խմբերի կազմած զեկույցներով և ընդհանուր ընտրական միջավայրի վերաբերյալ տեղեկատվության կանոնավոր փոխանակումով: Տեղական դիտորդական կազմակերպությունները կարող են օգտվել միջազգային խմբերի կողմից կազմակերպված միջոցառումներից՝ բարեփոխումներին վերաբերող իրենց առաջնահերթությունները խթանելու, ինչպես նաև հետագա ծրագրերի համար ֆինանսավորում ձեռք բերել փորձելու նպատակով: Նրանք կարող են նաև պրեզենտացիաներ կազմակերպել դիվանագիտական հանրության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների համար:

Քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների հետ

հաղորդակցությունը կարող է լավ միջոց հանդիսանալ որոշակի հարցերի շուրջ երկխոսություն խթանելու և բարեփոխումների շուրջ կոալիցիաներ ձևավորելու համար:

Ընդհանուր առմամբ՝ հաղորդակցության թիրախ կարող են դառնալ ընտրողները, կամ ավելի ճիշտ՝ ընտրողների որոշ խմբեր: Օրինակ՝ զեկույցներից ընտրված որոշ տեղեկություններ կարող են հիմք հանդիսանալ սոցիալական ցանցերում քննարկումներ խրախուսելու և երիտասարդ ընտրողներին ներգրավելու, ինչպես նաև նրանց համար կարևոր հարցեր բարձրացնելու համար:

**Մամուլի քարտուղարը/խոսնակը և մամուլի գրասենյակը**

Դիտորդական բոլոր կազմակերպություններին առաջարկվում է արտաքին կապերի ապահովման համար նշանակել խոսնակ: Խոշոր կազմակերպություններն ունեն հանրային կապերի գծով թիմ, որը գործում է մամուլի քարտուղարի կամ խոսնակի ղեկավարության ներքո: Թիմը կապեր է հաստատում և պահպանում լրատվամիջոցների և այլ շահագրգիռ սուբյեկտների հետ, պատասխանում է հարցումների և կազմակերպում է ՔՀԿ-ի լրատվական միջոցառումները: Խոշոր երկրներում տեղական դիտորդական առաքելության համար կարող է անհրաժեշտ լինել խոսնակներ նշանակել շրջաններում, ինչը կարող է հեշտացնել և արագացնել տարածաշրջանային հարցերի շուրջ լրատվամիջոցների հետ շփումները:

Իրենց աշխատակազմով և կամավորներով ամբողջ երկրի տարածքում գործող կազմակերպությունները կարող են որոշել բացել մամուլի գրասենյակ կամ մեդիա կենտրոն՝ մայրաքաղաքի կենտրոնական հատվածում: Այն կարող է օգտագործվել մամուլի ասուլիսների, ոչ հրապարակային զրույցների և լրագրողների հետ հարցազրույցների, դիտորդների վերապատրաստման, քաղաքական գործիչների և ընտրողների հետ հանդիպումների համար: Որպես նոր տեղական հաստատություն՝ կենտրոնի գտնվելու վայրը պետք է հայտարարվի լրատվամիջոցներով, բաժանվող տեղեկագրերով կամ սոցիալական ցանցերով բոլոր այն վայրերում, որտեղ գտնվում է թիրախային լսարանը (ինչպես նաև կազմակերպության կայքում):

Հանրային կապերի գծով թիմը կամ խոսնակը (ները) պետք է հատուկ ուշադրություն դարձնեն ընտրությունների օրվան մոտ «թեժ շրջաններին», այսինքն՝ ընտրություններից մոտավորապես մեկ շաբաթ առաջ և հետո: Խորհուրդ է տրվում առնվազն այս շրջանում բացել մամուլի սենյակ: Ֆինանսական և անձնակազմի ռեսուրսներով պայմանավորված՝ կազմակերպությունը կարող է վարձակալել մեկ կամ երկու սենյակ քաղաքի կենտրոնական հատվածում՝ որպես մամուլի կենտրոն ծառայելու համար: Լրագրողների համար նախատեսված ազատ աշխատանքային տարածքը, համացանցային հասանելիությունը և այլ գրասենյակային ծառայությունները կարող են ամենաորոշիչ պահերին հեշտացնել տեղական դիտորդական կազմակերպության աշխատակազմի և լրագրողների միջև շփումները: Աշխատակիցներն ու կամավորները կարող են օգնել լրատվական միջոցառումները կազմակերպելու և արտաքին զեկույցների պատրաստմանը օժանդակություն ցուցաբերելու հարցում: Կազմակերպության մամուլի ասուլիսի և զեկույցների անգլերեն թարգմանությունն անհրաժեշտ է, եթե միջազգային լրատվամիջոցներին տեղեկացնելու կարիք կա: Այլ լեզուներով գրավոր զեկույցների թարգմանությունը հնարավոր է իրականացնել արտերկրում բնակվող կամավորների միջոցով: Մամուլի կենտրոնի տարբեր ծառայությունները և լրատվական միջոցառումների ժամանակացույցը շաբաթվա ընթացքում պետք է հրապարակվի հանրությանը, օրինակ՝ տեղեկագրի միջոցով կամ սոցիալական ցանցերով (ինչպես նաև կազմակերպության կայքով):

Գրասենյակում առնվազն մեկ անձ պետք է պատասխանատու լինի տեխնիկական օժանդակության համար: Նշանակված աշխատակիցը պետք է կառավարի ՔՀԿ-ի կայքի բովանդակությունը, ապահովի տեղեկությունների տարածումը սոցիալական ցանցերով և

ստեղծի ու շահագործի էլեկտրոնային եղանակով տարածման տվյալների բազա՝ զեկույցները տարածելու համար:

Օգտակար կարող է լինել տարածաշրջանային խոսնակների բջջային հեռախոսահամարների ցուցակն ունենալը, ինչպես նաև հետաքրքրություն ներկայացնող ընտրատեղամասերի ցուցակ կազմելը, որը լրագրողները կարող են պահանջել:

**Լրատվական դաշտի քարտեզի կազմում**

Երկրում ամենաշատ տարածում ունեցող լրատվամիջոցների հայտնաբերումը կարևոր նշանակություն ունի հաղորդակցության պլանավորման համար: Եվրոպայի խորհրդի շատ անդամ պետություններում հեռուստատեսությունը շատ ավելի կարևոր դեր ունի, քան լրագրերը, ռադիոն և համացանցը: Դա նշանակում է, որ տեղական դիտորդական կազմակերպությունները պետք է պարզեն, թե որ ալիքներն ու ծրագրերն են ամենահաճախ դիտվողը, բայց չպետք է մոռանան այլ միջոցների մասին, մասնավորապես, համացանցի մշտապես աճող կարևորության մասին: Համացանցով, մասնավորապես՝ սոցիալական ցանցերով հանրության ծանուցման նշանակությունը չպետք է թերագնահատվի:

Հասանելի ռեսուրսներով և կարիքներով պայմանավորված՝ ՔՀԿ-ները կարող են փորձել տեղեկություններ հաղորդել միջազգային լրատվամիջոցներին: Ուստի, ՔՀԿ-ն պետք է ունենա ամենակարևոր զեկույցները անգլերեն թարգմանելու կարողություն: Բարեխիղճ գործելակերպ է հանդիսանում անգլերեն զեկույցների սրբագրումը լեզվակիրների կողմից: Ճիշտ ձևակերպված անգլերենը ՔՀԿ-ի պրոֆեսիոնալիզմի նշան է: Վատ անգլերենով տեքստը (կամ որևէ այլ լեզվով պաշտոնապես ներկայացված տեքստը) կարող է բացասաբար անդրադառնալ ՔՀԿ-ի նկատմամբ վստահության ձեռք բերման և նրա արժևորման վրա՝ որպես ընտրություններին վերաբերող տեղեկությունների արժեքավոր աղբյուր:

Անհրաժեշտ է կազմել երկրում կամ աշխարհում հայտնի ազգային և միջազգային լրատվամիջոցների ցանկ: Ցանկ կազմելուց հետո այն պետք է մշտապես թարմացվի, իսկ զեկույցի կամ հայտարարության արագ տարածման համար պետք է գործի ներկառուցված ֆունկցիոնալ համակարգ: Մասնավորապես ընտրությունների օրը տվյալների այս բազայի հեշտ հասանելիությունը և պարզ շահագործումը որոշիչ է ուղերձների տարածման հաջողության համար: Տվյալների բազայի օգտագործումը պետք է փորձարկվի մամուլի քարտուղարի և գրասենյակի այլ աշխատակիցների կողմից:

Առանց անձնական կապերի լրատվամիջոցները շահեկան չեն: Լրատվամիջոցների համար պատասխանատու անձինք պետք է ջանքեր գործադրեն անձնական կապեր որոնելու և հաստատելու համար: Էլեկտրոնային փոստերը և կարճ հաղորդագրությունները արժեքավոր միջոցներ են, միայն եթե հասցեատերը հայտնի է, և հակառակը:

**Ժամանակացույցը**

Ընտրությունները երկարատև, դինամիկ գործընթացներ են, որոնց վրա ազդում են տարբեր գործոններ: Այդ պատճառով անհնար է պլանավորել լրատվամիջոցների հետ յուրաքանչյուր շփումը կամ լրատվական միջոցառումը: Այնուամենայնիվ, կազմակերպությունը պետք է որոշում ընդունի ընտրական շրջափուլի տարբեր ժամանակահատվածներում առանցքային զեկույցների մասին, որոնք պետք է լրատվամիջոցներին ներկայացվեն կոնկրետ պահի: Հետևաբար, յուրաքանչյուր զեկույցի նախապատրաստմանը և հրապարակմանը պետք է կցվեն վերջնաժամկետներ: Դիտորդական զեկույցները և մամուլի ասուլիսները հաճախ հետևում են հետևյալ ժամանակացույցին:

**Նախընտրական շրջան**

- Մամուլի հաղորդագրություն դիտորդական աշխատանքները սկսելու մասին:
- Կոնկրետ ասպեկտների, ինչպես օրինակ՝ քարոզարշավի, օրենսդրության և անվտանգության մասին արտահերթ զեկույցներ: Մասնավորապես՝ ընտրությունների օրվանից մեկ շաբաթ առաջ ամենավերջին դիտարկումների ներկայացմամբ մամուլի ասուլիսը կգրավի լրատվամիջոցների ուշադրությունը:
- Կանոնավոր միջանկյալ զեկույցների ներկայացում՝ ընտրությունների նախապատրաստման ողջ գործընթացի վերաբերյալ՝ ընտրությունների օրվանից ոչ ուշ քան 7-ից 10 օր առաջ:

**Ընտրությունների օրը**

- Ընտրությունների մեկնարկի մասին մամուլի հաղորդագրություն:
- Մասնակցության և քվեարկության վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ օրվա ընթացքում (կեսօրվա 12-ից հետո) և քվեարկության ավարտից առաջ:
- Հատուկ դիտորդական աշխատանքների դեպքում մամուլի հաղորդագրություն:

**Հետընտրական շրջան**

- Մոնիթորինգի ողջ ընթացքը գնահատող նախնական դիտարկումների և եզրակացությունների մասին հայտարարություն (անհապաղ՝ ընտրությունների օրվան հաջորդող մեկ կամ երկու օրվա ընթացքում):
- Համապարփակ և մանրամասն գնահատմամբ վերջնական զեկույց՝ ներառյալ ընտրական գործընթացի դիտարկված բոլոր ասպեկտների մասին առաջարկություններ (ընտրություններից մոտ երկու ամիս անց):


Congress
Congrès

Գլուխ 3

# Ներքին զեկույցների պատրաստում

Սույն գլխում ներկայացվում են ներքին զեկույցների պատրաստման առանցքային տարրերը, այդ թվում հետևյալ փուլերը՝ ներքին զեկույցների պատրաստման պլանների կազմում, տեղական դիտորդական առաքելության աշխատակիցների միջև պարտականությունների բաշխում, ներքին զեկույցների ձևաթղթերի մշակում/հարմարեցում, տեղերում տեղեկություններ հավաքելու հմտությունների վերաբերյալ դիտորդների վերապատրաստում, Ցանցային խմբի կողմից դիտորդների ներկայացրած տեղեկությունների մշակում և Հիմնական թիմի կողմից տեղեկությունների վերլուծություն:

## 3.1. ՆԵՐՔԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆ

**Ներքին զեկույցների պատրաստման պլանի անհրաժեշտությունը**

Ներքին զեկույցների պատրաստման պլանը կազմակերպության ընդհանուր ռազմավարական աշխատանքային պլանի առանցքային մասն է և վճռորոշ դեր ունի ընտրությունների մոնիթորինգի հաջողության համար: Այն համախմբում է բոլոր կարևոր տարրերը մեկ համակարգում և նպաստում է արժանահավատության, արդյունավետության և արդյունքայնության ապահովմանը: Ներքին զեկույցների պատրաստման պլանը «քարտեզ» է, որը ծառայում է որպես ներքին զեկույցներ կազմելու ուղեցույց տեղական դիտորդական առաքելության աշխատակիցների, այդ թվում՝ Հիմնական թիմի, ԵԺԴ-ների և ԿԺԴ-ների համար:

Ներքին զեկույցների պատրաստման պլանը՝

- ► մեծացնում է կազմակերպչական խնդիրների և նպատակների ձեռքբերման հավանականությունը,
- ► խրախուսում է ներքին զեկույցների պատրաստման բոլոր մասնակիցների արդյունավետ և փոխադարձ օժանդակությամբ աշխատանքը,
- ► ստեղծում է առավել արդյունավետ և ճկուն ներքին ցանց,
- ► Հիմնական թիմի անդամներին, ԵԺԴ-ներին, ԿԺԴ-ներին ապահովում է ամենօրյա աշխատանքների համար անհրաժեշտ հստակ ուղղորդումներով և մանրամասն ցուցումներով,
- ► հնարավորություն է ստեղծում առաքելության անդամների միջև շրջանառել և փոխանակել տեղեկությունները,
- ► կատարելագործում է անհատական պարտականությունների և միմյանց կարիքներին արձագանքելու ընկալումը,
- ► կիրառում է ներքին հաղորդակցման և զեկույցների պատրաստման համապատասխան միջոցներ,
- ► ստուգում է աշխատանքների համապատասխանությունը՝ սահմանված ժամկետներին և կանոններին,
- ► նվազեցնում է բախումների հավանականությունը՝ շրջանառվող տեղեկությունների անորոշությունը նվազեցնելու միջոցով,
- ► թույլ է տալիս ուսումնասիրել աշխատանքը և ապահովում է հետագա

հաջողությունները գնահատելու եղանակներ,

- ընդլայնում է ավելի լավ կատարողական ապահովելու հնարավորությունը՝ անհատական և խմբային ջանքերը մեկ միասնական համակարգում փոխկապակցելու միջոցով:

**Ներքին զեկույցների պատրաստման պլանի հիմնական տարրերը**

Դիտորդական առաքելությունը պետք է ունենա ներքին զեկույցների պատրաստման լավ զարգացած կառուցվածք՝ դերերի և պատասխանատվությունների հստակ տարանջատմամբ: Դրա արդյունավետությունը կարելի է մեծացնել՝ ստորև նշվածների միջոցով.

- առաքելության անդամների միջև աշխատանքի պատշաճ և ողջամիտ բաշխում,
- յուրաքանչյուր խմբի/անձի համար հանձնարարությունների և պատասխանատվությունների վերաբերյալ հստակ և մանրամասն ցուցումներ,
- զեկույցների պատրաստման և առաքելության անդամների միջև հաղորդակցման արդյունավետ և հուսալի ուղիներ:

**Ներքին զեկույցների պատրաստման ժամկետները**

Ստորև նշված աղյուսակում ներկայացվում է ընտրություններին առնչվող կարևոր ուղենիշների և դիտորդական աշխատանքների մոտավոր ժամկետը: Ժամանակացույցը հիմնված է մեկ փուլից բաղկացած ընտրությունների վրա. եթե դիտորդական առաքելությունն իրականացվում է երկու փուլերի համար, պետք է ներառվեն ճշգրտումներ: Ժամկետները պետք է կրճատվեն, եթե ընտրություններն անց են կացվում կարճ ժամկետում:

Ա. Նախապատրաստական փուլ (ընտրությունների օրվանից երկուսից-երեք ամիս առաջ)

► Փորձագետների ընտրություն (հատկապես, երբ տեղական դիտորդական խումբը նախատեսում է այլ գործընկերների հետ ստեղծել կոալիցիա),

► ԵԺԴ-ների հավաքագրում:

Բ. Տեղաբաշխման և նախընտրական դիտորդական փուլ (ընտրությունների օրվանից վեցից-ութ շաբաթ առաջ)

- Դիտորդական առաքելության մեկնարկի մասին հրապարակային հայտարարում,
- ԵԺԴ-ների համար բրիֆինգներ,
- ԵԺԴ-ների տեղաբաշխում (չորսից-հինգ շաբաթ),
- Ընտրական գործընթացի բոլոր ասպեկտների արձանագրում,
- Նախընտրական դիտարկումների վերաբերյալ միջանկյալ զեկույցի (ների) հրապարակում,
- ԿԺԴ-ների հավաքագրում,
- Տվյալների մուտքագրման օպերատորների հավաքագրում,
- ԿԺԴ-ների համար բրիֆինգներ,
- ԿԺԴ-ների հավատարմագրում,
- Տվյալների մուտքագրման օպերատորների հավաքագրում և

վերապատրաստում:

Գ. Ընտրությունների օրվա դիտորդական աշխատանքներ

- ► Դիտորդներից տվյալների հավաքում՝ ձևաթղթերի և սահմանված ժամկետների համաձայն,
- ► Հայտարարություններ/ մամուլի հաղորդագրություններ/ մամուլի ասուլիսներ՝ ընտրատեղամասերի ստեղծման և բացման, քվեարկության և ձայների հաշվարկի գործընթացների, ընտրողների մասնակցության և արձանագրված միջադեպերի վերաբերյալ,
- ► Ընտրությունների վերջնական արդյունքների վերաբերյալ մամուլի ասուլիս:

Դ. Զեկույցների կազմում և հետընտրական դիտորդական աշխատանքներ (ընտրությունների օրվա ավարտին հետևող երեք շաբաթները)

- ► Նախնական հաշվետվության հրապարակում (ընտրությունների հաջորդ օրը),
- ► ԿԺԴ-ների ճեպազրույցներ,
- ► Հետընտրական գործընթացի արձանագրում (աղյուսակավորում, դիտարկումների հրապարակում, բողոքներ),
- ► ԵԺԴ-ների ճեպազրույցներ,
- ► Վերջնական զեկույցի հրապարակում (ընտրությունների օրվան հաջորդող երկուսից-երեք շաբաթներ):

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. ընտրությունների օրվա ժամկետները**

Ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունը պետք է մշակի ընտրությունների բոլոր փուլերին առնչվող աշխատանքների ժամկետներ՝ ներառելով աշխատանքի տեսակը, ամսաթիվը/վերջնաժամկետը, իրականացման վայրը և պատասխանատու անձանց: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) ընտրությունների օրացույցը կարող է կիրառվել որպես աշխատանքային գրաֆիկ կազմելու հիմք: ԿԸՀ-ի օրացույցը հնարավորություն է տալիս հետևել, թե արդյոք միջոցառումները համապատասխանում են ընտրական զարգացումներին: Փոքր ցույց է տալիս, որ որոշ աշխատանքներ, ինչպիսիք են՝ վերապատրաստումը, հասարակայնության հետ կապերի ապահովումը և հաղորդակցումը, ԵԺԴ-ների կողմից զեկույցների պատրաստումը, ընտրությունների օրը զեկույցների պատրաստումը, կարող են ունենալ առանձին և առավել մանրամասն ժամկետներ: Ստորև ներկայացվում է ընտրությունների օրվա աշխատանքային գրաֆիկից մի հատված:

Աշխատանքային գրաֆիկը կարելի է կազմել հետևյալ ձևաչափով՝ Excel աղյուսակներ, Microsoft Word և այլ հատուկ ծրագրեր: Google որոնողական համակարգի օրացույցը ամենահայտնի և ամենահարմար տարբերակներից մեկն է և կիրառվում է բազմաթիվ կազմակերպությունների կողմից՝ ժամկետներ սահմանելու համար: Google որոնողական համակարգի օրացույցը բոլորի համար հասանելի է, անվճար և դյուրացնում է անհրաժեշտ բոլոր բաղադրատարրերը մեկ վայրում հավաքելու գործընթացը: Տեղեկատվությունը կարող է դասակարգվել, թարմացվել, տարածվել ցանցում և ավտոմատ կերպով ուղարկվել՝ որպես յուրաքանչյուր աշխատանքի համար հիշեցում:

Աղյուսակ 1. Արդար ընտրությունների և ժողովրդավարության միջազգային

**ընկերակցության (ԱԸԺՄԸ կամ ISFED) ընտրությունների օրվա ներքին աշխատանքային ժամանակացույց՝ 2015 թվականի տեղական ընտրությունների համար**

| Հունիսի 15 (ընտրությունների օրը) | | |
|---|---|---|
| **Ժամ** | **Առաջադրանք** | **Պատասխանատու անձ** |
| 06:30 | Ղեկավար կազմը ժամանում է տվյալների կենտրոնը բացելու համար, համակարգիչները միացվում են | Ընտրությունների օրվա աշխատանքները համակարգող, ՏՀՏ մասնագետ |
| 06:30 | Տվյալներ մուտքագրող օպերատորները ժամանում են, ստորագրում են մուտքը, բոլորը նախաճաշում են | ՏՀՏ մասնագետ |
| 06:45 | Տվյալների օպերատորները հակիրճ ցուցումներ են ստանում | ՏՀՏ մասնագետ |
| 06:45 | ԿԺԴ-ները ժամանում են ընտրատեղամասեր | Ընտրությունների օրվա աշխատանքները համակարգող, ԵԺԴ-ներ |
| 07:00 | Ընտրատեղամասերը բացվում են | ԿԸՀ |
| **07:15** | **Ժամանման մասին 1-ին կարճ հաղորդագրություն** | **ԿԺԴ-ներ** |
| 07:30-08:00 | Տվյալների հավաքում, տվյալների ուղարկում, տվյալներ մուտքագրող օպերատորները կապվում են ԿԺԴ-ների հետ | ՏՀՏ մասնագետ, վերլուծաբան |
| 08:00-08:30 | Դիտորդների փոխարինում, եթե անհրաժեշտ է | Ը-օրվա համակարգող, ՏՀՏ մասնագետ, ԵԺԴ-ներ |
| 08:00-10:00 | Տվյալների կենտրոնի տեսանկարահանում | ՀրԿ օգնական |
| **08:30** | **2-րդ կարճ հաղորդագրություն** | **ԿԺԴ-ներ** |

| | | |
|---|---|---|
| Հունիսի 15 (ընտրությունների օրը) | | |
| 08:30-09:00 | Տվյալների հավաքում, տվյալների ուղարկում, տվյալներ մուտքագրող օպերատորները կապվում են ԿԺԴ-ների հետ | Օպերատորներ, Ընտրությունների օրվա աշխատանքները համակարգող, ՏՀՏ մասնագետ |
| 8:30-09:30 | Իրադարձությունների վերլուծություն (բոլոր իրադարձությունների մասին տեղեկությունների ուղարկում մինչև ժամը 09:30) | Իրավաբան |
| 09:00 | Գործադիր տնօրենը ժամանում է տվյալների կենտրոն | Գործադիր տնօրեն |
| 09:00-09:30 | Ձայների զուգահեռ հաշվարկի/ աղյուսակավորման (ՁԶՀ) վերլուծություն | ՏՀՏ մասնագետ, վերլուծաբան |
| 09:00-12:00 | Օպերատորները զնում են ընդմիջման | ՏՀՏ մասնագետ, ՏՀՏ մասնագետի օգնական |
| 09:20-10:00 | Հայտարարություն | ՀրԿ մասնագետ, գործադիր տնօրեն |
| 10:00-10:30 | Հայտարարության թարգմանություն | Թարգմանիչ |
| 10:00-10:30 | Դիզայն/գրաֆիկա | Դիզայնի մասնագետ, ՀրԿ մասնագետ |
| 10:30-11:00 | Հայտարարությունը ուղարկվում է Մամուլի կենտրոն՝ տպագրության համար | ՀրԿ մասնագետ, ՀրԿ օգնական |
| **11:00** | **Մամուլի ասուլիսը մեկնարկում է** | **Գործադիր տնօրեն** |
| 11:00-11:30 | Հայտարարությունների ուղարկում էլեկտրոնային փոստով (ԱՆԳԼԵՐԵՆ և ՎՐԱՑԵՐԵՆ) | ՀրԿ մասնագետ |
| 11:30-12:00 | Ինֆոգրաֆիկայի տեղադրում (Ֆեյսբուք, կայքէջ) | ՏՏ մասնագետ, ՀրԿ մասնագետ |
| **12:10** | **3-րդ կարճ հաղորդագրություն** | **ԿԺԴ-ներ** |
| 12:10-12:30 | Տվյալների հավաքում, տվյալների ուղարկում, տվյալներ մուտքագրող օպերատորները կապվում են ԿԺԴ-ների հետ | Օպերատորներ, Ընտրությունների օրվա աշխատանքները համակարգող, ՏՀՏ մասնագետ |
| 12:00-13:30 | Իրադարձությունների վերլուծություն (բոլոր իրադարձությունների մասին տեղեկությունների ուղարկում մինչև ժամը 13:30) | Իրավաբան |
| 13:30-14:00 | Հայտարարություն | Գործադիր տնօրեն, ՀԿ մասնագետ |
| 13:00-17:00 | Օպերատորները հերթափոխվում են | ՏՀՏ մասնագետի օգնական |
| 14:00-14:30 | Հայտարարության թարգմանություն | Թարգմանիչ |
| 14:30- | Դիզայն/գրաֆիկա | Դիզայնի մասնագետ, ՀրԿ |

| | | |
|---|---|---|
| 15:00 | | մասնագետ |
| 14:30 | Հայտարարությունը ուղարկվում է Մամուլի կենտրոն տպագրության համար | ՀրԿ մասնագետ |
| **15:00** | **Մամուլի ասուլիս կեսօրվա մասնակցության մասին** | **Գործադիր տնօրեն** |

Աղբյուր՝ www.isfed.ge

Ստորև ներկայացված է կառուցվածքային գծապատկեր, որտեղ նկարագրված է դիտորդական առաքելության հաղորդակցության կառուցվածքը ընտրությունների օրը: Ընդհանուր առմամբ, ներքին հաղորդակցության կառուցվածքը կախված է դիտորդական աշխատանքների շրջանակից, մոնիթորինգի մեթոդաբանությունից և առկա մարդկային/ֆինանսական ռեսուրսներից:

► Դիտորդական աշխատանքների նպատակը և շրջանակը պայմանավորում են առաքելության կառուցվածքը: Առաքելության և առաքելության հաղորդակցության կառուցվածքը տարբերվում են՝ պայմանավորված այն բանով, թե դիտորդական աշխատանքները կենտրոնացած են ընդհանուր ընտրական գործընթացի, թե առանձին թեմաների շուրջ (ընտրական վեճերի ընթացքի մոնիթորինգ, լրատվամիջոցների վարքագծի մոնիթորինգ և այլն):

► Ի լրումն սրան, ներքին հաղորդակցության կառուցվածքը տարբեր է ընտրությունների բոլոր փուլերում՝ նախընտրական շրջանում, ընտրությունների օրը և հետընտրական շրջանում:

**Գծապատկեր 3. Ընտրությունների օրվա ներքին հաղորդակցության կառուցվածք (Վրաստան)**




| | |
|---|---|
| 900 STO | 900 ԿԺԴ |
| Logistics/Meals<br>Logistics Manager, Housekeeper | Նյութատեխնիկական բազա/սնունդ<br>Նյութատեխնիկական հարցերով կառավարիչ, տնտեսվար |
| SMS reporting | Կարճ հաղորդագրություններով զեկուցում |
| Technical Support<br>IT Manager | Տեխնիկական աջակցություն<br>ՏՏ մասնագետ |
| Web-Page<br>PR manager<br>PR Assistant | Կայքէջ<br>ՀԿ մասնագետ<br>ՀԿ օգնական |

| | |
|---|---|
| TO THE PUBLIC - @ Web, @ FB, @Email and traditional outreach | ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ՝ @ Վեբ, @ ՖԲ, @էլեկտրոնային նամակ և ավանդական հաղորդակցության միջոցներ |
| SMS Data Center<br>15 Operators<br>ICT Expert<br>ICT Assistant | Կարճ հաղորդագրությունների տվյալների կենտրոն<br>15 օպերատոր<br>ՏՀՏ մասնագետ<br>ՏՀՏ օգնական |
| 76 LTOs/Mobile Teams | 76 ԵԺԴ-ներ/շարժական խմբեր |
| Incidents | Իրադարձություններ |
| Crices Management<br>E-day Co-ordinator | Արտակարգ իրավիճակների կառավարում<br>Ընտրությունների օրվա աշխատանքները համակարգող |
| Analytical center<br>ICT expert<br>Analyst Expert<br>E-day Co-ordinator<br>Executive Director | Վերլուծական կենտրոն<br>ՏՀՏ մասնագետ<br>Վերլուծաբան<br>Ընտրությունների օրվա աշխատանքները համակարգող<br>Գործադիր տնօրեն |
| Statement/Press Conference<br>PR Manager<br>Executive Director Experts | Հայտարարություն/մամուլի ասուլիս<br>ՀԿ մասնագետ<br>Գործադիր տնօրեն Փորձագետներ |
| Info graphics<br>Designer | Ինֆոգրաֆիկա<br>Դիզայնի մասնագետ |
| Translation<br>Interpreter | Թարգմանություն<br>Թարգմանիչ |
| 73 DEC Observers | 73 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի դիտորդներ |
| Incidents | Իրադարձություններ |
| Incident Center<br>15 operator Lawyers,<br>4 Regional Lawyers | Իրադարձությունների կենտրոն<br>15 օպերատոր Իրավաբաններ<br>4 իրավաբան շրջաններից |

| | |
|---|---|
| Head Lawyer | Գլխավոր իրավաբան |
| Web-Portal<br>Porta O cer, Interns | Վեբ-պորտալ<br>Պորտալի սպասարկման աշխատակից, պրակտիկանտներ |
| Gust Management<br>Administrative O cer | Այցելուների կառավարում<br>Վարչական աշխատակից |
| TO THE PUBLIC – Portal and portal FB | ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ՝ պորտալ և ՖԲ պորտալ |

## 3.2. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ընտրությունների դիտորդական առաքելության պլանավորումը ներառում է ընտրությունների դիտորդական առաքելության խմբի կառուցվածքի պլանավորում: Հատուկ առաջադրանքների, պարտավորությունների և պատասխանատվությունների սահմանումը և կառուցվածքը (որոնք, սովորաբար, սահմանվում են յուրաքանչյուր առանձին վերլուծաբանի/փորձագետի համար հատուկ մշակված տեխնիկական առաջադրանքներով) կախված են դիտորդական առաքելության շրջանակներից և խնդիրներից, առկա ռեսուրսներից և դիտորդական առաքելության նախկին փորձից: Անկախ խմբի չափից և առկա ռեսուրսներից՝ լավ զեկույցներ կազմելու համար պահանջվում է պարտականությունների հետևյալ բաժանումը.

- Հիմնական խումբ՝ առաքելության ղեկավարի և առաքելության ղեկավարի տեղակալի գլխավորությամբ, արտաքին զեկույցներ կազմելու համար պատասխանատու վերլուծաբաններ, ներքին զեկույցները ստանալու և դրանք ստուգելու համար պատասխանատու ցանցային համակարգող:
- Դիտորդներ, որոնք տեղում տվյալներ են հավաքում:

Զեկույցներ կազմելու համար այս երկու բաժիններից յուրաքանչյուրը պետք է իրականացնի կոնկրետ գործառույթներ, և երկու բաժինների միջև պետք է տեղի ունենա աշխատանքների համակարգում: Դիտորդական առաքելության կառուցվածքի մի օրինակ կարելի է գտնել ստորև ներկայացված գծապատկերում:

Գծապատկեր 4. Դիտորդական առաքելության կառուցվածքը (Մոլդովա)




| | |
|---|---|
| Financial Department (accountants, cashiers) | Ֆինանսական բաժին (հաշվապահներ, գանձապահներ) |
| Head of the Mission | Առաքելության ղեկավար |
| (Director of the Monitoring Democratic Processes Program) | (Ժողովրդավարական գործընթացների ծրագրի մոնիթորինգի տնօրեն) |
| Director of Human Rights Program | |
| Stakeholders' liaison o cer | Շահագրգիռ կողմերի հետ կապերի ապահովման մասնագետ |
| Special operations (PVT/QC) Co-ordinator | Հատուկ գործառույթների (Ձայների զուգահեռ հաշվարկի/որակի վերահսկողության) համակարգող |
| Chief Analyst | Գլխավոր վերլուծաբան |
| Network Co-ordinator | Ցանցային համակարգող |
| QC/PVT Operators | Ձայների զուգահեռ հաշվարկի/որակի վերահսկողության օպերատորներ |
| Project Co-ordination Team (Co-ordinator of the Monitoring Democratic Processes Program) | Ծրագրային համակարգման թիմ (Ժողովրդավարական գործընթացների ծրագրի մոնիթորինգի համակարգող) |
| Team of Analysts (Election Analyst, Legal Analyst etc.) | Վերլուծաբանների թիմ (Ընտրությունների վերլուծաբան, իրավական վերլուծաբան և այլն) |
| Regional Assistants (LTO Co- | Մարզային օգնականներ (ԵԺԴ |

| | |
|---|---|
| ordinators) | համակարգողներ) |
| Project Assistant(s) | Ծրագրի օգնական (ներ) |
| Logistics Co-ordinator | Նյութատեխնիկական բազայի համակարգող |
| Long-Term Observers | Երկարաժամկետ դիտորդներ |
| Short-Term Observers | Կարճաժամկետ դիտորդներ |

Աղբյուր՝ https://promolex.md

**Հիմնական խումբը**

Հիմնական խումբը համակարգում է ընտրությունների դիտորդական առաքելության ողջ ընթացքը. այն որոշում է կայացնում ընդհանուր մեթոդաբանության վերաբերյալ, ապահովում է աշխատանքների և հաղորդակցման գործընթացների արդյունավետ համակարգումը, որոշում է միջանկյալ զեկույցների, հայտարարությունների և վերջնական զեկույցի բովանդակությունը և ժամկետները:

Հիմնական թիմի կառուցվածքը տարբերվում է ըստ կազմակերպության: Որպես կանոն՝ կառուցվածքում ներառված է առաքելության ղեկավարը, առաքելության ղեկավարի տեղակալը, առանձին վերլուծաբաններ/փորձագետներ (ընտրությունների վերլուծաբան, իրավական վերլուծաբան, քաղաքական վերլուծաբան, լրատվական վերլուծաբան, լրատվամիջոցների հետ կապերի համակարգող/խոսնակ, անվտանգության փորձագետ և ցանցային/ԵԺԴ համակարգող, վիճակագրության մասնագետ): Բացի այս ծրագրային աշխատակիցներից, Հիմնական թիմում աշխատում են նաև այլ գործառույթներ իրականացնող անդամներ (ֆինանսների մասնագետ/հաշվապահ, գործառնությունների/նյութատեխնիկական հարցերով մասնագետ և գնումների մասնագետ):

Հիմնական խումբը ապահովում է իր անդամների միջև կանոնավոր հաղորդակցումը, սովորաբար՝ կանոնավոր համատեղ ժողովների միջոցով (օրինակ՝ ամենօրյա առավոտյան հանդիպումներ), որոնց ժամանակ նաև բաշխվում են առաջադրանքները: Հիմնական թիմի առանձին անդամները պատասխանատու են ուղղահայաց հաղորդակցումն ապահովելու և առաջադրանքներն իրենց աշխատանքային խմբի անդամներին հասցնելու համար: Լավագույն դեպքում՝ Հիմնական թիմի կազմում գործում են համակարգողներ/կառավարիչներ, որոնք ապահովում են տեղեկատվական հոսքը, այնպես, որ Հիմնական խումբը աշխատանքների և կարիքների մասին լինի մշտապես տեղեկացված: Հիմնական թիմի հիմնական պաշտոնները հետևյալն են.

**Առաքելության ղեկավար**

- Համակարգում է զեկույցներ կազմելու ընդհանուր գործընթացը,
- Պահպանում է հաղորդակցումը Խորհրդի հետ՝ զեկույցների և հայտարարությունների բովանդակության շուրջ համաձայնություն ձեռք բերելու համար,
- Զբաղվում է հանրային կապերով՝ զեկույցները և հայտարարությունները տարածելու նպատակով,
- Հաստատում է զեկույցները:

**Առաքելության ղեկավարի տեղակալ**

- Առաքելության ղեկավարի քաղաքական և տեխնիկական հարցերով հիմնական խորհրդատուն է,
- Ապահովում է, որ զեկույցների պատրաստման ընթացակարգերը պահպանվեն և զեկույցներ կազմելու ձևաթղթերը համապատասխանեն իրավիճակին,
- Կազմում է միջանկյալ զեկույցներ, նախնական հաշվետվություն և վերջնական զեկույց,
- Համակարգում է դիտորդների ճեպազրույցի, նյութերի և ձևաթղթերի նախապատրաստումը,
- Իրականացնում է ԵԺԴ-ների տեղաբաշխմանը և ընտրությունների օրվա լուսաբանմանն առնչվող գործառույթների պլանավորումը:

Առաքելության ղեկավարի տեղակալը հիմնականում մշակում է նախնական հաշվետվության և այլ արտաքին զեկույցների տեքստը՝ հիմնվելով Հիմնական թիմի անդամներից ստացված նյութերի վրա: Սեղմ ժամկետներով պայմանավորված (նախնական հաշվետվությունը սովորաբար ներկայացվում է ընտրությունների հաջորդ օրը)՝ այս զեկույցների նախապատրաստումը բարդ առաջադրանք է, որի համար պետք է սահմանել նախագծերի կազմման, վերանայման և վերջնականացման կառուցվածքային գործընթացներ: Հապճեպությունը բացառելու համար բոլոր այս զեկույցների նախագծերը պետք է կազմվեն դրանց հրապարակումից շատ առաջ: Նաև առաքելության ղեկավարին բավարար ժամանակ պետք է տրվի՝ զեկույցների նախագծերը վերանայելու համար: Ուստի, վերջնաժամկետները պետք է սահմանել համապատասխանաբար:

**Վերլուծաբաններ**

Վերլուծաբանները պատասխանատու են իրենց համապատասխան ոլորտների (իրավական, ընտրական, քաղաքական, լրատվական և այլն) գնահատման համար, որոնք սահմանված են նրանց կողմից իրականացվող ազգային մակարդակով վերլուծության, ինչպես նաև տվյալ տեղամասում դիտորդների կողմից հաղորդված տեղեկատվության հիման վրա: Ներքին զեկույցների պատրաստման գործընթացը՝ տեղամասային երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների ներգրավվմամբ, վերլուծաբանների համար պետք է լինի առանցքային տարր՝ արտաքին զեկույցների հիմնական դիտարկումները, օրինաչափությունները, եզրակացությունները և առաջարկությունները ձևակերպելիս:

Հիմնական թիմի կարևորագույն անձինք (ԱՂ-ը, ԱՂՏ-ը) պատասխանատու են համընկնող հարցերն ու խնդիրները բաշխելու և դրանք համապատասխան անձանց հանձնարարելու համար, որոնք նախապես ներառված չեն եղել աշխատանքային իրավասությունների շրջանակում:

**Ցանցային համակարգող**

Ցանցային համակարգողը պատասխանատու է Հիմնական թիմի և առաքելության այլ խմբերի ու տեղում գործող դիտորդների (ԵԺԴ-ներ, Շարժական ԿԺԴ-ներ, ԿԺԴ-ներ) միջև հաղորդակցումը ապահովելու համար: Համակարգողը կարող է ունենալ մի քանի տարածքային համակարգող օգնականներ: Ցանցային համակարգողը, տարածքային ցանցային համակարգողների հետ միասին (եթե այդպիսիք կան), հավաքում և ստուգում է ԵԺԴ-ների, ԿԺԴ-ների և տեղերում աշխատող այլ դիտորդների դիտորդական զեկույցները: Տեղեկություններն այնուհետ ուղարկվում են Հիմնական թիմին: Ցանցային համակարգողը.

- ► մշակում է ԵԺԴ-ներից ստացվող պարբերական զեկույցների և միջադեպերի մասին զեկույցների պահպանման և մշակման համակարգ,
- ► օժանդակում է վերապատրաստման մեթոդների և նյութերի մշակմանը ԵԺԴ-ների կողմից զեկույցների պատրաստման համար,
- ► ԵԺԴ-ների հետ համակարգում է ԿԺԴ-ների կողմից տեղեկությունների ստացման և մշակման ընթացքը,
- ► օժանդակում է զեկույցների որոշ բաժինների մշակմանը՝ ԵԺԴ-ների զեկույցներում առկա տեղեկությունների հիման վրա:

**Վիճակագրության մասնագետ**

Վիճակագրության մասնագետը, տվյալներ մուտքագրող օպերատորների հետ միասին, ԿԺԴ-ներից հավաքում է տեղեկություններ ընտրությունների զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև տվյալներ արձանագրություններից: Ողջ տեղեկատվությունը ներբեռնվում է հատուկ համակարգչային ծրագրի մեջ՝ հետագա մշակման համար: Եթե տեղի են ունենում սխալներ, օպերատորը կապվում է ԿԺԴ-ների հետ՝ տեղեկատվությունն ստուգելու և ուղղելու համար: Համակարգչային ծրագիրը դյուրացնում է ձայների արագ հաշվարկի կամ ձայների զուգահեռ հաշվարկի/աղյուսակավորման մասին բավարար տեղեկատվության ստացումը Հիմնական թիմի կողմից:

**Միջադեպերի կենտրոնի իրավաբաններ**

Միջադեպերի կենտրոնի իրավաբանները կարող են հանդես գալ որպես այլընտրանքային բաժնի աշխատակիցներ տեղական դիտորդական առաքելության շրջանակում: Բաժինը ստեղծվում է հատուկ ընտրությունների օրվա նպատակով՝ ԵԺԴ-ների, ԿԺԴ-ների, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների դիտորդների կողմից արձանագրվող ընտրախախտումների/թերությունների մասին տեղեկություններ ստանալու, տվյալները բազայում մուտքագրելու և խորհրդատվություն տրամադրելու համար այն մասին, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկվեն:

**Դիտորդներ**

**Երկարաժամկետ դիտորդներ**

ԵԺԴ-ները ընտրությունների դիտորդական առաքելության, այսպես կոչված, «աչքերն ու ականջներն» են շրջաններում: Նրանց հիմնական պարտականությունը իրենց պատասխանատվության ներքո գտնվող տարածքում ընտրական գործընթացների և նախընտրական քարոզարշավի մասին տարբեր տվյալներ հավաքելն է: ԵԺԴ-ները նախընտրական և հետընտրական դիտարկումների վերաբերյալ տվյալները հավաքում են դիտորդական առաքելության հատուկ մեթոդաբանության հիման վրա և կիրառում են դիտորդական առաքելության տարբեր ձևաթղթեր (ԵԺԴ ստանդարտ ձևաթուղթ, միջադեպերի մասին զեկուցման ձևաթուղթ, թեմատիկ ձևաթղթեր և այլն): ԵԺԴ-ները պետք է տեղյակ լինեն իրենց կողմից հավաքվող տեղեկատվության կարևորության մասին, խիստ ուշադրություն դարձնեն մանրամասներին և հավաքեն զեկույցներում նշված փաստերի ապացույցներ:

**Կարճաժամկետ դիտորդներ**

ԿԺԴ-ները ընտրատեղամասերում հավաքում են ընտրությունների օրվա ընթացքի վերաբերյալ որակական և քանակական տվյալներ: Դիտորդական առաքելության մեթոդաբանությունից կախված՝ ԿԺԴ-ները կարող են տեղաբաշխվել՝ ընդգրկելու համար բոլոր ընտրատեղամասերը կամ պատահականության սկզբունքով ընտրված ընտրատեղամասեր: Ընտրությունների ողջ օրվա ընթացքում ԿԺԴ-ները մնում են ընտրատեղամասում՝ ընտրատեղամասի բացումը, քվեարկության գործընթացը, ձայների

հաշվարկը և աղյուսակավորումը լուսաբանելու համար: Նրանց տեղեկատվությունը փոխանցվում է հետևյալ եղանակներով:

- Ստացիոնար թիմերը (արագ հաշվարկ/ԶՁՀ, բջջային կարճ՝ SMS հաղորդագրություններ, հեռախոսային հաղորդագրություններ) անմիջապես հաղորդում են կենտրոն՝ զանգահարելու կամ տեքստային հաղորդագրություններ ուղարկելու միջոցով, կամ տեղի ունեցած միջադեպերի վերաբերյալ դիմումներ լրացնելու միջոցով:
- Շարժական թիմերը հաղորդում են իրենց համապատասխան ԵԺԴ-ներին, ովքեր ստուգում, ուղղում, ամբողջացնում են տեղեկատվությունը և այն ուղարկում կենտրոն (Հիմնական թիմին):
- Ընտրական հանձնաժողովների վերին մակարդակում գործող (ԸԸՀ-ներ) դիտորդները ԸԸՀ-ներում ընտրությունների օրն արձանագրված դիտարկումների և խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում են ԵԺԴ-ներին ու միջադեպերի կենտրոնին:

Ավելի ու ավելի մեծ թվով կազմակերպություններ են կիրառում ժամանակակից տեխնոլոգիաներ՝ տեղեկատվությունն անմիջապես ուղարկելով տվյալների բազա, որտեղ գործի է դրվում առավել բարդ վերլուծություն: Այնուհետև, տվյալների վերլուծություն իրականացնող փոքր խումբը (սովորաբար վիճակագրության փորձագետի կողմից լիազորված երկու կամ երեք անձ) իրականացնում է տեղեկատվության առաջնային վերլուծությունը և այն փոխանցում է Հիմնական թիմին (Առաքելության ղեկավարի տեղակալ, Ընտրությունների վերլուծաբան) զեկույցների՝ ընտրությունների օրվան առնչվող բաժնի նախագիծը կազմելու համար:

## 3.3. ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՁԵՎԱՉԱՓԵՐԸ

Գոյություն ունեն ներքին զեկույցների պատրաստման երկու տեսակի ձևաթղթեր՝ երկարաժամկետ դիտորդական ձևաթղթեր և կարճաժամկետ դիտորդական ձևաթղթեր (տե՛ս 3-րդ հավելվածը): Երկու տիպի ձևաթղթերն էլ հարմարեցված են երկրի առանձնահատկություններին: Դրանք Հիմնական թիմի համար հանդիսանում են առանցքային տեղեկությունների աղբյուրներից մեկը՝ ի լրումն վերլուծաբանների կողմից կենտրոնում հավաքվող տեղեկությունների: Ձևաթղթերը կազմելիս և փոփոխելիս խորհուրդ է տրվում կիրառել հետևյալ բարեխիղճ գործելակերպերը:

**Ձևաթղթերի նախօրոք մշակում**

Բազմաթիվ տեղական դիտորդներ արդեն մշակել են ներքին զեկույցների պատրաստման ձևաթղթեր, որոնք ծառայում են իրենց դիտորդական աշխատանքների հատուկ նպատակին: Երբ ընտրությունները մոտենում են, նրանք պետք է լուրջ աշխատանքներ տանեն առկա ձևաթղթերը փոփոխելու ուղղությամբ՝ հիմնվելով անցյալի փորձի և քաղած դասերի վրա: Նրանք պետք է հաշվի առնեն, թե զեկույցներ պատրաստելիս ինչ են ցանկանում շեշտադրել: Նրանք նաև հստակ գաղափար պետք է ունենան այն մասին, թե ինչպես տվյալների պատշաճ և առավել արդյունավետ մշակում ապահովել տեղական դիտորդական կազմակերպության հրապարակային զեկույցների համար:

Սկզբում Հիմնական խումբը պետք է հաշվի առնի զեկույցների կազմման հնարավոր խնդիրներն ու մարտահրավերները: Խմբային քննարկման ժամանակ Հիմնական խումբը պետք է որոշի, թե ինչ իրավիճակներ կարող են առաջ գալ դիտորդական աշխատանքների ժամանակ և ինչպես կարելի է զեկուցել դրանց մասին: Պետք է մշակել սցենարներ՝ նշելով դրանց ծագելու հավանականության մասին: Այնուհետև Հիմնական խումբը պետք է մշակի

նոր ձևաթղթեր կամ վերանայի առկա զեկույցների ձևաթղթերը՝ չբացառելով դրանց՝ ավելի ուշ փուլում փոփոխման հավանականությունը: Անհրաժեշտ է պլանավորել կանոնավոր վերանայման նիստեր՝ զեկույցների պատրաստման ձևաթղթերում փոփոխություններ կատարելու համար: Այդ կերպ, տեղական դիտորդական կազմակերպությունը պատրաստ կլինի տեղեկությունների արդյունավետ հավաքմանը:

**Յուրաքանչյուր զեկույցի առանցքային տարրերը**

Հրապարակային զեկույցների կամ հայտարարության որակը մեծապես պայմանավորված է դիտորդական առաքելության կողմից իր ներքին զեկույցներում առաջադրված հարցերի որակից: Հարկավոր է պատշաճ ուշադրություն հատկացնել հարցերը ձևակերպելու և պատասխանները հավաքելու, ստուգելու և վերլուծելու մեթոդներին:

Հիմնական խումբը պետք է բավականաչափ ժամանակ ներդնի զեկույցների պատրաստման ձևաթղթերի և ԵԺԴ-ների ու ԿԺԴ-ների կողմից տարբեր շահագրգիռ կողմերին ուղղվող հարցերի մշակման մեջ: Ձևաթղթերը մշակելիս Հիմնական թիմը պետք է մշտապես ապահովի հետևյալ հինգ առանցքային հարցադրումների կատարումը:

- Ո՞վ է պատասխանատու տեղի ունեցածի համար:
- Ի՞նչ է տեղի ունենում:
- Ե՞րբ է տեղի ունենում:
- Որտե՞ղ է տեղի ունենում:
- Ինչու՞ է տեղի ունենում:

**Գծապատկեր 5. Տեղեկությունների որակը**




| | |
|---|---|
| What? | Ի՞նչ |
| Who? | Ո՞վ |
| Activity | Գործողություն |
| Why? | Ինչո՞ւ |

| | |
|---|---|
| When? | Ե՞րբ |
| Where? | Որտե՞ղ |

Աղբյուր՝ https://promolex.md

Ներքին զեկույցների պատրաստման ձևաթղթերում այս հարցերի ներառումը ապահովում է, որ դիտորդները տվյալներ հավաքեն դեպքերի ամենակարևոր կողմերի մասին:

**Երկարաժամկետ դիտորդական ձևաթղթեր**

Կախված երկրի առանձնահատկություններից, դիտորդական առաքելության շրջանակից, կառուցվածքից, մարդկային և ֆինանսական ռեսուրսներից՝ երկարաժամկետ դիտորդական առաքելությունը կարող են հիմնվել տվյալների հավաքագրման երկու փոխլրացնող մեթոդների վրա՝ երկարաժամկետ դիտորդական ձևաթղթեր (ԵԺԴ ձևաթղթեր) և Հիմնական թիմի անդամների կողմից կենտրոնում հավաքվող տվյալներ:

ԵԺԴ ձևաթղթերը շրջաններում ընտրական գործընթացի ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրն են հանդիսանում: Տեղական դիտորդները մշակում են հետևյալ ԵԺԴ ձևաթղթերը:

- ► *ԵԺԴ զեկույցների պատրաստման ստանդարտ ձևաթղթերի* միջոցով քանակական և որակական տեղեկություններ են հավաքվում ընտրական քարոզարշավի անցկացման բոլոր ասպեկտների մասին: ԵԺԴ ձևաթղթերը կարող են նաև ավելի սևեռվել տարբեր թեմաների վրա (քարոզարշավի ֆինանսավորում, լրատվամիջոցների մոնիթորինգ և այլն)՝ դրանով ապահովելով առանձի հարցի և որակական տեղեկությունների հավաքման հատուկ շեշտադրումը: Հաճախ զեկույցների պատրաստման այս ձևաթղթերում ներմուծվում է նախընտրական միջանկյալ զեկույցների, ինչպես նաև՝ հետընտրական հայտարարության և/կամ վերջնական զեկույցների կառուցվածքը:
- ► *ԵԺԴ միջադեպային ձևաթղթերը* անմիջական և մանրամասն տեղեկություններ են հաղորդում այն միջադեպերի մասին, որոնք տեղի են ունենում ԵԺԴ-ի դիտորդական աշխատանքների տարածքում: Այս ձևաթղթերից բացի, կարելի է կիրառել հանրահավաքների մասին զեկույցների ԵԺԴ ձևաթղթերը, որոնք կարող են օգտագործվել նշանակալի իրադարձությունների դեպքում (օրինակ՝ արձանագրված հանրահավաք):

ԵԺԴ ձևաթղթերի բովանդակությունը պայմանավորված է երկրի առանձնահատկություններով, տեղական կազմակերպության կառուցվածքով և մոնիթորինգի մեթոդաբանությամբ: Այնուամենայնիվ, ԵԺԴ ձևաթղթեր պատրաստելիս պետք է հաշվի առնել հետևյալ հայեցակետերը:

**Տեղական դիտորդական առաքելության շրջանակը**

ԵԺԴ զեկույցների պատրաստման ձևաթղթերը պետք է մշակվեն դիտորդական առաքելության ընդհանուր նպատակին և շրջանակին համապատասխան. արտաքին զեկույցների կառուցվածքը հիմնականում ԵԺԴ ձևաթղթերի կառուցվածքի կրկնօրինակն է: Նույնիսկ եթե դիտորդական կազմակերպությունը հանդիպում է մարդկային և ֆինանսական սահմանափակումների, այնուամենայնիվ ձևաթուղթը պետք է ներառի ընտրական գործընթացի հատկորոշիչներից առնվազն նվազագույնը՝ Հիմնական թիմի

համար որակական և հետևողական երկարաժամկետ տեղեկատվություն ապահովելու համար: Ընդհանուր առմամբ, ԵԺԴ զեկույցների պատրաստման սովորական ձևաթղթերը ներառում են ընտրական քարոզարշավի հետևյալ կողմերը՝

- ► պետական կառավարման կենտրոնական և տեղական մարմինների դերը,
- ► ընտրությունների համար պատասխանատու մարմնի գործունեությունը,
- ► ընտրացուցակների կազմումը (էլեկտրոնային ընտրացուցակների կիրառում), ընտրողների գրանցումը,
- ► քարոզարշավի անցկացումը, այդ թվում՝ ընտրական մրցակիցների գործողությունները,
- ► քարոզարշավի ֆինանսավորումը,
- ► լրատվամիջոցների կողմից ընտրությունների լուսաբանումը (մասնավորապես՝ շրջանային լրատվամիջոցների),
- ► դիմում-բողոքները և հայցադիմումները:

**Ձևաթղթերի վերանայումը և թարմացումը**

Նախքան դիտորդական աշխատանքներն սկսելը՝ Հիմնական խումբը պետք է հաշվի առնի դիտորդական աշխատանքների մեթոդաբանությունը համապատասխանեցնելու հարցը: Շատ կազմակերպություններ իրականացնում են ընտրությունների մոնիթորինգ՝ հետևելով քարոզարշավի հիմնական իրադարձություններին, ընտրական մարմինների և ընտրությունների թեկնածուների, ինչպես նաև այլ համապատասխան շահագրգիռ կողմերի կողմից սահմանված ընտրությունների օրացույցին: Որոշ ավելի փորձառու կազմակերպություններ առավել բարդ մոտեցում են որդեգրում՝ ԵԺԴ-ներին տեղաբաշխելով այնպես, որ վերջիններս կարողանան իրենց դիտորդական աշխատանքների տարածքում այցելել յուրաքանչյուր տեղամաս: Այդպիսով նրանք ապահովում են ընտրությունների բոլոր շահագրգիռ կողմերի մասին լուսաբանում և համապետական ներկայացուցչական արդյունքներ:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակներ. զեկույցների պատրաստման ձևաթղթերի առաջադեմ մշակում**

Կարող են կիրառվել նաև զեկույցների պատրաստման նոր գործիքներ: 2014 թվականին Promo-LEX (Մոլդովա) կազմակերպությունը թվայնացրեց իր ԵԺԴ զեկույցների պատրաստման ձևաթղթերը, մշակեց ԵԺԴ-ներից տվյալների հավաքման համակարգչային ծրագիր և յուրաքանչյուր ԵԺԴ-ին տրամադրեց մեկ պլանշետ, 3G ինտերնետ և էլեկտրոնային փոստի հաշիվ: ԵԺԴ-ներն անցան նաև զեկույցների պատրաստման համակարգչային ծրագրի և պլանշետների օգտագործման վերաբերյալ վերապատրաստում:

2012 թվականին, ISFED-ը (Վրաստան) մշակեց ԵԺԴ-ներից տվյալներ հավաքելու հատուկ համակարգչային ծրագիր: Այս ծրագիրը հնարավորություն տվեց ԵԺԴ-ներին տեղեկությունները անմիջապես ներմուծել տվյալների բազա, որը տեսանելի էր շրջանների և կենտրոնական գրասենյակի աշխատակիցների կողմից: Այս ծրագիրը նաև թույլ է տալիս իր օգտատերերին ավտոմատ կերպով նկատել սխալները և անհամապատասխանությունները, ինչպես նաև վերլուծել քանակական տեղեկությունները:

**Մանրամասն տեղեկություններ**

Ամբողջական, ստույգ և օբյեկտիվ տեղեկություններ ձեռք բերելու համար ԵԺԴ-ները ձևաթղթերը կարող են ձևակերպվել երկու տարբեր եղանակով:

1. Հարցերը ձևակերպվում են չափազանց ընդհանրական, ինչը հնարավորություն է տալիս ԵԺԴ-ներին իրենց պատասխաններում ցուցաբերել ճկունություն: Այս դեպքում ԵԺԴ-ները պետք է լավագույնս վերապատրաստվեն զեկույցների պատրաստման 5W տեխնիկայի գծով (հինգ հարցերի պատասխաններ՝ Ո՞վ, Ի՞նչ, Ե՞րբ, Որտե՞ղ, Ինչո՞ւ):

2. Մշակվում են զեկույցների պատրաստման մանրամասն ձևաթղթեր: Այս կերպ, Հիմնական խումբն ապահովում է, որ ԵԺԴ-ները 5W հարցերին տրամադրեն քանակական և որակական պատասխաններ:

Որքան մանրամասն են ԵԺԴ ձևաթղթերը (պայմանով, որ ձևաթղթերը լինեն ընտրական կոնկրետ իրավիճակին պատշաճ հարմարեցված), այնքան մանրամասն տեղեկություններ կարող է Հիմնական խումբը ստանալ ընտրախախտումների և/կամ այլ խախտումների, ինչպես նաև ընդհանուր ընտրական գործընթացի համար դրանց կարևորության մասին: Այդ կերպ՝ ԵԺԴ-ները տրամադրում են որակական տեղեկություններ: Նրանց համար լրացուցիչ տեղեկություններ հավաքելը դառնում է ավելի հեշտ, քանի որ գիտեն, թե ինչ են պահանջում: Իսկ Հիմնական խումբը կարող է հեշտությամբ ստուգել, թե արդյոք ԵԺԴ-ները հավաքել են պահանջվող բոլոր տեղեկությունները:

Զեկույցների պատրաստման սովորական ձևաթղթերը և միջադեպային/տեղային զեկույցների ձևաթղթերը նույնպես պետք է ԵԺԴ-ներին հնարավորություն ընձեռեն ներկայացնել հակիրճ վերլուծություն, որն ավելին է քան պարզապես փաստերի և թվերի ներկայացումը: Բաց հարցերը կարող են ստեղծել դիտարկումները կոնկրետ իրավիճակում կատարելու, հիմնական տեղեկություններ տրամադրելու և սեփական եզրահանգումներով հանդես գալու հնարավորություն: Բաց հարցերը նաև դիտորդներին հնարավորություն են տալիս զեկուցել այնպիսի իրադարձությունների վերաբերյալ, որոնք ձևաթղթերում նախատեսված չեն եղել: Նման դեպքերում զեկույցները/ձևաթղթերը կարող են ներառել հիշեցումներ այն մասին, որ դիտորդի կողմից ներկայացված բոլոր իրավիճակային տեղեկությունները կամ եզրահանգումները պետք է հստակորեն նշվեն որպես այդպիսին, որպեսզի դրանք չհամարվեն արձանագրված փաստեր:

**Հղում ԿԸՀ-ին և առաքելության օրացույցին**

Ընտրությունների համար պատասխանատու մարմինը սովորաբար ընտրական ամբողջ գործընթացի սկզբում կազմում է ընտրական օրացույց: Տեղական դիտորդները պետք է նման օրացույց կազմեն՝ հատկապես ներքին և արտաքին զեկույցներ կազմելու համար հիմնական ժամկետները և գործընթացի փուլերը հետազծելու, ինչպես նաև դիտորդական առաքելությունը համապատասխանաբար պլանավորելու համար: ԵԺԴ զեկույցների պատրաստման վերջնաժամկետները պետք է հստակ համապատասխանեն ընտրական օրացույցում նշված վերջնաժամկետներին և առաքելության արտաքին զեկույցների պատրաստման օրացույցին:

Ընտրական օրացույցում սահմանված վերջնաժամկետները պետք է ներառել ԵԺԴ ձևաթղթում: Սա կօգնի ԵԺԴ-ներին հիշել քարոզարշավի ամենակարևոր իրադարձությունների մասին և զեկուցել դրանց մասին նախքան վերջնաժամկետը:

**Կարճ և պարզ ձևաթղթեր**

ԵԺԴ զեկույցների պատրաստման գործընթացն արագացնելու համար ձևաթղթերը պետք է լինեն հնարավորինս պարզ: Փակ հարցերը Հիմնական թիմին տրամադրում են առավել ստույգ տվյալներ, որոնք կարելի է կիրառել վիճակագրական նպատակներով:

Նախևառաջ, ԵԺԴ-ներին կարելի է խնդրել տրամադրել «այո» կամ «ոչ» պատասխաններ (օրինակ՝ այն մասին, թե արդյոք կոնկրետ իրավական դրույթ կիրարկվել է, թե ոչ): Այնուհետև, կարելի է պահանջել լրացուցիչ մանրամասներ՝ կախված արդեն տրված դրական կամ բացասական պատասխանից (նման հարցերի օրինակների համար տե'ս ստորև աղյուսակը): Սա վերլուծաբաններին տալիս է հստակ պատասխաններ ստանալու հնարավորություն:

**Աղյուսակ 2. ԵԺԴ զեկույցների պատրաստման ձևաթղթից հատված (Վրաստան)**

<table>
<tr><th colspan="4">Ա. Ընտրությունների համար պատասխանատու մարմնի գործունեությունը</th></tr>
<tr><td>1</td><td>Քանի՞ նիստ է հրավիրել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում:</td><td colspan="2">Նշեք թիվը՝</td></tr>
<tr><td>2</td><td>Թույլ տրվե՞լ է բոլոր շահագրգիռ անձանց մասնակցել նիստին:</td><td>Այո</td><td>Ոչ (Մանրամասները լրացրեք Բ վանդակում)</td></tr>
<tr><td>3</td><td colspan="3">Ո՞ր քաղաքական կուսակցություններն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում թեկնածուներ չեն առաջադրել՝ օրենքի համաձայն:<br><table><tr><td>ՄԱՇ</td><td>Քրիստոնյա դեմոկրատներ</td><td>Ժողովրդական կուսակցություն</td><td>Պահպանողական կուսակցություն</td><td>Լեյբորիստական կուսակցություն</td><td>Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը</td><td>Եվրոպական դեմոկրատներ</td><td>Այլ</td></tr></table></td></tr>
<tr><td>4</td><td colspan="3">ԿԸՀ-ն հրապարակե՞լ է ԸԸՀ-ների մանրամասն ցանկ՝ օրենքով սահմանված ժամկետներում:<br><table><tr><td>☐ Հեռուստատեսություն</td><td>☐ Մամուլ</td><td>☐ Ռադիո</td><td>☐ Կայքէջ</td><td>☐Հանրային ցուցատախտակ</td><td>☐ Չի հրապարակել</td></tr></table></td></tr>
</table>

**Հղում իրավական ակտերին**

ԵԺԴ ձևաթղթերում ներառված հարցերը պետք է հղում կատարեն (հնարավորության դեպքում) ընտրական իրավունքի կոնկրետ հոդվածներին, որոնց համաձայն կարգավորվում է կոնկրետ իրավիճակը: Ի լրումն սրան, ԵԺԴ ձևաթղթերը պետք է գրված լինեն իրավաբանական լեզվով՝ խրախուսելով ԵԺԴ-ներին ուսումնասիրել իրավաբանական տերմինները և համապատասխանաբար կիրառել այդ իրավաբանական լեզուն իրենց զեկույցներում:

**Ուղեցույց դիտորդների համար**

ԵԺԴ ձևաթղթի առաջին էջի վրա պետք է լինի հրահանգ/ուղեցույց, որը ԵԺԴ–ներին պետք է հիշեցնի դիտորդների համար վարքագծի կանոնագրքի, զեկույցների պատրաստման վերջնաժամկետների և ձևաթղթերը լրացնելու վերաբերյալ բացատրությունների մասին: Կարող են նաև ներառվել առանձին հրահանգներ հարցերին պատասխանելու վերաբերյալ: ԵԺԴ-ների համար պետք է անցկացվեն գործնական վերապատրաստման դասընթացներ. առանձնահատուկ կերպով պետք է շեշտադրվեն

նրանց կողմից զեկույցների պատրաստման գործընթացի համար ապացույցների և վկայությունների հավաքման եղանակները, մեթոդները և տեխնոլոգիան (օրինակ՝ փաստաթղթերի պատճենները, ֆոտոնյութերը, տեսանյութերը, քարոզարշավին առնչվող նյութերի նմուշները, վկաների ցուցմունքները)։ Եթե դիտորդական առաքելության ընթացքում ի հայտ են գալիս ձևաթղթերը լրացնելու հետ կապված խնդիրներ, Ցանցային/ԵԺԴ համակարգողին կարող է հանձնարարվել, որպեսզի վերջինս աջակցություն տրամադրի՝ էլեկտրոնային փոստի կամ հեռախոսի միջոցով կամ տեղում ԵԺԴ-ների այցելություններ կազմակերպելով։

**Կարճաժամկետ դիտորդական ձևաթղթեր**

Ի տարբերություն միջազգային դիտորդական առաքելությունների՝ տեղական դիտորդական առաքելություններում ընդգրկված կարճաժամկետ դիտորդները հիմնականում տեղաբաշխվում են մեկ ընտրատեղամասում՝ դրա բացման պահից մինչև արդյունքների հաշվարկը (այդպիսով ձևավորելով ստացիոնար խումբ կամ դիտորդներ)։ Այնուհանդերձ, կարող են լինել նաև շարժական խմբեր/դիտորդներ, ովքեր ընտրությունների օրվա ընթացքում մեկից ավելի ընտրատեղամասեր են այցելում։ Յուրաքանչյուր ստացիոնար կարճաժամկետ խումբ/դիտորդ այցելած յուրաքանչյուր ընտրատեղամասի (տեղամասային ընտրական հանձնաժողովի) համար լրացնում է առանձին ձևաթուղթ։ Կարճաժամկետ դիտորդի փաստաթղթերի փաթեթը հիմնականում բաղկացած է՝

- *ԿԺԴ ստանդարտ ձևաթղթից*, որի մեջ ընտրատեղամասում հավաքվում են որակական և քանակական տվյալները (տե՛ս 3-րդ հավելվածը),
- *Միջադեպային ձևաթղթից*, որն անմիջապես տրամադրում է մանրամասն տեղեկատվություն՝ ընտրատեղամասում տեղի ունեցած յուրաքանչյուր միջադեպի մասին (տե՛ս 3-րդ հավելվածը),
- *Բողոքների ձևաթղթից*, որով պահանջվում է արձագանքել արձանագրված խախտմանը (տե՛ս 3-րդ հավելվածը)։

Ի լրումն սրան, ԿԺԴ աշխատանքային ժամանակացույցն օգնում է դիտորդին՝ սահմանված ժամկետներում ընթացակարգերը պահպանելու, համապատասխան տեղեկատվություն հավաքելու, արձանագրված փաստերը համապատասխան ձևաթղթերում արտացոլելու և զեկույցները պատրաստելու հարցերում։

ԿԺԴ ձևաթղթեր մշակելու ընթացքում պետք է ուշադրություն դարձվի հետևյալ հարցերին։

**Ձևաթղթերի հարմարեցում**

Կարճաժամկետ դիտորդի համար նախատեսված ձևաթղթերը պետք է նախագծվեն և կազմվեն՝ դիտորդական առաքելության մեթոդաբանությանն ու զեկույցի նպատակին համաձայն։ Եթե հեռախոսազանգի կամ SMS հաղորդագրության համակարգի կիրառմամբ իրականացվում է Ձայների զուգահեռ հաշվարկ/աղյուսակավորում (ՁԶՀ), ապա ԿԺԴ ստանդարտ ձևաթուղթը պետք է լինի համառոտ և պարզ, քանի որ մոնիթորինգի նպատակը հստակ սահմանված ժամկետներում հատուկ տվյալներ հավաքելն է։ Ստացիոնար կամ շարժական խմբերի/դիտորդների համար նախատեսված ձևաթղթերը կարող են լինել ավելի երկար՝ ավելի շատ հարցերով։ ԿԺԴ ստանդարտ ձևաթղթին կից կարելի է կիրառել միջադեպային ձևաթղթեր, որոնք տեղեկատվություն են տրամադրում ընտրատեղամասերում տեղի ունեցած ընտրախախտումների/անկարգությունների վերաբերյալ։

**Ձևաթղթերի ստուգումը**

Ընտրությունների օրվա գործընթացներին առնչվող ստուգաթերթիկը ծառայում է

որպես ուղեցույց ձևաթղթերի հարցերի համար: Ավելին, ԿԺԴ ձևաթղթերը մշակելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ հարցերը.

- Ինչպիսի՞ միտումներ/ընտրախախտումներ կարող են տեղի ունենալ:
- Ի՞նչ հիմնական խնդիրներ կարող են ազդել արդյունքների վրա:
- Ինչպե՞ս կարելի է սահմանել տեղեկատվության առաջնահերթությունը:
- Ինչպե՞ս կարելի է պատասխանել յուրաքանչյուր հարցին:
- Ինչպե՞ս են վերլուծվելու հավաքված տվյալները:
- Նախորդ ընտրություններում ի՞նչ փաստեր են արձանագրվել:
- Ինչպիսի՞ պատասխան է տրվել յուրաքանչյուր հարցին:
- Արդյոք կա՞ որևէ հարց, որն անհրաժեշտ է փոփոխել կամ փոխարինել, քանի որ այն բավարար պատասխան չի ապահովում:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. ԿԺԴ ձևաթղթերի ստուգում**

Եթե նախորդ մի քանի ընտրությունների վերլուծությունը ցույց է տվել, որ քվեարկությունը սկսելու ընթացակարգում արձանագրվել է ընտրախախտումների շատ փոքր թիվ/տոկոս, և ամենայն հավանականությամբ չի ակնկալվում, որ դրանք տեղի կունենան առաջիկա ընտրություններում, ապա հարցերի քանակը կարելի է նվազեցնել կամ ընդհանրացնել՝ արդյո՞ք ընտրատեղամասերը բացելու և քվեարկության համար նախապատրաստելու գործընթացն իրականացվել է օրենքի համաձայն: Այդպիսով, կարճաժամկետ դիտորդը կկարողանա շարունակել հետևել ընտրությունների օրվա գործընթացներին առնչվող մանրամասն ստուգաթերթիկին: Եթե ընտրատեղամասի բացման ժամանակ դիտորդը ընտրախախտում է նկատում, ապա նա կարող է լրացնել տեղային (միջադեպային) ձևաթուղթը:

**Ձևաթղթերի հետևողականությունը**

Ձևաթղթերում պետք է ներառվեն ընտրությունների օրվա ամբողջ ընթացքի բոլոր փուլերը՝ բացումը, քվեարկությունը, ձայների հաշվարկը և աղյուսակավորումը: Հարցերը պետք է համապատասխանեն յուրաքանչյուր փուլի ընթացակարգերին:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. քվեարկության ընթացքին առնչվող հարցեր**

Արդյո՞ք քվեարկողները ներկայացրել են իրենց անձը հաստատող փաստաթղթերը:

Արդյո՞ք թանաքն ստուգվել է:

Արդյո՞ք արդեն ստուգված մատնահետքերով (թանաքանշված) քվեարկողներին տրվել է քվեարկելու իրավունք:

Արդյո՞ք գրանցում իրականացնող անձինք քվեաթերթիկները վավերացնում էին ստորագրությամբ և կնիքով:

Արդյո՞ք բոլոր քվեարկողների մատնահետքերն են վերցվել (թանաքանշվել):

**Դյուրընկալելի ձևաթղթեր**

Հարցերը պետք է լինեն շատ հստակ և ոչ երկիմաստ՝ տարբեր մեկնաբանություններից զերծ մնալու համար: Սխալ պատասխանները կարող են ազդեցություն ունենալ արդյունքների ճշգրտության վրա: Բաց հարցերի քանակը պետք է սահմանափակվի. պետք է կիրառվեն առավելապես փակ հարցեր, և սխալները նվազեցնելու նպատակով պետք է սահմանվեն այլընտրանքային պատասխաններ: Բաց հարցեր պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ տեղեկատվություն հավաքելու այլ տարբերակ չկա:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. բաց և փակ հարցեր**

*X հարց*՝ Արդյո՞ք ընտրատեղամասը բացվել է ժամանակին:

Այս հարցը կարող է մեկնաբանվել երկու տարբեր եղանակով. 1) ընտրատեղամասը բացվել է հանձնաժողովի անդամների կողմից՝ նախքան քվեարկությունն սկսելը կամ 2) ընտրատեղամասը քվեարկության համար նախապատրաստվել է և պատրաստ է եղել՝ քվեարկողներին ընդունելու համար:

Վերոհիշյալ հարցը կարող է ձևակերպվել ավելի հստակ.

*X հարց*՝ Ժամը քանիսի՞ն է բացվել ընտրատեղամասը՝ Տեղամասային ընտրական հանձնաժողովի (ՏԸՀ) անդամների կողմից քվեարկության համար նախապատրաստելու նպատակով:

*Y հարց*՝ Ժամը քանիսի՞ն է ընտրատեղամասը պատրաստ եղել առաջին քվեարկողին ընդունելու համար:

Վերջին հարցերի խումբը Հիմնական թիմին ապահովում է ավելի կոնկրետ պատասխաններով:

**Ձևաթղթերի տրամաբանական կապի ստուգումները**

Տրամաբանական կապի ստուգումները Հիմնական թիմին հնարավորություն են տալիս ստուգելու՝ արդյո՞ք ընտրական արդյունքների մասին արձանագրության մեջ արտացոլված թվերը ճիշտ են: Վիճակագրության մասնագետը կարող է կազմել տրամաբանական կապի կարևոր ստուգումների ցանկ, որը պետք է ներմուծվի դիտորդական առաքելության համակարգչային ծրագիր: Տրամաբանական կապի ստուգումների այս ցանկը կարող է կիրառվել նաև ԿԺԴ վերապատրաստումների համար: Այս եղանակով ԿԺԴ-ները սովորում են ստուգել իրենց պատասխանների ճշտությունը և կարող են հաղորդել առավել ճշգրիտ տվյալներ: Ավելին, տրամաբանական կապի ստուգումները կարող են օգտագործվել ձայների աղյուսակավորման գործընթացի գնահատման համար: Այս նպատակով լավագույն տարբերակը հնարավոր այնպիսի սցենարներ կազմելն է, որոնց դեպքում գործընթացը կարող է գնահատվել «լավ» կամ «վատ»:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. տրամաբանական կապի ստուգումներ**

**գնահատման գործընթացի ճշտությունն ստուգելու համար**

*Հարց Ա.* Արդյո՞ք նշումների կատարումն ստուգվել է:

Հարց Ա-ի համար հնարավոր այլընտրանքային պատասխաններ՝ 1) Միշտ ստուգվել է: 2) Չի ստուգվել՝ մեկից հինգ դեպքերում: 3) Չի ստուգվել՝ հինգից ավելի դեպքերում:

*Հարց Բ.* Արդյո՞ք ապահովվել է քվեարկության գաղտնիությունը:

Հարց Բ-ի համար հնարավոր այլընտրանքային պատասխաններ՝ 1) Միշտ: 2) Չի ապահովվել՝ մեկից հինգ դեպքերում: 3) Չի ապահովվել՝ հինգից ավելի դեպքերում:

*Հարց Գ.* Արդյո՞ք քվեարկողների վրա ճնշումներ գործադրվել են:

Հարց Գ-ի համար հնարավոր այլընտրանքային պատասխաններ՝ 1) Այո: 2) Ոչ:

*Հարց Դ.* Արդյո՞ք քվեարկության գործընթացն անց է կացվել օրենքով սահմանված կարգով:

Հարց Դ-ի համար հնարավոր այլընտրանքային պատասխաններ՝ 1) Այո, գործընթացը հաջող է անցել:

2) Այո, գործընթացը հաջող է անցել, սբազմաթիվ ընտրախախտումներով: 4) Ոչ,

գործընթացն ուղեկցվել է էական ընտրախախտումներով:

Տրամաբանական կապի ստուգումներ. եթե Հարց Ա-ի համար հնարավոր այլընտրանքային պատասխանը 2-րդն է (ՀԱ=2), Հարց Բ-ի համար՝ 1-ինը (ՀԲ=1) և Հարց Գ-ի համար՝ 1-ինը (ՀԳ=1), ապա Հարց Դ-ի գնահատման դեպքում դիտորդը պետք է ընտրի 3-րդ այլընտրանքային պատասխանը՝ նշելով, որ գործընթացն անցկացվել է ընտրախախտումներով (ՀԴ=3):

**ԿԺԴ ստանդարտ և միջադեպային ձևաթղթերի միավորումը**

Փորձը ցույց է տալիս, որ ԿԺԴ ստանդարտ և միջադեպային ձևաթղթերի միավորումը մի կողմից հնարավորություն է տալիս դրանք համապատասխանեցնել մեթոդաբանությունների/զեկույցների հատուկ տեսակներին՝ առանց կարևոր տեղեկատվության կորստի, իսկ մյուս կողմից՝ մեծացնում է հավաքված տվյալների արժանահավատությունն ու ճշգրտությունը: Ձևաթղթերը մեկ համակարգչային ծրագրում համախմբելն օգնում է հայտնաբերել այն տարբերություններն ու սխալները, որոնք հնարավոր է ստուգել և ուղղել:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. ձևաթղթերի տարբեր տեսակների փոխկապակցումը**

2014 թվականին Արդար ընտրությունների և ժողովրդավարության միջազգային ընկերակցությունն (ISFED) անցկացրեց Վրաստանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մոնիթորինգ՝ կիրառելով ԶՔՀ-ի մեթոդաբանությունը՝ SMS հաղորդագրություններով զեկուցման միջոցով: ԿԺԴ ստանդարտ և տեղային ձևաթղթերը համախմբվեցին մեկ համակարգչային ծրագրում: Ստանդարտ ձևաթղթերից վերցված տեղեկատվությունը հաղորդվեց SMS կենտրոնին, իսկ տեղային ձևաթղթերում ներկայացված ընտրախախտումների մասին տեղեկացվեց միջադեպերի կենտրոնին: Համակարգն ISFED-ին հնարավորություն տվեց այս երկու ձևաթղթերի միջև հայտնաբերել ավելի քան 150 տարբերություն. ընտրախախտումների մասին նշվել էր ստանդարտ ձևաթղթում և հաղորդվել SMS կենտրոնին, մինչդեռ ոչ մի միջադեպային ձևաթուղթ չէր լրացվել և ուղարկվել միջադեպերի կենտրոն: Համակարգն ISFED-ին հնարավորություն տվեց մաքրել տվյալները և զեկույցների պատրաստման գործընթացում ապահովել առավել բարձր ճշգրտություն:

## 3.4. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Վերապատրաստման ռազմավարության ընդհանուր ճանապարհային քարտեզը կազմելուց հետո (տե՛ս Գլուխ 2.4-ը), այս բաժնում կներկայացվի կոնկրետ խորհուրդների ցանկ, որոնք կարող են օգտակար լինել՝ վերապատրաստման միջոցառումները ճիշտ կազմակերպելու համար: Հնարավոր է գտնել մի շարք մեթոդներ, որոնք կհեշտացնեն գիտելիքների փոխանցումը, ինչպես նաև հնարավորություն կտան հմտություններն ավելի լավ և արագ յուրացնել: Վերապատրաստման մասնագետները պետք է որոշեն, թե որ մեթոդներն են իրականում համապատասխանում անցկացվելիք դասընթացների պահանջներին: Կախված թիրախային խմբից (օրինակ՝ ԵԺԴ-ներ, ԿԺԴ-ներ, համակարգողներ, զեկույց կազմողներ) կամ այլ գործոններից (օրինակ՝ ժամկետներ, նյութական ռեսուրսներ, վերապատրաստման մասնագետի հմտություններ, վերապատրաստվողների անձնական տվյալները)՝ ցանկում կարելի է գտնել վերապատրաստման համապատասխան մեթոդներ:

Ստորև նշված մեթոդների մեծ մասը կարող է կիրառվել ոչ միայն ներքին, այլև արտաքին զեկույցների պատրաստմանն ուղղված վերապատրաստումների համար (տե՛ս

Գլուխ 4.1-ը): Ստորև ներկայացված է մեթոդների համապարփակ ցանկ. վերապատրաստման մասնագետները պետք է յուրաքանչյուր տեխնիկան համապատասխանեցնեն իրենց նախատեսած նպատակին:

Ներքին զեկույցների պատրաստման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ անցկացնելիս դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունը պետք է փորձի ուշադրություն դարձնել ներքին զեկույցների պատրաստման գործընթացի տարբեր տեսակներին (օրինակ՝ ԿԺԴ-ից ԵԺԴ-ին, ԵԺԴ-ից Հիմնական թիմին (ՀԹ), ՀԹ-ից ՀԹ-ին, ՀԹ-ից ԿԺԴ-ին (բրիֆինգ/դեբրիֆինգ)): Յուրաքանչյուր պաշտոն զբաղեցնող անձի գործառույթը կախված է ներքին զեկույցների պատրաստման այն տեսակից, որն իրականացվում է, և կիրառվելիք մեթոդները պետք է համապատասխանեն յուրաքանչյուր իրավիճակի համար նախատեսված պահանջներին: Օրինակ՝ ԿԺԴ-ից ԵԺԴ-ին ներկայացվող զեկույցների վերաբերյալ վերապատրաստման ժամանակ կարելի է ուշադրությունը կենտրոնացնել տեղերից ճշգրիտ տվյալներ ստանալու խնդրի վրա. մասնավորապես, համապատասխանող կարող են լինել հետևյալ մեթոդները՝ խաղարկային ընտրություններ, դեպքերի ուսումնասիրությունները կամ գրավոր վարժությունները: Այլ իրավիճակում՝ ԵԺԴ-ից ՀԹ-ին ներկայացվող զեկույցների վերաբերյալ վերապատրաստման դեպքում, հավանաբար անհրաժեշտ կլինի քաղաքական, լրատվական և իրավական համատեքստի ուսումնասիրություն: Այսպիսով, վերապատրաստման համապատասխան մեթոդները միևնույնը չեն լինի: Դրանք ավելի շատ կլինեն կոնկրետ համատեքստին հարմարեցման վարժություններ (օրինակ՝ միևնույն դեպքի վերաբերյալ նախորդ զեկույցների ընթերցումը) կամ հավասարակշռման ու համադրման վերապատրաստման դասընթացներ:

**Վերապատրաստման տարբեր մեթոդները**

Ուղերձը տեղ հասցնելու համար վերապատրաստման մասնագետները կարող են կիրառել մի շարք մեթոդներ, որոնք հնարավոր է բաժանել չորս տարբեր մոտեցումների:

1. *ՏՀՏ* միջոցներն օգտակար գործիք են՝ պայմանով, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունն անցկացրած լինի հիմնավոր գնահատում և եզրահանգի, որ այն իսկապես անհրաժեշտ է վերապատրաստման տվյալ դասընթացի համար: PowerPoint համակարգչային ծրագրով ներկայացված պրեզենտացիաները, ինչպես նաև տեսահոլովակները, կարող են ամրապնդել դասընթացի հիմնական նպատակը. օրինակ՝ վերապատրաստվողների՝ զեկույցներ պատրաստելու հմտությունները կատարելագործումը: Այնուհանդերձ, դրանք երբեք ինքնին գործիք չեն հանդիսանում: Վերապատրաստման դասընթացների ժամանակ կարող են կիրառվել հետևյալ ՏՀՏ միջոցները.

- ► տեղեկատվությունը (օրինակ՝ հիմնական միջազգային չափանիշները, ընտրությունների վերաբերյալ զեկույցների կառուցվածքը) **PowerPoint** համակարգչային ծրագրով ներկայացնելը,
- ► **տեսահոլովակներ** ցուցադրելը (օրինակ՝ լրատվամիջոցների հետ դիտորդների ունեցած զրույցների մասին),
- ► **ձայնագրվող հարցազրույցներ** վարելը (օրինակ՝ կարելի է հարցնել դիտորդների անձնական կարծիքը, հարցեր ուղղել կազմակերպության ֆինանսավորման մասին, դիտորդի տարիքի մասին և նրա ունեցած դիտորդի որակավորումների մասին):

2. *Ընթերցանության նյութեր.* Դիտորդական առաքելությունը կարող է որոշել իր վերապատրաստման դասընթացներում կիրառել գրավոր նյութեր: Որպես ստացված տեղեկատվությունը ի մի բերելու միջոց՝ դրանք կարևոր դեր ունեն վերապատրաստման ժամանակ: Զեկույցները, ձեռնարկները և նմանատիպ այլ նյութերը

վերապատրաստվողների համար ապահովում են համակարգված և կանոնակարգված տվյալներ, սակայն դրանց կիրառումը ևս պետք է ճիշտ հավասարակշռված լինի: Չափից շատ ընթերցանության նյութերը կարող են դասընթացները դարձնել պասիվ և ոչ ինտերակտիվ: Վերապատրաստման դասընթացների ընթացքում կարող են կիրառվել հետևյալ մոտեցումները:

- **Զեկույցների ընթերցման դասընթացներ** (օրինակ՝ վերջին ընտրությունների զեկույցի ամփոփագրի և նախորդ ընտրությունների վերաբերյալ միջազգային դիտորդների գնահատումների ընթերցանություն):
- **Հրապարակային ձեռնարկների/փաստաթղթերի** հետ աշխատանք (օրինակ՝ միջազգային չափանիշների և հեշտ ընթեռնելի լեզվի մասին տեքստերից հատվածների բարձրաձայն ընթերցում, հղումներ Եվրոպայի խորհրդի բարեխիղճ գործելակերպի կանոնագրքին կամ ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթին):

3. *Նմանակումներ և դեպքերի ուսումնասիրություններ.* Ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին խորհուրդ է տրվում նախաձեռնել նմանակումներ: Սրանք չափազանց արդյունավետ են առնվազն որոշակի թիրախային խմբերի համար (օրինակ՝ ԿԺԴ-ների): Դերախաղերը վերապատրաստվողներին հնարավորություն են տալիս տեսանելի կերպով պատկերացնել զեկույցներ կազմելու իրավիճակները, ինչը հնարավոր չէ անել զեկույցներ ընթերցելու կամ ՏՀՏ-ի միջոցով: Ընտրադիտորդները կարող են նաև ներկայացնել դեպքերի վերաբերյալ ուսումնասիրություններ: Դրանք շատ օգտակար են, հատկապես, երբ վերցվում են զեկույցների պատրաստման իրական իրավիճակներից: Վերապատրաստումների ընթացքում կարող են կիրառվել հետևյալ մոտեցումները:

- **Խաղ-ընտրությունների** անցկացում՝ մասնակիցների մեծ մասի մասնակցությամբ (հետապնդելով հետագայում դիտորդների աշխատանքը համատեղ գնահատելու և խախտումները վերլուծելու և արձանագրելու նպատակ):
- **Գրավոր վարժություններ**. գիտելիքների փոխանցում՝ դեպքի մասին տեղեկություններ հավաքելու, ընտրատեղամասի աշխատակիցներին բողոք հղելու և կազմակերպության ու դիտորդական մեթոդաբանության մասին հակիրճ տեղեկություններ ներկայացնելու միջոցով: Կարող է ներառել նաև վարժություններ մամուլի հաղորդագրությունների պատրաստման վերաբերյալ (օրինակ՝ այն մասին, թե ինչպես արձագանքել կազմակերպության դեմ ներկայացվող մեղադրանքներին):
- **Արագ հարցազրույցների** իրականացում՝ անգիր սովորելու համար այն ձևակերպումները, որոնք վերապատրաստվողները կարող են կիրառել դիտորդական աշխատանքների ընթացիկ իրավիճակներում (օրինակ՝ ինչո՞վ է զբաղվում Ձեր կազմակերպությունը, ի՞նչ մեթոդաբանություն եք կիրառում Ձեր դիտորդական աշխատանքներում):
- **Դեպքի ուսումնասիրությունների** քննարկում, որոնք տեղ են գտել նախորդ ընտրական զեկույցներում՝ նպատակ հետապնդելով կատարելագործել զեկույցների պատրաստման գործընթացը (օրինակ՝ վարքագծի կանոնագիրքը, ասեկոսեների արձանագրումը, ճիշտ բառերի ընտրությունը):

4. *Թիմի համախմբվածություն և կայունություն:* Դիտորդական առաքելությունը պետք է ջանքեր գործադրի թիմի ոգին ամուր պահելու համար: Եթե դիտորդներին ներկայացվի ամբողջական պատկերը, ապա նրանք զերծ կմնան

անհատական մոտեցումներից, ինչը ամբողջ առաքելության համար կարող է դառնալ ոչ նպատակային: Դիտորդական առաքելությունը պետք է հաշվի առնի շարունակաբար տրամադրվող վերապատրաստման անհրաժեշտությունը: Այդ կերպ նրանք կարող են երաշխավորել դեմառդեմ իրականացվող ջանքերի շարունակականությունը: Նման համակարգված, ինտեգրված և տարաբնույթ ուսուցման շրջանակում կարող են ներառվել հետևյալ գործիքները.

- ► **Միջոլորտային** հմտությունների խթանում թեմատիկ վերապատրաստումների փորձագետների կողմից (օրինակ՝ քարոզարշավների ֆինանսավորման հարցերով)՝ զեկուցման ոճը (օրինակ՝ բառերի ընտրությունը, կառուցվածքը, խորությունը) կազմակերպության զեկուցման ընդհանուր պահանջներին համապատասխանեցնելու համար,
- ► Թեմաների վերաբերյալ անհատական **արձագանքի** ապահովում (Հիմնական թիմի կողմից ԿԺԴ-ներին/ԵԺԴ-ներին),
- ► **Առցանց ֆորումների**/համակարգչային հավելվածի մշակում զեկույցների պատրաստման առանցքային ուղենիշների վերաբերյալ:
- ► Առկա տեղեկագրերի և Եվրոպայի խորհրդի **ձեռնարկների** կիրառության խրախուսում,
- ► Վերապատրաստվողների (ԿԺԴ-ներ, ԵԺԴ-ների, Հիմնական թիմի անդամների) խրախուսում՝ մասնակցելու զեկույցներ պատրաստելու մասին **Եվրոպայի խորհրդի էլ. ուսուցման դասընթացին**:

## 3.5. ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Ներքին զեկույցներ պատրաստելիս հնարավոր է բախվել մի շարք մարտահրավերների և սահմանափակումների, որոնք կարող են լրջորեն ազդել տեղերում աշխատող դիտորդների կողմից Հիմնական թիմին (վերլուծաբաններին) տրամադրվող և մշակվող տեղեկությունների որակի վրա: Այս մարտահրավերները և սահմանափակումները կարող են բազմաբնույթ լինեն. դիտորդական առաքելությունը կարող է դժվարությունների հանդիպել փորձառու դիտորդներ հավաքագրելու և գրանցելու հարցում, դիտորդները հնարավոր է, որ չկարողանան կամ չցանկանան տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, դիտորդները կարող են հանդիպել շահերի բախման խնդրի, նրանք կարող են դժվարությունների հանդիպել փաստերի և թվերի մասին զեկուցելու հարցում այնպիսի միջավայրում, որը լի է ասեկոսեներով և բամբասանքներով, դիտորդների համար տեղեկատվության հասանելիությունը կարող է սահմանափակ լինել, և նրանք կարող են բախվել գաղտնի տեղեկությունների հետ աշխատելու խնդրին: Սույն գլխում ամփոփ ներկայացվում է նշված մարտահրավերները և սահմանափակումները հաղթահարելու հնարավոր եղանակները:

**Փորձառու դիտորդների հավաքագրում**

**Ցանցի միջոցով հավաքագրում**

Դիտորդների հավաքագրումը կարող է խնդրահարույց գործընթաց լինել՝ հաշվի առնելով երկրի ներսում այդքան թվով պրոֆեսիոնալ և անկողմնակալ անձանց գտնելու դժվարությունը: ԵԺԴ-ներին և ԿԺԴ-ներին կարելի է ընտրել հետևյալ աղբյուրներից.

- ► Փորձառու դիտորդների տվյալների բազաներ,
- ► ԵԺԴ-ների և ԿԺԴ-ների ընտրության տարածքային և շրջանային մշտապես

գործող ցանցեր,

- ► Կազմակերպության կայքէջը կարող է օգտագործվել դիմումներ ընդունելու համար. այս դեպքում հիշե՛ք, որ հավաքագրումը կարող է ավելի ռիսկային լինել, քան մյուս դեպքերում:

**Դիտորդների վերապատրաստում և գնահատում**

Հիմնվելով տեղական ՔՀԿ-ների փորձառության վրա՝ տեղերում առավել պրոֆեսիոնալ դիտորդներ ընտրելու հավանականությունը կարող է մեծանալ տարաբնույթ մոտեցումների, այդ թվում՝ ընտրանքի հիման վրա ներկայացուցչական դիտորդության, գործնական աշխատանքների հիման վրա վերապատրաստման դասընթացների և բազմափուլ գնահատման համակարգերի կիրառության դեպքում:

- ► **Ընտրանքի հիման վրա ներկայացուցչական դիտորդությունը** թույլ է տալիս ընտրել ընտրատեղամասերի մոտավորապես 20%-ը՝ միևնույն ժամանակ պահպանելով արդյունքների ներկայացուցչականությունը ամբողջ երկրի համար: Այս եղանակով հնարավոր է կրճատել ԿԺԴ-ների թիվը և մեծացնել առավել պրոֆեսիոնալ թեկնածուներ գտնելու հավանականությունը:
- ► **Գործնական աշխատանքների հիման վրա վերապատրաստումը** ընդլայնում է մասնակիցների որակական գիտելիքները և հնարավոր է դարձնում ստուգել դիտորդական աշխատանքներով զբաղվելու նրանց ունակությունը: Ձեր վերապատրաստման դասընթացներում կարող եք ներառել վերապատրաստվողների նախնական թեստեր, վերջնական թեստեր և գնահատումներ: Հիշե՛ք, որ կարևոր է վերապատրաստել ավելի մեծ թվով դիտորդներ, քան իրականում անհրաժեշտ է. բանիմաց դիտորդների բազա ունենալը միշտ ցանկալի է:
- ► **Բազմափուլ հավաքագրման համակարգը** հնարավորություն է ընձեռում գնահատել դիտորդներին տարբեր փուլերում: Հավաքագրման գործընթացը կարող է լինել հետևյալը. նախ պետք է ուսումնասիրել թեկնածուների ինքնակենսագրությունները, այնուհետև ստուգել վստահելի կազմակերպությունների կամ անձանց կողմից ներկայացված երաշխավորագրերը, որից հետո անհատական հարցազրույցներ վարել և գրավոր թեստեր անցկացնել՝ թեկնածուների՝ զեկույցներ կազմելու հմտությունները ստուգելու համար:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. բազմափուլ հավաքագրման ընթացակարգ**

2014 թվականին Վրաստանի տեղական ընտրությունների ժամանակ ISFED-ն մշակեց բազմափուլ գնահատման միասնական տվյալների բազա, որը բաղկացած էր յուրաքանչյուր փուլի համար առանձին մշակված չափանիշներից:

Գնահատման գործընթացում իրականացվեցին հետևյալ քայլերը՝

- ► ԿԺԴ թեկնածուները վերապատրաստումից առաջ լրացրեցին նախնական թեստեր: Ստուգվեցին նրանց հիմնական գիտելիքները:
- ► Վերապատրաստումից հետո ԿԺԴ-ները լրացրեցին վերջնական թեստեր, որի ընթացքում ստուգվեցին վերապատրաստման ընթացքում ձեռք բերված գիտելիքները և դիտորդական աշխատանք կատարելու նրանց ունակությունը:
- ► Ընտրություններից 10 օր առաջ ԿԺԴ-ները մասնակցեցին ընտրությունների նմանակումների: ISFED-ն ստուգեց նրանց զեկույցների որակը և գործնական դիտորդական աշխատանք կատարելու ունակությունը:

- ► Ընտրություններից մեկ շաբաթ առաջ իրականացվեցին բանավոր թեստեր և ստուգվեց, թե արդյոք ԿԺԴ-ները իրազեկ են դիտորդական աշխատանքի ամենակարևոր խնդիրներին: Սխալ պատասխանների դեպքում նրանց կրկին հիշեցվեցին ճիշտ պատասխանները:
- ► Ընտրություններից հետո ISFED-ն իրականացրեց ընտրությունների ստուգումներ, որոնց ընթացքում ստուգվեց ձևաթղթերի համապատասխանությունը տվյալների բազայում արտացոլված տեղեկություններին:

Այս գործընթացի ընթացքում ISFED-ն կարողացավ փոխարինել կամ վերաուսուցանել ԿԺԴ-ներին: Ավելի քան 1000 ԿԺԴ-ներից 23-ը փոխարինվեցին և 18-ը կրկնակի ուսուցում անցան: Այս համապարփակ վերապատրաստման և գնահատման գործընթացից հետո ISFED -ն ստեղծեց ԿԺԴ-ների առանցքային որակավորումների մասին տվյալների բազա, որը հնարավորություն տվեց անցկացնել նրանց նպատակային տեղաբաշխումը:

**Անկախ դիտորդների գրանցման մերժում**

Որոշ երկրներում ՀԿ-ները իրավունք չունեն ընտրությունների օրը մուտք գործել ընտրատեղամաս և դիտարկել որևէ մակարդակի հանձնաժողովի կատարած աշխատանքը (ԸԸՀ, ՏԸՀ և ավելի բարձր մակարդակի հանձնաժողովներ): Այս դեպքում դիտորդական առաքելությունը կարող է դիտարկել հետևյալ տարբերակները.

- ► Դիտորդներին որպես լրագրողներ գրանցելը,
- ► Դիտորդներին թույլ տալ գրանցվել որպես վստահված անձ (թեկնածուների դիտորդներ),
- ► Եթե հնարավոր է, ընտրատեղամասի աշխատանքներին հետևել ուղիղ եթերով:

Դիտորդները պետք է պահպանեն կանոնները և զեկուցեն իրենց կողմից արձանագրված միջադեպերի, խնդիրների և խախտումների մասին: Որպես այդպիսին՝ վերոնշյալ տարբերակները ոչ թե նախընտրելի, այլ այլընտրանքային են խիստ բացառիկ դեպքերում:

**Դիտորդների շահերի բախում**

Այն դիտորդները, որոնց մոտ առկա է շահերի բախում, կարող են բացասաբար անդրադառնալ կազմակերպության դիտորդական դիտակումների արժանահավատության և դրանց նկատմամբ վստահության վրա, հատկապես փոքր շրջաններում և գյուղերում, որտեղ հանձնաժողովների անդամները, քաղաքական կուսակցության ներկայացուցիչները և ընտրական գործընթացում ներգրավված սուբյեկտները դիտորդների բարեկամները և/կամ ընկերներն են:

Դիտորդական կազմակերպությունը պետք է հստակ չափանիշներ ունենա՝ պարզելու դիտորդների անկողմնակալությունը, կենսագրական տվյալները և փոխհարաբերությունը քաղաքական, կառավարական ու պետական հատվածների ներկայացուցիչների հետ: Երբեմն անհնար է խուսափել շահերի բախումից: Ստորև ներկայացվում են դրանցից խուսափելու հնարավոր եղանակներ՝

- ► բավարար ռեսուրսների առկայության դեպքում՝ ուղարկե՛ք դիտորդներ այլ շրջաններից կամ քաղաքներից,
- ► ոչ բավարար ռեսուրսների դեպքում՝ ուղարկե՛ք դիտորդներ միևնույն գյուղեր և քաղաքներ, բայց այնպիսի ընտրատեղամաս, որը իրենց բնակավայրից շատ ավելի հեռու է գտնվում, և որտեղ նրանք

հանձնաժողովների կազմում կամ ընտրական մրցակիցների շրջանում բարեկամներ և/կամ ընկերներ չեն ունենա:

**Ասեկոսեներ և բամբասանքներ**

**Անհիմն հայտարարությունների և բամբասանքների հարցում զգուշավորության դրսևորում**

Դիտորդական աշխատանքի ընթացքում առաքելության անդամները բազմապիսի տեղեկություններ կստանան ընտրություններին առնչվող միջադեպերի վերաբերյալ. որոշ տեղեկություններ արժանահավատ կլինեն, իսկ դրանցի մի մասն էլ՝ ոչ: Դիտորդները պետք է զեկույցում հստակ նշեն՝ արդյոք զեկույցում ներկայացված տեղեկություններն անձամբ են դիտարկել, դրանք հիմնված են վստահելի փաստերի, թե անհիմն հայտարարությունների վրա:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. չհիմնավորված հայտարարությունների մասին զեկուցելը**

Դիտորդներն արժանահավատ հայտարարություններ ստացան այն մասին, որ ընտրողների, կուսակցության համակիրների և պետական հատվածի աշխատողների նկատմամբ ճնշումներ են գործադրվել իշխանության թեկնածուների օգտին քվեարկելու համար:

Ընտրատեղամասերից յոթում դիտորդները կարողացել են ստուգել հայտարարությունների արժանահավատությունը կամ հաստատել դրանց ստուգումը բազմաթիվ այլ աղբյուրների կողմից:

Կամ

Դիտորդներին բազմաթիվ մտահոգիչ հայտարարություններ հաղորդվեցին ամբողջ երկրով մեկ քաղաքացիների նկատմամբ ընտրությունների հետ կապված ճնշումների կամ ահաբեկումների դեպքերի մասին: Հիմնական թիմը հետամուտ եղավ այդ դեպքերի ուսումնասիրությանը և պարզեց, որ դրանցից շատերը համապատասխանում են իրականությանը: Նույնիսկ այն դեպքերում, երբ հայտարարությունները հիմնավորված չէին, մարդիկ շարունակում էին հավատալ դրանց, ինչը խաթարում էր «առանց հաշվեհարդարի ենթարկվելու վախի իրենց ազատ ընտրության իրավունքը»: Այդ խնդիրը լրջորեն անդրադարձավ ընտրական գործընթացի որակի վրա:

Բամբասանքները մարդկանց միջև շրջանառվող չստուգված տեղեկություններ են, որոնք հաճախ ապացուցված չեն: Դիտորդները պետք է ձգտեն զեկուցել այն իրադարձությունների մասին, որոնք իրենք դիտարկել և արձանագրել են, կամ որոնց մասին արժանահավատ տեղեկություններ են ստացել:

**Փաստերի արձանագրում**

Պետք է խուսափել այնպիսի ձևակերպումներից, ինչպիսիք են «որոշ դեպքեր» կամ «տարբեր հարցումներ»: Այս երկու բառերը՝ «որոշ» և «տարբեր», ընթերցողի մոտ տպավորություն են ստեղծում, որ, օրինակ՝ դիտորդական խումբը տեղյակ չէ դեպքերի հստակ թվի մասին, որոնք իրենք դիտարկել կամ որոնց մասին տեղեկացել են:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. փաստերի մասին զեկուցելը**

**Ընտրական օրենսգրքի 43-րդ և 45-րդ հոդվածներով նախատեսվում** է, որ քաղաքական պաշտոնյաները կարող են մասնակցել նախընտրական քարոզարշավին պաշտոնը զբաղեցնելու ընթացքում:

Դիտորդների կողմից ուսումնասիրվել է, թե արդյոք չորս դեպքերում իշխող

կուսակցության օգտին անօրինական աջակցություն է ցուցաբերվել:

Տեղական իշխանության պաշտոնյաների կողմից երեք դեպքերում հարցումներ են անցկացվել:

Հստակ նշե՛ք, թե արդյոք ներկայացնում եք «առաջին ձեռքից» ստացված տեղեկություններ…

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. դիտարկումների մասին զեկուցելը**

Երկարաժամկետ դիտորդները հաղորդել են բազմաթիվ դեպքերի մասին, երբ պետական մարմինների աշխատակիցներին և ուսուցիչներին կոչ է արվել մասնակցել կուսակցական հանրահավաքներին:

....թե տեղեկություններ, որոնց մասին ձեզ հաղորդվել է: Միշտ նշե՛ք աղբյուրը:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. աղբյուրների մասին զեկուցելը**

ԿԸՀ-ն այնուհետև հաղորդել է, որ ամբողջ երկրի մասշտաբով քվեաթերթիկների 2.83 տոկոսը համարվել է անվավեր:

Անհիմն տեղեկությունների հետ առնչվելիս կարելի է ստուգել դրանք հետևյալ կերպ՝

- ► գտնել վկաների,
- ► ստուգել հայտարարությունների համապատասխանությունը,
- ► գտնել հիմնավորող փաստաթղթեր,
- ► համեմատել նմանատիպ դեպքերի հետ,
- ► ստուգել ներգրավված անձանց կենսագրական տվյալները և անցյալը,
- ► հաշվի առնել, թե ինչ շարժառիթներ կարող են ունենալ բամբասանքներ տարածող անձինք:

**Գաղտնիություն պարունակող տեղեկությունների հետ աշխատանք**

**Գաղտնիություն պարունակող տեղեկությունների պատշաճ պահպանությունը**

Դիտորդական կազմակերպությունները պետք է զգուշավորություն ցուցաբերեն՝ թույլ չտալու համար անձնական տվյալների անօրինական օգտագործում: Կոնկրետ անձի վերաբերող ցանկացած տեղեկություն պետք է մշակվի և պահպանվի ապահով պայմաններում:

- ► Գրասեղանները կամ թղթապանակների պահարանները պետք է լինեն բանալիով փակված:
- ► Համակարգիչները պետք է լինեն գաղտնաբառով պաշտպանված:
- ► Գաղտնաբառերը պետք է պահվեն գաղտնի և ապահով՝ պարբերաբար փոխելով դրանք:
- ► Անձնական տվյալներ պարունակող տվյալների պահպանման սարքերը պետք է պահվեն ապահով կերպով:
- ► Թղթերը չպետք է թողնվեն գրասեղանների կամ սեղանների վրա:
- ► Համակարգչային էկրանի տեղեկությունները չպետք է հասանելի/տեսանելի լինի որևէ մեկին, եթե նա լիազորված օգտագործող չէ:
- ► «Գաղտնի» տվյալների հասանելիությունը պետք է լինի խստագույնս սահմանափակված:

**Զգուշավորության ցուցաբերում տեղեկությունների բացահայտման ժամանակ**

Դիտորդական կազմակերպությունը չպետք է որևէ տեղեկություն փոխանցի որևէ երրորդ անձի՝ առանց Հիմնական թիմի թույլտվության: Այդ անձանց թվին պատկանում են նաև ծնողները կամ այլ բարեկամները, զուգընկերները, ընկերները և գործընկերները:

Օրենքի շրջանակներում ոստիկանությունը կարող է որոշ լիազորություններ ունենալ՝ օգտվելու կազմակերպության տնօրինության տակ գտնվող անձնական տվյալներից: Այնուամենայնիվ, այս իրավունքը բացարձակ իրավունք չէ: Այն պետք է առնչություն ունենա կոնկրետ հետաքննության/հանցագործության բացահայտման և/կամ իրավախախտի կալանավորման հետ: Ծայրագույն զգուշավորություն պետք է դրսևորել բոլոր ներկայացնող անձի ինքնությունը բացահայտելու հարցում: Ոչ մի տվյալ չի կարելի բացահայտել առանց գրավոր փաստաթղթի, որում նշվում է հետաքննող աշխատակցի անունը, աստիճանը և վկայականի համարը: Իրավիճակի անորոշ լինելու դեպքում, դիտորդը պետք է գործը հանձնի իրավաբան-խորհրդատուին:

**Զգուշավորություն տվյալները ոչնչացնելու հարցում**

Դիտորդական կազմակերպությունը պետք է ապահով կերպով ոչնչացնի տվյալները՝ պատառոտելու կամ այրելու միջոցով՝ ապահովելով, որ որևէ երրորդ անձ պատահականորեն չբացահայտի դրանք: Հատուկ ուշադրություն և զգուշավորություն պետք է դրսևորել համակարգիչների վերաօգտագործման և հեռացման ժամանակ:

**Տեղեկատվության սահմանափակ հասանելիություն**

Որոշ դեպքերում պետական հաստատությունները կարող են դժվարություն ցուցաբերել անհրաժեշտ տեղեկությունները տրամադրելու հարցում, որովհետև նման տեղեկությունների տրամադրումը արգելվում է օրենքով, պահանջվում է ներքին կանոնակարգերով կամ գործող օրենսդրությունը սխալ է մեկնաբանվում: Նման դեպքերում կարելի է կիրառել հետևյալ մոտեցումները:

- ► Հիմնվե՛ք առկա հրապարակված տեղեկությունների վրա (օրենսդրություն, կայքերում, բլոգներում, սոցիալական ցանցերում, թերթերում հրապարակված տեղեկություններ):
- ► Վերլուծե՛ք ընտրությունների արդյունքները (եթե արդյունքները հայտնի են ըստ ԸԸՀ-ների):
- ► Ավելի շատ տեղեկություններ ստացե՛ք՝ հղում կատարելով տեղեկատվության հասանելիության մասին համապատասխան օրենսդրությանը:
- ► Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում վերապատրաստե՛ք համապատասխան հաստատությունների պաշտոնյաներին՝ տեղեկատվության հասանելիությանը վերաբերող խնդիրների մասին:
- ► Լոբբիստական գործունեություն վարե՛ք միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական հանրության շրջանում, որպեսզի վերջիններս տեղեկատվության հասանելիության մասին խնդիրները բարձրացնեն կառավարական հիմնական շահագրգիռ կողմերի շրջանում:

Տվյալներ կարելի է հավաքել սովորական քաղաքացիներից: Դիտորդական կազմակերպությունը կարող է դիմել հանրության ներգրավման (crowdsourcing) օգնությանը՝ տեղեկություններ ներկայացնելու հրավեր հրապարակելով: Այս եղանակով քաղաքացիները կարող են օժանդակել ԵԺԴ-ներին և Հիմնական թիմի անդամներին տվյալների հավաքագրման հարցում: Կարելի է կոչ անել քաղաքացիներին միջադեպերի

հանրային տվյալների բազաներ (խախտումների քարտեզ) ուղարկել պատահարների մասին տեղեկություններ, լուսանկարների հանրային հատուկ ցուցասրահներում ներբեռնել նկարներ և քարոզարշավի սկանավորված նյութեր:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. ընտրությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն**

**ԸԸՀ-ների արդյունքները թիվ 5 ՏԸՀ-ում**

Նահանգապետի ընտրություններ, Սանկտ Պետերբուրգ, 14/09/14թ.




| | |
|---|---|
| Votes for candidate Pottachenko | Թեկնածու Պոտաչենկոյի օգտին քվեները |
| Turnout | Մասնակցությունը |

ԸԸՀ-ի վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում հնարավոր է ձեռք բերել ընտրախախտումների և կեղծարարության մասին արժանահավատ ցուցանիշներ: Կարելի է կիրառել հետևյալ մեթոդները:

- ► Առաջին հայացքից պարզ վերլուծություն. օրինակ՝ անվավեր քվեաթերթիկների/վավեր քվեաթերթիկների/մասնակցության նույնական թվեր:
- ► Տվյալների գծային համեմատություն. օրինակ՝ կարելի է կոնկրետ ընտրատարածքի տեղամասերի միջև համեմատել որևէ կոնկրետ պարամետր (օրինակ՝ որևէ կուսակցության օգտին տրված ձայների քանակը):
- ► Երկչափ համեմատություն՝ միևնույն ԸԸՀ-ներում որևէ թեկնածուի օգտին տրված քվեների համեմատությունը ԸԸՀ-ների ընդհանուր մասնակցության թվի հետ (տե՛ս ստորև):

Այս գծապատկերում համեմատվում են երկու պարամետրեր՝

- ► թեկնածուի օգտին տրված քվեների քանակը,
- ► մասնակիցների ընդհանուր թիվը:

Գծապատկերը ցույց է տալիս, որ 30 ԸԼՀ-ներում մասնակցության թիվը միննույնն է +/- 1 ձայնի ճշգրտությամբ, ակնհայտորեն հասնում է 58% մասնակցության: Այս օրինակը վերցված է Ռուսաստանի 2014 թվականի նահանգապետի ընտրություններից (Սանկտ Պետերբուրգ, թիվ 5 ՏԸՀ):



Գլուխ 4

# Արտաքին զեկույցների պատրաստում

Սույն գլխում ներկայացվում է դիտորդական առաքելության ամենավերջին փուլը, որի արդյունքում կազմվում են դիտորդական առաքելության հանրորեն հասանելի փաստաթղթերը: Գործնականում առաքելությունները կազմում են մի քանի տեսակի հրապարակային փաստաթղթեր՝ դիտարկված ընտրական գործընթացի արդյունքները, եզրահանգումները և առաջարկությունները ներկայացնելու համար: Մասնավորապես, խոսքը վերաբերում է միջանկյալ զեկույցներին, նախնական հաշվետվություններին և վերջնական զեկույցներին: Ձեռնարկի սույն գլխում մեկնաբանվում են արտաքին զեկույցների վերջնական տարբերակների պատրաստմանը հանգեցնող բոլոր ասպեկտները՝ Հիմնական թիմի նախապատրաստում, զեկույցների կառուցվածք, ոճեր, թեմաներ, այդ թվում՝ ոլորտներ և հարցեր, որոնց պետք է անդրադառնալ, զեկույցների հանրային ներկայացում, հնարավոր սահմանափակումներ և խնդիրներ, ինչպես նաև՝ հետագա գործողություններ և քարոզչական աշխատանքների փուլեր:

## 4.1. ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Դիտորդական յուրաքանչյուր առաքելություն յուրահատուկ է՝ կախված ընդգրկման շրջանակից, կառուցվածքից և առկա մարդկային/ֆինանսական ռեսուրսներից, ինչպես նաև այն սոցիալ-քաղաքական համատեքստից, որում այն գործում է: Դիտորդական կազմակերպությունները դառնում են ավելի պրոֆեսիոնալ, և Հիմնական թիմերի կազմում սովորաբար ընդգրկվում են փորձագետներ, որոնք իրենց գործունեության ոլորտի խորապես գիտակ են, ինչով ընդհանուր առմամբ նպաստում են առաքելության հաջող իրականացմանը:

Հիմնական թիմի անդամները պատասխանատու են ԵԺԴ-ների և ԿԺԴ-ների կողմից տեղերից ստացվող տեղեկությունները համակարգելու և միջանկյալ ու վերջնական զեկույցները մշակելու համար: Յուրաքանչյուր անդամ իր ներդրումն է կատարում զեկույցում՝ գրելով իրեն հանձնարարված առաջադրանքի և իր աշխատանքի շրջանակներին համապատասխան: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում, Հիմնական թիմի անդամները կարող են լրացուցիչ վերապատրաստման և/կամ կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների կարիք ունենալ՝ իրենց գիտելիքներն ու հմտությունները ընդլայնելու կամ հրապարակային զեկույցներ կազմելու և ներկայացնելու հարցում առավել միասնական մոտեցում ապահովելու համար:

Ընդհանուր առմամբ, արտաքին զեկույցներ կազմողների վերապատրաստումը պետք է հետապնդի երկու նպատակ՝ ընտրական գործընթացի տարբեր ոլորտների համապարփակ գնահատմանն ուղղված հմտությունների զարգացում և այդ տվյալները հանրությանը ողջամտորեն և ընդանուրի համար հասկանալի իմաստով ներկայացնելուն ուղղված հմտությունների զարգացում, այդ թվում՝ տարբեր լսարանների համար մշակված նպատակային ձևաչափերով:

Նախևառաջ, համապարփակ գնահատումը վերլուծաբանի առանցքային հմտությունն է: Սովորաբար, մի շարք անձինք (առաքելության ղեկավարի տեղակալը, մամուլի պատասխանատուն) իրականացնում են զեկույցներ կազմելու ընթացակարգի վերջնական փուլի վերանայումը: Նրանք, մասնավորապես՝ ԱՂՏ-ն, առանձին անձանից ստանում են տվյալներ (Հիմնական թիմի համապատասխան վերլուծաբանների կողմից՝ առնչվող ոլորտների վերաբերյալ տեղեկություններ), և իր առջև դրված է նպատակ ներդաշնակեցնել դրանք՝ հստակ, հակիրճ և կապակցված արտաքին զեկույցի տեսքով (միջանկյալ զեկույց, նախնական հաշվետվություն կամ վերջնական զեկույց): Միևնույն ժամանակ, մամուլի պատասխանատուն պետք է կարողանա մշակել մամուլի

հաղորդագրություններ, որոնք նախատեսված են դիտորդական առաքելության հիմնական ուղերձները և եզրահանգումները հակիրճ, լրատվական տեսանկյունից հեշտ ըմբռնելի ներկայացնելու համար:

Տարբեր ոլորտների փորձառությունների համատեղումը (օրինակ՝ իրավաբանություն, քաղաքականություն կամ վիճակագրություն), մանրամասների և ընդհանուր մոտեցումների հավասարակշռումը և, ի վերջո, զեկույցի բովանդակության ներդաշնակեցումը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակներին, ի թիվս այլոց, հանդիսանում են առանցքային հմտություններ, որոնք պետք է ամրապնդվեն վերապատրաստման միջոցառումների միջոցով: Ավելին, որոշակի ոլորտների համար պատասխանատու Հիմնական թիմի մյուս անդամները պետք է նույնպես զարգացնեն իրենց ոլորտային գիտելիքները՝ մտքում ունենալով, այսպես կոչված, «մեծ պատկերը»: Սա նույնպես վերապատրաստման նպատակներից է, որը պետք է շեշտադրվի համապատասխան վերապատրաստման դասընթացների միջոցով:

Երկրորդ՝ արտաքին զեկույցների պատրաստումը կարող է կատարվել տարբեր ձևաչափերով, և պատասխանատու մարդկանց խումբը պետք է ձևավորել համապատասխանաբար: Մամուլի հաղորդագրություն գրելը պահանջում է այլ հմտություններ, քան ընդհանուր զեկույցը նախագծելը: Հետևաբար, վերապատրաստման ժամանակ պետք է հաշվի առնել արտաքին զեկույցներ պատրաստելու համար պատասխանատու տարբեր անձանց և նախատեսել դասընթացներ, որոնք հարմարեցված են նրանց հատուկ կարիքներին: Գրավոր զեկույցները արտաքին զեկույցներ կազմելու ընդհանուր ռազմավարության հիմնական բաղադրիչն են, բայց գոյություն ունեն նաև այլ ձևաչափեր, և դիտորդները պետք է տեղյակ լինեն դրանց մասին:

Մտապահելով այդ կառուցվածքը՝ ստորև ներկայացվում են վերապատրաստման մի քանի մեթոդների օրինակներ, որոնք միտված են արտաքին զեկույցների պատրաստման որակը բարելավելուն: Որոշ մոդուլներ կարող են ընդհանուր լինել Հիմնական թիմի բոլոր անդամների համար: Մյուսները պետք է հարմարեցվեն կոնկրետ պահանջներին:

**Նմանակումներ**

Իրական իրավիճակներ վերարտադրելը չափազանց օգտակար է: Դերախաղերի միջոցով, օրինակ, հնարավոր է փոխել մարդու դիրքորոշումը: Այն թույլ է տալիս յուրաքանչյուրին հասկանալ մյուսի խնդիրները: Եթե մամուլի պատասխանատուները ստանձնեն լրագրողի դեր, ապա նրանք ավելի լավ կկատարեն իրենց աշխատանքը: Եթե հիմնական զեկույց մշակողները ստանձնեն ընտրությունների համար պատասխանատու մարմնի (ԸՄՊ) դերը, ապա նրանք կօգտագործեն այնպիսի ձևակերպումներ, որ հասնեն առավել լավ արդյունքի:

**Միջոլորտային մոտեցում**

Վերապատրաստման մեջ պետք է ներառվեն հատուկ դասընթացներ, որոնք միտված են գիտելիքների փոխանակմանը: Օրինակ՝ իրավաբանները կարող են իրենց գիտելիքները կիսել ընտրությունների հարցերով փորձագետների հետ, խոսնակները՝ վերլուծաբանների հետ: Սա կարելի է իրագործել նաև դերախաղի և վերապատրաստման այլ ռազմավարությունների միջոցով, օրինակ՝ տեղերում աշխատող դիտորդների և Հիմնական թիմի փորձագետների միջև երկկողմ հանդիպումներ, ինչպես նաև ընդհանուր խնդիրների և սահմանափակումների վերաբերյալ խմբային քննարկումներ:

**Բանավոր և գրավոր վարժություններ**

Սրանք վերապատրաստման ընդհանուր ռազմավարության առանցքային բաղադրիչներն են: Լավագույն արտաքին զեկույցներով հանդես գալու համար պետք է

ունենալ դիտարկումները ներկայացնելու հատուկ հմտություններ: Որոշ ընդհանուր կանոններ հաստատելուց հետո (օրինակ՝ ձևակերպումներ, շարահյուսություն, հղումներ), վերապատրաստումը կարող է ներառել անհատական վարժություններ (օրինակ՝ տեղեկատվության վերլուծություն, եզրահանգումների և առաջարկությունների կատարում, մամուլի հաղորդագրությունների պատրաստում), որոնց կարող են հաջորդել խմբային գնահատումներ:

**Դեպքերի ուսումնասիրություններ**

Տեսակետները համեմատելը կարող է օժանդակել ամենատարածված խնդիրների լուծմանը (օրինակ՝ լեզու, ստուգման մեթոդներ, պատկերավոր ներկայացում): Ավելին, վերապատրաստման ժամանակ կարելի է ընտրել միևնույն դեպքի առիթով նախկինում կազմված զեկույցներ՝ դրանցից դասեր քաղելու և հետագա գործողությունների պատշաճ մեթոդով հանդես գալու նպատակով (Ո՞րն էր լավ կողմը/վատ կողմը: Ի՞նչը կարելի է բարելավել: Ի՞նչ միջազգային չափանիշներ կան, և ինչպե՞ս կարելի է դրանք ներմուծել զեկույցներում):

**Տեսանելիության ռազմավարություն**

Կարող են անցկացվել նաև վերապատրաստման դասընթացներ՝ քննարկելու համար, թե ինչպես կարող են արտաքին զեկույցները լավագույնս լուսաբանվել հանրության շրջանում (հաղորդակցության միջոցները և գործիքները): Սա վերաբերում է վերապատրաստման բովանդակությանը, թեմաները տարբեր տեղերում տեղադրելու կամ տեխնիկաների/մոտեցումների ցանկից դրանք հանելու հնարավորությանը:

**Ցանցերի ստեղծում և փորձի փոխանակում**

Դիտորդների ցանցերի միջոցով հնարավոր է ստանալ կարծիքներ, թե ինչպես հաղթահարել այն խոչընդոտները, որոնց իրենք հանդիպել են կամ պարբերաբար հանդիպում են իրենց աշխատանքի ընթացքում: Դիտորդական աշխատանքներում մասնագիտացած ազգային և միջազգային կազմակերպությունների ներգրավումը նույնպես խրախուսելի է: Իրականում, փորձի փոխանակումը և ցանցերի ստեղծումը կատարելագործում են այն, ինչը տեսականորեն վերլուծվում է դեպքերի ուսումնասիրությունների ժամանակ:

## 4.2. ԱՐՏԱՔԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տեղական դիտորդական կազմակերպության կողմից իրականացված երկարաժամկետ դիտորդական առաքելության միջոցով սովորաբար հանրությանը ներկայացվում է տեղեկատվություն, որը ձեռք է բերվում դիտորդական աշխատանքի ընթացքում և արտացոլում է ընտրական գործընթացի տարբեր փուլերը: Գոյություն ունեն զեկույցների պատրաստման երկու հիմնական մեթոդներ:

1. Դիտորդական աշխատանքների բոլոր ոլորտները լուսաբանող և քարոզարշավի ժամանակ և դրանից հետո պարբերաբար հրապարակվող կառուցվածքային զեկույցներ (միջանկյալ զեկույցներ, նախնական հայտարարություն և վերջնական զեկույց):
2. Դիտորդական գործընթացի առանձին պահերն արձանագրող մամուլի հաղորդագրություններ (դիտորդական աշխատանքների սկիզբը, ընտրախախտումները, ընտրությունների օրվա քվեարկության գործընթացը, նախնական արդյունքների մասին հիմնական ուղերձները և եզրահանգումները):

Լայնամասշտաբ դիտորդական առաքելության առաջին միջանկյալ զեկույցը ներառում է ընտրական գործընթացի բոլոր նշանակալի ասպեկտների նախնական

նկարագրությունը (ընտրական համակարգ, իրավական դաշտ, ընտրությունների համար պատասխանատու մարմին, ընտրացուցակներ, ընտրողների գրանցում, թեկնածուների գրանցում, ընտրական քարոզարշավ, քարոզարշավի ֆինանսավորում, լրատվամիջոցներ, դիմում-բողոքներ և հայցադիմումներ): Սովորաբար, կախված դիտորդական առաքելության տևողությունից՝ կազմվում են մի քանի միջանկյալ զեկույցներ, որոնք պարբերաբար հրապարակվում են (շաբաթական, երկշաբաթյա, ամսական և այլն):

Ընտրություններից հետո (հնարավոր է նաև պաշտոնական քարոզարշավի ամենավերջում) դիտորդական առաքելությունը պետք է հրապարակի իր զեկույցը՝ նախնական արդյունքների և եզրահանգումների ներառմամբ: Դրա նպատակն է ներկայացնել ամբողջ ընտրական գործընթացի առանցքային գնահատումները: Զեկույցը (հաշվետվությունը) ունի միջանկյալ զեկույցներին նման կառուցվածք (ընտրությունների օրվա իրադարձությունները ներկայացվում են հատուկ բաժնում): Այնուամենայնիվ, դրա ամփոփագրի և բովանդակության մեջ պետք է արտացոլվի արձանագրված գործընթացի և հավաքված փաստերի վերլուծությունը:

Վերջնական զեկույցը սովորաբար հրապարակվում է ողջ ընտրական գործընթացի ավարտից հետո (ներառյալ հետընտրական զարգացումները, դիմում-բողոքներն ու հայցադիմումները, ինչպես նաև վերջնական արդյունքների հայտարարումը)՝ ընտրություններին հետևող մոտավորապես երեքից վեց շաբաթների ընթացքում: Այս զեկույցը դիտորդական առաքելության ամենահամապարփակ արտաքին փաստաթուղթն է:

Դրանում ներկայացվում է առավել մանրամասն վերլուծություն և մի շարք կոնկրետ առաջարկություններ՝ ուղղված իշխանություններին, ընտրական գործընթացի այն ասպեկտները բարելավելու նպատակով, որոնք ԸՏԴԱ-ը համարել է խնդրահարույց:

**Զեկույցները պետք է լինեն հստակ, պարզ և պետք է ունենան հետևյալ կառուցվածքը**

**1. Տիտղոսաթերթը**

Ինչպես նշված է ստորև բերված գծապատկերում, ընտրական զեկույցի տիտղոսաթերթը պետք է ներառի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, որոնք պետք է առաջին հայացքից լինեն տեսանելի: Մասնավորապես, տիտղոսաթերթում պետք է ներկայացվեն հետևյալ տեղեկությունները:

Առաջին էջի վրա, ինչպես նաև զեկույցում, պետք է նշել այն ժամանակահատվածը, որին վերաբերում է զեկույցը: Ընդհանուր առմամբ, միջանկյալ զեկույցներն ընդգրկում են մեկից երեք շաբաթ ժամանակահատված: Այնուամենայնիվ, եթե դիտորդական առաքելությունն ավելի երկար է տևել, ընդգրկման ժամկետները ավելի երկար կարող են լինել: Իսկ վերջնական ընտրական զեկույցում լուսաբանվում է ամբողջ ժամանակահատվածը, որի ընթացքում դիտորդական աշխատանքներ են տարվել:

- ► Կազմակերպության անունը և խորհրդանիշը
- ► Զեկույցի հրատարակման վայրը և ամսաթիվը
- ► Հրապարակվող զեկույցի տեսակը (միջանկյալ, հատուկ, նախնական հաշվետվություն, վերջնական զեկույց)

**Գծապատկեր 6. 2014 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մոնիթորինգ**




| | |
|---|---|
| Type of elections being covered in the report | Ձեկույցում լուսաբանվող ընտրությունների տեսակը |
| Logo of the organization | Կազմակերպության խորհրդանիշը |
| MONITORING OF 2014 LOCAL SELF-GOVERNMENT ELECTIONS FINAL REPORT | 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ |
| International Society for Fair Elections and Democracy (ISFED) | Արդար ընտրությունների և ժողովրդավարության միջազգային ընկերակցություն (ISFED) |
| Type of report:<br>- final<br>- interim<br>- ad hoc | Ձեկույցի տեսակը՝<br>- վերջնական<br>- միջանկյալ<br>- արտահերթ |
| 2014 Tbilisi | Թբիլիսի՝ 2014թ. |
| Date and place | Ամսաթիվը և վայրը |

Աղբյուր՝ www.isfed.ge

## 2. Բովանդակությունը

Բովանդակությունը թույլ է տալիս ընթերցողին հեշտությամբ գաղափար կազմել զեկույցի թեմաների վերաբերյալ: Որոշ ընթերցողների կարող է հետաքրքրել միայն ամփոփագիրը, մյուսներին՝ միայն դիտարկումները/եզրահանգումները, իսկ ոմանց՝ միայն առաջարկությունները:

Բոլոր զեկույցները պետք է ունենան ֆորմալ կառուցվածք՝ ըստ բաժինների: Այդ բաժինները ներառվում են բովանդակության մեջ, որն ամփոփ ներկայացնում է դրանք, որպեսզի ընթերցողները հեշտությամբ գտնեն զեկույցի այն հատվածները, որոնցում իրենք հետաքրքրված են:

Բովանդակությունը պետք է ներառի առնվազն հետևյալ բաժինները:

- ► Ներածություն
- ► Մեթոդաբանություն
- ► Դիտարկումներ (միջանկյալ զեկույց)/Եզրահանգումներ (հաշվետվություն, վերջնական զեկույց)
- ► Առաջարկություններ (վերջնական զեկույց)
- ► Տեղեկություններ կազմակերպության մասին

Բովանդակությունը կարող է կառուցվել տարբեր կերպ: Ստորև ներկայացվում են երկու տարբեր տարբերակներ՝

**Գծապատկեր 7. Բովանդակության օրինակներ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| I ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 4 | II ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 6 | III. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 11 | IV. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ 12 |
| V. ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐ 15 | VI. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ 16<br>Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ) 16<br>Տարածքային ընտրական հանձնաժողովներ և ընտրատեղամասային հանձնաժողովներ 20 | VII. ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԽՈՒՄԲ 22 | VIII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՏՈՒԳԻՉ ԳՐԱՍԵՆՅԱԿ 23 |
| IX. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ 24<br>Մեթոդաբանություն 25<br>Պետական | X. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ/ԸՆՏՐԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ | XI. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԸ 36<br>Ընտրությունների առաջին փուլ 36<br>Ընտրությունների | XII. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԸ ԵՎ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ |

ռեսուրսների օգտագործում 26
Ընտրակաշառք 27
Ահաբեկում 28
Ֆիզիկական բռնություն 28
Ընտրական քարոզարշավի խափանում 29
Քաղաքական հիմքով աշխատանքից ազատում 29
Ձերբակալություններ 30
Նախընտրական քարոզարշավին ոչ իրավասու անձանց մասնակցություն 31
Նախընտրական քարոզարշավի ժամանակ կատարված խտրական հայտարարություններ 32
Լրատվական դաշտ 33
ՇՐՋԱՆՈՒՄ 34
երկրորդ փուլ 45
Կրկնակի ընտրություններ 49
ԲՈՂՈՔՆԵՐ 50
Ընտրությունների առաջին փուլ 50
Կրկնակի ընտրություններ 55
Ընտրությունների երկրորդ փուլ 55
XIII. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ 58
XIV ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 60

**Բովանդակություն**

I. Մոնիթորինգի առաքելության մասին ... 4

II. Հիմնական դիտարկումները ... 5

III. Քաղաքական համատեքստը ... 8

IV. Ընտրական իրավունք ... 9

V. Ազատ և արդար ընտրությունների հարցերով միջազգերատեսչական հատուկ խումբ 13

VI. Պետական վերստուգիչ գրասենյակ ... 14

VII. Ընտրացուցակներ ... 15

VIII. Ընտրությունների համար պատասխանատու մարմին ... 16

- Կենտրոնական ընտրական հանձնաժողով ... 16
- Տարածքային ընտրական հանձնաժողովներ և ընտրատեղամասային հանձնաժողովներ ... 19

IX. Նախընտրական մոինթորինգ ... 21

- Մեթոդաբանություն ... 21
- Հիմնական խախտումները նախընտրական շրջանում ... 22
- Լրատվական դաշտը նախընտրական շրջանում ... 29
- Կուսակցությունների/ընտրական սուբյեկտների կողմից իրականացվող հանրային ժողովների դիտանցում նախընտրական շրջանում ... 30

X. Ընտրությունների օրը ... 32

- Մոնիթորինգի առաքելություն ... 32
- Մոնիթորինգի մեթոդաբանություն ... 32
- ՁԶՀ մոնիթորինգի արդյունքներ ... 33
- Ընտրությունների օրվա խախտումներ և բողոքներ ... 37

XI. Հետընտրական շրջան ... 39

- Տարածքային և ընտրատեղամասային հանձնաժողովներ ու դատարան ներկայացված բողոքները և դատական հայցերը ... 39
- Այլ կարևոր հետընտրական զարգացումներ ... 42

XII. Եզրակացություններ և առաջարկություններ ... 43

Աղբյուր՝ www.isfed.ge

**3. Մեթոդաբանություն**

Զեկույցի սկզբում անհրաժեշտ է հակիրճ նկարագրել, թե ինչ է արձանագրվել և ինչպես: Մեթոդաբանության վերաբերյալ բաժնում պետք է ընդգրկել հետևյալ հարցերը:

► *Նշե՛ք, թե որ ընտրություններն եք դուք արձանագրում.* Նշե՛ք արձանագրվող ժամկետը (միայն ընտրությունների օրը կամ նախընտրական և/կամ հետընտրական շրջանը):

► *Նկարագրե՛ք դիտորդական աշխատանքների մասշտաբները.* Ընտրությունների հետ կապված բոլոր հարցերը կամ ընտրությունների որևէ

կոնկրետ ասպեկտ (օրինակ՝ ընտրությունների լուսաբանումը լրատվամիջոցների կողմից, վարչական ռեսուրսների օգտագործումը, բողոքներ ստանալը և դրանց ընթացք տալը):

- *Նկարագրե՛ք դիտորդական աշխատանքների ձեր մեթոդաբանությունը.* սա վերաբերում է դիտորդական աշխատանքների պլանավորմանը, վերապատրաստմանը, տեղաբաշխմանը և իրականացմանը:
- *Նշե՛ք՝ ինչ կատեգորիայի դիտորդներ եք տեղաբաշխել և որ տարածքներում (ԵԺԴ-ներ/ԿԺԴ-ներ, ստացիոնար/շարժական դիտորդներ).* անհրաժեշտ է նկարագրել տեղաբաշխման չափանիշները (օրինակ՝ բոլոր ընտրատեղամասերում, պատահական ընտրությամբ ընտրատեղամասերում կամ կոնկրետ տարածքների ընտրատեղամասերում, օրինակ՝ փոքրամասնություններով բնակեցված տարածքներում):
- *Հստակեցրե՛ք ընտրությունների գնահատման չափանիշները* (օրինակ՝ համընդհանուր իրավական գործիքներ՝ ՔՔԻՄԴ, տարածաշրջանային իրավական գործիքներ՝ ՄԻԵԿ, քաղաքական հանձնառություններ՝ կոպենհագենյան փաստաթուղթ), ենթաօրենսդրություն (Եվրոպայի խորհրդի՝ Ընտրական հարցերում բարեխիղճ գործելակերպի կանոնագիրք, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներ):

**Բարեխիղճ գործելակերպ. դիտորդական աշխատանքների մեթոդաբանության համառոտ նկարագիր**

Ստորև ներկայացվում է 2013 թվականի հոկտեմբերի 27-ի նախագահական ընտրությունների մոնիթորինգի զեկույցը՝ պատրաստված Արդար ընտրությունների և ժողովրդավարության միջազգային ընկերակցության կողմից: Որպես ամենալայն ցանցեր ունեցող կազմակերպություն՝ ISFED-ն իրականացրել է նախընտրական շրջանի, ինչպես նաև ընտրությունների օրվա և հետընտրական շրջանի մոնիթորինգ: Մոնիթորինգի գործընթացում ներառվել են երեք հիմնական փուլեր:

- Նախընտրական մոնիթորինգ. Նախագահական ընտրություններին նախորդող չորս ամիսների ընթացքում 73 երկարաժամկետ դիտորդ նախընտրական մոնիթորինգ է իրականացրել Վրաստանի բոլոր ընտրատարածքներում: Նախընտրական մոնիթորինգի կենտրոնական թեմաներն էին պետական ռեսուրսների օգտագործումը, ընտրությունների համար պատասխանատու մարմինների և քաղաքական կուսակցությունների գործունեությունը, ընտրացուցակների կազմումը, քաղաքական հողի վրա ճնշումները, սպառնալիքները և ընտրակաշառքը:
- Ընտրությունների օրվա մոնիթորինգն իրականացվել է Վրաստանի 910 ընտրատեղամասերում, որոնցից 800-ն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ ՁԶՀ մեթոդաբանության կիրառմամբ: Ի լրումն սրան, ևս 110 ընտրատեղամասերում ISFED-ն տեղակայել էր կարճաժամկետ ստացիոնար դիտորդներ: Կարճաժամկետ դիտորդների հետ միասին, ընտրությունների օրը դիտարկող առաքելությունը կազմված էր 78 շարժական խմբերից, 73 տարածքային դիտորդներից, 20 իրավաբաններից և 20 լուսանկարիչներից: Ընտրությունների օրվա դիտորդական աշխատանքներում ներառվել էին երեք հիմնական բաղադրիչներ՝ ընտրատեղամասերի բացում և քվեարկության համար նախապատրաստում, քվեարկության պրոցես, ձայների հաշվարկ և բաշխում:
- Հետընտրական մոնիթորինգի համար ISFED-ը տեղակայել էր 73

տարածքային դիտորդներ և իրավաբաններ: Նրանք դիտանցել են ընտրությունների համար պատասխանատու մարմնի աշխատանքը, տարածքային ընտրական հանձնաժողովներում (ՏՀԸ) դիմումների ներկայացման գործընթացը և ձայների բաշխման գործընթացը: ISFED-ն ընտրությունների համար պատասխանատու մարմնին ներկայացրեց տասնյակ բողոքներ ենթադրյալ ընտրախախտումների մասին, որոնք արձանագրվել էին գործընթացի ընթացքում:

### 4. Ամփոփագիր

Ամփոփագիրը ներկայացվում է զեկույցի սկզբում: Այն հիմնականում հիմնվում է այն դիտարկումների և եզրահանգումների վրա, որոնք ներկայացվում են զեկույցի հաջորդ բաժիններում: Ամփոփագիրը պետք է հնարավորություն տա ընթերցողին արագ ծանոթանալ հիմնական եզրահանգումներին՝ առանց ամբողջ զեկույցը կարդալու:

#### Հիմնական ուղերձը

Հիմնական ուղերձում պետք է արտացոլվի, թե որքանով է ընտրական գործընթացն իրականացվել այնպես, որ արժանանա թեկնածուների և ընտրազանգվածի վստահությանը, ինչպես նաև թե որքանով են իշխանական մարմինները ցուցաբերել իրական ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու քաղաքական կամք: Ընդհանուր առմամբ, այն պետք է արտացոլի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանք, ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին և կանոններին, ինչպես նաև միջազգային պայմանագրերին և քաղաքական հանձնառություններին համապատասխանություն, որոնց համաձայն կատարվում է ընտրությունների գնահատումը: Այնուամենայնիվ, հիմնական ուղերձում չպետք է գնահատվի ընտրությունների «վավեր» կամ «անվավեր» լինելու հարցը:

**Բարեխիղճ գործելակերպ. ամփոփագրի հիմնական ուղերձը**

Ընտրությունների ընթացքում «ԵԱՀԿ շատ հանձնառությունները, այդ թվում՝ քաղաքացիների աստացման իրավունքը, թեկնածություն առաջադրելու իրավունքը և ազատ արտահայտվելու իրավունքը չեն պահպանվել՝ չնայած ընտրությունների մասին օրենքում կատարված որոշ բարեփոխումներին: Չնայած կուսակցությունների կողմից առաջադրված թեկնածուների թվի աճին՝ այնուամենայնիվ, նշանավոր քաղաքական գործիչներ, որոնք կարող էին այս ընտրական մրցարշավում էական դերակատարում ունենալ, եղել են անազատության մեջ կամ քրեական պատմություն ունենալու պատճառով զրկված են եղել դրան մասնակցելու իրավունքից: Մրցակիցների դաշտը նաև սահմանափակված է կամայական վարչարարության արդյունքում, ինչի արդյունքում սահմանափակվել է ընտրողների ընտրության հնարավորությունը: Ընտրությունները չեն ընթացել անկողմնակալության մթնոլորտում, իսկ դիմում-բողոքների գործընթացը չի երաշխավորել արդյունավետ իրավական պաշտպանության միջոց»:

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸԴԱ), Վերջնական զեկույց, Բելառուս, խորհրդարանական ընտրություններ, 2012 թվականի սեպտեմբերի 23):

Ընտրությունները, ընդհանուր առմամբ, լավ էին կազմակերպված և բնութագրվում էին հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքով: Մրցակիցները կարողացել են վարել ազատ քարոզարշավ: Լրատվամիջոցները կատարել են իրենց իրավական պարտավորությունը՝ ապահովելով հավասարակշռված լուսաբանում, և բոլոր մրցակիցները ազատ օգտագործել են անվճար եթերի ժամանակը: Միննույն ժամանակ, հանրային կառավարման մարմինների կողմից դրսևորած

անկողմնակալության բացակայությունը, վարչական ռեսուրսների չարաշահումը և ընտրողների նկատմամբ ճնշումները մտահոգիչ էին: Չնայած ընտրությունների օրն անցել է հանգիստ և կանոնակարգված, այնուամենայնիվ, արձանագրվել են գործընթացին անտեղի միջամտության միջադեպեր՝ հիմնականում գործող թեկնածուին ներկայացնող վստահված անձանց կողմից: Արձանագրվել են նաև մի շարք լուրջ ընտրախախտումներ»:

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ, Վերջնական զեկույց, Հայաստան, նախագահական ընտրություններ, 2013 թվականի փետրվարի 18):

Ընտրություններն «ուղեկցվել են ազատ արտահայտվելու, հավաքների և ասոցացման ազատությունների սահմանափակումներով, որոնք թեկնածուների համար չեն ապահովել հավասար պայմաններ: Թեկնածուների և ընտրողների ահաբեկման մասին շարունակ ստացվող հայտարարությունները և լրատվական սահմանափակ դաշտը ստվեր են գցել քարոզարշավի վրա: Նշանակալի խնդիրներ են արձանագրվել ընտրությունների օրը՝ գործընթացի բոլոր փուլերում: Դրանք ընդգծել են այն թերությունների լուրջ բնույթը, որոնք պետք է վերացնել, որպեսզի Ադրբեջանը լիովին համապատասխանի իրական և ժողովրդավարական ընտրությունների վերաբերյալ իր կողմից ստանձնած ԵԱՀԿ պարտավորություններին»:

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ, Վերջնական զեկույց, Ադրբեջան, նախագահական ընտրություններ, 2013 թվականի հոկտեմբերի 9):

Նախագահական ընտրությունները «լավ էին կազմակերպված և թափանցիկ էին: Դրանք անցկացվեցին բարյացակամ և կառուցողական մթնոլորտում: Ընտրական քարոզարշավի ժամանակ ազատ արտահայտվելու, տեղաշարժի և հավաքների հիմնարար ազատությունները պահպանվել են, և թեկնածուները կարողացել են վարել առանց սահմանափակումների քարոզարշավ: Լրատվամիջոցները պակաս բևեռացված էին, քան 2012 թվականի ընտրությունների ժամանակ էր, և ներկայացնում էին տեսակետների լայն բազմաբազանություն: Ընտրությունների օրը ընտրողները կարողացել են իրենց ընտրությունն ազատ արտահայտել»:

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ, Վերջնական զեկույց, Վրաստան, նախագահական ընտրություններ, 2013 թվականի հոկտեմբերի 27):

Ընտրությունները «կարևոր քայլ արձանագրեցին Ուկրաինայի՝ իր միջազգային պարտավորություններին համապատասխան ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու ձգումն իրագործելու ուղղությամբ: Գործընթացում արձանագրվել են բազմաթիվ դրական կողմեր, ինչպես օրինակ՝ անկողմնակալ և արդյունավետ գործող Կենտրոնական ընտրական հանձնաժողով, բավականաչափ մրցունակ ընտրություններ, որոնք ընտրողներին տվեցին իրական ընտրության հնարավորություն, ինչպես նաև ապահովեցին հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանք: Նորընտիր խորհրդարանը պետք է քաղաքական պատասխանատվություն ստանձնի՝ ապահովելու, որ ընդունվեն առանցքային բարեփոխումներ, որոնք կկանխեն սույն հաշվետվության մեջ արձանագրված որոշ անցանկալի գործելակերպերի արմատավորումը: Ի լրումն սրան, բողոքները պետք է լուծվեն օրենքի գերակայության պահպանմամբ և ժողովրդավարական հաստատությունների միջոցով»:

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ, Վերջնական զեկույց, Ուկրաինա, վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ, 2014 թվականի հոկտեմբերի 26):

Ընտրությունները «ընտրողներին քաղաքական այլընտրանքների մեծ հնարավորություն են ընձեռել: Քարոզարշավի վրա ազդեցություն են թողել երկրի

աշխարհաքաղաքական նկրտումները: Ընտրությունների ժամանակ մեկ մրցակցի գրանցման դադարեցումը ուշացնելը ժամկետների և հանգամանքների առնչությամբ հարցերի տեղիք տվեց: Մրցակիցները կարողացել են օգտվել լրատվամիջոցների անարգել հասանելիությունից: Այնուամենայնիվ, շատ լրատվամիջոցներ, զգալի բացառություններով (այդ թվում նաև պետական հեռարձակողը), ենթակա են եղել քաղաքական միջամտության:

Ընտրությունների համար պատասխանատու մարմինը վայելում էր բազմաթիվ շահագրգիռ կողմերի վստահությունը, և գործընթացը, ընդհանուր առմամբ, լավ էր կազմակերպված: Սա չի վերաբերում ընտրությունների օրը ձայների հաշվարկման նոր էլեկտրոնային համակարգի շահագործմանը»:

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ, Վերջնական զեկույց, Մոլդովա, խորհրդարանական ընտրություններ, 2014 թվականի նոյեմբերի 30):

**Հիմնական դիտարկումների համառոտագիր**

Սկզբում, հիմնական ուղերձից հետո, անհրաժեշտ է համառոտ ներկայացնել ընտրական գործընթացի վերաբերյալ ամենակարևոր դիտորդական դիտարկումները, որտեղ սովորաբար արտացոլվում են հիմնական թեմաները/ոլորտները, որոնց շուրջ տեղական դիտորդները աշխատանքներ են կատարել: Այս հատվածը լսարանի կողմից ամենաշատ ընթերցվող մասն է: Ստորև ներկայացվում են հիմնական ձևակերպումները, որոնք օգտագործվում են համառոտագրում:

**Բարեխիղճ գործելակերպ. հիմնական դիտարկումներ**

Ընդհանուր առմամբ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրությունները տեխնիկապես լավ էր կազմակերպել:

Ընտրությունների համար պատասխանատու մարմինը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավորությամբ, ընտրությունները կազմակերպել էին միանգամայն պրոֆեսիոնալ եղանակով և պահպանել էին օրենքով պահանջվող վերջնաժամկետները:

Քաղաքական ուժերը ընտրական հանձնաժողովում անհավասար էին ներկայացված, որը իշխանամետ ուժերին տվել էր դե ֆակտո որոշումներ ընդունելու մեծամասնության իրավունք: Այս իրավիճակը թույլ էր տալիս ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչներին բողոքել այն մասին, որ ընտրությունների կազմակերպման անկողմնակալությունը ապահովված չէր:

Թեկնածուների գրանցումը, ընդհանուր առմամբ, ներառական և թափանցիկ էր:

Ընտրական քարոզարշավը ընթացել է սուր բևեռացված քաղաքական միջավայրում:

Հաճախ հնարավոր չէր տարբերակել պետությունը իշխող կուսակցությունից:

Ընդհանուր առմամբ, լրատվամիջոցները ընտրողներին մատուցում էին քաղաքական տեսակետների լայն բազմազանություն՝ ստեղծելով առավել իրազեկ ընտրություն կատարելու հնարավորություն:

Դիմում-բողոքների և հայցադիմումների ընթացակարգերը վերջին ժամանակներում որոշ չափով պարզեցվել և հստակեցվել են:

Ընտրությունների օրը, ընդհանուր առմամբ, խաղաղ է անցել:

ՏԸՀ-ներում աղյուսակավորման գործընթացի մասին դիտորդները տվել են դրական գնահատական:

Ներկայացվել են ընտրություններին առնչվող մոտավորապես 800 դիմում-բողոքներ և հայցադիմումներ, որոնք հայտնում էին քվեարկության, ձայների հաշվարկի և

դիտարկումների աղյուսակավորման ընթացքում մի շարք խախտումների մասին:

**Հղում միջազգային չափանիշներին**

Ամփոփագրում պետք է սահմանվեն ընտրական գործընթացի հիմնական միտումներն ու ուղղությունները, և ի վերջո, պետք է գնահատվի, թե որքանով է ընտրական գործընթացն իրականացվել միջազգային չափանիշներին, քաղաքական պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների սկզբունքներին համապատասխան, ինչպես նաև որքանով է այն համապատասխանել ներպետական իրավունքին: Այն կարելի է իրագործել հետևյալ կերպ:

**Բարեխիղճ գործելակերպ. հղում միջազգային չափանիշներին**

Իրագործվել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) կողմից նախորդ կարևոր հանձնարարականները, այդ թվում՝ դատապարտյալների որոշ խմբերին քվեարկելու իրավունքի շնորհումը, անկախ թեկնածությունների առաջադրման թույլատրումը և բնակության հետ կապված պահանջների մեղմացումը:

Հստակ նախանշված հաշվարկման ընթացակարգերի շարունակական բացակայության հետևանքով հնարավոր չի եղել երաշխավորել քվեների ազնիվ հաշվարկ՝ համաձայն ԵԱՀԿ-ի 1990 թվականի կոպենհագենյան փաստաթղթի 7.4 պարբերության:

Քարոզարշավի ընթացքում ստացվել են արժանահավատ զեկույցներ թեկնածուներին և ընտրողներին ահաբեկելու դեպքերի մասին, ինչը հարցականի տակ է դրել թեկնածուների՝ արդար միջավայրում քարոզարշավ անցկացնելու հնարավորությունը, ինչպես նաև ընտրողների՝ «առանց պատժի ենթարկվելու վախի» իրենց ձայնը տալու ունակությունը՝ համաձայն ԵԱՀԿ-ի 1990 թվականի կոպենհագենյան փաստաթղթի 7.7 պարբերության:

**5. Դիտարկումները (միջանկյալ զեկույցներ)**

Դիտարկումները հանդիսանում են այն փաստերի ամփոփումը, որոնք արձանագրվում են առաքելության անդամների (այդ թվում՝ Հիմնական թիմի, ԵԺԴ-ների և ԿԺԴ-ների) կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակի սղության և ծավալի սահմանափակման պատճառով դուք հնարավորություն չեք ունենալու ներկայացնել բոլոր փաստերը, ուստի, դրանք անհրաժեշտ է ամփոփել դիտարկումների մեջ: Ձեր դիտարկումների հանրագումարը, այն է՝ ձեր եզրահանգումները, հիմք են հանդիսանում ձեր իսկ կողմից ներկայացվող եզրակացությունների և առաջարկությունների համար:

**Բարեխիղճ գործելակերպ. զեկույցի դիտարկումները**

**ԸԸՀ-ներին ներկայացված բողոքները**

Քվեների հաշվարկի կարգի խախտման առնչությամբ ընդհանուր թվով յոթ բողոք է ներկայացվել ԸԸՀ: Այս բողոքներից երեքը բավարարվել է, իսկ չորսը՝ մերժվել: Բողոքները ներկայացվել են ԸԸՀ հետևյալ խախտումների առնչությամբ:

- ► Քվեատուփի ամբողջականության խախտում՝ Տերխոլայի թիվ 49 ընտրատարածքի թիվ 11 և թիվ 30 ընտրատեղամասեր, Խուլոյի թիվ 81 ընտրատարածքի թիվ 12 և թիվ 27 ընտրատեղամասեր:
- ► Ոչ պատշաճ փաստաթղթավորում՝ Լանչխութիի թիվ 61 ընտրատարածքի թիվ 18 ընտրատեղամաս:
- ► Քվեարկության կարգի խախտում՝ Տերխոլայի թիվ 49 ընտրատարածքի թիվ 30 ընտրատեղամաս:
- ► Այլ խախտումներ՝ Խուլոյի թիվ 81 ընտրատարածքի թիվ 2 ընտրատեղամաս:

Ցանկության դեպքում կարող եք պատկերավոր կերպով ներկայացնել արձանագրված դեպքերը: Դա կարելի է իրագործել հետևյալ կերպ:

**Գծապատկեր 8. Խախտումների վիճակագրություն, որի առնչությամբ Արդար ընտրությունների և ժողովրդավարության միջազգային ընկերակցությունը (ISFED) բողոք է ներկայացնում ԸԸՀ-ներին**




| | |
|---|---|
| Violation of integrity of mobile box | Շարժական քվեատուփի ամբողջականության խախտում |
| Improper processing of election documentation | Ընտրական փաստաթղթերի ոչ պատշաճ ուսումնասիրում |
| Violation of the rule of casting lots | Վիճակահանության կարգի խախտում |
| Other violations | Այլ խախտումներ |

Աղբյուրը՝ www.isfed.ge

**Միջադեպերի համատեքստային շարադրումը՝ առանց թվարկման**

Խուսափե՛ք սոսկ առանձին դեպքեր ներկայացնելուց կամ խախտումներ թվարկելուց: Դրանք պետք է ներկայացվեն ընդհանուր համատեքստում: Անհրաժեշտ է հստակեցնել՝ արդյոք արձանագրված ցանկացած կանոնի կամ օրենքի խախտում առանձին դեպք է, թե՞ դրանք պարբերական բնույթ են կրում, ինչը կարող է խաթարել ընտրական գործընթացի ամբողջականությունը:

**Բարեխիղճ գործելակերպ. տեղեկատվության համատեքստը**

▪ ISFED-ն ներկայացրել է թվով 177 բողոք 208 խախտումների առնչությամբ, այդ թվում ՝ 16 բողոք ներկայացվել է ԸԸՀ, իսկ 161-ը՝ ՏԸՀ: Երկու բողոք ներկայացվել է դատարան: Ներկայացված բողոքներում ISFED-ն հիմնականում դիմել է հայտնաբերված խախտումը վերացնելու և նախագահին, քարտուղարին և ընտրական համապատասխան հանձնաժողովների մյուս անդամներին պատասխանատվության ենթարկելու առնչությամբ:

▪ Երկարաժամկետ դիտորդներն արձանագրել են ընդհանուր 11 դեպք, որոնք ընդգրկել են պետական միջոցների օգտագործում հիմնականում իշխող կուսակցության օգտին՝ պետական և տեղական բյուջեներում փոփոխություններ կատարելու և նախընտրական քարոզարշավում չլիազորված անձանց մասնակցության միջոցով: Այդուհանդերձ, ISFED-ն չի արձանագրել պետական միջոցների հաճախադեպ կամ մեծամասշտաբ չարաշահումներ նախընտրական քարոզարշավի ընթացքում:

▪ Խմբային/ընտանեկան քվեարկությունների դեպքեր արձանագրվել են 4% դիտարկումներում, ներառյալ գյուղական տարածքների 5% և քաղաքային տարածքների 2% ընտրատեղամասերում:

**Միջադեպերի վերլուծություն**

Թեև միջազգային դիտորդական առաքելությունները տրամադրում են իրենց գնահատականը ընտրությունների օրվա ավարտից հետո հրապարակվող զեկույցներում (նախնական հայտարարություն, վերջնական զեկույց), ներպետական կազմակերպությունները կարող են երբեմն օգտվել իրենց առանձնահատուկ կարգավիճակից և արդեն ընտրություններին նախորդող օրը կամ ընտրությունների օրվա ընթացքում հրապարակվող զեկույցներում ներկայացնել իրենց վերլուծությունը:

**Հղում միջազգային չափանիշներին**

Միջազգային չափանիշներին (ստանդարտներին) կարելի է հղում կատարել դեպքերի առնչությամբ զեկույցի պատրաստման ընթացքում՝ առաջին հերթին ներկայացնելով փաստական հանգամանքները, այնուհետև՝ նշելով, թե որ միջազգային նորմն է խախտվել:

**Բարեխիղճ գործելակերպ. հղում միջազգային չափանիշներին**

▪ Ընդդիմադիր կուսակցության ակտիվիստներից մեկը օգոստոսի 22-ին կալանքի էր վերցվել մայրաքաղաքում: Ոստիկանությունը չէր տրամադրել տեղեկություններ վերջինիս կալանավորելու հիմքի և առաջադրվող մեղադրանքների վերաբերյալ:

▪ Նախընտրական շրջանում բազմաթիվ հաղորդումներ էին ստացվել ընդդիմադիր քաղաքական կուսակցությունների համակիրների և վերջիններիս ազգականների կալանավորման և ձերբակալության դեպքերի մասին:

▪ Ջանցանքի համար ձերբակալված յուրաքանչյուր ոք ունի պատշաճ իրավական ընթացակարգի իրավունք, և վերջինիս հիմնարար իրավունքները պետք է պահպանվեն կալանքի վերցված լինելու ժամանակահատվածում: Այդուհանդերձ, վերը նշված դեպքերում անազատության մեջ գտնվող անձանցից և ոչ մեկին չի

տրվել հնարավորություն՝ օգտվելու պատշաճ իրավական ընթացակարգի և արդար դատաքննության իրենց իրավունքից՝ անկախ այն հանգամանքից, թե նրանց առաջադրված մեղադրանքներն ինչ բնույթ են կրում՝ վարչակա՞ն, թե՞ քրեական:

▪ ԿԸՀ-ն չկարողացավ կայացնել որևէ որոշում Բենդերում թիվ 3 ՏԸՀ ստեղծելու և ձախակողմյան ափում գտնվող տարածքային վարչական միավորում թիվ 37 ՏԸՀ ստեղծելու վերաբերյալ, և չօգտվեց այս շրջաններում հատուկ ԸՏ-ներ բացելու իր իրավունքից այն ժամանակահատվածում, որը սահմանվել էր ՏԸՀ-ներ ձևավորելու նպատակով: Միևնույն ժամանակ, ընտրությունների օրացույցի դրույթներով (10 օր) սահմանված ժամանակահատվածի զգալի ուշացումով, այն է՝ 2014 թվականի նոյեմբերի 4-ին միայն, ԿԸՀ-ն որոշում կայացրեց, որ Մերձդնեստրի շրջանի ընտրողները կարող էին իրագործել իրենց քվեարկելու իրավունքը ընտրողների լրացուցիչ ցուցակներով թվով 26 ԸՏ-ներում, որոնք արդեն ստեղծվել էին հետևյալ ընտրատարածքներում՝ Քահուլ (1), Քիշնև (5), Անենիի Նոյ (3), Դուբասարի (9), Կաուսենի (3), Կրիուլենի (1), Ստեֆան Վոդա (1), Ռեզինա (1), Բալթի (1) և Ֆլորեյթի (1):

▪ *2004 թվականի սահմանադրական փոփոխությունների վերահաստատումից հետո խորհրդարանի անդամները կորցնում են իրենց մանդատը, եթե չեն միանում քաղաքական կուսակցության խորհրդարանական այն խմբակցությանը կամ լքում են այն նույն խմբակցությունը, որի կողմից ընտրվել են: Սա հակասում է ԵԱՀԿ 1990 թվականի կոպենհագենյան փաստաթղթի 7.9 պարբերության դրույթներին և շարունակաբար քննադատության է ենթարկվել Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) կողմից՝ Ուկրաինայի 2004 թվականի սահմանադրության համատեքստում:*

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելություն, Վերջնական զեկույց՝ խորհրդարանական արտահերթ ընտրություններ, 2014 թվականի հոկտեմբերի 26)

▪ *Սեպտեմբերի 25-ին ԿԸՀ-ի մամուլի հետ կապերի աշխատանքային խումբը հրապարակեց հայտարարություն, որում կոչ էր անում երեք ԶԼՄ-ների՝ Ադրբեջանական Ազատություն ռադիոկայանի ծառայությանը (Ազադլիքին), Բրիտանական հեռարձակող ընկերությանը (BBC-ին) և Ամերիկայի ձայնին վերջ դնել Ընտրական օրենսգրքի 74.4.1 հոդվածի խախտումներին, որն արգելում է օտարերկրյա իրավաբանական անձանց կողմից քարոզարշավ իրականացնելը և քարոզարշավի նյութեր հրապարակելը:*

(ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելություն, Վերջնական զեկույց՝ նախագահական ընտրություններ, 2014 թվականի հոկտեմբերի 9):

**Տեքստի, նկարների և գծապատկերների համաչափ օգտագործումը**

Առավել կարևոր տեղեկությունները պետք է ներկայացվեն տեքստային ձևով: Չպետք է օգտագործվեն չափից շատ վիզուալ նյութեր և գրաֆիկական միջոցներ, այդ թվում՝ նաև աղյուսակներ: Թեև շրջանաձև կամ սյունակաձև գծապատկերները կարող են պատկերավոր ներկայացնել տվյալները, դրանք երբեք չպետք է ներկայացվեն առանց տեքստային բացատրության, որը կօգնի ընթերցողին հասկանալ այդ տվյալների կարևորությունը՝ ներկայացնելով, թե քանի անգամ և երբ են տեղի ունեցել միջադեպերը, ինչպես է իրականացվել «փրայմ թայմում» քաղաքական հակառակորդների ծրագրերի լուսաբանումը ԶԼՄ-ների կողմից, որքանով են տարբերվում ձայների զուգահեռ հաշվարկման արդյունքում ստացված տվյալները ընտրությունների պաշտոնական արդյունքներից:

Անհրաժեշտ է խուսափել նյութը նկարներով ծանրաբեռնելուց: Զեկույցում փաստական հանգամանքները պետք է շարադրվեն հիմնականում տեքստային ձևով: Նկարներ ներառելու դեպքում անհրաժեշտ է զգուշությամբ հաշվի առնել, թե որ նկարներն օգտագործել զեկույցում: Անհրաժեշտ է պահպանել այլ անձանց անհատական տվյալների պաշտպանության/անձեռնմխելիության իրավունքը: (Տե՛ս Եվրոպայի խորհրդի (1980թ.) Անհատական տվյալների մեքենայական մշակման հարցում մասնավոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիան): Ներքոհիշյալ գծապատկերը կարող է դիտվել որպես տեքստի, աղյուսակների և նկարների համաչափ օգտագործման խելամիտ օրինակ:

Գծապատկեր 9. Քվեարկության գործընթացը




<table>
<tr><td colspan="3">ISFED's monitoring has found that polling process was peaceful and no major irregularities took place At some election precincts violations of inking and vote secrecy procedures were detected; however, these irregularities were often mediated by means of verbal reproof.</td><td colspan="3">ISFED-ի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ քվեարկությունը խաղաղ է ընթացել՝ առանց լուրջ ընտրախախտումների: Որոշ ընտրատեղամասերում արձանագրվել են թանաքանշման և քվեարկության գաղտնիության ընթացակարգի խախտումներ: Այդուհանդերձ, այդ խախտումները հաճախ կարգավորվել են բանավոր զգուշացում կատարելու միջոցով:</td></tr>
<tr><td colspan="3">Opening procedures</td><td colspan="3">Բացման ընթացակարգը</td></tr>
<tr><td colspan="3">The polling station was ready for the first voter by 8:00 am</td><td colspan="3">Ընտրական տեղամասը պատրաստ էր սկսել քվեարկության գործընթացն առավոտյան ժամը 8:00 -ին</td></tr>
<tr><td colspan="3">Tbilisi – 99.4%</td><td colspan="3">Թբիլիսի՝ 99.4%</td></tr>
<tr><td colspan="3">Mtskheta – 83,3%</td><td colspan="3">Մծխեթա՝ 83,3%</td></tr>
<tr><td colspan="3">Khoni – 96,3%</td><td colspan="3">Խոնի՝ 96,3%</td></tr>
<tr><td colspan="3">Tkibuli – 97,3%</td><td colspan="3">Թքիբուլի՝ 97,3%</td></tr>
<tr><td>Gori</td><td>Terjola</td><td rowspan="2">100%</td><td>Գորի</td><td>Տերխոլա</td><td rowspan="2">100%</td></tr>
<tr><td>Akhmeta</td><td>Ozurgeti</td><td>Ախմեթա</td><td>Օզուրգեթի</td></tr>
</table>

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Khulo | Baghdati | | Խուլո | Բաղդաթի | |
| Lanchlihuti | Rustavi | | Լանչլիհութի | Ռուսթավի | |

Աղբյուրը՝ www.isfed.ge

**6. Եզրահանգումներ (հաշվետվություններ նախնական դիտարկումների և եզրակացությունների վերաբերյալ, վերջնական զեկույցներ)**

**Եզրահանգումներն ինքնին դիտարկումներ չեն, սակայն հիմնված են դրանց վրա**

Եզրահանգումները սովորաբար ներկայացվում են զեկույցների հիմնական մասերում, որոնք հրապարակվում են ընտրություններին հաջորդող օրը (նախնական հայտարարություն, Վերջնական զեկույց): Եզրահանգումները դիտարկումների սոսկ կրկնությունը չեն, որոնք դուք ներկայացնում եք միջանկյալ զեկույցներում: Եզրահանգումներում դիտարկումները համադրվում են առավել լայն համատեքստում՝ մատնանշելով, թե ինչպիսի հետևանքներ կարող են դրանք ունենալ: Եզրահանգումները դիտարկումների համագումար չեն. դրանք պետք է տրամաբանորեն բխեն կատարված դիտարկումներից և պետք է վեր հանեն ստացված տվյալների միտումները կամ ուղղությունները:

Ստորև ներկայացված են մի քանի օրինակներ այն մասին, թե ինչպես է հնարավոր դիտարկումները փոխակերպել եզրահանգումների:

**Բարեխիղճ գործելակերպ I. դիտարկումների վերլուծության վրա հիմնված եզրահանգումներ**

**Դիտարկումներ**

▪ Դիտորդները մասնակցել են ԿԸՀ-ի բոլոր նիստերին, որոնք ԿԸՀ-ն անցկացրել է բարձր մակարդակով՝ օրենքով սահմանված կարգով, 48 ժամվա ընթացքում իր կայքում հրապարակելով նիստերի արձանագրությունները: Այդուհանդերձ, X կուսակցության և Y կուսակցության պահանջների մասով որոշում կայացնելու ժամանակ ԿԸՀ-ի նիստերն ընթացել են լարված մթնոլորտում, և ԿԸՀ-ի անդամները գրեթե միշտ քվեարկել են՝ ելնելով նրանից, թե որ կուսակցությանն են հարում:

**Եզրահանգում**

▪ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գումարել է կանոնավոր նիստեր, սակայն քաղաքական առումով վիճելի բոլոր հարցերում շարունակել է կուսակցությունների նկատմամբ դրսևորել կողմնակալություն (կուսակցական պատկանելիության պատճառով շարունակել է տարակարծիք լինել քաղաքական առումով վիճելի բոլոր հարցերի շուրջ):

**Բարեխիղճ գործելակերպ II. դիտարկումների վերլուծության վրա հիմնված եզրահանգումներ**

**Դիտարկումներ**

▪ Նախագահական ընտրությունների քարոզարշավը պաշտոնապես մեկնարկեց մարտի 24-ին: Նախքան այս ամսաթիվը՝ երեք թեկնածուներ սկսեցին հանդիպումներ ունենալ քաղաքացիների հետ՝ երկրով մեկ իրականացվող իրենց պարբերական այցերի ընթացքում: Մարտի կեսերին գործող նախագահն արդեն այցելել էր թվով 70 քաղաք և գյուղ: Մարտի 23-ին նա ներկայացրեց իր

նախընտրական ծրագիրը: Ավելին, գործող նախագահը հրապարակավ տարածել էր իր կուսակցությանը վերաբերող տվյալներ իր պաշտոնավարման ընթացքում: Մարտի 16-ին նախագահի թեկնածու X-ը կազմակերպեց 50 հոգանոց հանդիպում մայրաքաղաքում: Մարտի 21-ին Y կուսակցությունը 350 հոգանոց հավաք անցկացրեց հարևան քաղաքում, որպեսզի ամրապնդի նախորդ ընտրություններից ի վեր գրանցած նվաճումները և կոչ անի էթնիկ փոքրամասնություններին քվեարկել Z նախագահի թեկնածուի օգտին: Նախագահական բոլոր չորս թեկնածուները և վերջիններիս կուսակցությունները հավաքներ անցկացրեցին մարտին 24-ին՝ քարոզարշավի մեկնարկը պաշտոնապես ազդարարելու նպատակով:

**Եզրահանգում**

Քարոզարշավն ակտիվ էր ընթանում՝ մեծ թվով հավաքներով և ընտրողների հետ հանդիպումներով: Այդուհանդերձ, բացառությամբ B թեկնածուի, մյուս երեք թեկնածուները սկսել էին ծավալել իրենց գործողությունները քարոզարշավի՝ օրենքով թույլատրված պաշտոնական մեկնարկից առաջ:

**Բարեխիղճ գործելակերպ III. դիտարկումների վերլուծության վրա հիմնված եզրահանգումներ**

**Դիտարկումներ**

▪ Հաշվետու ժամակաշրջանում ԿԸՀ-ում, պաշտոնական տվյալների համաձայն, ստացվել է 78 բողոք, որոնցից 10-ը ներկայացվել են ընտրությունների օրը: ԿԸՀ-ն կայացրել է 38 որոշում այս բողոքների առնչությամբ (վեց բողոք բավարարվել է, յոթ բողոք բավարարվել է մասնակիորեն, 24 բողոք մերժվել է անհիմն լինելու կամ ուշ ներկայացնելու պատճառաբանությամբ, և մեկ բողոքի դեպքում պարզվել է, որ վիճարկվող առարկան այլևս գոյություն չունի), 12 բողոք վերադարձվել է, քանի որ դրանցում նշված հանգամանքները ենթակա չէին վիճարկման, 21 բողոք ներկայացվել է քննարկման ըստ իրավասության ոլորտի, որպեսզի պարզվեն իրավախախտման բաղկացուցիչ տարրերը, վեց բողոք հետ է վերցվել դիմումատուների կողմից, մեկ բողոք չի ուսումնասիրվել, քանի որ այն ներկայացվել է դատական հայց հարուցելուն զուգահեռ:

**Եզրահանգում**

▪ ԿԸՀ-ն ուսումնասիրում է վիճարկվող բողոքները՝ պահպանելով մրցակցային սկզբունքը: Ըստ այդմ, վիճարկվող բողոք ներկայացրած կուսակցությունը և գործի կողմ հանդիսացող կուսակցությունը ներկայացնում են բողոքին առնչվող տվյալներ և ապացույցներ: Պրոմո-ԼԵՔՍ ընկերությունը նշել է, որ ընտրապայքարի մասնակիցների՝ քվեարկելու իրավունք ունեցող ներկայացուցիչները հիմնականում փորձառու իրավաբաններ են, ինչը օգնում է բարձրացնել բանավեճերի մակարդակը: Մյուս կողմից, վիճարկվող բողոքների ներկայացման և ուսումնասիրության համար օրենքով սահմանված սեղմ ժամկետները թույլ չեն տվել, որ ԿԸՀ-ի անդամները պատշաճ կերպով քննեն և հիմնավորեն որոշ գործեր:

**Բարեխիղճ գործելակերպ IV. դիտարկումների վերլուծության վրա հիմնված եզրահանգումներ**

**Դիտարկումներ**

▪ ISFED-ի դիտորդները հաղորդել են ընտրական տեղամասում չլիազորված անձանց ներկայության երեք դեպքի, ինչպես նաև տեխնիկական փոքր թերությունների

մասին: Հատկանշական էր այն հանգամանքը, որ 19 շրջանների 73 ընտրական տեղամասերում 140 ընտրող գնացել էր իր համապատասխան ընտրատեղամաս և պարզել, որ գրանցված չի ընտրացուցակում: Նշված 140 ընտրողներից 53 հոգի նշել էր, որ քվեարկել է 2014 թվականի հունիսի 15-ին՝ ընտրությունների առաջին փուլում: Հարկ է նշել, որ ընտրությունների երկրորդ փուլում, առաջին փուլի համեմատությամբ, զգալիորեն նվազել էին թերություններն ամփոփ արձանագրություններում:

**Եզրահանգում**

▪ ԶՔՀ մեթոդաբանությամբ ստացված տվյալների վերլուծության հիման վրա ISFED-ն եզրակացրել է, որ քվեարկության և քվեների հաշվարկման գործընթացներն իրականացվել են հանգիստ մթնոլորտում: ISFED-ի դիտորդների հաղորդած խախտումների մեծ մասը չեն կրել լուրջ բնույթ, դրանք ունեցել են ընթացակարգային բնույթ և չէին կարող ազդել ընտրությունների վերջնական արդյունքի վրա:

**Խուսափե՛ք առանձին դեպքեր ներկայացնելուց**

Զեկույցում պետք է անդրադարձ կատարվի առանձին դեպքերին միայն բացառիկ հանգամանքներում:

**Բարեխիղճ գործելակերպ. առանձին բացառիկ դեպք**

▪ Ընտրություններին հաջորդող օրը պարոն X-ը վիճարկեց ընտրությունների նախնական արդյունքները, մայրաքաղաքում կազմակերպեց բողոքի ցույցեր և այցելեց մայրաքաղաքից դուրս մի քանի քաղաքներ: Նա պահանջում էր, որ ընտրությունների հետ կապված բոլոր խախտումներին դատական կարգով ընթացք տրվի և կայացվի նախագահական ընտրությունների երկրորդ փուլ, կամ, որպես այլընտրանք, կառավարությունը հրաժարական տա և անցկացվեն խորհրդարանական արտահերթ ընտրություններ: Գլխավոր հեռարձակող լրատվամիջոցները, այդ թվում՝ նաև հանրային հեռուստաընկերությունը, հետընտրական միջադեպերը լուսաբանելիս ցուցաբերել էին կողմնակալ (բառացիորեն՝ ընտրողական) մոտեցում՝ նկատելի կերպով ձգտելով սահմանափակել ընտրությունների անցկացման վերաբերյալ քննադատական տեսակետների լուսաբանումը: Նրանք հաճախ բողոքի ցույցերը լուսաբանել էին ընդհանրական ոճով, իսկ երբեմն էլ հաղորդել էին տեղեկություններ բողոքի այն ցույցերի մասին, որոնք լուրջ բնույթ չէին կրում:

**Հղում միջազգային չափանիշներին**

Եթե արձանագրվում է, որ ընտրությունների որևէ ասպեկտ հակասում է միջազգային չափանիշներին կամ բարեխիղճ գործելակերպին, ապա անհրաժեշտություն է առաջանում այն առանձին նկարագրել:

**Բարեխիղճ գործելակերպ. հղում միջազգային չափանիշներին**

**Քարոզարշավի միջավայրը**

▪ Պետական հաստատությունների և կուսակցության շահերի միջև շարունակական բնույթ կրող անհստակությունը հակասել է 1990 թվականի ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերության դրույթներին և Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական գործընթացներում բարեխիղճ գործելակերպի կանոնագրքի» I.2.3 պարբերության դրույթներին: Ընտրակաշառքների և պետական հատվածի աշխատողների նկատմամբ ճնշումների մասին պնդումները, այդ թվում՝ երթերին

մասնակցելուն հարկադրելու և աշխատանքից ազատման դեպքերը, որոնք համապատասխանել են իրականությանը, բացասական ազդեցություն են ունեցել նախընտրական մթնոլորտի վրա:

## 7. Առաջարկությունները (վերջնական զեկույց)

Սովորաբար վերջնական զեկույցներն են, այլ ոչ՝ միջանկյալ զեկույցները, որ պարունակում են առաջարկությունների (recommendations) համար նախատեսված առանձին բաժին: Սա ձեր վերջնական զեկույցի ամփոփիչ բաժինն է: Այն շարադրվում է հիմնական մասից հետո, սակայն հավելվածներից առաջ, որոնցում կարող են ներկայացվել ընտրությունների արդյունքները կամ լրատվամիջոցների մոնիթորինգի աղյուսակները: Առաջարկությունների միջոցով դիտորդները կարող են հրապարակել իրենց տեսակետները և առաջարկել գործողությունների իրականացման ուղղություններ: Առաջարկություններում շարադրվում են խորհուրդներ այն մասին, թե ինչպես կարելի է բարելավել ընդհանուր գործընթացը կամ գործընթացի որոշ տարրեր: Դրանք ընդամենը առաջարկներ են և չեն սահմանում որևէ իրավական պարտավորություն այն անձանց համար, ում հասցեագրված են: Չկա իրավական որևէ հետևանք, եթե դրանք չեն իրագործվում:

Առաջարկություններն ներկայացվում են երկրում ընտրությունների անցկացման գործընթացը բարելավելու նպատակով, և որպեսզի ընտրությունները լիարժեք համահունչ լինեն Վենետիկի հանձնաժողովի Ընտրական գործընթացներում բարեխիղճ գործելակերպի կանոնագրքին, ԵԱՀԿ հանձնառություններին և ժողովրդավարական ընտրությունների մասին միջազգային այլ չափանիշներին:

**Առաջարկությունների բնույթը (էությունը)**

Առաջարկությունները (recommendations) հիմնված են ներպետական օրենսդրության և կիրառելի միջազգային և տարածաշրջանային պարտավորությունների, սկզբունքների, հանձնառությունների և բարեխիղճ գործելակերպերի վրա: Առաջարկությունները ձևակերպվում են փոփոխություններ խրախուսելու, ընտրական օրենսդրության մեջ բարեփոխումներ կատարելու և գործընթացի առանձին ասպեկտները փոփոխելու նպատակով: Որպես այդպիսին՝ Առաջարկությունների ձևակերպումը պետք է լինի ճշգրիտ, պարզ և հստակ:

**Առաջարկությունների համարակալումը**

Մեկից ավելի առաջարկության ներկայացման դեպքում խորհուրդ է տրվում համարակալել դրանք, որպեսզի ընթերցողների համար դրանց հղում կատարելը լինի դյուրին:

**Բարեխիղճ գործելակերպ. առաջարկությունների հաջորդականությունը**

1. Իշխանությունները կարող են դիտարկել ընտրացուցակների ստուգում անցկացնելու հանգամանքը, այդ թվում՝ ընտրացուցակներում կատարված մուտքագրումները և Ներքին գործերի նախարարության բազայում առկա նախնական տվյալների մանրակրկիտ համեմատություն կատարելու հարցը:

2. Անհրաժեշտ է փոփոխել ընտրական օրենսդրությունը՝ ներառելու համար հատուկ դրույթներ, որոնք հստակ անդրադարձ են կատարում նախագահական ընտրություններում իրականացվող քարոզարշավի ժամանակ լրատվամիջոցների դերին:

3. ...

**Ենթավերնագրերը**

Առաջարկությունները պետք է ունենան ենթավերնագրեր, որոնց ներքո կներկայացվեն ընտրական գործընթացի առանձին հատվածներ (որպես կանոն, Հիմնական թիմերի համապատասխան վերլուծաբաններն են կազմում առաջարկություններ իրենց փաթեթի վերաբերյալ), որպեսզի ընթեցողները կարողանան առաջարկությունների բնույթի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել: Բացի այդ, կարելի է նաև մշակել առանձնակի կարևոր/առաջնահերթություն ունեցող առաջարկությունների շարք և այն ներկայացնել հենց սկզբում, որին կհաջորդեն համապատասխան ոլորտների մասով տրվող հատուկ առաջարկությունները: Սա կարելի է իրագործել հետևյալ կերպ:

**Բարեխիղճ գործելակերպ. ենթավերնագրեր**

**Առաջնահերթություն ներկայացնող առաջարկություններ**

1. Որպես մշտական մարմին, որը պատասխանատու է ընտրությունների ընդհանուր ընթացքի համար, ԿԸՀ-ն կարող է կանխատեսել և առավել արդյունավետ կերպով անդրադառնալ օրենքում առկա անորոշություններին կամ բացերին, և դա անել ընտրական գործընթացի շրջանակում հնարավորինս շուտ:

**Իրավական դաշտը**

2. Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ընտրական օրենսդրության մեջ առկա անորոշությունները վերացնելուն:

**Ընտրությունների համար պատասխանատու մարմինը**

3. Ընտրությունների համար պատասխանատու մարմնի աշխատանքների թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով ԿԸՀ-ն կարող է ուշադրություն դարձնել …

**Ընտրողների գրանցումը**

4. Իրավունքի վերականգնումը պահանջելու և հետևողական կերպով դրա կատարումն ապահովելու ուղղությամբ իրական հնարավորություն ընձեռելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ կատարել Ընտրողների ցուցակի մասին օրենքում:

**Քարոզարշավի ֆինանսավորումը**

5. Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ զեկույցների թափանցիկությունը և ճշմարտացիությունը բարելավելու նպատակով կարելի է փոփոխություններ կատարել օրենքում՝ վերահսկիչ և վերստուգիչ հստակ մեխանիզմներ ներդնելու, ինչպես նաև հնարավոր խախտումների դեպքում արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ սահմանելու համար:

**Ըղձական եղանակի գործածություն**

Քանի որ առաջարկություններում ներկայացվում են խորհուրդներ և առաջարկներ, ապա դրանք պետք է ձևակերպվեն ըղձական եղանակով: Ավելին, շարադրանքի լեզուն պետք է լինի առավելապես խորհրդատվական բնույթի՝ օգտագործելով «կարելի է»-ով կազմված նախադասություններ: Տեքստը չպետք է շարադրվի հրամայական ոճով՝ «պետք է»-ով կազմված նախադասություններով: Սա կարող է արվել հետևյալ կերպ.

**Բարեխիղճ գործելակերպ. ըղձական եղանակի կիրառում**

▪ Առաջարկվում է, որ...

▪ Կարելի է ուշադրություն դարձնել …

▪ Իշխանությունների կողմից կարող է դիտարկվել …

▪ Սահմանադրական դատարանի աշխատանքների թափանցիկությունը կբարելավվեր, եթե …

▪ Ընտրական օրենսգրքի՝ ընտրակեղծիքների վերաբերյալ դրույթները կարելի է վերանայել/փոփոխել …

**Դիտարկումները և եզրահանգումները՝ որպես հանձնարարականների հիմք**

Հանձնարարականները հիմնված են ձեր վերջնական զեկույցի հիմնական մասում շարադրված դիտարկումների և եզրահանգումների վրա: Օրինակ, եթե կատարել եք եզրահանգում այն մասին, որ «կուսակցությունների և քարոզարշավի ֆինանսավորմանն առնչվող օրենսդրության մեջ առկա են բացեր, անորոշություններ և ոչ համաչափ պատժամիջոցներ» և թվարկել եք այդ թերությունները ձեր վերջնական զեկույցի հիմնական մասում, ապա առաջարկությունը կարող եք ձևակերպել հետևյալ կերպ՝ «օրենքը կարելի է փոփոխել, որպեսզի այն ներկայացնի խախտումների և կիրառելի պատժամիջոցների սպառիչ ցանկ, որը կլինի համաչափ, արդյունավետ և տարհամոզիչ»: Որպեսզի հստակ կերպով ցույց տրվի կապը գոյություն ունեցող խնդրի և հանձնարարականի միջև, կարելի է կոնկրետ առաջարկությունը շարադրել զեկույցի բուն տեքստից հետո, որտեղ հղում է արվում տվյալ խնդրին (բացի զեկույցի վերջում ներկայացված առանձին բաժնից):

**Առաջարկությունները՝ որպես կոնկրետ առաջարկ ընտրական գործընթացի բարելավման ուղղությամբ**

Առաջարկությունները կարող են ունենալ շատ ընդհանրական ձևակերպումներ, սակայն ցանկալի է, որ դրանք պարունակեն շատ կոնկրետ և հստակ առաջարկներ ընտրական գործընթացի հետագա բարելավման ուղղությամբ: Առաջարկությունները կարող են պարունակել ընտրական օրենսդրության փոփոխությունների, ընտրական գործընթացների կազմակերպման գործելակերպերի կամ շահագրգիռ կողմերի աշխատանքների բարելավմանն ուղղված խորհուրդներ: Դրանցով կարող են նույնիսկ ընտրությունների աջակցմանն ուղղված կոնկրետ ծրագրեր առաջարկվել:

Հետևյալ նախադասությունն այդ նպատակին չի ծառայում:

▪ Բողոքների քննության ընթացքում ԸԸՀ-ի անդամները պետք է դադարեցնեն իրենց թշնամական վերաբերմունքը ընտրությունների դիտորդների նկատմամբ:

Որպես այլընտրանք, առաջարկությունը կարող էր ձևակերպվել ստորև նշված կերպով:

▪ Առկա է ԸԸՀ անդամների լրացուցիչ վերապատրաստման կարիք՝ հատկապես վարքագծի կանոնների կիրառության առումով:

**Առաջարկության հասցեատերերը**

Անհրաժեշտ է ձևակերպել առաջարկություններն ընտրական գործընթացներում ներգրավված իշխանության մարմինների, կուսակցությունների, քաղաքացիական հասարակության և միջազգային հանրության համար:

1. **Քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպությունները** կարող են ընտրողների իրազեկման լայնածավալ ծրագրեր իրականացնել՝ նախատեսված էթնիկ փոքրամասնությունների խմբերի համար:

2. **Կրթական հաստատությունները** կարող են ընտրողների կրթության տարրեր ներառել միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերում:

3. **Ընտրությունների համար պատասխանատու մարմինը** պետք է շարունակի էթնիկ փոքրամասնությանը պատկանող ԸԸՀ անդամների վերապատրաստումը:

4. **Կուսակցությունները** կարող են քաղաքական երկխոսություն նախաձեռնել փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ տեղական մակարդակով:

**Հանձնարարականների պատկերավոր (վիզուալ) ներկայացում**

Հանձնարարականները կարելի է համադրել տեղեկատվական բնույթ ունեցող գրաֆիկական միջոցների հետ, քանի որ վերջիններս օգնում են ուշադրություն գրավել և տեքստն ընթերցողի համար դարձնում են դյուրըմբռնելի:

**Գծապատկեր 10. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ առաջնահերթ հանձնարարականները**




**Աղյուսակի տեքստը հայերենով**

**Շրջանակների մեջինը**

| | |
|---|---|
| 5-year residency requirement | 5 տարվա բնակության պահանջ |
| 3,771 complaints and incidents | 3771 բողոք և միջադեպ |
| 2/3 members of DECs | ՏԸՀ-ների անդամների 2/3-ը |

**1.Ներդաշնակեցնել օրենսդրությունը և վերացնել թեկնածությունը ներկայացնելու սահմանափակումները**

Ընտրություններում որպես թեկնածու առաջադրվելը սահմանափակված է չափազանց երկար՝ հինգ տարվա բնակության պահանջով: Սահմանափակումներ են

գործում նաև մանդատի ազատության մասով: Անհրաժեշտ է վերացնել ընտրական դաշինքների մասով գործող սահմանափակումները:

**2. Հետաքննել բռնության դեպքերը**

Ներքին գործերի նախարարությունը օգոստոսի 25-ից հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում արձանագրել է թվով 3.711 դեպք՝ կապված ընտրություններին առնչվող բողոքների և միջադեպերի հետ: ԺՀՄԻԳ-ը դիտարկել է թվով 83 ցույց, որոնցից մի քանիսում թեկնածուներին արգելվել է ազատ կերպով քարոզարշավ անցկացնել:

**3. Երաշխավորել անկախություն՝ քաղաքական միջամտությունից**

Տեղական ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ-ների) երկու երրորդի անդամները փոխարինվել են այլ անձանցով, հիմնականում՝ թեկնածուներին առաջադրող կուսակցությունների կողմից: Կա վարկած, որ այս խոշոր փոփոխությունը մասամբ արդյունքն է այն լայնամասշտաբ կոռուպցիոն գործելակերպի, որն առկա է ընտրական սուբյեկտների շրջանում՝ ընտրական հանձնաժողովներին կառավարելու նպատակով:

Աղբյուրը՝ www.isfed.ge

**Տեղեկություններ ձեր կազմակերպության մասին**

Յուրաքանչյուր զեկույցի վերջում անհրաժեշտ է ներկայացնել կազմակերպության հակիրճ նկարագիրը: Վերջինս պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը:

- ► Ձեր կազմակերպության ամբողջական անվանումը
- ► Ձեր տեսլականը/առաքելության նպատակները
- ► Տեղեկություններ կազմակերպության հիմնադրման/հիմնադրումից ի վեր զարգացման մասին
- ► Կատարված դիտորդական աշխատանքների նկարագրությունը (այդ թվում՝ հիմնական աշխատանքների ուղղությունը)
- ► Ընտրությունների աջակցմանն ուղղված առավելագույնս կարևոր ծրագրերը
- ► Դիտորդական աշխատանքների հիմնական ոլորտները
- ► Ձեր ֆինանսավորման աղբյուրները
- ► Հղում ձեր կայքին
- ► Կոնտակտային տվյալներ և կոնտակտային անձինք

Ստորև ներկայացված օրինակը ցույց է տալիս, թե ինչպես կազմել ընտրությունների դիտորդական կազմակերպության մասին տեղեկությունների բաժինը:

**Գծապատկեր 11. Դիտորդական կազմակերպության մասին տեղեկությունների օրինակ**

**ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Ի ՄԱՍԻՆ**

Կազմակերպության ամբողջական անվանումը՝

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ՝
**ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ**

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ-ի գլխավոր հաստատությունն է, որն աջակցություն է ցուցաբերում մասնակից պետություններին «մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ լիարժեք հարգանք ապահովելու,

իրավունքի գերակայությունը պահպանելու, ժողովրդաարավության սկզբունքները խթանելու և (...) ժողովրդավարական հաստատություններ կառուցելու, ամրապնդելու և պաշտպանելու, ինչպես նաև հասարակության շրջանում հանդուրժողականություն խթանելու ուղղությամբ» (Հելսինկյան գագաթաժողովի փաստաթուղթ, 1992 թվական): Այն հայտնի է որպես ԵԱՀԿ մարդու իրավունքների ուղղություն:

Կազմակերպության պատմությունը. առաքելության սահմանում

Լեհաստանի Վարշավա քաղաքում տեղակայված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ստեղծվել է 1990 թվականի փարիզյան գագաթաժողովի արդյունքում՝ որպես Ազատ ընտրությունների գրասենյակ և սկսել է գործել 1991 թվականի մայիսին: Մեկ տարի անց Գրասենյակի անունը փոխվեց, որպեսզի արտացոլի մարդու իրավունքները և ժողովրդավարացումը ներառող վերջինիս ընդլայնված մանդատը: Այսօր այն ունի ավելի քան 130 աշխատակից:

Ներգրավվածությունն ընտրություններում

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը ընտրությունների դիտորդական առաքելություն իրականացնող առաջատար կազմակերպությունն է Եվրոպայում: Յուրաքանչյուր տարի այն համակարգում և կազմակերպում է հազարավոր դիտորդների տեղակայման գործընթացը՝ գնահատելու համար, թե որքանով են ԵԱՀԿ տարածքում անցկացվող ընտրությունները համապատասխանում ԵԱՀԿ հանձնառություններին, միջազգային այլ պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների ստանդարտներին և ներպետական օրենսդրության պահանջներին: Գրասենյակի եզակի մեթոդաբանությունը թույլ է տալիս հանգամանալից ծանոթանալ ընտրական գործընթացին՝ իր բոլոր ասպեկտներով: Աջակցման ծրագրերի միջոցով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն օժանդակում է մասնակից պետություններին բարելավել իրենց ընտրական համակարգը:

Գործունեության այլ ոլորտները

Գրասենյակի՝ ժողովրդավարացմանն ուղղված գործունեությունը ներառում է հետևյալը. օրենքի գերակայություն, աջակցություն օրենսդրական ոլորտում, ժողովրդավարական կառավարում, տարաբնակեցում և տեղաշարժվելու ազատություն, գենդերային հավասարություն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը տարեկան կտրվածքով իրագործում է նպատակային աջակցման մի շարք ծրագրեր՝ ձգտելով զարգացնել ժողովրդավարական կառույցները:

ԺՀՄԻԳ-ի ողջ գործունեությունն իրականացվում է ԵԱՀԿ մասնակից պետությունների, ԵԱՀԿ հաստատությունների և ոլորտային ծրագրերի, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների հետ սերտ համաձայնեցման և համագործակցության պայմաններում:

Հղում՝

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռք բերել ԺՀՄԻԳ-ի կայքից (www.osce.org/odihr):

Հղում կազմակերպության կայքին

## 4.3. ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ընտրություններին առնչվող փաստաթղթերում, ինչպես օրինակ՝ դիտորդական զեկույցներում օգտագործվող լեզվական ձևակերպումները մեծ նշանակություն ունեն: Հիմնական խումբը պետք է զգուշորեն կշռադատի յուրաքանչյուր բառ: Զեկույցները հանրությանը հասանելի դարձնելուց հետո հնարավոր չէ դրանք հետ կանչել: Ստորև ներկայացված բաժնում ներկայացվում են խորհուրդներ այն մասին, թե ինչպես կազմել զեկույցները, որ դրանք լինեն դյուրըմբռնելի և հեշտ ընթեռնելի: Տրվում են խորհուրդներ այն մասին, թե ինչ է նշանակում հստակ, ուղիղ, պարզ լեզվական շարադրանք, ինչպես խուսափել սուբյեկտիվ հայտարարություններից և ներկայացնել փաստեր ու թվեր:

**Պարզ լեզվական ձևակերպումներ**

Համոզվե՛ք, որ զեկույցը հստակ է գրված, և այն կարող է հասկանալի լինել այն անձանց համար, ովքեր ընտրական ոլորտի փորձագետ չեն: Զեկույցը պետք է ընթերցողների համար առաջին իսկ ընթերցումից լինի դյուրըմբռնելի: Ընտրությունների վերաբերյալ զեկույցներում օգտագործե՛ք պարզ ձևակերպումներ:

Պարզ խոսքը հստակ, ուղիղ ձևակերպված շարադրանք է, որում գործածվում են միայն անհրաժեշտ թվով բառեր: Այն զերծ է ժարգոնից և հազվադեպ կիրառվող բառերից ու եզրույթներից: Զեկույցում օգտագործվում է համապատասխան տերմինաբանություն այնպիսի եղանակով, որը լինի ընկալման համար մատչելի: Պարզ խոսքի նպատակը միտքը փոխանցելն է, այլ ոչ բարդ ձևակերպումներով ընթերցողին շեղելը: Այն բացառում է անհարկի արտահայտությունների և գիտաբառերով ծանրաբեռնված նախադասությունների գործածությունը, դրանում չկան չափազանցություններ, այն հիմնված է փաստերի վրա, սեղմ է և առնչվում է բուն խնդրին:

**Կարճ նախադասություններ և սեղմ պարբերություններ**

Զեկույցներն առավել հստակ կլինեն, եթե կազմվեն կարճ նախադասություններով, պարբերություններով և բաժիններով: Սկզբունքորեն վերլուծաբանները պետք է ձգտեն կազմել միջինում 12 բառից բաղկացած նախադասություններ՝ խուսափելով 25-ից ավելի բառ պարունակող նախադասություններից: Յուրաքանչյուր պարբերությունում անհրաժեշտ է անդրադառնալ միայն մեկ թեմայի, իսկ պարբերությունները պետք է ձևակերպվեն 10 կամ 12 տողի սահմանում: Բաժինները չպետք է անհիմն կերպով երկարացվեն. երկուսից երեք էջը (վերջնական զեկույցի դեպքում) յուրաքանչյուր բաժնի համար լիովին բավարար է: Այդ կերպ ընթերցողը հեշտությամբ կհասկանա այն միտքը, որը փորձում եք փոխանցել:

<u>Փորձե՛ք խուսափել նախադասությունների նմանօրինակ շարադասությունից:</u>

▪ Այս դրույթով առաջադրվող սահմանափակման նպատակն է արգելել քարոզարշավի նյութերի տեղադրումն այն հաստատությունների և շենքերի վրա, որոնք օրենքով պարտավոր են պահպանել քաղաքական անաչառության սկզբունքը և որոնք հանրության կողմից պետք է ընկալվեն որպես քաղաքականապես չեզոք: (33 բառ)

Այս եղանակով միտքն առավել սահուն է փոխանցվում:

▪ Ընտրական օրենսգրքի 9-րդ հոդվածով արգելվում է նախընտրական պաստառների տեղադրումը կառավարական շենքերին: (11 բառ)

▪ Պետական հաստատությունները «պարտավոր են պահպանել քաղաքական անաչառություն դրսևորելու սկզբունքը»: (9 բառ)

▪ Այդ կերպ հանրությունը կարող էր դրանք ընկալել որպես քաղաքականապես չեզոք: (10 բառ)

**Հիմնական ուղերձը**

Վերլուծաբանները պետք է խուսափեն կամ նվազագույնի հասցնեն այնպիսի արտահայտությունների գործածությունը, որոնք նախադասությանը որևէ լրացուցիչ իմաստ չեն հաղորդում: Փորձե՛ք խուսափել այնպիսի արտահայտություններ օգտագործելուց, ինչպիսիք են՝ «Հարկ է նշել, որ…» / «Ուշագրավ է, որ…» / «Անհրաժեշտ է ընդգծել, որ…»: Այս բոլոր արտահայտությունները շեղում են ընթերցողին բուն մտքից:

Խուսափե՛ք հետևյալ ձևակերպումից:

▪ **Ուշագրավ է,** որ Թխիլիսցկարո գյուղում տեղի ունեցած միջադեպի նախորդ օրը «Վրացական երազանք» կուսակցությունը ժողովրդի հետ հանդիպում էր ունեցել Թելավիում:

Նախադասությունն առավել ծանրակշիռ կլինի, եթե ձևակերպվի հետևյալ կերպ:

▪ Թխիլիսցկարո գյուղում տեղի ունեցած միջադեպի նախորդ օրը «Վրացական երազանք» կուսակցությունը ժողովրդի հետ հանդիպում էր ունեցել Թելավիում:

Խուսափե՛ք կրավորական սեռով կազմված նախադասություններից:

Կրավորական սեռով կազմված ձևակերպում օգտագործելու դեպքում պարզ չէ, թե ով է հեղինակը/որն է աղբյուրը, ուստի բազմաթիվ կարևոր փաստեր ընթերցողի համար անհասկանալի են մնում:

Խուսափե՛ք հետևյալ տիպի ձևակերպումներից:

▪ Կատարվել են լրագրողական բազմակարծությունը խթանելուն ուղղված կարևոր օրենսդրական փոփոխություններ, որոնք դրականորեն են գնահատվել:

Նման նախադասությունները ընթերցողի մոտ շատ հարցեր են առաջացնում. ո՞վ է ներկայացրել օրենսդրական փոփոխությունները: Ո՞վ է դրանք դրականորեն գնահատել: Արդյո՞ք մենք խոսում ենք նույն անձի/սուբյեկտի մասին:

Ստորև ներկայացված ձևով նախադասությունն առավել պարզ է հնչում:

▪ Խորհրդարանն ընդունել է լրագրողական բազմակարծությունը խթանելուն ուղղված օրենսդրական փոփոխություններ, որոնք ընտրությունների դիտորդները դրականորեն են գնահատել:

Ենթական, ստորոգյալը և խնդիրը հաջորդում են իրար:

Վերլուծաբանները պետք է նախադասությունները ձևակերպեն այնպես, որ դրանք լինեն տրամաբանական, հաջորդական և դյուրըմբռնելի: Դրանք պետք է բուն միտքն արտահայտեն և այն չքողարկեն բարդ շարահյուսական կամ խճճված կառուցվածքների ներքո:

Խուսափե՛ք հետևյալ բնույթի ձևակերպումներից:

▪ Ընտրական օրենքը նախատեսում է հնարավորություն՝ վաղաժամկետ դադարեցնելու ընտրական հանձնաժողովների անդամների լիազորությունները, սակայն բացառությամբ օրենքով ուղղակիորեն սահմանված դեպքերում:

Ստորև ներկայացված ձևով նախադասությունն ավելի պարզ է հնչում:

▪ Ընտրական օրենքով թույլատրվում է ընտրական հանձնաժողովի անդամների իրավասությունների վաղաժամկետ դադարեցումը:

**Միանման ձևակերպումներ**

Ցանկալի է, որ միևնույն դեպքին անդրադառնալու ժամանակ վերլուծաբաններն օգտագործեն միևնույն քերականական ձևը: Միանման շարադասություն օգտագործելը

հնարավորություն է ընձեռում ժողովել մտքերը և ընթերցողի համար նյութն ըմբռնելը դյուրին է դարձնում:

▪ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն աշխատանքներն իրականացրել է բարձր մակարդակով և, չնայած սահմանափակ ռեսուրսներին, կարողացել է պահպանել օրենքով սահմանված վերջնաժամկետները:

▪ Իշխանությունները զգալի ջանքեր են գործադրել ընտրողների ցուցակներում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու ուղղությամբ:

▪ Երկու թեկնածուները՝ գործող նախագահը և ընդդիմության առաջնորդը, բողոքարկել են այս ընտրությունները:

**Փաստեր և թվեր**

Վերլուծաբանը՝ որպես քաղաքականապես չեզոք դիտորդ, պետք է ձեռնպահ մնա պաշտոնի հավակնող որևէ թեկնածուի, կուսակցության, խմբի, շարժման կամ այլ միավորման նկատմամբ կողմ կամ դեմ դիրքորոշում արտահայտելուց: Վերլուծաբանը պետք է բացառապես ներկայացնի փաստեր՝ չեզոք, հստակ և հակիրճ ձևակերպմամբ:

**Ավելորդ բնութագրիչներ**

Լրացուցիչ կամ հատուկ մտածված բարդ բառերը (օրինակ՝ բացարձակ, միանշանակ) սովորաբար թուլացնում են շարադրանքի ազդեցությունը: Եթե դրանք գործածվում են, ապա տպավորություն են ստեղծում, թե հեղինակն իր դատողություններում կանխակալ դիրքորոշում է դրսևորում:

Խուսափե՛ք նախադասությունը հետևյալ կերպ շարադրելուց:

▪ Նրանց պահանջը **բացարձակ** իրատեսական չէր: Այն **միանշանակ** անիմաստ էր:

Նախադասությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ:

▪ Նրանց պահանջը հիմնավորված չէր: Պահանջում ներկայացված չէին էական փաստեր:

**Խուսափե՛ք զեկույցն անձնավորելուց:**

Վերլուծաբանները, դիտարկումների մասին զեկուցելիս, պետք է խուսափեն իրենց անձին հղում կատարելուց. ցանկալի է խոսել կազմակերպության մասին երրորդ դեմքով: Օրինակ՝ «Ընտրություններում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունը գտնում է/համարում է/հավատացած է…», այլ ոչ՝ «ես/մենք գտնում եմ(ենք)/համարում եմ(ենք)/հավատացած եմ(ենք)…»:

**Խուսափե՛ք հուզական արտահայտություններից:**

Վերլուծաբանները պետք է զերծ մնան այնպիսի բառեր գործածելուց, որոնք կարող են տպավորություն ստեղծել, թե վերլուծաբանը կողմնակալ դիրքորոշում է դրսևորում՝ հօգուտ որևէ կազմակերպության, հաստատության, կուսակցության կամ թեկնածուի:

Անհրաժեշտ է խուսափել այնպիսի բառեր օգտագործելուց, ինչպիսին է օրինակ՝ «դժբախտաբար»: Այդուհանդերձ, որպեսզի հստակ նշվի խնդրի առկայության մասին, չի բացառվում նաև սուբյեկտիվ գնահատական տալու հանգամանքը:

<u>Խուսափե՛ք հետևյալ բնույթի նախադասություններ օգտագործելուց:</u>

▪ **Դժբախտաբար,** տարածքային ընտրական հանձնաժողովների և ԿԸՀ-ի անդամները բողոքների քննության ընթացքում հաճախ թշնամական վերաբերմունք էին դրսևորում մոնիթորինգ անցկացնող կազմակերպությունների ներկայացուցիչների նկատմամբ:

Խուսափե՛ք սուբյեկտիվ հայտարարություններից

Վերլուծաբանները պետք է խուսափեն ընտրական գործընթացի նկատմամբ իրենց անձնական զգացմունքները, կարծիքները կամ դատողությունները նշելուց: Նրանք պետք է ներկայացնեն բացառապես փաստեր և գնահատեն դրանք ներպետական իրավական նորմերի և միջազգային չափանիշների համեմատությամբ:

Խուսափե՛ք նախադասությունը հետևյալ կերպ շարադրելուց:

▪ Պետական վերստուգիչ ծառայությունը (ՊՎԾ) **տխրահռչակ համբավ** էր ձեռք բերել նախընտրական շրջանում իր կողմից կայացված **անարդարացի** որոշումների հետևանքով:

Պետական վերստուգիչ ծառայության աշխատանքը գնահատելու համար հետևյալ ձևակերպումն ավելի ճիշտ է:

▪ Նորաստեղծ կարգավորիչ մարմնին՝ Պետական վերստուգիչ ծառայությանը (ՊՎԾ) վերապահվել էր կուսակցությունների և նախընտրական քարոզարշավի ֆինանսավորմանը վերաբերող օրենքի կատարումն ապահովելու գործառույթը: ՊՎԾ-ն օժտված է եղել հայեցողական լայն լիազորություններով, սակայն ընդհանուր առմամբ չի կարողացել ապահովել օրենքի կիրառությունը թափանցիկ, անկախ, անաչառ և հետևողական կերպով՝ հիմնական թիրախ դարձնելով ընդդիմությանը:

**Համապատասխան եզրույթներ**

Վերլուծաբանների անկողմնակալությունը կարող է լավագույնս դրսևորվել ընտրական գործընթացին վերաբերող միջազգայնորեն ընդունված եզրույթներ օգտագործելու միջոցով (տե՛ս նաև 2-րդ հավելվածի «Սահմանումներ» բաժինը) և միևնույն ժամանակ՝ պարզ, հստակ ու դյուրըմբռնելի գրելաոճով:

Խուսափե՛ք հետևյալ բնույթի ձևակերպումից:

▪ Գործադիր իշխանությունները ներգրավված են եղել (բառացի՝ գործադիր իշխանությունների մատը խառն է եղել) իրավական ռեսուրսների **կողմնակալ** և **ոչ պատշաճ** օգտագործման մեծ թվով դեպքերի մեջ: Այս առումով ևս մեկ անգամ դրսևորվեց Պետական վերստուգիչ ծառայության **տխրահռչակ** համբավը: Ազգային անվտանգության խորհրդի կազմում գործող միջգերատեսչական հատուկ աշխատանքային խումբը որոշ դեպքերում նույնպես **հեռու էր անկողմնակալ մոտեցում ցուցաբերելուց:**

Տեքստը ձևակերպե՛ք հետևյալ կերպ:

▪ ՊՎԾ-ն օժտված է եղել հայեցողական լայն լիազորություններով, սակայն ընդհանուր առմամբ չի կարողացել ապահովել օրենքի կիրառությունը թափանցիկ, անկախ, անաչառ և հետևողական կերպով՝ հիմնական թիրախ դարձնելով ընդդիմությանը: Միջգերատեսչական հատուկ աշխատանքային խումբն երբեմն գերազանցում էր իր լիազորությունները և խաթարում իշխանության տարանջատման սկզբունքը:

**Չեզոք վերնագրեր**

Ընտրությունների վերաբերյալ զեկույցում վերլուծաբանները չպետք է կողմնակալ վերաբերմունք դրսևորեն կամ նախապատվություն տան իշխանության մարմինների, կուսակցությունների, թեկնածուների կամ ընտրությունների որևէ այլ մասնակցի (բառացի՝ մրցակցի) նկատմամբ:

Վերլուծաբանները պետք է խուսափեն վերնագրերին հուզական երանգավորում հաղորդելուց, ինչպես ստորև նշված օրինակներում:

1. Գործադիր իշխանությունների **ոչ պատշաճ** որոշումները և գործողությունները,

2. Պետական վերստուգիչ ծառայության **ոչ հետևողական** մոտեցումը,

3. **Անհիմն** տուգանքների նշանակումը,

4. Խախտումների նկատմամբ **ընտրողական մոտեցումը**,

5. Անօրինական նվիրատվությունների դեպքերի **անտեսումը**:

Հետևյալ կերպով շարադրելն ավելի ճիշտ է, քանի որ ցույց է տալիս ձեր օբյեկտիվությունը:

1. Գրանցման փաստաթղթերի վավերացումն իրականացվել է Տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից (ՏԸՀ-ներ) փակ նիստերի ընթացքում: Ստորագրության վավերացման կանոնները հստակ չեն և հակասում են միջազգային բարեխիղճ գործելակերպին՝ թույլ տալով, որ ՏԸՀ-ները կայացնեն կամայական որոշումներ, որոնք ենթակա չեն բողոքարկման:

...

**Նախքան զեկույցը հրապարակելը**

**Տեքստի բարձրաձայն ընթերցում**

Լուռ (անձայն) ընթերցելու դեպքում մարդիկ հակված են բաց թողնել բառերը, առավել ևս, երբ նյութի հեղինակն իրենք են, և իրենց թվում է, թե գիտեն՝ ինչ են գրել: Բարձրաձայն կարդալը ստիպում է ընթերցողին ուշադրություն դարձնել յուրաքանչյուր բառին: Այն օգնում է ընթերցողին հասկանալ, թե արդյոք տեքստը բարեհունչ է (ընթերցողի համար հարմար է) և հեշտ ընկալելի:

Վերլուծաբանները պետք է փորձեն ուշադրություն դարձնել կետադրությանը: Նրանք պետք է հաշվի առնեն, թե արդյոք անհրաժեշտ է տարանջատել նախադասությունները կամ լրացուցիչ վերանայել զեկույցի որոշ մասերում շարադրված նախադասությունները:

**Ուղղագրության և քերականության ստուգում**

Վերլուծաբանները, նախքան փոփոխություններ կատարելը, պետք է վերանայեն առաջարկվող յուրաքանչյուր փոփոխությունը:

**Խմբագրում և սրբագրում**

Զեկույցի պատրաստմանը կարող են մասնակցել տարբեր անձինք, որոնցից յուրաքանչյուրն ունի գրելու իր յուրահատուկ ոճը: Վերլուծաբանները, սակայն հիմնականում Առաքելության ղեկավարի տեղակալը, պետք է փորձեն ներդաշնակեցնել տարբեր տեքստերը: Նման դեպքերում սովորաբար անհրաժեշտ է պարզել հետևյալ հարցերը. արդյո՞ք բոլոր հեղինակները տեքստի իրենց բաժինները շարադրել են միանման ձևով: Արդյո՞ք նրանք բոլոր դեպքերը ներկայացրել են միևնույն ձևով՝ ընդհանուր ներկայացնելով առավել կարևոր փաստերը, հղում անելով այն իրավական նորմերին, որոնք խախտվել են և նշելով տեղեկատվության աղբյուրները (օրինակ՝ տվյալ փաստն արձանագրվել է հենց առաքելության կողմից):

**Տեսողական (վիզուալ) օժանդակ միջոցների կիրառություն**

Կարելի է օգտագործել նկարներ, աղյուսակներ, դիագրամներ, գրաֆիկական միջոցներ և մեջբերել հատվածներ միջադեպերի քարտեզներից, ինչը թույլ կտա առավել պատկերավոր ձևով ներկայացնել ընտրությունների զեկույցները: Տեսողական միջոցները պահպանում են ընթերցողի հետաքրքրությունը նյութի հանդեպ և օգնում նյութն ավելի լավ ընկալել: Տեսողական միջոցներ ընտրելու և դրանք ներմուծելու ժամանակ

վերլուծաբանները պետք է հաշվի առնեն մի շարք կարևոր հանգամանքներ, ինչպիսիք են՝ թիրախային լսարանը, զեկույցի ծավալը, օգտագործվող լեզուն, բառապաշարը և այլն:

► Մի՛ ծանրաբեռնեք զեկույցը չափից շատ նկարներով, աղյուսակներով և ինֆոգրաֆիկական միջոցներով:

► Խուսափե՛ք միևնույն գործողությունների, անձանց կամ խմբերի մասին պատմող միևնույն նկարները ներառելուց:

► Նկարների մեծ փաթեթի դեպքում պարզապես ընտրե՛ք այն նկարները, որոնք առավելագույն հետաքրքրություն և կարևորություն են ներկայացնում: Աղյուսակները/ինֆոգրաֆիկական միջոցները պետք է միշտ ուղեկցվեն բացատրական տեքստերով:

Գծապատկեր 12. Բարեխիղճ գործելակերպ ներկայացնող աղյուսակ




| | |
|---|---|
| WOMEN ELECTED TO THE HOUSE OF REPRESENTATIVES | ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԿԱՆԱՅՔ |
| Title of your infographics | Ինֆոգրաֆիկայի վերնագիրը |
| Year | Տարին |
| WOMEN'S QUOTA | ԿԱՆԱՆՑ ՔՎՈՏԱՆ |
| Number/percentage/currency | Թիվը/տոկոսը/գործողության ժամկետը |
| TOTAL WOMEN ELECTED | ԸՆՏՐՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ |
| Sub-titles | Ենթավերնագրեր |
| WOMEN'S QUOTA | ԿԱՆԱՆՑ ՔՎՈՏԱՆ |
| TOTAL WOMEN ELECTED | ԸՆՏՐՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ |
| Elected Women | Ընտրված կանայք |
| Rest | Մյուսները |

Աղբյուրը՝ www.isfed.ge

**Համապատասխան նկարների և գրաֆիկական միջոցների ընտրություն**

► Ավելացրեք նկարներ, որոնք ներկայացնում են վերապատրաստման աշխատանքները, տարածքում (տեղում, դաշտում) մոնիթորինգ անցկացնող դիտորդներին, տվյալներ հավաքող օպերատորներին, մամուլի ասուլիսները և հանդիպումները շահագրգիռ կողմերի հետ:

► Տեսողական միջոցներ օգտագործելու դեպքում՝ գտե՛ք դրանց ամենահարմար տեղը զեկույցում:

► Տեքստի գլուխներից առաջ տեղադրեք նկարներ:

## 4.4. ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ ԵՎ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԵՐ

Այս բաժնի նպատակն է հանգամանալից ներկայացնել ընտրության գործընթացի գնահատման ոլորտները, որոնք սովորաբար ենթարկվում են ուսումնասիրության և որոնց մասին ընտրությունների ներպետական դիտորդական առաքելության կողմից կազմվում է զեկույց: Այս ոլորտները ներառում են, մասնավորապես, քաղաքական համատեքստը, օրենսդրական շրջանակը (այդ թվում՝ ընտրական համակարգը), ընտրությունների համար պատասխանատու մարմինը, ընտրողների մասին տվյալները, ընտրողների ցուցակները, ընտրողների գրանցումը, մրցակիցների (կուսակցությունների և/կամ թեկնածուների) գրանցումը, նախընտրական քարոզարշավը, լուսաբանումը ԶԼՄ-ների կողմից, քվեարկության օրը (քվեարկությունը և քվեների հաշվարկը), արդյունքների ամփոփումը և հրապարակումը, դիմում-բողոքները և հայցադիմումները և հետընտրական զարգացումները:

Բացի այդ, ձեռնարկն առաջարկում է զեկույցների կազմման ստուգաթերթ, որը նախատեսված է գնահատման ենթակա ոլորտներից յուրաքանչյուրի համար և տրամադրում է արդյունավետ և հարմար գործիք՝ ներպետական դիտորդական առաքելությունների կողմից որակյալ զեկույցներ կազմելու համար:

### Ա. Քաղաքական համատեքստը

Ներպետական դիտորդական առաքելություն նախաձեռնելու դեպքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է հաշվի առնեն այն ավելի ընդարձակ համատեքստը, որի շրջանակներում ընտրությունները կայանալու են: Կարելի է վերլուծել և զեկույցում ներառել ընտրությունների հետ ակնհայտ և ուղիղ կապ չունեցող հայեցակետերը, ինչպես օրինակ՝ ժողովրդավարացման գործընթացը երկրի ներսում կամ առկա աշխարհաքաղաքական իրադրությունը: Ի լրումն սրան, անհրաժեշտ է ուսումնասիրել երկրում առկա քաղաքական իրավիճակը և հարգանքը մարդու իրավունքերի և հիմնարար ազատությունների նկատմամբ, այդ թվում՝ կանանց իրավունքները, ազգային և կրոնական փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց կամ հատկապես խոցելի կամ անբարենպաստ պայմաններում գտնվող այլ խմբերի կարգավիճակը:

Կարելի է նաև անդրադարձ կատարել և դիտարկել ընտրական առավել լայն շրջափուլի խնդիրները, այդ թվում՝ նախորդ առաջարկությունների իրագործումը, ընտրական բարեփոխումները, ժողովրդավարական հաստատությունների գործունեությունը (թափանցիկության և հաշվետվողականության տեսանկյունից) կենտրոնական և տեղական մակարդակով, գործող օրենսդրությամբ սահմանված և իշխանությունների կողմից ընձեռնվող հնարավորությունները՝ երկխոսության և քաղաքացիական հասարակությանը հանրային կյանքին մասնակից դարձնելու ուղղությամբ, և առկա միջավայրի ազդեցությունը, որի պայմաններում պետք է անցկացվեն ընտրությունները:

Քաղաքական համատեքստի վերաբերյալ հաշվետվություն կազմելու նպատակով կարելի է հաշվի առնել ստորև ներկայացված հարցադրումները:

**Քաղաքական գործընթացներ**

► Որո՞նք են հանրային տիրույթում առավել հաճախ բարձրացված հիմնահարցերը:

► Ինչպիսի՞ դիրքորոշում ունեն հիմնական շահագրգիռ կողմերը մարդու

իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի վերաբերյալ:

- Արդյո՞ք քաղաքական համակարգը թույլ է տալիս հասարակությանը մասնակցություն ունենալ ժողովրդավարական գործընթացներում, այդ թվում՝ ընտրություններում: Եթե ոչ, ապա որո՞նք են հնարավոր պատճառները. գործընթացի/ժողովրդավարական հաստատությունների նկատմամբ վստահության պակասը, կուսակցություններին չվստահելը:
- Ինչպե՞ս են ընդունվում օրենքները և որքանո՞վ է ներառական (ի՞նչ աստիճան մասնակցային է) նոր օրենքների մշակման գործընթացը:

**Ընտրությունների համար կարևոր քաղաքական գործոններ**

- Կա՞ն արդյոք քաղաքական և ժողովրդավարական գործոններ, որոնք սովորաբար հաշվի չեն առնվում ընտրությունների ընթացքում, սակայն կարևոր են ընտրությունների գործընթացի տեսանկյունից (օրինակ՝ զինված ուժերը):
- Կա՞ն արդյոք ընդհանուր միջավայրով պայմանավորված հանգամանքներ, որոնք խոչընդոտում են թեկնածուների/կուսակցությունների գործունեությանը:
- Արդյոք առկա թեկնածուների/կուսակցությունների կողմից արտահայտվող տեսակետների շրջանակն այնքան բազմազա՞ն է, որ ստեղծում է ընտրողների համար իրական ընտրություն կատարելու հնարավորություն:
- Ինչպիսի՞ հետևանքներ են ունենում դիտորդական աշխատանքների համար այն իրավական պահանջները, որոնցով, օրինակ, արգելված է ֆինանսավորումը օտարերկրյա աղբյուրներից կամ, որպես հավատարմագրման նախապայման, անհրաժեշտ է ընտրությունների դիտորդական առաքելության ներառումը օրենքներում:
- Որքանո՞վ են թույլատրելի որպես դիտորդ հանդես գալու համար դիմում ներկայացնելու և հավատարմագրվելու ընթացակարգերը:
- Ինչպիսի՞ դիրքորոշում ունեն շահագրգիռ տարբեր կողմերը նախորդ ընտրությունների վերաբերյալ միջազգային և ներպետական կազմակերպությունների կողմից դիտորդական զեկույցներում բարձրացված հարցերի շուրջ, և արդյո՞ք պատասխանատու մարմիններն այդ հարցերի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկել են:

**Կանանց դերը հասարակության մեջ**

- Որքանո՞վ է պետությունն իրագործում մարդու իրավունքների և գենդերային հավասարության ուղղությամբ ստանձնած իր միջազգային պարտավորությունները:
- Արդյո՞ք կանայք ունեն կրթության և զբաղվածության հավասար հնարավորություններ:
- Արդյո՞ք հատուկ խմբերին պատկանող կանայք (փոքրամասնություն կազմող բնակչություն, ՆՏԱ-ներ, գյուղական տարածքներում բնակվող անձինք, բռնության և/կամ թրաֆիկինգի զոհեր) գտնվում են հատկապես անբարենպաստ վիճակում:

**Կանայք քաղաքականության ոլորտում**

- Քանի՞ տոկոս է կազմում կանանց ներկայացվածությունը նախորդ և

հեռացող խորհրդարանական կազմում կամ տեղական ու տարածաշրջանային մարմիններում:

- ► Քանի՞ տոկոս են կազմում կառավարության կազմում նախարարների պաշտոն, կամ տեղական ու տարածաշրջանային մարմիններում համայնքի ղեկավարների կամ նախագահների պաշտոն զբաղեցնող կանայք:
- ► Ի՞նչ թիվ են կազմում և ի՞նչ հարաբերակցությամբ են բաշխված կանանց ներկայացուցիչները տարբեր մակարդակներում գործող ընտրության համար պատասխանատու մարմինների կազմում:

**Ազգային փոքրամասնությունների և հատուկ կարիքներով խմբերի մասնակցությունը**

- ► Քանի՞ տոկոս են կազմում ազգային փոքրամասնությունների ինքնառաջադրված ներկայացուցիչները, ովքեր կառավարության անդամ են, օրենսդիր իշխանության կազմում են կամ զբաղեցնում են այլ բարձր կառավարական պաշտոններ:
- ► Քանի՞ տոկոս են կազմում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները տեղական խորհուրդների (համայնքի ավագանու) կազմում:
- ► Քանի՞ տոկոս են կազմում ազգային փոքրամասնությունների ինքնառաջադրված թեկնածուները կուսակցության ընտրական ցուցակներում:
- ► Որքանո՞վ են ՆՏԱ-ները, փախստականները կամ քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչության խմբերը ներկայացված կուսակցության ընտրական ցուցակներում (արդյոք այս խմբերը ստեղծում են իրենց սեփական կուսակցությունը, թե ընտրվում են այլ կուսակցությունների ընտրական ցուցակներով):
- ► Ի՞նչ թիվ են կազմում և ի՞նչ հարաբերակցությամբ են բաշխված ազգային փոքրամասնության ներկայացուցիչները տարբեր մակարդակներում գործող ընտրության համար պատասխանատու մարմինների կազմում:

**Բ. Օրենսդրական շրջանակը**

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներպետական ընտրությունների դիտորդական աշխատանքների իրականացումը կարող է նպաստել ընտրությունների օրենսդրական շրջանակի բարեփոխմանը: Հարկ եղած դեպքում ՔՀԿ-ները պետք է պարտավորություն ստանձնեն՝ ջատագովելու խաղաղ ընտրական և քաղաքական գործընթացների իրականացումը, ինչպես օրինակ՝ ընտրական գործընթացը և ընտրությունների համար պատասխանատու մարմինների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում բարեփոխումներ առաջարկելով: Ընտրությունների դիտորդական աշխատանքների հիմնաքարերից է օրենսդրության բովանդակության և դրա կիրարկման ուսումնասիրությունը: Սա, մասնավորապես, կարևոր է այն ՔՀԿ-ների դեպքում, որոնք երկարաժամկետ դիտորդական աշխատանքներ և վերլուծություն են իրականացնում ընտրական ողջ շրջափուլի վերաբերյալ:.

ՔՀԿ-ները պետք է նախնառաջ պարզեն, թե որոնք են այն բոլոր իրավական փաստաթղթերը, որոնցից բաղկացած է ընտրական գործընթացը կարգավորող ներպետական օրենսդրությունը: Սովորաբար դրանց շարքում է Սահմանադրությունը (մասնավորապես՝ ազատ ընտրություններին առնչվող դրույթները), խորհրդարանի կողմից ընդունված օրենսդրական ակտերը (օրինակ՝ Ընտրական օրենսգիրքը կամ օրենքը), ինչպես նաև կառավարության կամ ընտրությունների համար պատասխանատու

մարմնի կողմից ներկայացված նորմատիվ ակտերը (օրինակ՝ կանոնակարգեր և որոշումներ):

Ի լրումն ընտրական հարցերի հետ սերտորեն կապված դրույթների, ընտրական գործընթացը կարգավորող օրենսդրական շրջանակի մաս են կազմում նաև մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին (ինչպես օրինակ՝ հավաքների ազատությունը, խոսքի ազատությունը և այլն) ու համապատասխան այլ ոլորտներին (ինչպես օրինակ՝ քաղաքացիությանը, լրատվամիջոցներին և այլն) առնչվող նորմերը: Տվյալ երկրի կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, որոնք կարգավորում են ազատ ընտրությունների իրավունքը և հարակից այլ իրավունքներ (օրինակ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան), կամ մարդու իրավունքներին առնչվող այլ պայմանագրերը, որոնք պարունակում են որոշակի խմբերի ընտրական իրավունքի մասով դրույթներ (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան և Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան՝ կանանց պարագայում, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան և Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան՝ փոքրամասնությունների պարագայում, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան՝ հաշմանդամություն ունեցող անձանց պարագայում) համապատասխան ներպետական օրենսդրական շրջանակի մաս են կազմում: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել ընտրական հարցերի առնչությամբ ներպետական դատարանների կողմից կայացված վերջնական ակտերը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տվյալ երկրի առնչությամբ ընդունված վճիռները:

Սրան զուգահեռ կարևոր է նաև պարզել օրենսդրական շրջանակի բարելավման ուղղությամբ դեռևս չլուծված հարցերը, որոնք հիմնված են տվյալ երկրի ստանձնած քաղաքական հանձնառությունների վրա: Միջազգային մարմինները սովորաբար վեր են հանում այս հարցերը մոնիթորինգ իրականացնելու ընթացքում, մասնավորապես՝ ՔՔԻՄՄԴ/ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն դա անում է իր եզրափակիչ դիտարկումներում, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը՝ ընտրությունների վերաբերյալ դիտորդական զեկույցներում, Վենետիկի հանձնաժողովը՝ համապատասխան երկրի ընտրությունները կարգավորող օրենսդրության խնդիրների առնչությամբ իր ուսումնասիրություններում և եզրակացություններում: Ցանկալի է, որ ՔՀԿ-ներն ուսումնասիրեն, թե արդյոք քաղաքացիների համար ստեղծված են իրենց ընտրական իրավունքն իրացնելու արդյունավետ հնարավորություններ: Ստորև ներկայացված են արդյունավետ կառուցվածք ապահովելու առաջարկներ:

Օրենսդրական շրջանակն ուսումնասիրելիս և դրա վերաբերյալ զեկույց կազմելիս կարող են դիտարկվել հետևյալ հարցադրումները:

**Ընտրական գործընթացը կարգավորող օրենսդրական շրջանակը**

- ► Իրավական ո՞ր փաստաթղթերից և դրույթներից է կազմված ընտրական գործընթացը կարգավորող ներպետական օրենսդրական շրջանակը (այդ թվում՝ դատական ակտերը): Ինչպե՞ս է կառուցված (կանոնակարգված) ընտրական գործընթացը կարգավորող օրենսդրությունը:
- ► Արդյո՞ք ընտրական գործընթացը կարգավորող օրենսդրությամբ հստակ սահմանված է ընտրությունները ղեկվարող իրավական նորմերի ստորակարգությունը (նախատեսված է, որ սահմանադրական և

օրենսդրական դրույթները գերակայություն ունեն ցանկացած այլ հրահանգների (իրավական ակտերի) նկատմամբ):

- ► Որո՞նք են օրենսդրական շրջանակի այն անհրաժեշտ բարեփոխումները, որոնց մասին արդեն նշվել է (տես, օրինակ, Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի եզրակացություններում և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախորդ դիտորդական զեկույցներում ներկայացված հանձնարարականները): Արդյո՞ք այդ բարեփոխումներն արդեն իրագործվել են: Ի՞նչ ազդեցություն ունի դրանց իրագործումը գործընթացի վրա: Ի՞նչ առաջընթաց է գրանցվել այդ ժամանակահատվածից ի վեր:
- ► Շահագրգիռ կողմերի մոտ ընտրական գործընթացի վերաբերյալ որոշակիություն (կանխագուշակելիություն) ապահովելու տեսանկյունից արդյո՞ք ընտրությունների օրենսդրական շրջանակը կայուն է: Արդյո՞ք կատարվող փոփոխությունները հիմնված են ներառական (մասնակցային) և խորհրդակցական գործընթացների վրա: Արդյո՞ք գործադիր իշխանության (կառավարության) կողմից կատարվող փոփոխությունները համահունչ են այս ոլորտում գործադիր մարմնի իրավասություններին: Արդյո՞ք փոփոխությունները կատարվում են օրենքների հրապարակումը կարգավորող իրավական դրույթներին համապատասխան:
- ► Ներկայիս ընտրությունների համատեքստում ինչպիսի՞ն է վերաբերմունքը ընտրական գործընթացը կարգավորող օրենսդրական շրջանակի նկատմամբ:
- ► Արդյո՞ք ընտրական գործընթացի կանոններն ունեն առնվազն խորհրդարանի կողմից ընդունված օրենքի կարգավիճակ (մասնավորապես, ժողովրդավարական ընտրությունների հստակ ձևակերպված ընթացակարգերը և ընդհանուր ընտրական համակարգը պետք է ունենան օրենքի ուժ, տեխնիկական հարցերի վերաբերյալ կանոնները կարող են սահմանվել գործադիր իշխանության կանոնակարգերում):
- ► Արդյո՞ք ընտրությունների վերաբերյալ օրենքները հստակ են ձևակերպված, ներդաշնակ և հասանելի են (հրապարակվում են և հեշտ հասանելի են քաղաքացիներին, դրանցում չկան հակասություններ և բացեր, օրենսդրական շրջանակը ծայրահեղ բարդ չէ):
- ► Արդյո՞ք ընտրական օրենսդրությունն ընդունվել է օրենքների հրապարակումը կարգավորող կիրառելի իրավական դրույթներին համապատասխան (քանի որ այս դրույթներին հակասող փոփոխությունները կարող են դատարանների կողմից անվավեր ճանաչվելու վտանգի տակ գտնվել):

Ընտրությունների համար պատասխանատու մարմնի (ԸՊՄ)՝ իր կողմից ընդունված նորմատիվ ակտերով որոշ հրատապ հարցեր կարգավորելու իրավասությամբ, այդուհանդերձ, չպետք է խախտվի ընտրական գործընթացը կարգավորող օրենքների նկատմամբ օրենսդրական (խորհրդարանական) վերահսկողության սկզբունքը: Ուստի, այս առումով կարելի է հաշվի առնել հետևյալ հարցադրումները:

**Ընտրությունների համար պատասխանատու մարմնի դերը**

- ► Արդյո՞ք պատասխանատու մարմնի լիազորությունները բոլոր մակարդակներում սահմանված են օրենքով, այդ թվում՝ ընտրական գործընթացը արդար, անաչառ կերպով և օրենքին համապատասխան կազմակերպելու պարտավորությունները:

- Արդյո՞ք ընտրական օրենսդրությամբ հստակ կերպով նշվում և սահմանվում է ընտրությունների համար պատասխանատու մարմնի կողմից հրահանգներ տալու (կարգեր սահմանելու, որոշումներ ընդունելու) իրավասության շրջանակը և սահմանները:
- Արդյո՞ք պետական և տեղական իշխանությունների, ինչպես նաև ընտրությունների համար պատասխանատու մարմնի և կառավարության այլ մարմինների փոխհարաբերությունները հստակ կերպով նշված և սահմանված են (կառավարության այլ մարմինների լիազորությունների հետ հակասությունը կամ համընկնումը կանխելու նպատակով):
- Արդյո՞ք օրենքը հստակ կերպով նախատեսում է, որ հրահանգները (կարգերը, որոշումները) չպետք է հակասեն կամ պետք է ներդաշնակ լինեն ընտրական օրենսդրությանը:
- Արդյո՞ք ընտրական օրենսդրությունը նախատեսում է այնպիսի գործընթաց, որում ընտրությունների մասնակիցները և քվեարկողները կարող են դիմում-բողոքներ և հայցադիմումներ ներկայացնել ԸՊՄ-ի կողմից նմանօրինակ հրահանգների (կարգերի, որոշումների) ընդունման և կատարման առնչությամբ: Արդյո՞ք այն նաև ընձեռում է ընտրական օրենսդրության խախտումների առնչությամբ դիմում-բողոքներ և հայցադիմումներ ներկայացնելու հնարավորություն, որոնք թույլ են տրվել ընտրությունների համար պատասխանատու մարմնի կողմից:
- Արդյո՞ք ընտրական օրենսդրությունն ապահովում է հստակ սահմանված կանոններ, համաձայն որոնց ԸՊՄ-ն իրավասու է հրապարակել հրահանգներ (կարգեր, որոշումներ) արտակարգ իրավիճակներում կամ ընտրությունների օրը, և արդյո՞ք նկարագրում է հրահանգների (կարգերի, որոշումների) հրապարակման ընթացակարգը:
- Արդյո՞ք հիմնարար իրավունքները, ինչպիսին է օրինակ՝ քվեարկության գաղտնիությունը, ճանաչվել են ուժը կորցրած կամ ոչ կարևոր ԸՊՄ-ի հրահանգով/կանոնակարգով:

**Ընտրությունների օրենսդրական շրջանակը (կանանց մասնակցությունը)**

- Արդյո՞ք սահմանադրությունը երաշխավորում է հավասար իրավունքներ կանանց համար:
- Արդյո՞ք սահմանադրությունը պարունակում է դրույթներ կանանց՝ պետական պաշտոնում առաջադրվելու և այն զբաղեցնելու հատուկ իրավունքների մասին:
- Արդյո՞ք սահմանադրությունը պարունակում է դրույթներ, որոնք որևէ կերպ անհավասար պայմաններ են ստեղծում կանանց համար:

**Ընտրական համակարգը (կանանց մասնակցությունը)**

- Արդյո՞ք ընտրական համակարգը բացասաբար է անդրադառնում կանանց՝ որպես թեկնածուների մասնակցության վրա:
- Արդյո՞ք օրենքով թույլատրվում է նախաձեռնել դրական գործողություններ՝ ընտրություններին մասնակցող կանանց թիվը մեծացնելու նպատակով: Որո՞նք են այդ գործողությունները (օրինակ՝ կանանց համար նախատեսված մանդատներ, թեկնածուների ցանկում կանանց առաջադրումը պաշտոնների վերին տասնյակում, որտեղ հաղթելու հավանականությունը մեծ է): Ինչպե՞ս են վարվում ընտրությունների

համար պատասխանատու պաշտոնյաները այն ցուցակների հետ, որոնք չեն համապատասխանում դրական գործողություններին (քվոտայի ապահովումը):

- ► Եթե իրագործվում է դրական որևէ գործողություն, ապա որքանո՞վ է այն արդյունավետ ընտրված կանանց թիվը և կին թեկնածուների թիվը մեծացնելու հարցում:
- ► Կուսակցության ցուցակների համակարգը բա՞ց է, թե՞ փակ: Եթե բաց է, ապա արդյունքում կին թեկնածուների թիվն ավելացե՞լ է, թե՞ նվազել: Եթե կանանցից որևէ մեկը հետ է վերցնում թեկնածությունը, ապա ի՞նչ սկզբունքով է լրացվում ցուցակում թափուր մնացած տեղը:
- ► Այս արդյունքները որևէ կերպ ցույց են տալի՞ս՝ արդյոք կանայք օգտվու՞մ, թե՞ տուժում են ընտրական այս համակարգի հետևանքով:

**Ազգային փոքրամասնությունների և հատուկ կարիքներ ունեցող խմբերի մասնակցությունը**

- ► Արդյո՞ք սահմանադրությունը երաշխավորում է համընդհանուր ընտրական իրավունք՝ առանց անհիմն սահմանափակումների:
- ► Ի՞նչ նշանակություն ունի ընտրական համակարգը ազգային փոքրամասնությունների ներկայացվածության տեսանկյունից:
- ► Արդյո՞ք ընտրական օրենսդրությունը պարունակում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ թեկնածուի և ընտրողի կարգավիճակով մասնակցությունն ապահովող հատուկ դրույթներ:
- ► Արդյո՞ք կան կուսակցություններ ստեղծելու սահմանափակումներ՝ հիմնված ազգային ինքնության վրա: Հնարավո՞ր է արդյոք նշել վարչական այնպիսի սահմանափակումներ, որոնք խոչընդոտում են ազգային փոքրամասնությունների թեկնածուների կամ կուսակցությունների արդյունավետ մասնակցությանը:
- ► Արդյո՞ք ընտրական օրենսդրությունը նախատեսում է հատուկ միջոցներ ազգային փոքրամասնությունների, ՆՏԱ-ների, փախստականների կամ քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչության ներկայացվածության համար:

**Գ. Ընտրությունների համար պատասխանատու մարմինը**

ԸՊՄ-ի գործունեությունը էական նշանակություն ունի ժողովրդավարական ընտրական գործընթաց ապահովելու տեսանկյունից: ԸՊՄ-ի գործունությամբ պայմաններ են ստեղծվում ընտրողների և մրցակիցների համար, որպեսզի վերջիններս լիարժեք կերպով օգտվեն իրենց հիմնարար ազատություններից և քաղաքական իրավունքներից: ԸՊՄ-ի աշխատանքները պետք է կազմակերպվեն հնարավորինս պրոֆեսիոնալ, արդյունավետ, թափանցիկ և հանրային հսկողության պայմաններում, և միևնույն ժամանակ, այս մարմինը պետք է կարողանա ձեռնամուխ լինել իր աշխատանքներին՝ չենթարկվելով քաղաքական միջամտության կամ ահաբեկման: Վերջինս կոչված է ապահովել, որ ընտրական գործընթացի ժամանակ պահանջվող բոլոր քայլերը խստագույնս պահպանվեն, իրականացվեն պատշաճորեն, անկողմնակալորեն և ճիշտ ժամանակին, որպեսզի ընտրական գործընթացի շահագրգիռ բոլոր կողմերը, հիմնականում՝ ընտրողները, վստահ լինեն գործընթացի արդարության հարցում:

ԿԸՀ-ն, որը պատասխանատու է որոշումների կայացման և ողջ գործընթացի վերահսկման համար, սովորաբար ղեկավարում է ընտրությունների համար

պատասխանատու մարմինը և, որպես կանոն, մշտական հիմունքներով գործող մարմին է: Գրեթե անփոփոխ է ԸՊՄ-ի կազմը՝ բաղկացած ստորադաս ընտրական հանձնաժողովների տարբեր մակարդակներից, որոնք ներկայացնում են տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր շերտերը (օրինակ՝ մարզ/տարածք, շրջան և համայնք): Բոլոր մակարդակները կարող են գործել մշտական կամ ժամանակավոր հիմունքներով՝ զուտ ընտրությունների ժամանակահատվածի կտրվածքով: Ահավասիկ, անհրաժեշտ է հստակ կերպով տարանջատել ԸՊՄ-ի տարբեր ճյուղերի և մակարդակների դերակատարումը: Օրենքը պետք է հստակ սահմանի ընտրությունների համար պատասխանատու մարմնի յուրաքանչյուր օղակի կազմը, անդամների փոխարինման ընթացակարգերը և գործառույթները, քանի որ այն կարող է անդրադառնալ դրանց անկախության և աշխատանքների որակի վրա:

Անդամակցության մասով պետք է նշել, որ ԸՊՄ-ի կազմում կարող են լինել տարբեր անդամներ՝ նշանակված տարբեր մեթոդների կիրառությամբ: Որևէ կուսակցության չհարող, անկախ հանձնաժողովը կազմված է այն անձանցից, ովքեր նշանակվում են իրենց մասնագիտական փորձի հիման վրա կամ ընտրվում հարգանք վայելող, չեզոք դիրքորոշում ունեցող և փորձառու անհատների խմբից, այդ թվում՝ դատական իշխանության անդամներից: Որևէ կուսակցության հարող անկախ հանձնաժողովը կազմված է կուսակցությունների կամ թեկնածուների կողմից առաջադրված անձանցից: Ընտրությունների համար պատասխանատու կուսակցական մարմնի դերը մեծապես կարևորվում է, եթե վերջինիս կազմն արտացոլում է քաղաքական դաշտը, հատկապես ընտրության մասնակիցների առումով, և եթե այդ անդամները գործում են կոլեգիալ, համաձայնեցված և կառուցողական եղանակով և չեն կայացնում որոշումներ՝ ելնելով իրենց կուսակցական պատկանելությունից:

Կարող են հաշվի առնվել հետևյալ հարցադրումները:

**Ընտրությունների համար պատասխանատու մարմնի աշխատանքները**

- ► Արդյո՞ք առկա է հանրային վստահություն ընտրությունների համար պատասխանատու մարմնի աշխատանքների նկատմամբ:
- ► Որո՞նք են ԸՊՄ-ի առնչությամբ հանրության կողմից առավել հաճախ բարձրացվող հարցերը:
- ► Արդյո՞ք ԸՊՄ-ն գործում է անկախ, արդար և անկողմնակալ կերպով:
- ► Այն ապահովու՞մ է արդյոք քաղաքական ուժերի (կամ ընտրության մասնակիցների) ներկայացուցչական հավասարակշռություն:
- ► ԸՊՄ-ի անդամների ընտրության գործընթացը կրում է արդյո՞ք կանոնավոր բնույթ: Արդյո՞ք այդ գործընթացի կանոններն ընդհանուր առմամբ համաձայնեցված են:
- ► Կարո՞ղ է արդյոք ԸՊՄ-ն գործել ազատորեն՝ չենթարկվելով միջամտության կամ ահաբեկման:
- ► Արդյո՞ք ԸՊՄ-ն ունի պատշաճ ֆինանսական միջոցներ և այլ ռեսուրսներ:
- ► Արդյո՞ք ԸՊՄ-ն գործում է օրենքին և ընթացակարգային նորմերին համապատասխան:
- ► Արդյո՞ք ԸՊՄ-ն պահպանում է օրենքով սահմանված վերջնաժամկետները: Արդյո՞ք Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատշաճ ժամանակահատվածում արդյունավետորեն պլանավորում է անհրաժեշտ կանխատեսելի բոլոր քայլերը:
- ► Արդյո՞ք ԸՊՄ-ն աշխատում է կոլեգիալ, համաձայնեցված և կառուցողական

եղանակով: Արդյո՞ք բոլոր անդամները կարող են ստանձնել իրենց պաշտոնը ընտրությունների համար պատասխանատու մարմնի կազմում: Արդյո՞ք բոլոր անդամների համար հավասարապես հասանելի է տեղեկատվությունը:

- ► Արդյո՞ք ԸՊՄ-ի գործունեությունը թափանցիկ է: Արդյոք այն թու՞յլ է տալիս հավատարմագրված ներկայացուցիչներին, դիտորդներին և ԶԼՄ-ներին ուսումնասիրել իր կողմից կատարվող աշխատանքները:
- ► Արդյո՞ք ԸՊՄ-ն պատշաճ կերպով ներկայացնում է իր աշխատանքները ընտրության գործընթացի շահագրգիռ կողմերին և հասարակության լայն զանգվածներին:
- ► Կա՞ արդյոք հստակ տարանջատում ԸՊՄ-ի տարբեր մակարդակների դերերի միջև:
- ► Արդյո՞ք համապատասխան որոշումները/հրահանգները (կարգերը, կանոնակարգերը) պատշաճ կերպով և ժամանակին են կայացվում և ներկայացվում ստորադաս օղակներին:
- ► Արդյո՞ք ԿԸՀ-ն ապահովում է պատշաճ և պատեհ վերապատրաստում ԸՊՄ-ի բոլոր մակարդակներում:
- ► Արդյո՞ք ընտրություններին վերաբերող զգայուն նյութերը կազմվում են այնպես, որ երաշխավորվի դրանց ամբողջականության պահպանումը:

**Կանանց, ազգային փոքրամասնությունների**
**և հատուկ կարիքներ ունեցող խմբերի մասնակցությունը**

- ► ԸՊՄ-ի կազմում կա՞ն արդյոք կանայք, ովքեր զբաղեցնում են ղեկավար պաշտոններ: Արդյո՞ք նրանք իրական ազդեցություն ունեն:
- ► Արդյո՞ք ընտրական հանձնաժողովները տիրապետում են այն հարցերին, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ կանանց իրավունքների վրա: Օրինակ՝ ընտանեկան քվեարկությունը: Արդյո՞ք նրանք այդ հարցերի լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկել են:
- ► Արդյո՞ք ԸՊՄ-ի մարմինները բավարար չափով բազմազան են և ազգային և տեղական մակարդակներում որոշ չափով արտացոլում են բնակչության էթնիկ կազմը:
- ► Ընտրությունների դիտորդական առաքելության մարմինների պաշտոնատար անձինք տեղյա՞կ են այն խնդիրներին, որոնց բախվում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ՆՏԱ-ները, փախստականները կամ քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչությունը: Արդյո՞ք նրանք պատրաստ են արդյունավետ կերպով արձագանքել այդ խնդիրներին:

## Դ. Ընտրողների ուսուցանում

Ընտրողներին կրթելուն և իրազեկելուն ուղղված զեկույցների պատրաստումը պետք է սկսվի այս երկու հասկացությունները հստակ սահմանելով և որոշելով, թե որ ասպեկտներն են մոնիթորինգի ենթարկվելու: Այս որոշումը պայմանավորված է դիտորդական առաքելության շրջանակով, որը սահմանված է ընտրական տվյալ շրջափուլի համար: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները սովորաբար գնահատում են ընտրողներին իրազեկելու և կրթելու ծրագրերի մասշտաբները և արդյունավետությունը, որոնք իրագործում են տարբեր շահագրգիռ կողմեր, ինչպիսիք են՝ ԸՊՄ-ն, կուսակցությունները կամ այլ ՔՀԿ-ներ: Կարելի է կապեր

ստեղծել կրթական ծրագրերի և ընտրությունների տարբեր խմբերի (կանայք, երիտասարդները և էթնիկ խմբերը) մասնակցության մակարդակի միջև:

Ընտրողներին իրազեկելուն ուղղված ծրագրերով սովորաբար տրամադրվում են հիմնական տեղեկություններ քվեարկության ընթացակարգերի, գրանցման պահանջների, վերջնաժամկետների վերաբերյալ, ինչպես նաև ընդհանուր բնույթի տեղեկություններ ընտրությունների մասին: Այդ ծրագրերը տրամադրում են նաև տեղեկատվություն և օգտագործում են այնպիսի մեթոդներ, որոնք նպատակ ունեն խրախուսել քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին, իրազեկել ժողովրդավարական ընդհանուր գործընթացին մասնակցելու իրավունքի մասին, կապ ստեղծել ընտրությունների և առավել մասշտաբային ասպեկտների միջև, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, այդ թվում՝ առաջին անգամ ընտրող անձանց, կանանց, փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների մասնակցությունը:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են որոշում կայացնել այս ասպեկտներից մեկի կամ երկուսի շուրջ կենտրոնանալու վերաբերյալ: Կարող են հաշվի առնվել հետևյալ հարցադրումները:

**Ռազմավարությունը**

- Արդյո՞ք օրենքը պարտավորեցնում է ԸԳՄ-ին իրազեկել ընտրողներին ընտրական գործընթացի բոլոր ասպեկտների մասին:
- Ընտրությունների համար պատասխանատու մարմինն ունի արդյո՞ք ընտրողներին համապատասխան գիտելիքներով զինելու ռազմավարություն:
- Ովքե՞ր են ընդգրկված ընտրողներին իրազեկելու/կրթելու գործընթացում (ԸԳՄ մարմինները, կուսակցությունները, կենտրոնական կառավարական հաստատությունները, լրատվամիջոցները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները):
- ԸԳՄ-ն և քաղաքացիական հասարակությունն արդյո՞ք որևէ կերպ համագործակցում են ընտրողներին իրազեկելու/կրթելու կամ քաղաքացիական հասարակության առավել մասշտաբային ծրագրեր իրականացնելու ոլորտում:
- ԸԳՄ-ն ունի՞ արդյոք ընտրողներին իրազեկելուն/կրթելուն ուղղված ծրագրերի արդյունավետությունը գնահատելու մեթոդներ (գնահատելու համար, թե արդյոք ընտրողները տեղյակ են ընտրական գործընթացից և ունեն տեղեկություններ թեկնածուների, կուսակցությունների, գրանցման և քվեարկության պահանջների վերաբերյալ):

**Ժամկետները**

- Արդյո՞ք տեղեկատվությունը հասանելի է բոլոր ընտրողներին և տրամադրվում է ճիշտ ժամանակին:
- Արդյո՞ք ընթացակարգերին, ժամկետներին և ընտրական տեղամասերին առնչվող տեղեկատվությունը հասանելի է նաև նախքան ընտրողների գրանցման գործընթացն սկսելը:
- Արդյո՞ք ընտրական օրենսդրության/ընթացակարգային փոփոխությունները ժամանակին են բացատրվում ընտրողներին, որպեսզի վերջիններս

կարողանան ըմբռնել այդ ամենը:

**Բովանդակությունը**

- Ընտրողներին կրթելուն ուղղված ծրագրերը տրամադրում են արդյո՞ք տեղեկություններ ժողովրդավարական հասարակությունում քաղաքացիների դերակատարման և պարտականությունների մասին: Կա՞ն արդյոք քաղաքացիական կրթության առավել մասշտաբային ծրագրեր: Ո՞վ է իրագործում դրանք:
- Արդյո՞ք տեղեկատվությունը հստակ կերպով է ներկայացվում ընտրողներին: Արդյո՞ք տեղեկատվությունը ներկայացվում է անաչառ և պատշաճ կերպով (օրինակ՝ քվեաթերթիկների վրա նշված չե՞ն արդյոք որոշ մրցակիցների անուններ):
- Ընտրողների իրավունքների և պարտականությունների մասին տեղեկատվությունն արդյո՞ք բավարար է:
- Ժամկետների և ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունն արդյո՞ք բավարար է (քվեարկության ընթացակարգերը, որտեղ, երբ, ինչպես քվեարկել):
- Ընտրողների գրանցման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունն արդյո՞ք հստակ է՝ որտեղ, երբ և ինչպես գրանցվել: Ընտրողները կարո՞ղ են արդյոք ստուգել իրենց տվյալները ընտրացուցակներում:

**Թիրախային լսարանը**

- Կապի ի՞նչ միջոցներ են օգտագործվում (ավանդական կամ առցանց լրատվամիջոցներ և սոցիալական ցանցեր):
- Կապի միջոցները կամ տեղեկատվությունը հաղորդելու տեխնիկան արդյո՞ք հարմարեցվում են լսարանին (օրինակ՝ երիտասարդ ընտրողների պարագայում օգտագործվում է արդյո՞ք սոցիալական մեդիա: Ե՞րբ և ինչպե՞ս են կիրառվում տպագիր կամ աուդիո նյութեր և այլն):

**Ընտրողներին՝ մասնավորապես կանանց հասցեագրված տեղեկատվություն**

- Կա՞ արդյոք մասնավորապես կանանց ուղղված տեղեկատվություն:
- Քվեարկության վերաբերյալ տեղեկատվությունն արդյո՞ք հասանելի է կանանց (օրինակ՝ արդյոք հաշվի են առնված գրագիտության և լեզուների իմացության տարբեր մակարդակները):
- Ընտրողների գրանցման վերաբերյալ տեղեկատվությունն արդյո՞ք հասանելի է բոլոր կանանց:
- Իշխանությունները, կուսակցությունները, լրատվամիջոցները կամ ՀԿ-ները ծավալու՞մ են արդյոք ընտրողների գրանցման օժանդակությանն ուղղված աշխատանքներ՝ կենտրոնացնելով իրենց ուշադրությունը կանանց վրա:
- Կա՞ արդյոք որևէ գործոն, որը սահմանափակում է ընտրությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը կանանց համար:

**Ընտրողներին՝ մասնավորապես ազգային փոքրամասնություններին հասցեագրված տեղեկատվություն**

- Արդյո՞ք ԸՊՄ-ն իրականացնում է ընտրողներին իրազեկելուն/կրթելուն ուղղված աշխատանքներ՝ նախատեսված տվյալ երկրում բնակվող փոքրամասնությունների համար: Գրանցման և քվեարկության

ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությունն արդյո՞ք հասանելի է այն լեզուներով, որոնցով խոսում են այդ փոքրամասնությունները:

- Ընտրողներին կրթելուն ուղղված ծրագրերը, որոնք լուսաբանվում են լրատվամիջոցներով, արդյո՞ք հասանելի են երկրի բոլոր անկյուններում, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների կողմից բնակեցված տարածքներում:
- Ազգային փոքրամասնությունները ներկայացնող հավանական թեկնածուներն արդյո՞ք պատշաճ կերպով տեղեկացված են առաջադրման և գրանցման ընթացակարգերի վերաբերյալ:
- Կա՞ն արդյոք ՀԿ-ներ, որոնք իրականացնում են ընտրողներին իրազեկելուն/կրթելուն ուղղված ծրագրեր՝ մասնավորապես կենտրոնացնելով իրենց ուշադրությունը փոքրամասնությունների վրա: Կա՞ն արդյոք փոքրամասնությունները ներկայացնող ակտիվ ՀԿ-ներ, որոնք նաև ծավալում են ընտրողների շրջանում իրազեկմանն ուղղված աշխատանքներ:

**Ընտրողներին՝ մասնավորապես հատուկ կարիքներ ունեցող խմբերին հասցեագրված տեղեկատվություն**

- Առկա են արդյո՞ք ընտրողների կրթական ծրագրեր՝ ուղղված բնակչության այն հատուկ խմբերին, որոնք ընտրություններում սովորաբար ակտիվ մասնակցություն չեն ունենում:
- Իրականացվում են արդյո՞ք ընտրողների կրթության աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են առաջին անգամ քվեարկող անձանց, տարեց և ոչ գրաճանաչ ընտրողներին:
- Կա՞ն արդյոք ընտրողներին իրազեկելուն ուղղված նյութեր, որոնք հասանելի են երկրից դուրս բնակվող քաղաքացիների, փախստականների կամ ՆՏԱ-ների համար:
- Քաղաքացիական կրթության և ընտրողների կրթության համար նախատեսված նյութերը հասանելի են արդյո՞ք ՆՏԱ-ների, փախստականների, քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչության կամ հեռավոր շրջաններում բնակվող անձանց համար:
- Արդյո՞ք մեծ է անվավեր քվեաթերթիկների թիվը, ինչը նշանակում է, որ ընտրողները հավանաբար չեն հասկանում գործընթացի էությունը: Արդյո՞ք անվավեր քվեաթերթիկները կենտրոնացված են որոշակի տարածքում կամ արձանագրվել են կոնկրետ համայնքում:

## Ե. Ընտրացուցակներ և ընտրողների գրանցում

Ընտրողների գրանցման ընդհանուր գործընթացը գնահատելու նպատակով անհրաժեշտ է քննարկել այդ գործընթացը կարգավորող օրենսդրությանն առնչվող հարցերը, օրենքների իրագործման կարգը և ընտրացուցակների որակը:

Երբ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները որոշում են կայացնում, թե ընտրողների գրանցման գործընթացի որ բաղադրիչները պետք է դիտանցել, նրանք կարող են կենտրոնացնել իրենց ջանքերը ստորև թվարկված բոլոր ասպեկտների կամ դրանցից մեկի վրա՝ ելնելով իրենց դիտորդական առաքելության շրջանակից.

- ►ընտրացուցակների որակը (հաշվի առնելով, որ ոչ մի ցուցակ երբեք լիարժեք ճշգրիտ չի լինում),
- ►ընտրողների գրանցման ընդհանուր գործընթացը,
- ►հանրային իրազեկման քարոզարշավը՝ տեղեկացնելու ընտրողներին գրանցման ընթացակարգերի և վերջնաժամկետների վերաբերյալ:

Հետևյալ հարցերը, որոնք կարելի է հաշվի առնել ընտրողների գրանցման գործընթացի վերաբերյալ զեկույց պատրաստելիս, ներառում են նաև ընտրացուցակների որակի ասպեկտը:

**Օրենսդրությունը**

- ►Օրենքում արդյո՞ք հստակ են ներկայացված ընտրողների գրանցման գործընթացը կարգավորող պահանջները և անձի ընտրելու իրավունքը որոշելու կարգը:
- ►Արդյո՞ք ընտրողների գրանցմանն առնչվող օրենքները հանգեցրել են նախկինում հակասությունների, և եթե այո, ապա որո՞նք են եղել բարձրացված հիմնական հարցերը:
- ►Ընտրելու իրավունքին վերաբերող չափանիշները բավարարո՞ւմ են ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջներին և համապատասխանո՞ւմ են գոյություն ունեցող միջազգային չափանիշներին և բարեխիղճ գործելակերպին (քաղաքացիությունը, տարիքը, բնակությունը):
- ►Հիմնավորված են արդյո՞ք քվեարկելու իրավունքի մասով բացառությունները կամ սահմանափակումները և համապատասխանո՞ւմ են գործող մյուս օրենքներին:
- ►Կա՞ն արդյոք ներպետական և միջազգային դիտորդների կողմից տրված կարևոր հանձնարարականներ գրանցման գործընթացը բարելավելու ուղղությամբ, և ինչպե՞ս է ընթանում այդ հանձնարարականների իրագործումը:
- ►Արդյո՞ք ընտրողների գրանցումը կարգավորող օրենսդրական բարեփոխումների գործընթացը թափանցիկ է հանրության համար:

**Ընտրացուցակները և ընտրողների գրանցումը նախքան ընտրությունների մեկնարկը**

- ►Ընտրելու իրավունքին վերաբերող չափանիշները բավարարում են արդյո՞ք ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջներին և համապատասխանո՞ւմ են գոյություն ունեցող միջազգային չափանիշներին:
- ►Ե՞րբ է վերջին անգամ թարմացվել ընտրացուցակը այդ գործընթացի համար պատասխանատու հաստատությունների կողմից: Արդյո՞ք պատասխանատու հաստատությունները տրամադրում են զեկույցներ ընտրացուցակները թարմացնելուն ուղղված իրենց գործունեության վերաբերյալ:
- ►Արդյո՞ք ընտրացուցակները կազմվում և թարմացվում են գործող օրենսդրության դրույթներին համապատասխան: Ընտրացուցակի թարմացման նպատակով արդյոք անհրաժե՞շտ է լինում վերանայել գործող օրենքներից որևէ մեկը:
- ►Որո՞նք են եղել ընտրացուցակների որակի առնչությամբ նախկինում

բարձրացված հիմնական հարցերը: Արդյո՞ք դրանք կապված են ընտրողների որոշակի խմբի կամ աշխարհագրական որևէ շրջանի հետ:

► Որո՞նք են շահագրգիռ անձանց կողմից բարձրացված ներկայիս խնդիրները: Արդյո՞ք գործընթացը թափանցիկ է:

► Արդյո՞ք ընտրողները հնարավորություն ունեն ստուգել իրենց անունները և տվյալների ճշգրտությունը ընտրացուցակում: Ինչպե՞ս են դրսևորվում այդ հնարավորությունները:

► Ընտրացուցակում կա՞ն արդյոք անուններ, որ տարբեր պատճառներով չպետք է ընդգրկված լինեն դրանում:

► Քաղաքացիներին արդյո՞ք բավարար հնարավորություն է ընձեռնվում՝ ներկայացնելու դիմում-բողոքներ և պահանջելու ուղղումներ կատարել ընտրացուցակում:

► Ընտրողներին, մրցակից կողմերին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին արդյո՞ք հնարավորություն է ընձեռնվում՝ ստուգելու, թե ինչպես է ընթանում ընտրացուցակների առնչությամբ ներկայացված դիմում-բողոքների քննությունը:

► Արդյո՞ք բոլոր քաղաքացիները կարող են գրանցվել քվեարկելու նպատակով: Կա՞ն արդյոք գրանցվելու հետ կապված խոչընդոտներ որոշակի խմբերի դեպքում (օրինակ՝ փոքրամասնությունների պարագայում):

► Կա՞ն արդյոք հստակ ընթացակարգեր՝ ապահովելու համար, որ քվեարկելու իրավունք ունեցող բոլոր ընտրողներն ընդգրկված կլինեն այդ գործընթացում, կթույլատրվի քվեարկել բացառապես դրա իրավունքն ունեցողներին և կկանխվեն բազմակի քվեարկության դեպքերը:

► Կա՞ն արդյոք հատուկ դրույթներ (եթե կան, ապա որքանո՞վ են դրանք հանգամանալից ներկայացված)՝ այլընտրանքային գրանցման ընթացակարգերի վերաբերյալ դրույթներ (հեռակա կարգով քվեարկելու տեղեկանքի տրամադրում, քվեարկության նպատակով օգտագործվող ինքնության քարտ): Եթե այո, ապա արդյո՞ք դրանք պատշաճ կերպով են կիրարկվում:

► Արդյո՞ք ընտրողների գրանցման կենտրոններն ստեղծվում են գործող օրենսդրությանը համապատասխան, և արդյո՞ք հրապարակվում է դրանց գտնվելու վայրը:

► Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և մրցակից կողմերին ընձեռնվու՞մ է արդյոք բավարար հնարավորություն՝ ստուգելու ընտրացուցակների ճշգրտությունը (օրինակ՝ արդյո՞ք նրանց տրամադրվում են ընտրացուցակների պատճենները): Այս կազմակերպություններն ու անհատներն արդյո՞ք հնարավորություն ունեն դիմում-բողոքներ ներկայացնելու և պահանջելու, որ ընտրացուցակում շտկումներ կատարվեն:

► Արդյո՞ք քաղաքացիական հասարակության կազմակերպություններին թույլատրվում է դիտանցել ընտրացուցակների կազմման բոլոր փուլերը, և այդ նպատակով նրանցից պահանջվո՞ւմ է լրացուցիչ հավատարմագրում անցնել:

► Արդյո՞ք իշխանություններն անց են կացնում տեղեկատվական քարոզարշավներ, որոնցով խրախուսում են քաղաքացիներին գրանցվել կամ ընտրացուցակում ստուգել իրենց տվյալների ճշգրտությունը: Ինչպե՞ս է

գնահատվում տեղեկատվական այսպիսի քարոզարշավների ազդեցությունը:

- Քաղաքացիական հասարակության խմբերն արդյո՞ք ներգրավված են ընտրողների գրանցմանն ուղղված տեղեկատվական քարոզարշավներում և ինչպե՞ս են գնահատում իրենց քարոզարշավների ազդեցությունը: Կա՞ն արդյոք կուսակցական եղանակով գործող խմբեր, որոնք իրականացնում են տեղեկատվական նմանատիպ քարոզարշավներ:
- Ընտրացուցակների պատճենները փակցվում են արդյո՞ք ընտրական տեղամասերում այնպես, ինչպես պաշտոնապես հաստատված վերջնական ցուցակը:
- Կա՞ն արդյոք հստակ կանոններ ընտրացուցակում քվեարկողների թիվն ընտրությունների օրվան նախորդող ժամանակահատվածից բավականաչափ շուտ հրապարակելու վերաբերյալ՝ ըստ վարչական շրջանի և ընտրական տեղամասի: Արդյո՞ք կատարվում են այդ կանոնների պահանջները:

**Ընտրացուցակները ընտրությունների օրվա ընթացքում**

- Ընտրացուցակների հետ կապված ինչպիսի՞ խնդիրներ են առաջացել ընտրությունների օրը և ինչպիսի՞ ընթացք է տրվել դրանց:
- Լրացուցիչ ընտրացուցակներին առնչվող դրույթներն արդյո՞ք համահունչ են ներպետական գրանցմանը և գործող միջազգային չափանիշներին):

**Կանանց մասնակցությունը**

- Կա՞ն արդյոք խոչընդոտներ կանանց՝ քվեարկելու նպատակով կատարվող գրանցմանը:
- Պահպանվու՞մ են արդյոք անվան/ազգանվան փոփոխության (օրինակ՝ ամուսնությունից հետո) հետ կապված ճշգրիտ տվյալներ:
- Արդյո՞ք գրասենյակների գտնվելու վայրը հարմար է, և դրանք բա՞ց են այնպիսի ժամերի, որ կանայք կարողանան գրանցվել:
- Կարո՞ղ են արդյոք կանայք անձամբ գրանցվել, թե՞ գրանցվում են որպես ընտանիքի կամ տնային տնտեսության անդամ:

**Ազգային փոքրամասնությունների և հատուկ կարիքներ ունեցող խմբերի մասնակցությունը**

- Գրանցման ձևերը հասանելի՞ են արդյոք տարբեր լեզուներով:
- Ցուցաբերվու՞մ է արդյոք օգնություն գրագիտության հարցում խնդիրներ ունեցող անձանց:
- Գոյություն ունեցող գրանցման համակարգի միջոցով ինչպե՞ս է արտացոլված ազգային փոքրամասնությունների գրանցումը և մասնակցությունն ընտրություններին:
- Ազգային փոքրամասնությունների համայնքների անդամները, քվեարկողի կարգավիճակով գրանցվելիս կամ քաղաքացիություն ստանալիս, արդյո՞ք հանդիպում են որևէ խնդրի: Ի՞նչ բնույթի են այդ խնդիրները: Դրանք տեխնիկակա՞ն բնույթի խնդիրներ են, թե՞ քաղաքական: Արդյո՞ք դրանք պահանջում են օրենսդրական փոփոխություններ:
- Անձը հաստատող ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ քվեարկության նպատակով գրանցվելու համար: Դրանցում արդյո՞ք արտացոլված է փաստաթղթի տիրոջ էթնիկ կամ կրոնական ինքնությունը:

- Ազգային փոքրամասնությունների համայնքներին տրամադրվում է արդյո՞ք պատշաճ տեղեկատվություն ընտրողների գրանցման գործընթացի վերաբերյալ: Այդ տեղեկատվությունը մատչելի՞ է փոքրամասնությունների կողմից օգտագործվող լեզուներով:
- Գործող գրանցման համակարգով արդյո՞ք ապահովվում է հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը: Կա՞ն արդյոք այլընտրանքային տարբերակներ, որոնք հնարավորություն են ընձեռում հաշմանդամություն ունեցող անձանց գրանցվել առանց լրացուցիչ ծախսեր կատարելու կամ դժվարություններ կրելու:
- Ընտրությունների համար պատասխանատու մարմինն ստեղծում է արդյո՞ք իրազեկմանն ուղղված հատուկ նյութեր կամ մեխանիզմներ, որոնք կարգավորում են հաշմանդամություն ունեցող ընտրողների գրանցումը:
- Մշտական բնակության կամ հասցեի գրանցումն արդյո՞ք անհրաժեշտ պահանջ է համարվում ընտրողների գրանցման համար: Ինչպե՞ս է այդ հանգամանքն անդրադառնում ՆՏԱ-ների և քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչության ներկայացուցիչների վրա:

## Զ. Մրցակից կողմերի գրանցումը

Մասնակիցների (կուսակցությունների, թեկնածուների) գրանցման գործընթացը գնահատելու նպատակով հարկավոր է հաշվի առնել այդ գործընթացը կարգավորող օրենսդրության և դրա իրականացման ձևերի հետ կապված հարցերը: Ընտրական արդար գործընթաց ապահովելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել կուսակցությունների և թեկնածուների գրանցման բաց և ներառական (մասնակցային) միջավայր, որը կարելի է իրագործել օրենսդրության և բարեխիղճ գործելակերպերի ներդրման միջոցով: Անկախ կուսակցությունների և թեկնածուների գաղափարախոսությունից՝ օրենսդրական շրջանակը պետք է ապահովի հավասար պայմաններ վերջիններիս մասնակցության և գրանցման համար:

Տեղական դիտորդական աշխատանքների ընթացքում պետք է ուսումնասիրության ենթարկվեն գրանցման ընթացակարգերը և պետք է գնահատվի, թե որքանով են դրանք հստակ և արդյոք հետևողականորեն իրագործվում են: Անհրաժեշտ է մանրակրկիտ վերլուծության ենթարկել թեկնածությունների նկատմամբ սահմանափակումների տեսակները: Թեև շատ հաճախ հանդիպում են դեպքեր, երբ սահմանափակումները թելադրված են օրենսդրության պահանջներով, այդուհանդերձ, դրանք պետք է լինեն հիմնավորված և առանց խտրականության որևէ հիմքի (ի տարբերություն այն պահանջների, որոնք պարտավորեցնում են որևէ թեկնածության աջակցման ցուցակներում չափազանց մեծ քանակությամբ ստորագրությունների առկայություն կամ ընտրական գրավի մասով չհիմնավորված պահանջներ):

Ի լրումն սրան, անհրաժեշտ է նաև ուսումնասիրել կուսակցությունների և թեկնածուների գրանցմանն առնչվող տարբեր վերջնաժամկետները: Օրենսդրությամբ պետք է նախատեսվեն ողջամիտ ժամկետներ, որպեսզի թեկնածուները ներկայացնեն իրենց գրանցման փաստաթղթերը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել այն թեկնածուներին, որոնց դիմումները մերժվել են բացակայող փաստաթղթերի հիմնավորմամբ, ևս մեկ անգամ վաղօրոք ներկայացնել իրենց փաստաթղթերը, որպեսզի կարողանան մասնակցել քարոզարշավին: Ընտրությունների տեղական դիտորդները պետք է զեկույց պատրաստեն թեկնածուներին իրավունքներից զրկելու գործընթացի վերաբերյալ և հետևեն բողոքարկման գործընթացին, որպեսզի կարողանան գնահատել, թե ինչպես են կարգավորվում վեճերը: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել թեկնածությունը հանելու դեպքերին և զեկուցել այն դեպքերի վերաբերյալ, որոնցում

նկատվում են ճնշման կամ ահաբեկման նշաններ:

Մասնակիցների գրանցման վերաբերյալ զեկույց կազմելու նպատակով խորհուրդ է տրվում հաշվի առնել հետևյալ հարցերը:

**Մրցակից կողմերի գրանցումը**

- Արդյո՞ք կուսակցությունների գրանցման և գործունեության ընթացակարգերը հստակ և թափանցիկ են:
- Արդյո՞ք օրենքով հստակ կարգավորված է ընտրություններում անձի կողմից իր թեկնածությունն առաջադրելու իրավունքը, և արդյո՞ք այն հավասար հնարավորություններ է ընձեռում քաղաքական դաշտի բոլոր մրցակիցներին:
- Արդյո՞ք մրցակից կողմերը նախկինում գրանցման գործընթացի վերաբերյալ մտահոգություններ են հայտնել: Որո՞նք են եղել հիմնական խնդիրները, և արդյո՞ք դրանց մասին նշվել է տեղական և միջազգային դիտորդների կողմից:
- Արդյո՞ք մասնակիցների գրանցման ընթացակարգերը բաց են և ներառական (ամբողջական, համապարփակ):
- Արդյո՞ք այդ ընթացակարգերն իրականացվում են հետևողականորեն և անկողմնակալ կերպով:
- Ընտրություններում անձի կողմից իր թեկնածությունն առաջադրելու իրավունքի սահմանափակումներն ունե՞ն իրավական հիմնավորում: Ինչպե՞ս են դրանք կիրառվում:
- Գրանցումը մերժելու դեպքում մասնակիցներն ունե՞ն բողոք ներկայացնելու իրավունք: Արդյո՞ք ընտրություններից առաջ ողջամիտ ժամկետում իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորություն է ընձեռնվում, որպեսզի մրցակիցները կարողանան մասնակցել քարոզարշավին:
- Ի՞նչ հիմքով է կայացվել թեկնածությունը մերժելու որոշումը:
- Արդյո՞ք ընտրական գրավի մասով պահանջները ողջամիտ են և չեն պարունակում խտրական որևէ հիմք:
- Արդյո՞ք թեկնածությանն աջակցող ստորագրությունների մասին պահանջները ողջամիտ են և չեն պարունակում խտրական որևէ հիմք:
- Գոյություն ունե՞ն հստակ կանոններ՝ թեկնածուներից յուրաքանչյուրին աջակցող ստորագրությունները ստուգելու համար: Այդ կանոնները հետևողականորե՞ն են կիրառվում:
- Կա՞ն այնպիսի խմբեր (օրինակ՝ կանայք, փոքրամասնությունների ներկայացուցիչներ), որոնք թեկնածուի կարգավիճակով գրանցվելու ընթացքում բախվում են ավելի շատ խոչընդոտների:
- Եթե դիմումի փաթեթում ի հայտ են գալիս տեխնիկական թերություններ, թեկնածուներն ունե՞ն արդյոք դրանք ուղղելու և դիմումը կրկին ներկայացնելու հնարավորություն:
- Արդյոք մե՞ծ է եղել այն թեկնածուների թիվը, ովքեր գրանցվելուց հետո հանել են իրենց թեկնածությունը: Եթե այո, ապա թեկնածությունը հետ վերցնելու հիմքերն արդյո՞ք բավարար և օրինական են եղել (օրինակ՝

թեկնածությունն առաջադրող անձինք ենթարկվե՞լ են ճնշման կամ ահաբեկման):

- ► Թեկնածությունը հանելու գործընթացներում նկատվե՞լ է արդյոք որևէ օրինաչափություն (որոշակի քաղաքական պատկանելություն, տարածաշրջանային բաշխում):

**Կուսակցությունները (կանանց մասնակցությունը)**

- ► Որքա՞ն է կազմում կուսակցություններում ղեկավար պաշտոն զբաղեցնող կանանց թիվը:
- ► Ինչպե՞ս են կազմվում թեկնածուների ցուցակները: Կա՞ն արդյոք կանանց համար նախատեսված հատուկ կարգավորումներ, ինչպես օրինակ՝ միայն կին թեկնածուների ցուցակներ:
- ► Գոյություն ունե՞ն արդյոք ընտրություններում կանանց թեկնածությունը խրախուսող հատուկ միջոցներ:
- ► Քաղաքական ծրագրերն անդրադառնու՞մ են արդյոք կանանց կարիքներին:
- ► Գոյություն ունե՞ն արդյոք կին ընտրողների աջակցությունը ստանալու հատուկ միջոցներ:

**Թեկնածուների գրանցումը (կանանց մասնակցությունը)**

- ► Գոյություն ունե՞ն արդյոք թեկնածուների ցուցակների մասով կանանց օժանդակող հատուկ կանոններ՝ կանանց քվոտա («զիպինգ», ինչը բառացի նշանակում է ցուցակներում կանանց և տղամարդկանց հաջորդական գրանցում), բացառապես կանանց համար նախատեսված մանդատներ:
- ► Թեկնածությունն առաջադրելու համար պահանջվող ստորագրությունների քանակը կամ գրավի չափը խոչընդոտու՞մ է արդյոք կանանց՝ թեկնածուի կարգավիճակով ընտրություններում հանդես գալուն:
- ► Ինչպե՞ս են պաշտոնատար անձինք վարվում թեկնածուների ցուցակների հետ, եթե դրանք չեն բավարարում որևէ «դրական գործողություն» ձեռնարկելու համար անհրաժեշտ պահանջները:

**Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը**

- ► Կա՞ն արդյոք թեկնածուների համար սահմանված պահանջներ լեզվական գիտելիքների մասով, և եթե այո, ապա ինչպիսի՞ ազդեցություն են դրանք ունենում ազգային փոքրամասնությունների՝ ընտրական գործընթացներին մասնակցելու հնարավորության վրա:
- ► Ինչպե՞ս են կազմվում կուսակցական ցուցակները: Կա՞ն արդյոք պահանջներ փոքրամասնություններին տեղ հատկացնելու վերաբերյալ:

## Է. Նախընտրական քարոզարշավ

**Քարոզարշավը**

Ազատ և արդար ընտրություններ անցկացնելու համար անհրաժեշտ է, որ բոլոր մրցակիցները (կուսակցություններ, թեկնածուներ) և նրանց համակիրները (աջակիցները) կարողանան ընտրազանգվածին ազատորեն փոխանցել իրենց քաղաքական ուղերձները, որպեսզի ընտրողները կատարեն գիտակցված ընտրություն: Քարոզարշավի հիմքում պետք է լինի հավաքների և արտահայտվելու ազատության իրավունքի ազատ և անարգել իրականացումը:

Մասնավորապես, օրենսդրական շրջանակը պետք է ապահովի, որպեսզի

յուրաքանչյուր կուսակցություն և թեկնածու ազատ և հավասար պայմաններով կարողանա հաղորդակցվել ընտրազանգվածի անդամների հետ և հնարավորություն ունենա վերջիններիս հաղորդել իր քաղաքականությունը, ներկայացնել մասնագիտական իր որակները, հանդիպումներ ունենալ և շրջագայել երկրով մեկ: Հավասար հնարավորությունների երաշխիքները կարող են լրացուցիչ կարգավորվել այնպիսի վարչական մարմինների կողմից, ինչպիսին է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, որը պետք է վերահսկի քարոզարշավների պատշաճ անցկացումը: Իշխանությունները պետք է իրագործեն քարոզարշավը կարգավորող նորմերը և ապահովեն դրանց կատարումը հետևողական և անկողմնակալ կերպով:

Գործող կարգավորումները պետք է նաև ապահովեն, որպեսզի պետական միջոցները հավասարապես հասանելի լինեն և կանխվեն վարչական կամայականությունները: Հատկապես կարևոր է, որ քարոզարշավը զերծ լինի բռնություններից, ճնշումներից կամ ահաբեկումներից: Իրենց նախընտրական գործունեության առումով քաղաքացիները չպետք է ունենան մտավախություն, թե պատժի կենթարկվեն, օրինակ՝ կազատվեն աշխատանքից: Բոլոր անձինք պետք է զերծ լինեն իշխանության կողմից կիրառվող հարկադրանքից. այս առումով հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել այնպիսի խմբերի վրա, ինչպիսիք են ուսանողները, զինծառայողները, պետական հատվածի աշխատողները կամ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները: Ի լրումն սրան, անվտանգության ուժերը ահաբեկումից ձեռնպահ մնալու և այլոց կողմից ահաբեկումը կանխելու պարտավորություն ունեն:

Այս համատեքստում խորհուրդ է տրվում հաշվի առնել հետևյալ հարցերը:

**Քարոզարշավի գործընթացի գնահատումը**

- ► Հնարավո՞ր է արդյոք ազատորեն մասնակցել նախընտրական քարոզարշավին (օրենքն արդյո՞ք երաշխավորում է արտահայտվելու, հավաքների, միավորման և տեղաշարժի ազատությունները՝ առանց խտրականության): Այս իրավունքների սահմանափակումներն արդյո՞ք «անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում»:
- ► Արդյո՞ք օրենքի առաջ հավասարությունը ապահովված է բոլոր կուսակցությունների ու թեկնածուների համար: Օրենսդրական շրջանակը բոլոր մրցակիցների համար ապահովու՞մ է արդյոք հավասար հնարավորություններ:
- ► Օրենքը կարգավորու՞մ է արդյոք կուսակցությունների և թեկնածուների վարքագիծը նախընտրական քարոզարշավների ժամանակ և ապահովու՞մ է ակտիվ և բաց քարոզարշավ՝ զերծ կառավարության միջամտությունից:
- ► Գոյություն ունե՞ն արդյոք ուղղակի կամ անուղղակի սահմանափակումներ կին թեկնածուների և վերջիններիս աջակիցների՝ քարոզարշավ իրականացնելու հնարավորության նկատմամբ: Գոյություն ունե՞ն ուղղակի կամ անուղղակի սահմանափակումներ ազգային փոքրամասնությունների թեկնածուների և նրանց աջակիցների՝ քարոզարշավ իրականացնելու հնարավորության նկատմամբ:
- ► Արդյո՞ք քարոզարշավը կարգավորող նորմերը իրականացվում և կենսագործվում հետևողական, անկողմնակալ և արդյունավետ կերպով:
- ► Կա՞ն արդյոք բռնության, ահաբեկման, հետապնդման կամ բռնության ու ատելության քարոզչության և ազգային, ռասայական կամ կրոնական ատելության հրահիրման փաստարկված դեպքեր: Որևիցե կին թեկնածու

բախվե՞լ է միջամտության կամ ահաբեկման դեպքերի իր քարոզարշավի ընթացքում: Տղամարդիկ նույնպես հանդիպու՞մ են նմանատիպ երևույթների: Նման միջադեպերի լուծման ուղղությամբ ձեռնարկվում են արդյո՞ք արագ, հետևողական և արդյունավետ քայլեր:

► Քարոզարշավի ընթացքում իրավապահ և այլ կարգավորող մարմինները (օրինակ՝ հարկային ծառայությունը) անկողմնակալ, զուսպ, պրոֆեսիոնալ և պատշաճ կերպո՞վ են գործում:

**Քարոզարշավի ֆինանսավորումը և վարչական միջոցների չարաշահումը**

Ընտրություններում պայքարելու համար կուսակցություններն ու թեկնածուները գումարի և այլ միջոցների կարիք ունեն, որոնք հնարավոր է ձեռք բերել մասնավոր կամ հանրային աղբյուրներից: Առաջինը, որպես կանոն, նվիրատվություններ/դրամական օժանդակություններ են, մինչդեռ երկրորդը կարող են լինել պետության կողմից կատարվող օրինական հատկացումներ (ինչպես օրինակ՝ սուբսիդիաները) կամ հանրային միջոցների նվազ օրինական օգտագործումը, ինչպիսիք են՝ անձնակազմը, գրասենյակները կամ սարքավորումները: Վերջինը կարելի է դիտել որպես քարոզարշավի ֆինանսավորման քողարկված տարբերակ: Սա կարելի է տարբերակել նախորդ ստուգաթերթիկում տեղ գտած վարչական ռեսուրսների առավել հարկադրական օգտագործման դեպքերից: 1990-ական թվականների վերջից սկսած՝ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման և հանրային կամ «վարչական» միջոցների չարաշահման մոնիթորինգի համար մշակվել և գործնականում կիրառվել է տարատեսակ մեթոդաբանություն:

Հետևյալ ցանկը կարող է քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ զեկույց պատրաստող դիտորդների համար ծառայել որպես ուղեցույց:

**Քարոզարշավի ֆինանսավորումը**

► Արդյո՞ք Պետական ֆինանսավորումը կուսակցություններին կամ թեկնածուներին (կիրառելիության դեպքում) տրամադրվում է արդար հիմունքներով:

► Մրցակիցներն օրենքով սահմանված կարգով հայտարարագրե՞լ են իրենց եկամուտներն ու ծախսերը: Այդ հայտարարագրումն արդյո՞ք բավականաչափ հստակ, մանրամասն և ճիշտ ժամանակին է կատարվել, որպեսզի հնարավորություն տա արդյունավետորեն ուսումնասիրել նրանց ֆինանսավորումը:

► Մրցակիցների կողմից հայտարարված եկամտի աղբյուրները համապատասխանու՞մ են արդյոք եկամտի աղբյուրների մասին դիտորդների կողմից ձեռք բերված տեղեկատվությանը:

► Ծախսերի մասին դիտորդների կողմից արձանագրված տվյալները (կամ հաշվարկված ամբողջ ծախսը՝ արդյունքների տարածման (բառացի՝ էքստրապոլացիայի) հիման վրա) համապատասխանու՞մ են արդյոք ծախսերի մասին մրցակիցների կողմից ներկայացված տեղեկատվությանը:

► Հսկողություն իրականացնող հաստատություններն արդյո՞ք պատշաճ կերպով են կատարել իրենց գործառույթները և/կամ գնահատե՞լ են օրենսդրական շրջանակի ինքնին համապատասխանությունը:

► Քարոզարշավի ֆինանսավորման ո՞ր բաղադրիչներն են մոնիթորինգի ենթարկվել և ինչպե՞ս է դա կատարվել. եկամտի (նվիրատվություններ, պետական հատկացումներ և այլն), ծախսերի մոնիթորինգ, թե՞ երկուսը

միասին:

► Ի՞նչ առանձին նպատակ է հետապնդել բաղադրիչներից յուրաքանչյուրի դեպքում անցկացված մոնիթորինգը, օրինակ՝ արդյո՞ք մասնակիցների եկամուտների կամ ծախսերի մոնիթորինգի նպատակն է եղել համեմատել հայտարարագրված եկամուտը/ծախսը տեղեկատվության այլ աղբյուրների (օրինակ՝ դոնորների հրապարակումներ, բացահայտ նվիրատվություններ կուսակցություններին բնամթերքի տեսքով, ուսումնասիրված ծախսեր) հետ, վերլուծել հրապարակված հայտարարագրերը՝ բացահայտելու համար վստահություն չներշնչող դոնորներին կամ փոխկապակցված նվիրատվությունները, կամ բացահայտել այն նվիրատվությունները, որոնք կապված են դոնորների ստացած արտոնությունների (օգուտների) հետ (օրինակ՝ պետական պայմանագրեր):

► Արդյո՞ք մասնակիցներին տրամադրված պետական օժանդակությունը (ինչպես օրինակ՝ սուբսիդիաները, քարոզարշավի համար անհրաժեշտ միջոցները/տարածքը, եթերաժամը և այլն) համապատասխանում էր օրենքի պահանջներին և կատարվել է արդար եղանակով՝ առանց որևէ խտրականության:

► Քարոզարշավի ֆինանսավորման կարգավորումների խախտումների վերաբերյալ բողոքներ ներկայացվե՞լ են: Եթե այո, ապա դրանք ուսումնասիրվե՞լ են ճիշտ ժամանակին և անկողմնակալորեն:

Հետևյալ ցանկը կարող է որպես ուղեցույց ծառայել վարչական ռեսուրսների չարաշահումների վերաբերյալ զեկույցների պատրաստման համար:

**Վարչական ռեսուրսների չարաշահումը**

► Կարգավորվա՞ծ է արդյոք նախընտրական քարոզարշավների ժամանակ վարչական ռեսուրսների (պետական/հանրային շինություններ, ենթակառուցվածք, փոխադրամիջոցներ և մարդկային ռեսուրսներ) չարաշահման խնդիրը: Եթե այո, վարքագծի այդպիսի դրսևորումն արդյո՞ք հստակ և բավարար չափով սահմանափակված կամ արգելված է օրենքով:

► Պետական միջոցներն օգտագործվու՞մ են արդյոք մեկ կամ ավելի քաղաքական մրցակիցների նկատմամբ հարկադրանք կամ ոտնձգություն կիրառելու համար:

► Ի՞նչ տեսակի վարչական ռեսուրսներ են արձանագրվել: Քարոզարշավի համար անհրաժեշտ միջոցները կարող են լինել ինստիտուցիոնալ (գրասենյակներ, աշխատակազմ, սարքավորումներ, փոխադրամիջոցներ և այլն), բյուջետային (հանրային միջոցների ուղղակի օգտագործում) կամ կարող են կապված լինել լրատվամիջոցների հետ (պետական/հանրային լրատվամիջոցների օգտագործում):

► Օգտագործվե՞լ են արդյոք պետական հաստատությունների շինությունները, ենթակառուցվածքները կամ փոխադրամիջոցները որոշակի կուսակցությունների կամ թեկնածուների նախընտրական քարոզարշավի նպատակների համար՝ պետական աջակցության մասին իրավական նորմերով չնախատեսված եղանակով:

► Պետական ծառայողներն արդյո՞ք մասնակցել կամ ներկա են գտնվել նախընտրական քարոզչական գործունեությանը իրենց աշխատանքային ժամերին:

► Եթե տեղի է ունեցել վարչական ռեսուրսների չարաշահում, ապա որքա՞ն է

կազմում կուսակցությունների կամ թեկնածուների ֆինանսական շահույթի մոտավոր չափն այդ ռեսուրսներից:

**Կանանց մասնակցությունը**

► Քարոզարշավի ընթացքում որևէ թեկնածու բախվե՞լ է միջամտության կամ ահաբեկման դեպքերի՝ պայմանավորված գենդերային շարժառիթով:

► Քարոզարշավի ընթացքում միջոցներն արդյո՞ք հավասարապես հասանելի են կին և տղամարդ թեկնածուների համար:

**Ազգային փոքրամասնությունների և հատուկ կարիքներ ունեցող խմբերի մասնակցությունը**

► Իշխանությունները պաշտպանու՞մ են արդյոք տեղաշարժի և միավորման ազատությունը ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում:

► Ընտրողները հնարավորություն ունե՞ն արդյոք ազատորեն հաճախել քարոզարշավի շրջանակներում իրականացվող միջոցառումներին՝ առանց որևէ խոչընդոտի, ահաբեկման կամ ճնշման ենթարկվելու մտավախության:

► Թեկնածուները, այդ թվում՝ նրանք, ովքեր ներկայացնում են ազգային փոքրամասնությունների կուսակցությունները, ունե՞ն արդյոք ազատորեն շրջագայելու և քարոզարշավի շրջանակներում միջոցառումներ կազմակերպելու հնարավորություն: Ազգային փոքրամասնություն ներկայացնող թեկնածուները, միավորումներն ու կուսակցություններն ունե՞ն արդյոք քարոզարշավի ընթացքում հանրային ծառայություններից արդար հիմունքներով օգտվելու հնարավորություն:

► Ազգային փոքրամասնություններն ունե՞ն արդյոք քարոզարշավի պաստառներ և քարոզարշավին առնչվող այլ նյութեր տպելու և ցուցադրելու հնարավորություն: Կարո՞ղ են նրանք ցուցադրել այդ նյութերը փոքրամասնությունների լեզուներով:

► Թեկնածուներին ու կուսակցություններին թույլատրվու՞մ է արդյոք անցկացնել քարոզարշավը փոքրամասնությունների լեզուներով:

► Կա՞ն արդյոք ընտրությունների ընթացքում փոքրամասնությունների դեմ իրականացվող քարոզչության կամ ահաբեկման դրսևորումներ որևէ կուսակցության, անձի, խմբի կամ իշխանությունների կողմից: Եղե՞լ են արդյոք դեպքեր, երբ քարոզարշավի ընթացքում հնչել է ատելության խոսք:

► Ինչպե՞ս են թեկնածուները, կուսակցությունները կամ միավորումները անդրադառնում ազգային փոքրամասնությունների հետ կապված հարցերին իրենց նախընտրական քարոզարշավների ընթացքում:

► Նախընտրական քարոզարշավների ընթացքում հանրահավաքների համար նախատեսված վայրերը, նախընտրական գրասենյակները և ընտրատարածքային գրասենյակները հասանելի՞ են արդյոք հաշմանդամություն ունեցող անձանց համար:

► Նախընտրական քարոզարշավի նյութերը կամ կուսակցությունների կայքերը հասանելի՞ են հաշմանդամություն ունեցող անձանց, ՆՏԱ-ներին, փախստականների կամ քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչության համար:

## Ը. Ընտրությունների լուսաբանումը ԶԼՄ-ների կողմից

ԶԼՄ-ները կարևոր դեր ունեն ընտրությունների գործընթացում, քանի որ հարթակ են տրամադրում թեկնածուներին, որպեսզի վերջիններս ընտրողներին հղեն իրենց

նախընտրական ուղերձները, վերլուծում են քարոզարշավները, հաղորդում են քաղաքական տարբեր խմբերի տեսակետները և ազատորեն ներկայացնում են տեղեկատվություն այն մարդկանց մասին, ովքեր իշխանության գլուխ են կանգնած և փորձում են կրկին ստանալ այն: Միևնույն ժամանակ, լրատվամիջոցները պետք է հավատարիմ մնան արդար լուսաբանման սկզբունքներին: Ազատ և արդար ընտրական գործընթացի նպատակով հարկավոր է, որպեսզի լրատվամիջոցները բոլոր մրցակիցների նկատմամբ ցուցաբերեն հավասարակշռված դիրքորոշում և ձգտեն քաղաքական և ընտրական բոլոր կարևոր զարգացումների մասին ժամանակին, ճշգրիտ և անկողմնակալ հաղորդումներ թողարկել:

Որպես դիտորդական աշխատանքի մաս՝ լրատվամիջոցների մոնիթորինգի նպատակն է ճշգրիտ մեթոդաբանության միջոցով գնահատել ԶԼՄ-ների անաչառությունը ընտրական գործընթացի ժամանակ և դրանց համապատասխանությունը միջազգային չափանիշներին և ներպետական օրենսդրությանը: Այն վերլուծում է, թե որքանով են լրատվամիջոցները թեկնածուների համար եղել հասանելի, որպեսզի վերջիններս ընտրողներին հղեն իրենց ուղերձները, և արդյոք լրատվամիջոցներով տարածված տեղեկատվությունը բավարար էր, որպեսզի քվեարկողները քվեատուփին մոտենալիս կատարեն գիտակցված ընտրություն: Վերլուծության համար հիմք են ծառայում մրցակիցներին տրամադրված ժամաքանակի վիճակագրական տվյալները, մրցակիցների և քաղաքական մյուս կարևոր գործիչների մասին լրատվամիջոցների կողմից լուսաբանման եղանակները, կողմնակալության դեպքերի վերլուծությունները, ընտրողների իրազեկմանն ուղղված քարոզչության մասշտաբներն ու որակը կամ ընտրությունների հետ կապված տեղեկատվության արդիականությունը:

Այնուամենայնիվ, նախքան լրատվամիջոցների մոնիթորինգ իրականացնելը, որպես այդպիսին, հարկավոր է ուսումնասիրել ԶԼՄ-ների վարքագիծը կարգավորող համապատասխան օրենքներն ու կանոնակարգերը: Միևնույն ժամանակ, հարկավոր է քաջ ծանոթ լինել այն կարգավորող մարմինների դերակատարմանն ու գործառույթներին, որոնք վերահսկում են նախընտրական քարոզարշավի մասին լրատվամիջոցների կողմից կատարվող լուսաբանումները: Ավելին, վերլուծությունը պետք է նաև անդրադարձ կատարի ընտրական գործընթացի ժամանակ ԶԼՄ-ների հետ կապված բողոքներին:

Հետևյալ ցանկը կարող է լրատվամիջոցների կողմից ընտրությունների լուսաբանման վերաբերյալ զեկույց պատրաստելու ժամանակ ծառայել որպես ուղեցույց:

**Լրատվական դաշտը**

- ► Օրենսդրական շրջանակն արդյո՞ք երաշխավորում է լրատվամիջոցների ազատությունը: Եթե այո, ապա այդ ազատությունը գործնականում պահպանվու՞մ է: Լրատվամիջոցներն ի զորու՞ են ազատորեն աշխատել և գործել առանց նախնական գրաքննության (ներառյալ ինքնագրաքննությունը), ճնշման ենթարկվելու, խոչընդոտների կամ որևէ միջամտության:
- ► Գոյություն ունի՞ արդյոք բազմակարծիք և բազմազան զանգվածային լրատվության դաշտ, որի միջոցով քաղաքական տարբեր տեսակետները լսելի են դարձվում: Հանրային լրատվամիջոցները կառավարությունից անկա՞խ են գործում: Մասնավոր ԶԼՄ-ները պատկանու՞մ են արդյոք թեկնածուներին կամ կուսակցություններին: Մասնավոր լրատվամիջոցներն արդյոք սեփականության իրավունքով կուտակված են մի քանի անձանց ձեռքում այնպես, որ դա հանգեցնում է ընտրությունները կողմնակալ կամ ոչ հավասարակշռված լուսաբանելուն:
- ► Լրագրողների նկատմամբ որևէ բռնություն կիրառվե՞լ է: Եթե այո, ապա այն

կապվա՞ծ է եղել ընտրությունների հետ:

- Լրատվամիջոցների նկատմամբ իրականացվե՞լ է արդյոք որևէ դատական կամ վարչական հետապնդում կամ ոտնձգություն (ինչպես օրինակ՝ դատական գործ, հարկային հաշվետուգում, արտոնագրի գործողության դադարեցում/անվավեր ճանաչում, կազմակերպության փակում): Եթե այո, ապա դրանք արդյո՞ք պայմանավորված են եղել քաղաքական շարժառիթներով:

**Ընտրությունների լուսաբանումը**

- Լրատվամիջոցները լուրերի թողարկումներում լուսաբանե՞լ են արդյոք ընտրություններն արդար, անկողմնակալ և անաչառ կերպով (խոսքը, մասնավորապես, հանրային/պետական ֆինանսավորում ստացող լրատվամիջոցների մասին է):
- Եղե՞լ է որևէ լուսաբանում, որը կարող է դիտվել որպես ատելության խոսքի դրսևորում: Եղե՞լ են արդյոք թեկնածուներին զրպարտելու դեպքեր:
- Լուսաբանման ժամանակ ցուցաբերվե՞լ է արդյոք խտրականություն ռասայական, էթնիկ, գենդերային կամ կրոնական պատկանելիության հիման վրա:
- Անվճար եթերաժամի դրույթները պահպանվե՞լ են:
- Վճարովի գովազդի պայմանները (գին, ծավալ, եթերաժամ, հեռարձակման ժամ) բոլոր մրցակիցների համար հավասար և չսահմանափակող/ողջամի՞տ են եղել: Եղե՞լ է արդյոք հստակ նշում այն մասին, որ դրանք վճարվող քաղաքական գովազդներ են:
- Լրատվամիջոցները տրամադրե՞լ են արդյոք բավարար և հետաքրքիր տեղեկատվություն լուրերի հաղորդման, վերլուծությունների և բանավեճերի միջոցով, որպեսզի ընտրողներին հնարավորություն տրվի քվեարկելիս կատարել գիտակցված ընտրություն:
- Լրատվամիջոցները տրամադրե՞լ են անաչառ տեղեկատվություն ընտրությունների համար պատասխանատու մարմինների վերաբերյալ և իրականացրե՞լ են ընտրողներին համապատասխան գիտելիքներով զինելու նախաձեռնություններ:
- Ընտրությունները կամ լրատվամիջոցները կարգավորող մարմինը գործե՞լ է արդյոք անկախ, անաչառ, թափանցիկ և պրոֆեսիոնալ կերպով: Վերջինս հնարավորությու՞ն է ունեցել աշխատել անհարկի միջամտությունից զերծ պայմաններում: Արդյո՞ք այն իրականացրել է ընտրությունների վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանումների անկախ մոնիթորինգ: Լրատվամիջոցների հետ կապված բողոքներին արձագանքե՞լ է ժամանակին և արդյունավետ կերպով:

**Կանանց մասնակցությունը**

- Ընդհանուր առմամբ, քարոզարշավի ընթացքում ինչպե՞ս են կին թեկնածուները ներկայացվում լրատվամիջոցների կողմից:
- Արդյո՞ք լրատվամիջոցները կին թեկնածուների համար հավասարապես հասանելի են:
- Քարոզարշավի ընթացքում լրատվամիջոցներում տե՞ղ են գտել արդյոք կին թեկնածուների կամ կին առաջնորդների նկատմամբ սեռական

խտրականության տարրեր պարունակող (սեքսիզմ պարունակող) մեկնաբանություններ կամ կարծրատիպեր նրանց վերաբերյալ:

- ► Գոյություն ունի՞ անմիջականորեն կին ընտրողներին ուղղված քաղաքական գովազդ կամ լուսաբանում:

**Ազգային փոքրամասնությունների մասնակցությունը**

- ► Արդյո՞ք լրատվամիջոցները անարգել կերպով հասանելի են ազգային փոքրամասնություն ներկայացնող կուսակցություններին և թեկնածուներին, որպեսզի վերջիններս հրապարակեն սեփական տեսակետները:
- ► Լրատվական ի՞նչ աղբյուրներ են հասանելի փոքրամասնություններով բնակեցված շրջաններում:
- ► Ենթակա՞ է արդյոք ազգային/տարածաշրջանային լրատվական դաշտը էթնիկ բևեռացման:
- ► Քարոզարշավի և ընտրությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվու՞մ է արդյոք փոքրամասնությունների լեզուներով:
- ► Եղե՞լ է արդյոք ատելության խոսքի որևէ դրսևորում, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ազգային փոքրամասնություն ներկայացնող թեկնածուների, կուսակցությունների կամ համայնքների վրա:

**Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը**

- ► Ինչպե՞ս են լրատվամիջոցներն անդրադառնում հաշմանդամություն ունեցող թեկնածուներին, ովքեր պայքարում են պետական պաշտոն զբաղեցնելու համար: Լրատվամիջոցները կիրառու՞մ են արդյոք կարծրատիպեր կամ կանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող թեկնածուների կամ ընտրողների նկատմամբ:
- ► Լրատվամիջոցներում տե՞ղ են գտնում ատելության խոսքի դրսևորումներ նման խնդիրներ ունեցող թեկնածուների կամ ընտրողների նկատմամբ: Ինչպե՞ս են արձագանքում այդ ամենին իշխանությունները:
- ► Լրատվական դաշտն արդյո՞ք հավասարապես հասանելի է հաշմանդամություն ունեցող թեկնածուներին, ինչպես մյուս թեկնածուներին:
- ► Լրատվամիջոցները հաղորդու՞մ են արդյոք հաշմանդամություն ունեցող թեկնածուների կամ ընտրողների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքերի մասին:
- ► Հաշմանդամություն ունեցող մարդկանց հասանելի՞ է արդյոք իրենց կարիքներին հարմարեցված հատուկ մասնագիտացված լրատվամիջոց, որը լուսաբանում է ընտրությունները: Ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու մարմիններն անդրադառնու՞մ են արդյոք հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հատուկ լրատվական ծրագրերի միջոցով, որոնք հաշվի են առնում նրանց հաշմանդամության բնույթը:

**Ներքին տեղահանված անձանց մասնակցությունը**

- ► Լրատվամիջոցներն ինչպե՞ս են ներկայացնում պետական պաշտոնի հավակնող այն թեկնածուներին կամ ընտրողներին և/կամ հաղորդում տեղեկություններ վերջիններիս մասին, ովքեր ներկայացնում են ՆՏԱ-ների խմբերը, փախստականները և քոչվոր (հիմնական բնակության վայր

չունեցող) բնակչությունը: Լրատվամիջոցները օգտագործու՞մ են արդյոք կարծրատիպեր: Մեդիա դաշտում կա՞ արդյոք կանխակալ վերաբերմունքի որևէ այլ դրսևորում պետական պաշտոնի հավակնող այսպիսի թեկնածուների կամ ընտրողների նկատմամբ:

- Կա՞ն արդյոք ատելության խոսքի դրսևորումներ պետական պաշտոնի համար առաջադրված ՆՏԱ-ների, փախստականների կամ քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչության խմբի պատկանող մարդկանց կամ նշված խմբերը ներկայացնող ընտրողների նկատմամբ: Ինչպե՞ս են արձագանքում այդ ամենին իշխանությունները:
- Լրատվամիջոցները հավասարապես հասանելի՞ են այդպիսի համայնքներ (բնակչության այդպիսի խմբեր) ներկայացնող թեկնածուներին, ինչպես մյուս թեկնածուներին:
- Արդյո՞ք լրատվամիջոցներն օբյեկտիվորեն հաղորդում են պետական պաշտոնի հավակնող այն թեկնածուների կամ այն ընտրողների նկատմամբ դրսևորված խտրականության դեպքերի մասին, ովքեր ներկայացնում են ՆՏԱ-ներին, փախստականներին և քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչությանը:

**Թ. Ընտրությունների օրը**

Ընտրությունների օրը կատարվող մոնիթորինգի հիմնական նպատակն է գնահատել, թե արդյոք կանոնավոր կերպով իրագործվել են ընտրական գործընթացի վերջին օրվա բոլոր հիմնական փուլերը, այն է՝ քվեարկությունը, քվեների հաշվարկը և աղյուսակավորումը, և որ ամենակարևորն է՝ ներպետական օրենսդրությանը և միջազգային չափանիշներին համապատասխան:

Այս տեսանկյունից, ընտրությունների օրը կատարվող մոնիթորինգի հիմքում պետք է ընկած լինեն շատ լուրջ նախապատրաստական աշխատանքներ՝ հաշվի առնելով այդ գործընթացի բազմակողմանիությունը, մասնավորապես այն հանգամանքը, որ քվեարկության օրը հանդիսանում է ընտրական գործընթացի բուրգը կազմող վերին գագաթը: Որպես այդպիսին՝ դիտորդները պետք է ուսումնասիրեն և վերլուծեն տարբեր ասպեկտներ թե՛ քանակական (կարճաժամկետ դիտորդների կողմից լրացված դիտորդական ձևաթերթերից ստացված վիճակագրական տվյալների հիման վրա), թե՛ որակական (ուղեկցող և լրացուցիչ մեկնաբանությունների հիման վրա) տեսանկյունից, որպեսզի ընթացակարգերի ամբողջականությունը դիտորդական զեկույցում ենթարկվի պատշաճ վերլուծության:

Դիտորդների կողմից քվեարկության և քվեների հաշվարկի գործընթացների ուսումնասիրության նախկին փորձը՝ համադրված քվեարկության օրվա ընթացակարգերի վերլուծության հետ, պետք է հնարավորություն ընձեռի տեղական դիտորդական խմբին պարզելու, թե քվեարկության և քվեների հաշվարկի գործընթացների որ ասպեկտներին է անհրաժեշտ հատուկ անդրադառնալ:

Զեկույցում կարող են ընդգրկվել հետևյալ հիմնական ոլորտները:

**Ընդհանուր ընթացակարգեր**

- Քվեարկելու իրավունք ունեցող անձանց կողմից իրենց իրավունքից օգտվելու հնարավորություն,
- Քվեարկության գաղտնիության իրավունք,
- Ընտրական գործընթացը կազմակերպող անձանց գործողություններ,
- Վերլուծություն այն մասին, թե արդյոք քվեարկությունը և քվեների

հաշվարկն իրագործվում են խաղաղ և բնականոն միջավայրում, որպեսզի քվեարկողները կարողանան ազատորեն կատարել իրենց ընտրությունը՝ առանց որևէ խոչընդոտի, ճնշման ենթարկվելու կամ բռնության դրսևորման,

- ► Ընտրությունների դիտորդները (կուսակցության/թեկնածուի, տեղական անկուսակցական, միջազգային) և լրատվամիջոցները օգտվում են իրենց իրավունքներից՝ առանց որևէ միջամտության,
- ► Դիտարկումների մանրամասն կազմված արդյունքների հրապարակում՝ կատարված ճշգրիտ, ճիշտ ժամանակին և շարադրված հնարավորինս հանգամանալից,
- ► Ընտրությունների համար պատասխանատու մարմնի ղեկավար կազմի կողմից արդյունքների ամփոփումը և աղյուսակավորումը (տաբուլացիան) պետք է կատարվի ճիշտ ժամանակին, լինի ճշգրիտ և թափանցիկ:

Մասնավորապես, կարևոր է աղյուսակավորման գործընթացի մոնիթորինգը, քանի որ վրիպակները կամ խախտումները, ի տարբերություն առանձին ընտրատեղամասերում ի հայտ եկած խնդիրների, կարող են շատ ավելի մեծ ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա:

**Բացման ընթացակարգեր**

- ► Ժամանակ
- ► Քվեարկությունը կազմակերպող անձանց գործողություններ (դրանց համապատասխանությունը ընթացակարգերին)
- ► Քվեաթերթիկներ
- ► Քվեատուփ

**Քվեարկության ընթացակարգեր**

- ► Ընտրացուցակ
- ► Քվեաթերթիկներ
- ► Քվեատուփ
- ► Քվեարկության գաղտնիություն (քվեարկության ավանդական եղանակ, հեռախոսային քվեարկություն, էլեկտրոնային քվեարկություն)
- ► Քվեարկությունը կազմակերպող անձանց գործողություններ (դրանց համապատասխանությունը ընթացակարգերին)
- ► Քվեարկության հատուկ ընթացակարգեր
- ► Ընտրական տեղամասում տիրող մթնոլորտ (այլ անձանց ներկայությունը)
- ► Սոցիալական այլ խմբերի մասնակցություն (կանայք, փոքրամասնություններ, հաշմանդամներ, անազատության մեջ գտնվող անձինք)
- ► Խնդիրներ հետևյալ դեպքերում. ընտանեկան քվեարկություն, նույն անձի կողմից մեկից ավելի քվեարկություն, աջակցության կարիք ունեցող անձանց կողմից քվեարկություն, լիազորված անձանց միջոցով քվեարկություն, բաց քվեարկություն, բազմակի քվեարկություն, անչափահասների կողմից քվեարկություն, ուրիշի փոխարեն ներկայանալու դեպք, քվեատուփի լցոնում:

**Քվեների հաշվարկի ընթացակարգեր**

- Ժամանակ,
- Քվեարկությունը կազմակերպող անձանց գործողություններ (դրանց համապատասխանությունը ընթացակարգերին),
- Հաշվարկի ժամանակ տիրող մթնոլորտը (այլ անձանց ներկայությունը),
- Համաձայնեցում և հաշվարկ,
- Անհամապատասխանություններ,
- Դիտարկման արդյունքներ,
- Խնդիրներ (լցոնված քվեատուփեր),
- Բողոքներ:

Միևնույն ժամանակ, զեկույցի պատրաստումը և քվեարկության օրվա դիտարկումների վերլուծությունը կարելի է իրագործել ըստ թեմաների, այլ ոչ ըստ ժամանակագրության՝ ինչպես վերը նշված դեպքում: Այսպիսի դեպքերում հարկավոր է հաշվի առնել հետևյալ հանգամանքները:

- Ընտրական տեղամասում տիրող մթնոլորտը,
- Ընտրական գործընթացը կազմակերպող անձինք (ընտրական տեղամասերում գործող անդամներ),
- Քվեարկության համար օգտագործվող նյութեր,
- Ընտրացուցակ,
- Քվեարկության ընթացակարգեր (այդ թվում՝ քվեարկության հատուկ ընթացակարգեր),
- Քվեների հաշվարկի ընթացակարգեր,
- Արդյունքների ամբողջականացում,
- Տեղափոխում:

Ի լրումն սրան, որոշ դեպքերում տեղական դիտորդական խմբերն իրականացնում են ձայների զուգահեռ հաշվարկ/աղյուսակավորում (ԶՁՀ): Այլ կերպ ասած՝ նրանք ընտրությունների շահագրգիռ կողմերին (կուսակցություններին, թեկնածուներին, ընտրությունների համար պատասխանատու մարմիններին), ինչպես նաև հանրությանը տրամադրում են արժանահավատ տեղեկատվություն՝ օգնելով նրանց գնահատել արդյունքների օրինականությունը: Ըստ այդմ, անչափ կարևոր է, որ նախնական արդյունքների հետ համեմատությունը ներկայացվի ընտրությունների համար պաշտոնապես պատասխանատու մարմինների կողմից:

**Կանանց մասնակցությունը**

- Արդյո՞ք ընտրատեղամասերի հանձնաժողովներում ընդգրկված կանանց և տղամարդկանց թիվը հավասարակշռված է: Արդյո՞ք կանայք են նախագահում այդ հանձնաժողովներում:
- Առկա՞ են արդյոք ընտանեկան քվեարկության/լիազորված անձանց միջոցով քվեարկության փաստը հաստատող ապացույցներ:
- Կանայք հնարավորություն ունե՞ն արդյոք մասնակցելու ընտրություններին տղամարդկանց հետ հավասար պայմաններում:

**Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը**

► Ընտրությունների համար պատասխանատու մարմինները կիրառու՞մ են արդյոք հատուկ միջոցներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրականացմանը (օրինակ՝ շոշափելի՝ ուռուցիկ-կետավոր գրատեսակով տպագրված քվեաթերթիկներ, որոնք թույլ կտան կույր ընտրողներին քվեարկել ինքնուրույն և գաղտնի պայմաններում):

► Ընտրական տեղամասերը և քվեարկության խցիկները հասանելի՞ են արդյոք հաշմանդամություն ունեցող անձանց համար:

► Կիրառվու՞մ են արդյոք տեխնիկական միջոցներ, որոնք դյուրին են դարձնում հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրականացումը:

► Հաշմանդամություն ունեցող անձինք քվեարկելու նպատակով հնարավորություն ունե՞ն արդյոք օգտվելու վստահված երրորդ անձի օգնությունից: Ինչպե՞ս են պահպանվում և գործնականում իրականացվում այս ընթացակարգի պահանջները: Կա՞ն արդյոք մտահոգություններ:

**Ազգային փոքրամասնությունների և հատուկ կարիքներ ունեցող խմբերի մասնակցությունը**

► Ընտրությունների համար պատասխանատու մարմիններն օգտագործու՞մ են արդյոք հատուկ միջոցներ՝ ուղղված ազգային փոքրամասնությունների ընտրական իրավունքի իրականացմանը (օրինակ՝ ընտրական տեղամասերում գրանցման և քվեարկության ընթացակարգերի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև քվեաթերթիկը հասանելի՞ են արդյոք ազգային փոքրամասնությունների լեզուներով):

► Ընտրությունների համար պատասխանատու մարմիններն օգտագործու՞մ են արդյոք հատուկ միջոցներ՝ ուղղված ՆՏԱ-ների, փախստականների, քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչության խմբերին պատկանող մարդկանց ընտրական իրավունքի իրականացմանը (օրինակ՝ նշված խմբերի բնակավայրերի մոտ տեղակայված ընտրական տեղամասերը ապահովու՞մ են արդյոք հեշտ հասանելիություն):

**Ժ. Արդյունքների աղյուսակավորում և հրապարակում**

Արդյունքների աղյուսակավորումը գործընթաց է, որի ժամանակ ընտրությունների համար պատասխանատու մարմինները համախմբում են քվեաթերթիկների հաշվարկի արդյունքները և դրանք հանրագումարի են բերում, որպեսզի ստանան թեկնածուներին տրված կամ ընտրատարածքներում/երկրում ստացված ձայների ընդհանուր թիվը: Աղյուսակավորման ժամանակ արդյունքներն ի մի են բերվում և գումարվում են տարբեր մակարդակներում, ինչը հանդիսանում է ընտրական գործընթացի ամենակարևոր փուլերից մեկը:

Հարցերի հետևյալ ցանկը կարող է ուղեցույց ծառայել այն մասին, թե ինչպես ներկայացնել աղյուսակավորման կարևորագույն սկզբունքները:

**Ամբողջականություն**

► Ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու մարմինները ի՞նչ միջոցներ են ձեռնարկում քվեարկության արդյունքների ամբողջականությունն աղյուսակավորման ընթացքում պահպանելու համար:

► Որո՞նք են աղյուսակավորման գործընթացի փուլերը:

- Օրենսդրական դաշտը բավարար չափով կարգավորու՞մ է արդյոք աղյուսակավորման ընթացակարգերը:
- Կա՞ն արդյոք արդյունքների փոխանցման համար սահմանված վերջնաժամկետներ և մեթոդներ:
- Արդյո՞ք սահմանված ընթացակարգերը պահպանվել են, թե խախտվել է գործընթացի ամբողջականությունը:

**Թափանցիկություն**

- Օրենսդրությունն արդյո՞ք հնարավորություն է ընձեռում դիտորդներին հետևել գործընթացին:
- Քանի՞ անգամ են դիտորդներին արգելել հետևել գործընթացին:
- Ի՞նչ մեթոդներով են ստացվում արդյունքները:
- Հաշվարկի ձևաթղթերը/արձանագրությունները պարունակու՞մ են արդյոք բավարար տեղեկատվություն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են օրինակ՝ օգտագործված և չօգտագործված քվեաթերթիկներ, անվավեր և խոտանված քվեաթերթիկներ, քվեարկած ընտրողների թիվը, յուրաքանչյուր կուսակցության արդյունքները, առանձնացված արդյունքներ ըստ քվեարկության մեթոդի և նմանատիպ այլ հարցեր:

**Արդյունքների հրապարակում**

- Օրենսդրությունն արդյո՞ք բավարար չափով կարգավորում է արդյունքների հրապարակման գործընթացը:
- Կա՞ արդյոք հստակ տարբերակում պաշտոնական, ոչ պաշտոնական, նախնական և վերջնական արդյունքների միջև:
- Ներկայացված արդյունքները որքանո՞վ են համակարգված՝ դրանք հրապարակվում են ըստ ընտրատեղամասերի՞, թե՞ միայն որպես ընդհանուր արդյունքներ:
- Որքանո՞վ են արդյունքներն ամբողջական՝ դրանք պարունակու՞մ են արդյոք տվյալներ բոլոր մրցակիցների արդյունքների և քվեարկողների (ընտրացուցակներում գրանցված, մասնակցած) վերաբերյալ:
- Ինչպիսի՞ լրացուցիչ տեղեկատվություն է տրվում արդյունքների հրապարակմանը զուգահեռ (սեռային պատկանելություն, ազգային փոքրամասնություններ, այլ տեղեկություններ):
- Արդյունքները հասանելի՞ են արդյոք առցանց ռեժիմում: Դրանք ներկայացվում են աստիճանաբա՞ր, թե՞ միայն հաշվարկի գործընթացի ավարտից հետո:
- Ներկայացված արդյունքները որքանո՞վ են մատչելի՝ արդյունքները հանրային կերպով ցուցադրվու՞մ են ընտրական տեղամասերում, թե՞ միայն կենտրոնական ընտրական հանձնաժողովի մակարդակով:

**Կանանց և ազգային փոքրամասնությունների մասնակցությունը**

- Որքա՞ն է կազմում ընտրված կանանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների թիվը և համամասնությունը (ընտրված կանանց և ազգային փոքրամասնությունների տոկոսային հարաբերակցությունը): Նախորդ ընտրությունների համեմատ ինչպիսի՞ միտում է նկատվում:

**Ի. Դիմում-բողոքները և հայցադիմումները**

Ընտրությունների տեղական դիտորդական առաքելությունը դիմում-բողոքների և հայցադիմումների շուրջ իր ջանքերը կենտրոնացնելու ժամանակ պետք է ուսումնասիրի դրանց առնչվող օրենսդրական դաշտը, ինչպես նաև աչալուրջ կերպով հետևի ընտրություններին առնչվող բոլոր դիմում-բողոքներին և հայցադիմումներին տրված ընթացքին՝ հաշվի առնելով ընտրությունների համատեքստը (ներառյալ մոնիթորինգի ընթացքում կամ առնվազն պաշտոնական քարոզարշավի ընթացքում, այդ թվում՝ ընտրության օրը և հետընտրական շրջանում): Այն դեպքում, երբ ՔՀԿ-ները կամ վերջինիս անդամները որոշում են դիմում-բողոք ներկայացնել իրենց դիտորդական գործունեության համատեքստում, ապա զեկույցը պետք է դրա մասին առանձին մաս պարունակի:

Դիմում-բողոքների և հայցադիմումների վերաբերյալ զեկույց պատրաստելիս կարելի է հաշվի առնել ստորև նշված հարցերը: Վեր հանված հավանական խախտումները և դրանցից բխող եզրակացություններն ու առաջարկությունները կարող են, ըստ այդմ, վերաբերել/թիրախավորել դիմում-բողոքները և հայցադիմումները կանոնակարգող օրենքները կամ գործնականում այդ օրենքների կատարման ընթացքը:

**Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ**

- ► Ներպետական նորմերով և/կամ դրանց կիրառմամբ ապահովվու՞մ են արդյոք ընթացակարգային երաշխիքներ բողոքարկման արդյունավետ համակարգի վերաբերյալ:
- ► Արդյո՞ք յուրաքանչյուր ընտրող, թեկնածու և կուսակցություն ունի հայցադիմում ներկայացնելու իրավունք:
- ► Նրանք օժտվա՞ծ են արդյոք ընթացակարգային այլ իրավունքներով, ինչպիսիք են՝ ներկայացնել ապացույցներ ի պաշտպանություն իրենց հայցի, անկողմնակալ, թափանցիկ, հրապարակային և արդար դատաքննության իրավունք, իրավական պաշտպանության արդյունավետ և անհապաղ միջոցներ, մասնավորապես երբ խոսքը վերաբերում է ընտրական իրավունքին և գրանցամատյաններին, ընտրությանը թեկնածություն առաջադրելու իրավունքին և թեկնածություն ներկայացնելու օրինականությանը, ինչպես նաև լրատվամիջոցներից օգտվելու հնարավորությանը և այլն:
- ► Արդյո՞ք նրանք ունեն վերաքննիչ դատարանում հայցը բողոքարկելու իրավունք, եթե իրավական պաշտպանության միջոցները մերժվել են հայցը քննող առաջին ատյանի կողմից (թեև բողոքարկման առաջին ատյանը կարող է լինել դատարան կամ մեկ այլ մարմին, ինչպես օրինակ՝ ընտրական հանձնաժողովը, այդուհանդերձ, բողոքարկման վերջին ատյանը պետք է լինի դատարանը):
- ► Արդյո՞ք բողոքարկման ընթացակարգը հստակ, թափանցիկ և հասկանալի է (այս առումով անհրաժեշտ են իրավական հստակ դրույթներ, որոնք չեն կիրառվի մեկ այլ մեկնաբանությամբ, և այս պարագայում նաև ենթադրվում է, որ բողոքարկման ատյանների անդամները բավարար չափով վերապատրաստված են):
- ► Արդյո՞ք ընթացակարգը պարզ է և հնարավոր է իրագործել այն՝ առանց ձևական մասի պահպանման:
- ► Արդյո՞ք վերջնաժամկետները պահպանվում են (հայցադիմում ներկայացնելու համար սահմանված են սեղմ ժամկետներ, որպես կանոն՝ երեքից հինգ օր, սակայն նույն ժամանակահատվածը պետք է գործի նաև քննող ատյանի պարագայում՝ որոշում կայացնելու ժամկետների առումով:

Մասնավորապես, սա վերաբերում է այն որոշումներին, որոնք պետք է կայացվեն նախքան ընտրությունները՝ քվեարկության իրավունքի, թեկնածություն առաջադրելու իրավունքի, լրատվամիջոցներից օգտվելու հնարավորության վերաբերյալ և այլն, մինչդեռ վերադաս ատյանի դատարաններին որոշում կայացնելու համար տրված ժամանակահատվածը կարող է փոքր-ինչ երկարացվել):

► Արդյո՞ք օրենքը հստակ և բացահայտ կերպով նախասահմանում է բողոքարկման ընթացակարգերն ու ներգրավված մարմինների լիազորությունները և պարտականությունները (մասնավորապես՝ ընտրատարածքի կամ ավելի մաշտաբային միավորի քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու լիազորությունը, եթե հայտնաբերված խախտումները կարող են անդրադառնալ մանդատների բաշխման վրա): Արդյո՞ք դրանք իրագործվում են պատշաճ կերպով:

► Դիմում-բողոքների և հայցադիմումների քննության արդյունքում կայացված դատական ակտերը և դրանց ընթացակարգերի վերաբերյալ միջազգային կառույցների կողմից տրված հանձնարարականները (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կամ ներպետական դատարանների վերջնական որոշումները, նախորդ ընտրությունների դիտորդական զեկույցներում տեղ գտած ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հանձնարարականները) արտացոլվե՞լ են արդյոք ներպետական օրենսդրության մեջ և գործնական կիրառության շրջանակներում:

**Կանանց մասնակցությունը**

► Արդյո՞ք կանայք հավասար հնարավորություններ ունեն՝ օգտվելու դիմում-բողոքներ/հայցադիմումներ ներկայացնելու մեխանիզմներից:

► Պահպանվա՞ծ է արդյոք գենդերային հավասարակշռությունը դիմում-բողոքները քննող մարմիններում:

► Գենդերային իրազեկվածության թեման ներառվա՞ծ է արդյոք ընտրական գործընթացը կազմակերպող անձանց և բողոքարկման մարմինների համար նախատեսված վերապատրաստման ծրագրերում:

► Քանի՞ տոկոս են կազմում տղամարդկանց/կանանց կողմից ներկայացված դիմում-բողոքները: Տղամարդկանց/կանանց կողմից ներկայացված դիմում-բողոքների քանի՞ տոկոսն է լուծում ստացել:

**Ազգային փոքրամասնությունների և հատուկ կարիքներ ունեցող խմբերի մասնակցությունը**

► Ազգային փոքրամասնությունների խմբերին պատկանող մարդկանց, ՆՏԱ-ների կամ փախստականների, ինչպես նաև քոչվոր (հիմնական բնակության վայր չունեցող) բնակչության համար գործու՞մ են արդյոք հավասար պայմաններ, որպեսզի վերջիններս օգտվեն բողոքներ և հայցադիմումներ ներկայացնելու մեխանիզմներից:

► Որո՞նք են այն կոնկրետ հարցերը, որոնք բարձրացվում են նշված համայնքների ներկայացուցիչների կողմից իրենց բողոքներում և հայցադիմումներում:

**Լ. Հետընտրական զարգացումները**

Ընտրություններից հետո տեղի ունեցող գործընթացները պայմանավորված են ընտրական համակարգով, երկրի քաղաքական միջավայրի առանձնահատկություններով,

և որ ամենակարևորն է՝ քվեարկության արդյունքներով՝ թե արդյոք բոլոր շահագրգիռ կողմերն են ընդունում քվեարկության արդյունքները: Այս փուլում հարկավոր կլինի ուսումնասիրել, թե քաղաքական և դատական ինչ հնարավոր հետևանքներ (դիմում-բողոքները և հայցադիմումները քննելու ընթացքը) կարող են լինել ընտրական գործընթացի առնչությամբ: Բացի այդ, ընտրությունների դիտորդական առաքելությունը պետք է այս փուլում աչալուրջ կերպով հետևի քվեարկության օրվանից ի վեր ստացված դիմում-բողոքների և հայցադիմումների դատական կարգով քննությանը:

Եթե կազմակերպությունն իր դիտորդական գործունեությունը ծավալում է նաև հետընտրական շրջանում, ապա զեկույց պատրաստելու համար այն կարող է հաշվի առնել հետևյալ հարցերից մի քանիսը:

**Պաշտոնական զեկույցներ**

► ԸՂՄ մարմինները (կամ որոշ դեպքերում գլխավոր վերստուգողը) ընտրություններից հետո հրապարակե՞լ են արդյոք իրենց գնահատման զեկույցները: Դրանք կարող են ներկայացվել հետևյալ կերպ՝

- ակնարկ ռազմավարական պլանով սահմանված նպատակների մասին, որոնք իրագործվել են ընտրական գործընթացի ողջ ժամանակահատվածում,

- գնահատական օրենսդրական շրջանակի թերությունների վերաբերյալ,

- առաջարկներ՝ հիմնված խնդրահարույց ոլորտների և ընտրական գործընթացի արդյունքում քաղած դասերի վրա, այդ թվում՝ հանձնարարականներ և հետագա կոնկրետ քայլեր՝ այդ ոլորտներում լուծումներ ներդնելու (միջոցներ ձեռնարկելու) ուղղությամբ:

► Զեկույցն արդյո՞ք մատնանշում և հաստատում է, որ առկա են գործառնական որոշ խնդիրներ, և օրենսդիր մարմիններին ներկայացնու՞մ է առաջարկություններ բարեփոխումների ուղղությամբ:

**Վերահաշվարկ**

► Օրենսդրությունն ընձեռու՞մ է արդյոք քվեարկության վիճելի արդյունքների վերահաշվարկ կատարելու հնարավորություն:

► Վերահաշվարկի գործընթացը պատշաճ կերպով կարգավորվա՞ծ է, որպեսզի հնարավոր լինի խուսափել վերահաշվարկը քաղաքական նպատակներով շահարկելուց և ընտրական գործընթացը խափանելուց:

► Եղե՞լ են արդյոք դեպքեր, երբ վերահաշվարկ չի կատարվել, թեև հանգամանքների բերումով այն պետք է տեղի ունենար (օրինակ, երբ մրցակիցների արդյունքներն իրար մոտ են):

► Եղե՞լ են արդյոք քաղաքական կամ որևէ այլ հիմքով (էթնիկ, կրոնական կամ գենդերային) խտրական վերաբերմունքի դրսևորումներ մրցակից կողմերի նկատմամբ:

**Արդյունքներն անվավեր ճանաչելը**

► Որո՞նք են այն հանգամանքներն ու իրավական հիմքերը, ըստ որոնց կարող են ընտրությունները չեղյալ կամ անվավեր ճանաչվել, և ի՞նչ ժամկետներում է դա կատարվում:

► Օրենքը նախատեսու՞մ է արդյոք բավարար երաշխիքներ, որպեսզի կանխվեն ընտրություններն անվավեր ճանաչելու վերաբերյալ կամայական որոշումները:

► Օրենսդրությունը սահմանու՞մ է արդյոք նոր ընտրությունների ժամկետները:

**Ընտրված ներկայացուցիչների կողմից պաշտոնը ստանձնելը**

► Ընտրված ներկայացուցիչները պաշտոնը ստանձնե՞լ են ողջամիտ և օրենքով սահմանված ժամկետում:

► Դիմում-բողոքների և հայցադիմումների քննության գործընթացի պատճառով պաշտոնի ստանձնումը ձգձգելու դեպքեր եղե՞լ են:

**Հաջորդող ընթացակարգերը**

► Ընտրական խախտումները կանոնավոր կերպով հետաքննվե՞լ են, և դրանց հեղինակները ենթարկվե՞լ են պատասխանատվության:

## 4.5. ԶԵԿՈՒՅՑՆ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԱՐԱԾԵԼԸ

**Գործիքներ և միջոցներ**

Զեկույցները մշակելիս հարկավոր է ծրագրել, թե ինչպես պետք է տարածել տեղեկատվությունը: Հնարավոր է, որ թիրախային լսարանի ոչ բոլոր խմբերը կարդան զեկույցն ամբողջությամբ: Կազմակերպությունը պետք է գտնի հիմնական տեղեկատվությունը ներկայացնելու պատշաճ և արդյունավետ միջոցներ:

Զեկույցն արտաքին լսարանին հաղորդելու ծրագրով թիմը պետք է սահմանի դիտարկումները տարածելու գործիքները և թիրախային տարբեր խմբերի հետ կապ հաստատելու միջոցները: Ստորև նշված են որոշ տարածված գործիքներ:

► **Մամուլի հաղորդագրություններ**

Հիմնական դիտարկումները պարունակող հակիրճ հայտարարություն՝ ուղղված գլխավորապես ԶԼՄ-ներին:

► **Ինֆոգրաֆիկա**

Ինֆոգրաֆիկան ներկայացնում է խախտումների, քվեարկողների թվի կամ ընտրության դիտարկումների վերաբերյալ վիճակագրություն:

**Գծապատկեր 13. Վիճակագրություն**



| | |
|---|---|
| Voting process | Քվեարկության ընթացք |
| In 2% of polling stations | Ընտրական տեղամասերի 2%-ում |
| phusical violence was observed | ֆիզիկական բռնության դեպքեր են նկատվել |

Աղբյուրը՝ www.isfed.ge

► **PowerPoint (PPT) ձևաչափ**

Հիմնական դիտարկումներն ի մի բերելու և ներկայացնելու ձևաչափ: Պրեզենտացիան չպետք է գերազանցի 20-25 սլայդը՝ յուրաքանչյուրում հակիրճ տեքստեր և մի քանի նկար:

► **Էլեկտրոնային հասցեների ցուցակ**

Շահագրգիռ կողմերի՝ դոնորների, միջազգային հանրության, ՔՀԿ համայնքների, լրատվամիջոցների, ընտրությունների համար պատասխանատու մարմինների, կառավարական գերատեսչությունների և կուսակցությունների ներկայացուցիչների էլեկտրոնային հասցեների համակցություն:

► **Միջադեպերի քարտեզագրում**

Դիտորդների և քաղաքացիների կողմից հաղորդված խախտումների վիզուալ վերարտադրություն՝ քարտեզավորված ըստ կատեգորայի և շրջանի (www.electionsportal.ge/geo/map):

► **Քաղվածքներ**

Հատվածներ զեկույցի գլուխներից/ենթագլուխներից, որոնք կարող են առանձին ներկայացվել թիրախային տարբեր խմբերին:

► **Գրքույկ քաղաքացիների համար**

Զեկույցի կրճատ և պարզեցված տարբերակ, որը պարունակում է վիզուալ նյութեր և հանրությանը հետաքրքրող տեղեկություններ:

Ստորև նշված են զեկույցը հանրությանը ներկայացնելու տարածված միջոցները:

► **Մամուլի ասուլիս**

Միջոցառում, որին գլխավորապես հաճախում են լրագրողները, և որտեղ ներկայացվում են դիտորդական աշխատանքի հիմնական դիտարկումները:

► **Պրեզենտացիա**

Հանդիպում, որը կազմակերպվում է կուսակցություններին, կառավարության ներկայացուցիչներին, ընտրությունների համար պատասխանատու մարմիններին, ԶԼՄ-ներին, դոնորներին և ՔՀԿ համայնքներին զեկույցը ներկայացնելու և նշված խմբերի հետ այն քննարկելու նպատակով: Հանդիպման ժամանակ PowerPoint ձևաչափով պրեզենտացիան կարող է ծառայել որպես տեղեկատվություն տարածելու միջոց:

► **Համացանց**

Լայն լսարանի հետ կապ հաստատելու ամենահանրամատչելի միջոցներից մեկը:

- ► **Էլեկտրոնային փոստ**

  Տեղեկատվությունը շահագրգիռ կողմերին հասցնելու միջոց՝ օգտվելով էլեկտրոնային հասցեների ցուցակից:

- ► **Կայքէջ**

  Ընտրությունների մոնիթորինգի վերաբերյալ բոլոր նյութերը և տեղեկատվությունը վերբեռնելու հարթակ:

- ► **Սոցիալական մեդիա (Facebook, Vkontakte, Twitter)**

  Հիմնական դիտարկումներից հակիրճ հատվածներ տարածելու հարթակ՝ ուղղված հասարակության լայն զանգվածներին: Տեղեկատվությունը կարող է հասանելի դառնալ ընկերների և հետևողների կողմից տարածումների միջոցով:

- ► **Վեբինարներ (սեմինարներ առցանց ռեժիմում տեսաշփման ձևաչափով)**

  Առցանց մամուլի ասուլիսի տեսակ, որը հնարավորություն է ընձեռում հեռահար հաղորդակցվել՝ նախօրոք համակարգին միանալու միջոցով:

- ► **Աշխատանքային խմբեր, կլոր սեղան-քննարկումներ**

  Հիմնական հարցերի և հետագա բարեփոխումների շուրջ կառավարության, դեսպանությունների և շահագրգիռ այլ կողմերի ներկայացուցիչների հետ քննարկման արդյունավետ համաժողովներ:

- ► **Զեկույցները, գրքույկները, քաղվածքները հասցեներով բաժանելը**

  Զեկույցի տպագիր տարբերակները համապատասխան թիրախային խմբերին առաքելու միջոց: Հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել գյուղերին և շրջաններին, որտեղ համացանցի հասանելիությունը և հեռուստաալիքների առկայությունը սահմանափակ է, ինչպես նաև էթնիկ փոքրամասնություններով բնակեցված վայրերին:

Միանշանակ խորհուրդ է տրվում PDF ձևաչափի փոխակերպել համացանցի միջոցով տարածվող բոլոր նյութերը, այդ թվում՝ զեկույցները, քաղվածքները և մամուլի հաղորդագրությունները:

**Լրագրողների հետ կապ հաստատելը**

Որպես առաջին քայլ՝ կարելի է կազմել պետության ներսում գործող կարևորագույն լրատվական կենտրոնների, հեռուստաալիքների, ռադիոկայանների, թերթերի և առցանց (լրատվական) ծառայությունների ցուցակ: Արտահաստիքային աշխատողները, բլոգերները կամ սոցիալական մեդիայի միջոցով լրատվություն ապահովող խմբերը կարող են դիտվել թե՛ որպես թիրախային լսարան, թե՛ որպես տեղեկատվության աղբյուր:

Միջազգային ԶԼՄ-ների ուշադրությունը գրավելն առավել դժվար է: Գործընկերները Ընտրությունների տեղական դիտորդների գլոբալ ցանցից (www.gndem.org) կամ տարածաշրջանային ցանցերից, ինչպիսիք են՝ ENEMO-ն (www.enemo.eu) կամ EPDE-ն (www.epde.org), կարող են օգնել հասցեներ և կոնտակտներ որոնելու գործում:

Առանց անձնական կապեր հաստատելու՝ լրատվամիջոցներն այնքան էլ օգտակար չեն: Վստահելի թղթակիցներ գտնելու համար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել քաղաքականության հետ առնչվող լրատվամիջոցների բոլոր տեսակները՝ հեռուստատեսային, ռադիո, տպագիր, առցանց: Միջազգային բազմաթիվ լրատվամիջոցներ անդրադառնում են Արևելյան Եվրոպային և Կենտրոնական Ասիային՝ Մոսկվայում տեղակայված իրենց գրասենյակների միջոցով: Հակամարտության մեջ

գտնվող կամ միջազգային ճգնաժամ ապրող երկրների պարագայում լրագրողների հետ կարելի է հանդիպում կազմակերպել ընտրությունների մեկնարկից շատ առաջ՝ հասարակական միջոցառումների, քաղաքական գործիչների կամ ՔՀԿ-ների հետ մամուլի ասուլիսների ժամանակ:

Լրատվամիջոցների ցուցակը պետք է առնվազն պարունակի թղթակցի կամ համապատասխան ՔՀԿ-ի՝ երկրի գծով պատասխանատու խմբագրի անունը, վերջինիս գործառույթները, խմբագրության հեռախոսահամարը, բջջային հեռախոսի համարը (ցանկալի է թե՛ այն երկրում, որտեղ տեղակայված է գրասենյակը, և թե՛ տվյալ երկրում), էլեկտրոնային հասցեն և անունը, որով գրանցված է հաշիվ Twitter-ում:

Այս ցուցակը կազմելուց հետո կազմակերպությունը կարող է ձեռնամուխ լինել էլեկտրոնային հասցեների մեկ կամ ավելի խմբեր ստեղծելուն: Լրագրողները՝ հաճախ լինելով զբաղված, հետաքրքրվում են մամուլի հաղորդագրություններով և մամուլի ասուլիսներով, մինչդեռ վերլուծաբանները, փորձագետներն ու գիտաշխատողները հետաքրքրված են զեկույցների առավել ծավալուն տարբերակներով և պրեզենտացիայից հետո ծավալվող քննարկումներով: Ըստ այդմ, էլեկտրոնային հասցեների տարբեր ցուցակներ ունենալն օգտակար է:

Օգտագործելով լրատվամիջոցների ցուցակի ողջ տեղեկատվությունը՝ կարելի է ստեղծել տվյալների էլեկտրոնային բազա: Անչափ կարևոր է, որ յուրաքանչյուր ՔՀԿ փորձարկի և ապահովի տվյալների բազայի մատչելիությունը՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով հրատապ փաստաթղթերն արագորեն տարածելու համար: Կազմակերպությունն է՛լ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնի լրատվամիջոցների ցուցակը և տվյալների բազան պարբերաբար թարմացնելու վրա: Պաշտոնաթող անձանց կամ ամիսներ առաջ մահացած լրագրողի այրիին էլեկտրոնային նամակ ուղարկելը կարող է անհարմար իրավիճակ ստեղծել:

Որպես առաջին անմիջական շփում՝ նախընտրելի է հեռախոսազանգը՝ ընտրությունների տեղական դիտորդության վերաբերյալ հակիրճ քննարկմամբ: Իրականում, ընտրությունների օրվա ընթացքում դիտորդական առաքելություն իրականացնող տեղական ՔՀԿ-ները ծառայում են որպես տեղեկատվության լավագույն աղբյուր, քանի որ ծանրակշիռ միջազգային դիտորդական առաքելությունները սովորաբար մեկնաբանություններ չեն տրամադրում քվեարկության ընթացքի առանձին հատվածների վերաբերյալ և ներկայացնում են իրենց սպառիչ հայտարարությունը և գնահատականը միայն քվեարկության օրվանից հետո:

Նման իրավիճակներում ցանկալի է իրազեկել լրատվամիջոցներին քվեարկության օրվա հետ կապված հայտարարություններ անելու և տվյալներ հաղորդելու ծրագրի վերաբերյալ (մամուլի ասուլիսների ժամանակացույց, առցանց ռեժիմում կատարվող թարմացումներ), որպեսզի լրագրողները նախապես պատրաստվելու հնարավորություն ունենան և անակնկալի չգան. լրագրողներն այդ ժամանակաշրջանում հաճախ հարյուրավոր էլեկտրոնային նամակներ են ստանում:

**Մամուլի հաղորդագրության պատրաստում և տարածում**

Վերնագիրը պետք է լինի հնարավորինս հակիրճ և հետաքրքիր: Այն պետք է հստակ փոխանցի մամուլի հաղորդագրության հիմնական ուղերձը:

Ընդունված է կազմել այն հետևյալ ձևաչափով. տեքստը պետք է լինի հնարավորինս կարճ, միևնույն ժամանակ ծավալուն՝ ըստ անհրաժեշտության: Նախընտրելի է գրել մեկ էջ՝ 25 տողի սահմաններում և 60 նիշ յուրաքանչյուրում: Ընդհանուր առմամբ 250 բառը բավարար է ամբողջ միտքը փոխանցելու համար: Ավելացրե՛ք հղում, եթե անհրաժեշտ է ներկայացնել առանձին մանրամասներ: Պետք է օգտագործվեն տարածված տառատեսակներ, ինչպիսիք են՝ Arial-ը կամ Calibri-ն (կամ ստանդարտ Times New Roman-

ը): Պետք չի օգտագործել քիչ տարածում ունեցող տառատեսակներ. դրանք շեղում են ընթերցողի ուշադրությունը: Տառաչափը չպետք է փոքր լինի 11-ից, իսկ տողամիջյան հեռավորությունը՝ 1-ից: Կազմակերպության պատկերանիշը կարող է նույնպես ներառվել, սակայն այն կարող է խնդիր առաջացնել էլեկտրոնային նամակում առկա տեղեկատվության ծավալի առումով:

Մամուլի հաղորդագրությունը հիմնականում ունենում է որոշակի կառուցվածք: Տեքստը պետք է կազմված լինի ոչ ավել, քան հինգ պարբերությունից: Նույնիսկ ցանկալի է, որ պարբերությունների թիվը հինգից քիչ լինի: Պարբերություններից յուրաքանչյուրում պետք է խոսել միայն մեկ ասպեկտի մասին:

▪ *Պարբերություն 1* – Լրագրողների հետաքրքրությունը շարժող նորություն: Առաջին նախադասությունը պետք է լինի հստակ և հակիրճ:

▪ *Պարբերություն 2* – Ուղերձի ամփոփ շարադրանք և ստանդարտ լրագրողական հարցերի (ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչպե՞ս, ինչու՞, ի՞նչ աղբյուրից) պատասխաններ:

▪ *Պարբերություն 3* – Անցում անմիջապես ուղերձին: Սա կարող է լինել մեջբերում՝ հավանաբար պարունակելով ՔՀԿ-ի նախագահի կամ փոխտնօրենի գնահատականը, որում պետք է ճիշտ գրված լինի տվյալ անձի անունը և գործառույթը: Այն անձինք, ում խոսքերը մեջբերված են, պետք է հասանելի լինեն հարցազրույցի համար: Նախորդ պարբերությունում տեղ գտած փաստերն ու թվերը չպետք է կրկնվեն մեջբերված խոսքում:

▪ *Պարբերություն 4* – Լրացուցիչ կարևոր փաստեր, օրինակ՝ առաքելության կամ դիտորդների թվի վերաբերյալ:

Կոնտակտային տվյալները զետեղվում են էջի ստորին հատվածում: «Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել», անունը, հեռախոսահամարը, էլ. հասցեն, Facebook-ում կամ Twitter-ում գրանցված հաշվի հասցեն, հղում ՔՀԿ-ի կայքէջին: Կոնտակտային անձը՝ մամուլի քարտուղարը, պետք է հասանելի լինի բոլոր տեսակի հարցումների համար:

Էլեկտրոնային նամակ ուղարկելուց առաջ հաշվի առեք, թե ինչ ծավալի տեղեկատվություն եք ուղարկում: Մի՛ ուղարկեք էլեկտրոնային նամակ մի քանի կցված ֆայլերով: Ուղարկեք լուսանկարի ֆայլի հղումը: Երբեք մի ուղարկեք ZIP ձևաչափով ֆայլ. գրաֆիկական պատկերները կարող են սպառել լրագրողի ստացած նամակների արկղի տարողունակությունը:

**Մամուլի ասուլիսի կամ պրեզենտացիայի կազմակերպում**

ՔՀԿ-ի կազմակերպած միջոցառումը չպետք է միտումնավոր կերպով համընկնի լրատվական այլ միջոցառումների հետ՝ ամսաթվի ու ժամի ընտրության առումով: Մասնավորապես, քվեարկության օրվանից հետո մամուլի ասուլիս կազմակերպելու համար խորհուրդ է տրվում կանխավ սահմանել դրա անցկացման ժամկետը կամ ստուգել ընտրությունների շահագրգիռ այլ կողմերի (ԿԸՀ, մրցակից կողմեր, միջազգային դիտորդական առաքելություններ և այլն) լրատվական միջոցառումների մասին տեղեկատվությունը:

Սրահը պետք է գտնվի լայն ճանաչում ունեցող կենտրոնական հատվածում գտնվող մի վայրում, լինի ոչ այնքան մեծ, սակայն կահավորված բավարար քանակությամբ աթոռներով, և ետնամասում ունենա հեռուստատեսախցիկների համար նախատեսված տարածություն: Հարկավոր է ցուցադրել մասշտաբներով մեծ վիզուալ նյութեր, ինչպիսիք են՝ պատկերանիշները (լոգոները) կամ պաստառները: Անձնակազմի անդամներից մեկը պետք է ողջունի լրագրողներին կամ հրավիրված հյուրերին մուտքի մոտ և խնդրի նրանց ստորագրել այցելուների ցուցակում: Միջազգային հյուրերի այցելության պարագայում

հարկավոր է ապահովել համաժամանակյա կամ առնվազն հաջորդական թարգմանություն:

Լրագրողներին մամուլի ասուլիսին հրավիրելիս հարկավոր է հիմնականում կենտրոնանալ ներպետական և միջազգային ամենաազդեցիկ լրատվամիջոցների վրա, որոնք թվարկված են տվյալների բազայում անձնական կոնտակտների հետ մեկտեղ: Հրավերը (որը երբեմն կոչվում է «Տեղեկատվական հաղորդագրություն ԶԼՄ-ների համար») պետք է ուղարկվի գրավոր. տեքստը պետք է լինի հակիրճ և պարզ և պարունակի տեղեկատվություն հետևյալի մասին:

- ► Ի՞նչ, ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ, ինչու՞:
- ► Անհրաժեշտ է ներառել կոնտակտային անձի անունը, նրա բջջային հեռախոսի համարը և էլեկտրոնային հասցեն:

Միջոցառումից երեքից հինգ օր առաջ հրավերը գրավոր ուղարկելուց հետո (ընտրությունների հետ առնչություն չունեցող միջոցառումների պարագայում նախնական իրազեկման և միջոցառման փաստացի օրվա միջև ընկած ժամանակահատվածը պետք է ավելի երկար լինի՝ մոտ 7-ից 10 օր) ցանկալի է միջոցառումից մեկ օր առաջ (կամ նույնիսկ տվյալ օրվա առավոտյան ժամերին) զանգահարել առավել կարևոր լրագրողներին՝ ևս մեկ անգամ հիշեցնելու միջոցառման մասին:

ՔՀԿ-ի զեկուցողները պետք է նախապատրաստված լինեն ճեպազրույցի համար. նրանք պետք է կարողանան ներկայացնել հիմնական ուղերձը հակիրճ և հստակ կերպով և կարողանան պատասխանել սուր հարցադրումներին: Զեկուցողներից յուրաքանչյուրը պետք է շեշտադրի տարբեր ասպեկտներ, սակայն չպետք է կենտրոնանա մեկից կամ երկուսից ավելի հարցերի վրա: Հարկավոր է խուսափել տեխնիկական ժարգոն և հապավումներ կիրառելուց: Անհրաժեշտ է պահպանել հավասարակշռությունը՝ տղամարդ և կին զեկուցողների թվի առումով:

Միջոցառման սկզբին մոդերատորը ներկայացնում է զեկուցողներին, ապա համակարգում է հարցադրումների հերթականությունը: Զեկուցողներից յուրաքանչյուրի ելույթը չպետք է գերազանցի 10 րոպեն: Նախընտրելի է, որ այն ներկայացվի երեքից հինգ րոպեի սահմանում: Մամուլի ասուլիսի տևողությունը չպետք է գերազանցի 30-ից 45 րոպեն, ընդ որում, ամբողջական պրեզենտացիան (ներառյալ քննարկումը) պետք է տևի երկու ժամից ոչ ավել: Այդուհանդերձ, ցանկալի է, որպեսզի ասուլիսի տևողությունը սահմանվի՝ ելնելով լսարանի՝ մասնավորապես տեղեկատվություն հավաքող լրագրողների հետաքրքրվածության մակարդակից:

## 4.6. ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Արտաքին զեկույց պատրաստելը ընտրությունների դիտորդական առաքելության համար բարձրագույն նպատակ է հանդիսանում: Ոմանք կարող են կարծել, որ եթե զեկույցը պատրաստ է, այլևս ոչինչ չի կարող խոչընդոտել և խանգարել, որպեսզի այն ներկայացվի հանրությանը: Իրականում, կարող է պարզվել, որ զեկույցը հանրությանը ներկայացնելուց առաջ կատարվող վերջին քայլերը, պրեզենտացիայի ժամանակահատվածը և զեկույցի հանրայնացմանը հաջորդող շրջանը նույնիսկ ավելի կարևոր են: Թե՛ ներքին, թե՛ արտաքին մի շարք խոչընդոտներ կարող են խաթարել հանրային զեկույցների ներկայացման գործընթացը՝ այսպիսով վնաս հասցնելով առաքելության հեղինակությանը և արժանահավատությանը:

Ընտրությունների դիտորդական առաքելության գործողությունները ծրագրելիս Հիմնական թիմը պետք է պարզի, թե որոնք են հավանական խոչընդոտները և մշակի այնպիսի ռազմավարություններ, որոնց շնորհիվ այդ խոչընդոտները հնարավոր կլինի վերածել կառավարելի մարտահրավերների՝ թույլ չտալով, որպեսզի դրանք վերածվեն

թերացումների պատճառների: Արտաքին զեկույցի հետ կապված ամենատարածված խոչընդոտներն են՝

- ► տեղեկատվությունը մշակելու սահմանափակ ժամանակահատված,
- ► ոչ բավարար և ոչ ճշգրիտ տեղեկատվություն,
- ► լրատվամիջոցներին զեկույց ներկայացնելու համար սահմանափակ հնարավորություն,
- ► հանրային ուշադրություն առաքելության անդամների նկատմամբ և սպառնալիքների/ճնշումների վտանգ:

**Գծապատկեր 14. Խոչընդոտներ**




| Constraints | Խոչընդոտները |
|---|---|
| May become or be perceived as | Կարող են դառնալ կամ ընկալվել որպես |
| Challenges | Մարտահրավերներ |
| Shortcomings | Թերացումներ |

Ստորև թվարկված են նշված խոչընդոտները հաղթահարելուն ուղղված առաջարկություններ:

**Տեղեկատվությունը մշակելու սահմանափակ ժամանակ**

Ընտրությունների տեղական դիտորդները սովորաբար ներկայացնում են միջանկյալ զեկույցներ նախընտրական քարոզարշավի ընթացքում՝ յուրաքանչյուր երկուսից երեք շաբաթը մեկ, քվեարկությանը հաջորդող օրը (օրերին)՝ նախնական դիտարկումներ պարունակող հաշվետվություն, և վերջնական զեկույց ընտրություններից մոտավորապես երկու ամիս անց: Ի լրումն, ընտրությունների օրը (օրերին) առաքելությունները տարածում են մի քանի (երեքից չորս) պաշտոնական հաղորդագրություններ ընտրական տեղամասերում քվեարկության ընթացակարգերի իրականացման վերաբերյալ: Թե՛ հանրային զեկույցները, թե՛ հաղորդագրությունները կազմվում են ծավալուն տեղեկատվության հիման վրա, որը պետք է մշակվի սեղմ ժամկետներում (բացառությամբ վերջնական զեկույցների): Թեև տվյալների հավաքման համար պատասխանատու են վերլուծաբանները (այստեղ առաջատար և վճռորոշ դեր ունի Առաքելության ղեկավարի տեղակալը, լրացուցիչ տեղեկությունների համար տե'ս Գլուխ 3.2), այդուհանդերձ, Հիմնական թիմի մյուս անդամները (Առաքելության ղեկավար, Ցանցի/ԵԺԴ-ների համակարգողներ, Մամուլի քարտուղար) պետք է լիարժեք կերպով աջակցեն նրանց: Ստորև ներկայացված են մի շարք առաջարկություններ այն մասին, թե ինչպես այս խոչընդոտները վերածել բարենպաստ գործելակերպի:

- Առաջադրանքները և նյութերն ըստ առանձին ոլորտների հստակ կերպով բաշխե՛ք Հիմնական թիմի վերլուծաբանների միջև:
- Սկսե՛ք կազմել զեկույցները (բացի քվեարկության օրվա հաղորդագրություններից)՝ դրանք հանրությանը ներկայացնելուց բավականաչափ առաջ:
- Ապահովե՛ք, որ ոչ ոք/ոչինչ վերլուծաբաններին չշեղի զեկույցը կազմելու գործընթացից:
- Հատկացրե՛ք բավականաչափ ժամանակ՝ զեկույցները ստուգելու, խմբագրելու և սրբագրելու համար:
- Հատկացրե՛ք բավականաչափ ժամանակ զեկույցների թարգմանությանը՝ նախքան դրանք հանրորեն ներկայացնելը:
- Խուսափե՛ք զեկույցների մեջ ներառել այնպիսի դիտարկումներ, որոնք ստացվել են հանրորեն ներկայացնելուց կարճ ժամանակ առաջ: Հնարավոր է, որ այդ տվյալները լրացուցիչ ստուգելու կարիք լինի (նախընտրելի է ներառել այդ տեղեկությունները հաջորդ զեկույցի մեջ՝ լրացուցիչ ստուգում իրականացնելուց հետո):

**Ոչ բավարար և ոչ ճշգրիտ տեղեկատվություն**

Երբեմն հանրային զեկույցների կամ հաղորդագրությունների համար առկա տեղեկատվությունը կարող է լինել ոչ այնքան ամբողջական և ճշգրիտ: Այսպիսի իրավիճակներում ցանկալի է հասկանալ, թե որն է դրա պատճառը, որպեսզի ձեռնարկվեն համապատասխան միջոցներ այդ խնդիրը շտկելու ուղղությամբ: Հիմնական խումբը պետք է պարզի՝ արդյոք քանակապես կամ որակապես (կամ երկու ասպեկտներով հանդերձ) թերի է ԵԺԴ/ԿԺԴ-ների կողմից հավաքած տեղեկատվությունը:

Այս թերությունը շտկելու ուղղությամբ կարելի է ձեռնարկել հետևյալ միջոցները:

- Խնդրե՛ք ԵԺԴ-ներին հաղորդված դեպքերի մասին տրամադրել հավելյալ տեղեկատվություն կամ մանրամասներ: ԵԺԴ-ներին առաջարկե՛ք լրացուցիչ վերապատրաստում անցնել և տրամադրե՛ք ցուցումներ հարցազրույցներ վարելու, վկաների ցուցմունքները լսելու և համապատասխան տարբեր հաստատություններից (ընտրական մարմիններ, դատարաններ, ոստիկանություն, հիվանդանոցներ և այլն) լրացուցիչ փաստաթղթեր (արձանագրություններ, քաղվածքներ ընտրացուցակներից, ԸԼՀ հաշվառման գիրք, քվեաթերթիկներ, սարքավորումներ և այլն) հայթայթելու վերաբերյալ:
- Վերլուծաբանները պետք է մանրակրկիտ վերլուծության ենթարկեն որևէ կոնկրետ դեպքի վերաբերյալ արձանագրությունները/ փաստաթղթերը/ապացույցները, որպեսզի վերականգնեն այն տեղեկատվությունը, որը հնարավոր է կորած կամ աղավաղված լինի վերլուծության ավելի վաղ փուլում:
- ԵԺԴ/ԿԺԴ-ների կողմից հաղորդված որոշ տեղեկություններում հնարավոր է չլինեն մանրամասներ կամ ապացույցներ: Ուստի, նմանատիպ տեղեկությունները պետք է առավել մանրամասն ներկայացվեն և պատշաճ կերպով ձևակերպվեն, կամ առհասարակ չներառվեն զեկույցում (տե՛ս հետևյալ օրինակը):

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. ինչպես ձևակերպել եզրահանգում առանց հիմնավորող ապացույցի**

«Դիտորդների կողմից ուսումնասիրված բազմաթիվ կոնկրետ պնդումներից մի քանիսն ակնհայտորեն արժանահավատ են եղել, ներառյալ XY ընտրատարածքի տեղական պաշտոնյաների կողմից ընդդիմության աջակիցների, այդ թվում՝ ուսուցիչների վրա ճնշում գործադրելու վերաբերյալ մի շարք հաստատված միջադեպեր, որոնց նպատակն էր վերջիններիս ետ պահել ZZ-ի օգտին քարոզչություն իրականացնելուց կամ նրան աջակցելուց»:

- ► Ապահովե՛ք, որ տեղեկությունները լինեն ճշգրիտ՝ հստակեցնելով՝ արդյո՞ք դեպքերը արձանագրվել են դիտորդների կողմից, թե՞ դիտորդներին հաղորդել են այդ դեպքերի մասին:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. ինչպես տարբերել անձնական դիտարկումը այլ աղբյուրներից ստացված հաղորդումներից**

«Այդ դեպքի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումներ են եղել տեղական լրատվամիջոցների կողմից, և այն դարձել է ոստիկանական հետաքննության առարկա»:

- ► Հնարավորության դեպքում կազմե՛ք հավասարակշռված զեկույց՝ ներկայացնելով թե՛ դրական, թե՛ բացասական դիտարկումները, որոնք ճշգրիտ կերպով արտացոլում են փաստերը:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. ինչպես կազմել հավասարակշռված զեկույց**

«ԿԸՀ-ն կազմակերպում էր հաճախակի նիստեր, որոնք բաց էին դիտորդների, կուսակցությունների վստահված անձանց և լրատվամիջոցների համար, և, ընդհանուր առմամբ, անցնում էին թափանցիկ մթնոլորտում: Այդուհանդերձ, ԿԸՀ-ն սովորաբար կոլեգիալ չէր գործում»:

**Լրատվամիջոցներին զեկույց ներկայացնելու համար սահմանափակ հնարավորություն**

Ընտրությունների տեղական դիտորդական առաքելության համար լրատվամիջոցներից օգտվելու սուղ հնարավորությունը լուրջ խոչընդոտ է: Նման իրավիճակը կարող է անփորձ, կողմնակալ դիտորդների կողմից պատրաստված ցածրորակ և անհետաքրքիր զեկույցների հետևանքը լինել, կամ կարող է պայմանավորված լինել քաղաքականացված և բևեռացված լրատվամիջոցների առկայությամբ: Հիմնական թիմը պետք է փնտրի պատճառները և փորձի հաղթահարել այս խնդիրը: Ստորև ներկայացված են այն լուծումներից և միջոցներից մի քանիսը, որոնց միջոցով այս խոչընդոտը կարելի է հաղթահարել:

- ► Հաստատե՛ք/վերանայե՛ք հաղորդակցման ռազմավարությունը, որպեսզի գրավեք լրատվամիջոցների ուշադրությունը:
- ► Հիմնական թիմի ներսում ձևավորե՛ք/հզորացրե՛ք հաղորդակցման համար պատասխանատու թիմի կարողությունները, որը կվերահսկի առաքելության հանրային ելույթները:
- ► Պարզե՛ք ԶԼՄ-ների խմբագրական քաղաքականությունը ընտրությունների և քաղաքականությանն առնչվող գործողությունների վերաբերյալ:
- ► Զեկույցներում/հաղորդագրություններում ներկայացրե՛ք հավասարակշռված տեղեկություններ, որպեսզի նույնիսկ քաղաքականացված լրատվամիջոցները շահագրգռված լինեն և շարժառիթ ունենան դրանց անդրադառնալու:
- ► Լրատվական գործիքակազմը դարձրե՛ք բազմազան, օգտագործեք սոցիալական մեդիան (Twitter, Facebook, Vkontakte, սոցիալական այլ ցանցեր և այլն) և վեբ պորտալներ՝ հասարակության լայն զանգվածներին և

լրատվամիջոցներին առաքելության արդյունքների մասին իրազեկելու համար:

**Հանրային ուշադրություն առաքելության անդամների նկատմամբ և ահաբեկման/ճնշումների վտանգ**

Արտաքին զեկույցների ներկայացման գործընթացը գրավում է շահագրգիռ տարբեր կողմերի ուշադրությունը, և ներկայացնողները հայտնվում են ընդհանուր ուշադրության կենտրոնում: Թեև առաքելության կողմից պատրաստված զեկույցը կարող է լինել անկողմնակալ, անկախ և փաստերի վրա հիմնված, այդուհանդերձ, հնարավոր է, որ ընտրությունների շահագրգիռ որոշ կողմեր չընդունեն հանրորեն ներկայացված դիտարկումներն ու եզրակացությունները: Արդյունքում հնարավոր է, որ ԿԺԴ-ները, ԵԺԴ-ները և Հիմնական թիմը ենթարկվեն ճնշման և քննադատության: Կարելի է ձեռնարկել հետևյալ միջոցները՝ մեղմելու այս վտանգը և պաշտպանելու առաքելության անդամներին ընտրությունների հետ կապված բռնության դրսևորումներից:

- ► Մնացե՛ք չեզոք, անկախ և խիստ անաչառ, որպեսզի պահպանեք ձեր նկատմամբ վստահությունը:
- ► Արտաքին զեկույցներում քննադատական գնահատական տալու դեպքում եղե՛ք կառուցողական և ասելիքը հիմնավորե՛ք փաստերով:
- ► Բացատրե՛ք դիտորդության մեթոդաբանությունը, զեկույցների կառուցվածքը և բովանդակությունը ընտրությունների շահագրգիռ կողմերին:
- ► Հավաստիացրե՛ք ընտրությունների շահագրգիռ բոլոր կողմերին, որ առաքելության կատարած դիտարկումները, ներկայացրած եզրակացությունները և առաջարկությունները հիմնված են ուղղակի մոնիթորինգի, փաստերի և ստուգված ապացույցների վրա:
- ► Առաքելության եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացնելիս հղում արեք ընտրությունների վերաբերյալ միջազգային չափանիշներին և երկրի կողմից ստանձնած հանձնառություններին:
- ► Դիտորդներին հրահանգե՛ք, որ իրենց դեմ կատարված ահաբեկումների մասին անհապաղ հաղորդեն Հիմնական թիմին, և խիստ անհրաժեշտության դեպքում՝ նաև ոստիկանությանը կամ իրավապահ այլ մարմիններին:
- ► Այլ շրջաններ տեղափոխե՛ք այն դիտորդներին, ովքեր ընտրությունների հետ կապված ենթարկվում են ահաբեկման (բացառիկ դեպքերում):

## 4.7. ՋԱՏԱԳՈՎՈՒՄ. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ծավալում են բավական լայնամասշտաբ հետընտրական գործունեություն: Ընտրական գործընթացը բարելավելուն ուղղված աշխատանքներում իրենց լուման ներդնող կազմակերպությունների թիվը գնալով աճում է: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների բարձր արհեստավարժությունը (պրոֆեսիոնալիզմը) և նրանց հանդեպ վստահությունը տեղական դիտորդներին ընձեռում է ամբողջ ընտրական շրջափուլում ներգրավվելու նոր հնարավորություններ: Տեղեկատվության փոխանցման նոր ձևերը, որոնք չեն սահմանափակվում քվեարկության օրվանից կարճ ժամանակ անց

հաղորդագրություն տարածելով, ոչ միայն դարձել են հնարավոր, այլև ակնկալվում են ընտրությունների մոնիթորինգ իրականացնող քաղաքացիական կազմակերպություններից:

Ընտրությունների անկողմնակալ մոնիթորինգի մասին համաշխարհային սկզբունքների հռչակագիրը հստակ նշում է, որ ընտրությունների դիտանցմամբ զբաղվող կազմակերպությունները «պետք է ներկայացնեն ընտրական և քաղաքական գործընթացները բարելավելուն ուղղված առաջարկություններ»: Վերջնական զեկույցում ներառված առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ հետընտրական ջատագովմամբ զբաղվելու համար, որն ուղղված կլինի ներպետական օրենսդրության պահանջների, միջազգային չափանիշների և մի շարք պետությունների կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելուն: Ավելին, եթե տեղական դիտորդները հանձն են առնում նաև դիտանցել, թե ազգային կառավարություններն ինչպես են իրականացնում միջազգային կազմակերպությունների կողմից տրված հանձնարարականները, ապա ժողովրդավարական գործընթացի ողջ ժամանակահատվածում գործում են իրենց վերահսկիչ դերակատարության համաձայն:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ունեն իրենց կողմից և միջազգային կազմակերպությունների կողմից տրված առաջարկությունների կատարման ընթացքին հետևելու և հետընտրական ջատագովման գործունեությամբ զբաղվելու բազմաթիվ տարբերակներ:

ՔՀԿ-ների համար Բարեխիղճ գործելակերպի մաս է դարձել հետընտրական կլոր-սեղան ձևաչափով միջոցառումներ հրավիրելը՝ ընտրական գործընթացը բարելավելուն ուղղված առաջարկությունները շահագրգիռ բոլոր կողմերի հետ քննարկելու համար: Այս առաջարկությունները պետք է լինեն կառուցողական բնույթի և ներկայացվեն այնպիսի եղանակով, որը կհանգեցնի արդյունավետ երկխոսության և կնպաստի դրանց իրագործմանը: Կլոր-սեղան ձևաչափով միջոցառումների ընթացքում ծավալված քննարկումները պետք է ուղեցույց հանդիսանան քաղաքացիական հասարակության կազմակերպության հետագա քարոզչական նախաձեռնությունների համար:

Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում քաղաքացիական հասարակության կազմակերպությունը կարող է դերակատարություն ունենալ երեք ուղղություններով.

1. Առաջ քաշել ընտրական բարեփոխումներին ուղղված իրենց իսկ առաջարկները (օրինագծեր կամ քաղաքականությանն առնչվող այլ առաջարկներ),
2. Դիտանցել առաջարկությունների իրագործումը,
3. Նախաձեռնել տարբեր աշխատանքներ (հետազոտություններ)՝ իշխանություններին բարեփոխումների օրակարգի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

ՔՔԻՄԴ-ով և միջազգային այլ պայմանագրերով (ինչպիսին է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան) ամրագրված քաղաքական իրավունքների և ազատությունների իրականացման վերաբերյալ զեկույցների պատրաստման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությունը հանդիսանում է արտաքին զեկույցի լրացուցիչ ձև:

ՔՔԻՄԴ-ի իրականացումը մոնիթորինգի է ենթարկվում ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի կողմից: Մասնակից բոլոր պետությունները պարտավոր են կանոնավոր կերպով Հանձնաժողովին ներկայացնել այդ իրավունքների իրականացման

վերաբերյալ զեկույց: Հանձնաժողովն ուսումնասիրում է յուրաքանչյուր զեկույցը և մասնակից պետությանն է հասցեագրում իր մտահոգություններն ու հանձնարարականները «եզրափակիչ դիտողություններ»-ի տեսքով: ՀԿ-ները՝ որպես արտաքին դիտորդներ և մեկնաբաններ, վճռական դեր ունեն եզրափակիչ դիտողությունների իրականացման մոնիթորինգի ընթացքում՝ թե՛ պետական մարմինների վրա ներազդելու փորձերով, թե՛ իրենց սեփական հետագա գործունեությամբ, այդ թվում՝ զեկույցների պատրաստմամբ:

ՔՀԿ-ները կարող են իրենց ներդրումն ունենալ կառավարությունների կողմից կազմված ընդհանուր հիմնական փաստաթղթում (ԸՀՓ), որը վերաբերում է ԿԽՎԿ-ի իրագործմանը, կամ եթե ՔՀԿ-ները համարում են, որ իրենց մտահոգությունները ներկայացված չեն այդ փաստաթղթում, ապա կարող են ներկայացնել ԸՀՓ-ի իրենց սեփական տարբերակը և մոնիթորինգի հանձնաժողովում լինել ներկայացված: Նրանք նաև կարևոր դեր ունեն դիտողությունների իրականացմանը հետևելու աշխատանքներում:

Այսպիսի դերակատարություն ստանձնելու համար ցանկալի է, որպեսզի ՔՀԿ-ները հաշվի առնեն հետևյալը:

- ► ՔՔԻՄԴ-ի և միջազգային այլ կոնվենցիաների վերաբերյալ զեկույց պատրաստելու գործընթացի փուլերի և դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ իրազեկում: ՔՔԻՄԴ-ի պարագայում դա նախատեսում է հետևյալ քայլերը. պետությունը ներկայացնում է զեկույց, ՄԻԿ-ը հաստատում է խնդրահարույց հարցերի ցանկը, պետությունն արձագանքում է խնդրահարույց հարցերի ցանկին, ՄԻԿ -ը վերանայում է, ՄԻԿ -ի կողմից ներկայացվում են եզրափակիչ դիտողություններ, դրանք պետության կողմից իրականացվում են, որին հաջորդում է պետության կողմից զեկույցի պատրաստումը:
- ► Զեկույցի պատրաստման գործընթացի տարբեր փուլերում իրենց հավանական դերակատարության մասին իրազեկում՝ նիստերին նախորդող գործունեություն, նիստերի ընթացքում համապատասխան մարմինների վրա ազդելու փորձեր և իրենց դերակատարությունը հետագա ընթացակարգերում:
- ► Եզրափակիչ դիտողությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելը՝ մամուլի հաղորդագրություններ տարածելու և մամուլի ասուլիսներ կազմակերպելու միջոցով, եզրափակիչ դիտողությունները պետական լեզվով հասանելի դարձնելը, դրանց իրագործման ուղղությամբ համապատասխան մարմինների վրա ազդելու փորձեր անելը և ՄԻԿ կամ մոնիթորինգ իրականացնող այլ հանձնաժողովներ պատասխան զեկույց ուղարկելը:

## 1. Աջակցություն ընտրական օրենսդրության բարեփոխումներին

Ընտրական բարեփոխումները խթանելու նպատակով քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, հստակորեն սահմանելով բոլոր տարրերը և ներքին համաձայնության գալով դրանց շուրջ, կարող են իրականացնել համալիր քարոզարշավ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Կարևոր է, որ ՔՀԿ-ները սահմանեն քարոզարշավի իրատեսական և հասանելի նպատակներ՝ հաշվի առնելով կազմակերպության տրամադրության տակ եղած միջոցները, այս միջոցները ներպետական եղանակով կամ միջազգային դոնորների աջակցությամբ համալրելու հնարավորությունները, քաղաքական միջավայրը և իշխանությունների՝ երկխոսության գնալու և բարեփոխումներ իրականացնելու պատրաստակամությունը, այլ

կազմակերպությունների հետ միասնաբար աշխատելու հնարավորությունները և այլն:

Առաջարկություններ ներկայացնելուց և քարոզչության նպատակները սահմանելուց հետո քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարող են ներգրավվել հետագա մի շարք աշխատանքներում: Կլոր-սեղան ձևաչափով հետընտրական միջոցառումներին կարող են հաջորդել առավել փոքր մասշտաբի միջոցառումներ կամ աշխատանքային նստաշրջաններ՝ ներգրավելով ընտրական գործընթացի մեկ կամ մեկից ավելի շահագրգիռ կողմ՝ բարեփոխումները քննարկելու և աջակցություն ստանալու նպատակով: Այնուհետև, կազմակերպությունները կարող են մշակել սեփական օրենսդրական առաջարկությունները:

Որոշում կայացնողների և ընտրական գործընթացի շահագրգիռ այլ կողմերի մասնակցությամբ աշխատանքային խմբերի միջոցով նույնպես կարելի է անցկացնել այնպիսի հարցերի քննարկում, որոնք առնչվում են ընտրական բարեփոխումներին: Որոշ տեղերում այսպիսի խմբերը շարունակական գործունեություն են ծավալել մի քանի ընտրաշրջանների ընթացքում և ներգրավել են տեղական, ինչպես նաև միջազգային գործիչների:

**Բարեխիղճ գործելակերպի օրինակ. երկխոսություն քաղաքական դաշտի շահագրգիռ կողմերի հետ**

▪ Ընտրությունների հետ կապված հանձնարարականների/առաջարկությունների իրագործման ընթացքին հետևելու նպատակով ԵԱՀԿ-ն Վրաստանում հիմնեց հետևյալ աշխատանքային խմբերը:

► Տեխնիկական աշխատանքային խումբ (ՏԱԽ)՝ ընտրություններին աջակցելու և ընտրություններին նախապատրաստվելու հետ կապված տեղեկատվության փոխանակման նպատակով կազմակերպված հանդիպումներ, որոնք անցկացվում են անմիջականորեն ընտրական հարցերի շուրջ աշխատող միջազգային կազմակերպությունների և շահագրգիռ դեսպանությունների անձնակազմերի մասնակցությամբ:

► Դեսպանության (դիվանագիտական) աշխատանքային խումբ (ԴԱԽ)՝ դեսպանի մակարդակով հանդիպումներ, որոնք ներառում են ՏԱԽ-ի կողմից հուզող հարցերի շուրջ անցկացվող ճեպազրույցներ՝ ուղղված քաղաքական մակարդակով ձեռնարկվելիք գործողությունները սահմանելուն և վրացական իշխանությունների ու ընդդիմության ներկայացուցիչների հետ ընտրական հարցերը քննարկելուն:

► Ընտրական օրենսդրության հարցերով աշխատանքային խումբ (ԸՕԱԽ)՝ հանդիպումներ կուսակցությունների, ՔՀԿ-ների, ԿԸՀ-ի և արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ, որոնց նպատակն է առավել համահունչ դարձնել ընտրական օրենսդրությունը ԺՀՄԻԳ-ի, Վենետիկի հանձնաժողովի զեկույցներին, իրավական վերլուծություններին/եզրակացություններին և միջազգային այլ չափանիշներին, ինչպես նաև բարելավել ընտրական օրենսդրության դրույթների ներդաշնակությունը և կապակցվածությունը:

▪ 2014 թվականի ապրիլին Վրաստանում ԵԱՀԿ-ի առաքելության դադարեցումից հետո առաջին աշխատանքային խումբը (ՏԱԽ) տեղափոխվեց ԵՄ/ՄԱԶԾ, իսկ երկրորդ աշխատանքային խումբը (ԴԱԽ)՝ ՄԱԶԾ/Եվրոպայի խորհուրդ (որոնցից երկուսն էլ հանդիսանում են խմբի համանախագահ): Վերջին խումբը (ԸՕԱԽ) վերակազմակերպվեց, քանի որ խորհրդարանը ստեղծեց Ընտրական օրենսդրության հարցերով սեփական աշխատանքային խումբը: Քաղաքացիական հասարակության խմբերը և արտախորհրդարանական կուսակցություններն ունեին իրենց սեփական

աշխատանքային խմբերը, որոնք մշակում էին ընտրական օրենսդրության բարեփոխման առաջարկություններ:

▪ 2014 թվականին՝ Ուկրաինայում արտահերթ նախագահական ընտրությունների նախօրեին, OPORA քաղաքացիական հասարակության կազմակերպությունը օրենսդիր մարմնի ներկայացուցիչների վրա ազդելու փորձեր էր անում, որպեսզի Ուկրաինայի քրեական օրենսգրքում կատարվեն լրացումներ ընտրախախտումների՝ մասնավորապես ձայներ գնելու և ընտրությանը մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերը կեղծելու դեպքում սահմանված պատիժը խստացնելու ուղղությամբ:

## 2. Առաջարկությունների իրագործման մոնիթորինգ

Ընտրությունների անկողմնակալ մոնիթորինգի մասին համաշխարհային սկզբունքների հռչակագիրը հստակեցնում է, թե քաղաքացիական հասարակությունից ինչ դերակատարություն է ակնկալվում ընտրական շրջափուլի ընթացքում՝ առաջարկելով մոնիթորինգի ենթակա ուղղությունների հետևյալ ցանկը՝ «ընտրություններին առնչվող օրենքների, կանոնների, կանոնակարգերի և վարչական ընթացակարգերի փոփոխությունների մշակում ընտրություններին նախորդող և հաջորդող շրջաններում»:

Այն պահանջում է երկարատև ջանքեր, ինչին կարող է նպաստել համագործակցությունը քաղաքացիական հասարակության այլ խմբերի, ինչպես նաև լրատվական կազմակերպությունների հետ, և որը պահանջում է շարունակական երկխոսություն և մեթոդաբանություն՝ կառավարական տարբեր մարմինների մոնիթորինգ անցկացնելու համար:

